



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Բ. Ն. ԱՐԱԿԵԼՅԱՆ, Գ. Բ. ԺԱՅԱԿՅԱՆ,
Գ. Խ. ՏԱՐԿԻՍՅԱՆ

Բ. Ն. ԱՐԱԿԵԼՅԱՆ, Գ. Բ. ԺԱՅԱԿՅԱՆ,
Գ. Խ. ՏԱՐԿԻՍՅԱՆ

УРАТУ—АРМЕНИЯ

ՈՒՐԱՐՏՈՒ—ՀԱՅԱՍՏԱՆ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՓՐԵՎԱՆ 1988

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության
բաժանմունքի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս է. Բ. Աղայան

Գիրքը հրատարակության են երաշխավորել
գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտորներ Գ. Ա. Տիրացյանը
(Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը), Ն. Վ. Հաբուսյանը
(Ուրարտական տեղությունը և հայերը), բանասիրական գիտությունների
գրկտոր Հ. Զ. Պետրոսյանը և բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ս. Հովսեփյանը
(Ուրարտերենը և հայերենը)

Առաջելյան Բ. Ն. և ուրիշ.

Ա. 706 Ուրարտու-Հայաստան/Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ.
Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան; [Պատ. խմբ.՝ է. Բ.
Աղայան]; ՀՍՍՀ ԳԱ Պատմ. և տնտեսագիտ. բա-
ժանմունք.—Նր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988.—170 էջ.

Աշխատությունը նվիրված է Հայկական լեոնաշխարհի հնա-
գույն պետություններից մեկի, Ուրարտուի՝ Հայաստանի և հայ
ժողովրդի պատմության մեջ խաղացած դերի գնահատմանը:
Լուսարանվում են Ուրարտուի և ուրարտական էթնիկ խմբի
տեղը հայ ժողովրդի կազմավորման մեջ, ուրարտական տե-
րության քնակչության հայացման պատմական պրոցեսը,
հայ քնակչության վճռական դերի պայմաններում: Քրե-
նարկվում են նաև ուրարտերենի և հայերենի փոխհարա-
բերության և փոխազդեցության հարցերը: Աշխատության
մեջ ընդհանրացված է եղած նյութը, բերված են նոր
փաստեր, տրված հարցի տարբեր կողմերի նոր մեկնաբա-
նություններ, արված են Ուրարտուի և հայ ժողովրդի ու
հայոց լեզվի պատմության համար կարևոր եզրակացու-
թյուններ:

Աշխատությունը նախատեսված է հայ ժողովրդի և հայոց
լեզվի պատմությանը հետաքրքրվող լայն շրջանների համար:

0505040000

Ա _____ 98—88

703 (02)—88

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայ ժողովրդի առաջացման և կազմավորման հարցը վե-
րին աստիճանի կարևոր, միաժամանակ բարդ հարց է, բարդ
իր էությունը, կազմավորման ընթացքին վերաբերող փաս-
տական աղբյուրների բազմազանությունը, որոնք այսուհան-
դերձ նվազ բավարար են հարցի համակողմանի լուծման հա-
մար:

Հարցի գիտական քննարկումն սկսվել է ավելի քան հար-
յուր տարի առաջ, առաջադրվել են տարբեր, երբեմն իրարա-
մերժ կամ հակասական տեսակետներ և վարկածներ, սակայն
չի կարելի ասել, թե այն ստացել է գոհացուցիչ լուծում բոլոր
աղբյուրների համակողմանի վերլուծական քննությունը:

Արդ, որո՞նք են այն աղբյուրները, փաստացի տեղեկու-
թյունները, որոնց հիման վրա պետք է քննարկվի և գիտական
լուսարանություն ստանա հայ ժողովրդի կազմավորման
հարցը:

Նախ և առաջ գրավոր աղբյուրները՝ սկսած խեթական,
ասորեստանյան, ուրարտական, պարսկական սեպագիր ար-
ձանագրություններից, երբայական, հունական մատենագրա-
կան տեղեկություններից մինչև Մովսես Խորենացու «Հայոց
պատմությունը» ներառյալ:

Երկրորդ՝ լեզուն, լեզվաբանական տվյալները՝ սկսած հա-
յոց լեզվի ծագման, բնույթի, ձևավորման, բառապաշարի,
քերականական կառուցվածքի, այլ լեզուների հետ փոխառն-
չությունների հարցերից մինչև Հայկական լեոնաշխարհի բնիկ-
ների միալեզու դառնալը՝ հայոց լեզվի կատարյալ հաղթանա-
կով:

Երրորդ՝ նյութական մշակույթը՝ երկրի երեսին պահպանված և հնագիտական պեղումներով հայտնաբերվող մշակույթը, նրա զարգացման հաջորդական ընթացքը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև հայ ժողովրդի կազմավորման ավարտի և բուն հայկական պետականության բարձր զարգացման ժամանակները:

Չորրորդ՝ հայ ժողովրդի հոգևոր մշակույթը՝ զրույցների, ավանդությունների, առասպելների, հավատալիքների, պաշտամունքային ըմբռնումների, կրոնի, կենցաղային սովորույթների ամբողջ համակարգը:

Հինգերորդ՝ Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայերի մարդաբանական առանձնահատկությունները և նրանց փոփոխությունները:

Որքանով են ուսումնասիրված ու լուսաբանված այս աղբյուրները, թե առանձին վերցրած և թե, մանավանդ, իրենց ամբողջությամբ՝ միասնության մեջ: Դա այն հարցն է, որի պատասխանը վճռական նշանակություն ունի հայ ժողովրդի կազմավորման բարդ պրոբլեմի արդի վիճակը պատկերացնելու համար: Սակայն դժվար է այս հարցին միանշանակ պատասխան տալ: Եթե մի կողմից կարելի է ասել, որ շատ բան է արված, բազմաթիվ հարցեր ստացել են քիչ թե շատ բավարար լուսաբանություն, ապա մյուս կողմից որոշ հարցեր դեռևս մնում են մութ և կարոտ հետազոտությունների:

Կարևոր է ընդգծել նաև հարցի տեսական-պատմագիտական կողմը: Ընդհանրապես հարկավոր է խոսել ժողովրդի կազմավորման և ոչ թե ծագման մասին, ինչպես հաճախ ասում և գրում են, որովհետև ժողովուրդների կազմավորումը բազում դարեր, անգամ հազարամյակներ ընդգրկող երկարատև պատմական պրոցես է և ոչ սոսկ ծագում՝ մի տեղից, մի ցեղախմբից, այն էլ միանգամից, կարճատև ժամանակամիջոցում: Ժողովուրդների կազմավորումը տեղի է ունեցել պատմական զարգացման որոշակի օրինաչափություններով՝ և անցումներով՝ տոհմ և ցեղ, ցեղերի ազգակցական, արյունակցական, լեզվական ընդհանրություն, ցեղային ավելի խոշոր միությունների առաջացում, տնտեսական, քաղաքական հա-

րաբերությունների զարգացմամբ առաջացած սոցիալական շերտավորման խորացում, պետականության առաջացում, մանր և քիչ կենսունակ ցեղերի ձուլում (ասիմիլյացիա) ավելի խոշոր և կենսունակ էթնիկ խմբի կամ հանրության մեջ և այլն:

Հայ ժողովրդի կազմավորման հարցում ևս այս պատմական օրինաչափությունները պետք է հաշվի առնվեն, իհարկե, նրանց կոնկրետ դրսևորումների բացահայտմամբ:

Հնագիտական պեղումներով պարզված է, որ Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից՝ հին քարեդարից սկսած բոլոր հաջորդական դարաշրջաններում առանց ընդհատումների:

Լեռնաշխարհի բնիկները կերտել են իրենց բազմազան և բավականաչափ հարուստ մշակույթը, յուրաքանչյուր դարաշրջանի համար բնորոշ գծերով, բայց առանց հաջորդական կայի խզման: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ դեռևս մ. թ. ա. Յ-րդ հազարամյակում տեղի էին ունեցել հասարակական-տնտեսական լուրջ տեղաշարժեր՝ զարգացել էին երկրագործությունը, անասնապահությունը, արհեստները, առաջացել էին խոշոր ցեղեր, ցեղախմբեր, ունեցվածքային տարբերություններ, սկսվել և առաջ էր ընթանում հասարակության սոցիալական շերտավորումը և այս ամենի հետևանքով տեղի էր ունենում նախնադարյան համայնական հասարակության քայքայումը: Ահա այս պայմաններում դեռևս Յ-րդ հազարամյակի վերջերին սկսվել էր հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, որը լեռնաշխարհի ցեղերի ու ցեղախմբերի, ամբողջ բնակչության հասարակական, տնտեսական, էթնիկական, լեզվական և մշակութային զարգացման դարավոր օրինաչափ ընթացք է ունեցել:

Նրկորդ հազարամյակում բնակչության սոցիալական շերտավորումը և էթնիկական զարգացման ընթացքը այն աստիճան էին խորացել, որ Հայկական լեռնաշխարհում առաջացել էին խոշոր ցեղախմբեր, իրենց տոհմացեղային ավագանիով, ռազմական շոկատներով և քրմական վերնախավով: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան

Հայասա կոչվող երկրամասում II հազարամյակի կեսերին առաջացել էր մի խոշոր ցեղային միութուն, որը կանգնած էր պետականություն կազմելու շեմին: Խեթերը նրա առաջնորդներին թագավոր էին անվանում:

Դատելով խեթական սեպագիր արձանագրություններից, Հայասայի ցեղային միությունը բավականաչափ զորեղ էր և կարողանում էր թշնամու դեմ հանել այնքան զորք, որ ի վիճակի էր դիմագրավել խեթական հզոր պետության ռազմական հարձակումներին: Հայասայի մասն էր կազմում Ազգի կոչվող երկիրը: Հայասա-Ազգի միավորված երկրում առաջացած քաղաքական և էթնիկ հանրությունը նշանավորում էր հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի խոշոր առաջընթացը՝ դեռևս նախքան մեր թվականության երկրորդ հազարամյակի կեսերին: Բնական է, որ Հայասա-Ազգի միավորման հասարակական, քաղաքական, էթնիկական և մշակութային զարգացման և հետագա ճակատագրի հարցերը կարևոր են հայ ժողովրդի կազմավորման և ընդհանրապես Հայաստանի հնագույն պատմության համար:

Հայ ժողովրդի կազմավորման հարցը լայնորեն կապված է հատկապես Հայկական լեռնաշխարհի հարավային ու կենտրոնական երկրամասերի և նրանց բնակչության պատմության հետ: Դրանց մասին տեղեկություններ հաղորդում են առավելագույն ասորեստանյան, ապա և ուրարտական սեպագիր արձանագրությունները, որոնց վրա անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել՝ հարցի լուսաբանության նկատառումով:

Ասորեստանյան Սալմանասար I-ին թագավորը (մ. թ. ա. 1274—1245 թթ.) մի արձանագրության մեջ ասում է, որ իր գահակալության տարում իր դեմ ըմբոստացել են ուրուատրիները: Սալմանասարի զորքերը բարձրանալով լեռները, պարտության են մատնել ուրուատրի ութ երկրների միացյալ աշխարհազորին: Նշվում է, որ ավերվել են նրանց 51 բնակավայրերը, բնակչությունը ենթարկվել է Ասորեստանին և հարկ դրվել նրա վրա¹: Այս վկայությամբ պարզվում է, որ Վանա

լճից հարավ կամ հարավ-արևելք ընկնող լեռնոտ տարածքում XIII դ. մ. թ. ա. առաջացել էր Ուրուատրիների (ուրարտների) ութ երկրամասերի ցեղային միությունը:

Մի այլ ցեղային միություն հիշատակված է Թուկուլթի-նինուրթա I (1243—1221) արձանագրության մեջ: Ասվում է, որ Ասորեստանի դեմ սլալքարի էին ելել Նաիրի երկրի 43 ցեղերը²: Նաիրյան երկրների և ցեղերի մասին ուշագրավ տեղեկություններ պահպանվել են նաև ասորեստանյան Թիգլաթ-սալասար I թագավորի (1115—1077) մի արձանագրության մեջ: Պարզվում է, որ XII դ. վերջին, XI դ. սկզբներին ասորեստանյան զորքերը հյուսիս արշավելով հանդիպում են արդեն ոչ թե Ուրուատրի ցեղերին, այլ նաիրյան 23 երկրների միությանը: Ապա հիշատակվում են Նաիրի երկրների և նրանց դաշնակիցների 60 թագավորները (իմա՝ ցեղապետերը): Նաիրի երկրի միությունը շատ ընդարձակ տարածք էր գրավում, որ և նշված է արձանագրության մեջ³:

Դատելով ասորեստանյան արձանագրություններից, նաիրյան երկրները տարածվում էին Հայկական լեռնաշխարհի ոչ միայն հարավային, արևմտյան, այլև կենտրոնական մասերում: Ենթադրվում է, որ նրանց միության մեջ մտնում էր նաև Ուրուատրի-Ուրարտուն: Ինչպես երևում է նաիրյան 23, իսկ դաշնակիցների հետ միասին 60 երկրների «թագավորների» միությունը կայուն ցեղային միություն չէր, այլ լեռնաշխարհի բնիկների՝ հայերի, խուրիների, ուրարտների, ինչպես և արձանագրություններում հիշատակված Շուպրիա, Ուրմե, Արմե երկրների բնակիչների, այլ խոսքով տարբեր ցեղերի ռազմացեղային պաշտպանական դաշինք, որն հակադրվում էր ասորեստանյան զորքերի նվաճողական կողոպտիչ արշավանքներին: Արձանագրություններից մեկում նշվում է, որ նաիրյան երկրների սահմանը հասնում էր Վերին ծովին (Սև

Урарту. ВДИ, 1951, ч 2, с 266, текст 2. Տե՛ս նաև՝ «Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա», Կ. 1, Երևան, 1981, էջ 14:

2 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 44.

3 Н. В. Арутюнян, Бнайяили (Урарту), Ереван, 1970, с. 43—44.

¹ И. М. Дьяконов, Ассирио-вавилонские источники по истории

ծովին): Հիշատակվում է նաև Նաիրի երկրի ծովը, որն այս դեպքում Վանա լիճն է:

Ասորեստանը գրավում էր նաիրյան երկրները, ինչպես և նրանց սահմանակից կամ նրանց կազմի մեջ մտնող Շուպրիա և Ուրումե, Արմե երկրները, սակայն Ասորեստանի թագավորների տիրապետությունն այս երկրներում տևական և կայուն չէր, իսկ նրանց զորքերի արշավանքները հաճախ ավարտական բնույթ էին կրում:

Ուրուատրին հիշատակվում է նաև XII և XI դարերում, իսկ IX դարի առաջին կեսին Աշուրնափրապալի տարեգրության մեջ Ուրուատրի փոխարեն երևան է գալիս Ուրարտու ձևը⁴:

Ասորեստանյան Սալմանասար III թագավորի (860—825) թողած արձանագրության մեջ հիշատակված Նաիրին նախկին ընդարձակ երկիրը չէ, մինչդեռ Ուրարտուն հանգես է գալիս իբրև արդեն ձևավորված և բավականաչափ զորեղ պետություն իր Արամու թագավորով և Արզաշկու (Արծաշկու) մայրաքաղաքով, որը սովորաբար նույնացվում է Արճեշի կամ Արծկեի հետ: Ուրարտական պետության մեջ սկզբում ղեկավար դերը պատկանում էր այն ցեղախմբին, որի առաջնորդն էր Արամուն, սակայն շուտով իշխանությունը անցնում է ուրարտական մի այլ ցեղախմբի, որի գլուխ կանգնած էր Լուտիպրիի որդի Սարդուրին, իսկ մայրաքաղաքը դառնում է Տուշպան, հետագայի Տոսպը (Վան քաղաքի տեղում): Այստեղ լճի հարավարևելյան մասում էր գտնվում Ուրարտական պետության կենտրոնը՝ բուն Ուրարտուն՝ Բիայինան: Հայտնի է, որ IX դ. վերջերին և VIII դարում ուրարտական թագավորներն իրենց իշխանությունը հաստատեցին ամբողջ Հայկական լեռնաշխարհի և այստեղ բնակվող բոլոր ցեղերի ու ցեղախմբերի վրա: Ուրարտական զորեղացած թագավորությունը դառնում է հզոր Ասորեստանի մրցակիցը: Այս զորեղ պետությունը ասորեստանյան սեպագրերում կոչվում էր Ուրարտու, իսկ ուրարտական արձանագրություններում՝ Բիայնիլի:

Այսպիսով, ասորեստանյան սեպագիր արձանագրությունները վկայում են Ուրուատրի—Ուրարտու ցեղային միության առաջացման մասին՝ Վանա լճի հարավարևելյան մասում դեռևս XIII դարում մ. թ. ա., ինչպես և այդ ցեղային միության հիման վրա Ուրարտական պետության առաջացման մասին՝ Վանա լճի ավազանում կամ բուն Ուրարտու-Բիայնայում: Ուրարտական պետությունը սկզբում բիայնական կամ ուրարտական ցեղերի ռազմաքաղաքական միավորում էր, ապա պենթի ուժով ընդարձակվելով ընդգրկեց ամբողջ Հայկական լեռնաշխարհը, իրեն ենթարկելով տեղաբնակ ոչ ուրարտական՝ հայկական, խուռի քանակապես շատ ավելի մեծ բնակչություն ունեցող ցեղերին, էթնիկ խմբերին, որոնք իբրև ժողովուրդ դեռևս չէին ձևավորվել: Այսպիսով Ուրարտական պետությունը հինարևելյան պետությունների նման տարբեր ցեղերի և էթնիկ խմբերի խառը կազմ ունեցող պետություն էր, որի մեջ բուն ուրարտացիները փոքրամասնություն էին կազմում: Այլ կերպ ասած՝ կար Ուրարտական պետություն, իբրև ռազմաքաղաքական միավորում, բայց այդ պետության մեջ միասնական ժողովուրդ չէր առաջացել:

Ժողովրդի կազմավորման հետագա ընթացքը ցույց է տալիս, որ որոշիչ դերը պատկանում էր հայկական ցեղերին ու ցեղախմբերին, որոնց իբրև միասնական ժողովուրդ կազմավորվելու վաղուց սկսված ընթացքը ուրարտական պետության գոյության իսկ ժամանակաշրջանում ավելի էր առաջադիմել և հանգելու էր իր ավարտին:

Բայց ի՞նչ դեր ու նշանակություն է ունեցել էթնիկ խառը կազմ ունեցող Ուրարտական պետությունը Հայկական լեռնաշխարհի բնիկների պատմական զարգացման բնագավառում:

Եթե ամենասեղմ և ընդհանուր գծերով պատասխանելու լինենք այդ հարցին, ապա պետք է նշենք մի քանի առավել կարևոր հանգամանքներ:

1. Ամբողջ երկրի քաղաքական միավորումը մեկ պետության մեջ նպաստավոր եղավ նրա ինչպես հասարակական, տնտեսական, մշակութային զարգացման, այնպես էլ էթնոգե-

⁴ Ванское царство (Урарту), с. 46.

նետիկ պրոցեսների առաջընթացի և հայ ժողովրդի կազմավորման համար:

Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանում՝ նախքան մեր թվ. IX—VII դդ., տեղի է ունեցել երկաթի մասսայական յուրացումը՝ արտադրության միջոց հանդիսացող գործիքները, ինչպես և զենքերը պատրաստվում էին երկաթից, իսկ այդ բնագավառներից դուրս մղված բրոնզից-պղնձից պատրաստվում էին պաշտպանական զենքեր, զանազան առարկաներ և զարդեր⁵: Երկաթե գործիքները մեծապես նպաստեցին երկրի առաջընթացին:

2. Տնտեսության առաջադիմության համար խոշոր նշանակություն ունեցավ ոռոգելի երկրագործության զարգացումը, բազմաթիվ ջրանցքների անցկացումը և ջրամբարների կառուցումը: Լայն ծավալ ստացան խաղողի, մրգատու այգիների, տեխնիկական կուլտուրաներից կտավատի և քունջութի մշակումը և վերամշակումը՝ սրանցից ձեթի ստացումը: Կարմիր բլուրի և էրեբունիի պեղումների ժամանակ բացված մառանների մեջ տեղադրված գինու կարասների ընդհանուր տարողությունը շուրջ կես միլիոն լիտրի է հասնում, բացվել են նաև քունջութի շտեմարաններ և ձեթի ստացման ու զարեջրի պատրաստման արհեստանոցներ⁶: Ըստ որում զարեջրի և ձեթի արտադրությունը ուրարտացիները յուրացրեցին Միջագետքից:

3. Հարուստ ու նշանակալից էր ուրարտական նյութական մշակույթը: Ուրարտական թագավորները հիմնադրել են բազմաթիվ քաղաքներ, կառուցել շատ ավելի մեծ թվով ամրոցներ: Ինքնատիպ բնույթ են կրել ուրարտական քաղաքաշինությունն ու ամրաշինությունը: Քաղաքների և ամրոցների պարիսպները ուրարտացիները կառուցում էին քարե հիմքերի վրա բարձրացող հում աղյուսե շարվածքով, խիտ դասավորված միօրինակ կոնտրֆորսներով, նման Ասորեստանի,

Մարաստանի ամրոցներին: Հայկական և մյուս ցեղերի նույն զարեջրում կառուցած ամրոցները քարակերտ են, կիկլոպյան բնույթի, իսկ աշտարակներն ու կոնտրֆորսները հարմարեցված են տեղանքին և միօրինակ չեն: Ուրարտական քաղաքներում և ամրոցներում կառուցվել են պալատներ, տաճարներ, զինանոցներ, շտեմարաններ և այլ շենքեր, որոնք ունեն իրենց բոլորն ուրարտական, որոշակի առանձնահատկությունները: Բարձր զարգացման էր հասել ուրարտական ճարտարապետությունը, որն ուներ հինարևելյան բնորոշ գծեր և ակնհայտորեն տարբերվում է Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասի տեղական, ամենից առաջ հայկական ցեղերի ճարտարապետությունից: Բուն ուրարտական ամրոցներից տարբերվում են նաև այն ամրոցները, որոնք վաղօրոք տեղական ցեղերի կառուցածը լինելով, օգտագործվել են ուրարտացիների կողմից և որոշ փոփոխություններ կրել: Ուրարտացիներն իրենց պալատներն ու տաճարները զարդարել են որմնանկարներով՝ ուրարտական աստվածությունների և պաշտամունքային-առասպելական բնորոշ պատկերներով, ինչպես և բնորոշ բուսական ու երկրաչափական զարդաձևերով: Այսպիսով, այդ որմնանկարները կրում են ուրարտական բնույթ՝ ինչպես բովանդակությամբ, նույնպես և ձևերով, արվեստով, երևան բերելով նմանություններ ասորեստանյան որմնանկարների հետ⁷:

Սովետական Հայաստանի տարածքում, ինչպես և արևմտյան Հայաստանում, մասամբ և Իրանում կատարված ուրարտական բնակավայրերի, ամրոցների պեղումների շնորհիվ հայտնաբերվել են հսկայական քանակությամբ հնագիտական նյութեր, մանավանդ խեցեղեն և մետաղե առարկաներ:

Արտադրվել են տնտեսական կիրառության, ինչպես և կենցաղային բնույթի խեցեղեն անոթներ, սկսած փոքրիկ ճրագներից, թասերից, պնակներից, սափորներից մինչև զարեջր պատրաստելու անոթները և հսկայական կարասները: Ուրարտական կավե անոթներն արտադրվել են պետական արհեստա-

⁵ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 303—305.

⁶ Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964.

⁷ Կ. Լ. Հովհաննիսյան, էրեբունի որմնանկարները, Երևան, 1973:

նոցներում՝ համաձայն սահմանված տիպերի շափերի և մշակման ու գեղարվեստական հարդարման առանձնահատկությունների: Ուրարտական ճրագները թմբիկով բաժանված են երկու մասի և այնքան ինքնատիպ են, որ ուրիշ ճրագների հետ չեն շփոթի: Սափորները մեկկանթանի գնդաձև են պատած մուգ կարմիր գույնի թանձր ու փայլուն անգորով (ծածկույթով) և խիստ տարբերվում են տեղական մյուս ցեղերի՝ հայերի արտադրած անոթներից: Կարասները խոշոր են, բարձր, սլացիկ, կարմրավուն հաստ պատերի վրա ունեն ներս ընկած խոշոր փոսեր, իսկ զանգվածային շուրթերից ցած վզի, ինչպես և գոտու վրա կրում են պարանաձև ռեյիեֆ զարդեր: Հայկական և տեղական մյուս ցեղերի պատրաստած կարասները սովորաբար գնդաձև են, անզարդ, երբեմն ունենում են սև երանգ:

Ուրարտական խեցեղենի վրա հաճախ հանդիպում են տարողութային և այլ բնորոշ նշաններ, որպիսիները տեղական՝ ոչ ուրարտական, անոթների վրա երբեք չեն հանդիպում:

Հարուստ և բազմազան են նաև ուրարտական մետաղե իրերն ու առարկաները, որոնց մեծ մասն ունի շքեղ գեղարվեստական ձևավորում: Հայտնի են ուրարտական վահանները՝ առյուծների և ցուլերի շարքերով, սաղավարտները ռազմակառքերի, հեծյալների, վիշապների և կենաց ծառերի, թեփավոր աստվածությունների պատկերներով, կապարճները, բրոնզե գոտիները հեծյալների, ռազմակառքերի պատկերներով, որսի և այլ տեսարաններով: Հանդիպում են նաև մարդու կամ գրիֆոնի գլխով և թռչունի թևերով կենդանիներ, որոնք բոլորն էլ բնորոշ են ուրարտական արվեստին և զուգահեռներ շունեն հայկական արվեստի մեջ: Անգամ ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրությունը որոշակիորեն տարբերվում է Հաղբատում, Սանահինում և այլուր հայտնաբերված ոչ ուրարտական բրոնզե գոտիների վրա փորագրված պատկերներից:

Այս ամենով հանդերձ, թող այն տպավորությունը շատացվի, թե ուրարտական մշակույթը օտարամուտ էր և Հայաստանի բնակչության համար օտարոտի: Ամենից առաջ այն առաջացել և զարգացել է Հայկական լեռնաշխարհում, երկրի պատ-

մության որոշակի դարաշրջանում և կրելով հինարևելյան մշակույթի ազդեցությունը, չի նույնանում նրա հետ, ընդհակառակը, աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և ինքնատիպությամբ:

Ուրարտացիները այլ երկրներից չեն թափանցել Հայկական լեռնաշխարհը, այլ նրա մի հատվածի՝ Վանա լճի հարավարևելյան ավազանի բնիկներ են եղել: Նրանց մշակույթը առաջացել և զարգացել է լեռնաշխարհի անհամեմատ ավելի մեծ տարածք զբաղեցնող և մեծ քանակ կազմող հայկական և այլ ցեղերի ու ցեղախմբերի մշակույթին կողք-կողքի և եթե տարբերվում է նրանից, ապա ոչ միայն հինարևելյան ազդեցության և առանձնահատկությունների պատճառով, այլև առավելապես պետական բնույթի և նկատելիորեն միօրինակ կերպարանք ստանալու հետևանքով:

Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերը՝ հայեր և ուրիշներ, խոշոր դեր են կատարել երկրի տնտեսական զարգացման, նյութական բարիքների արտադրության գործում: Նրանք են անցկացրել ջրանցքները, մշակել հողը և զարգացրել արհեստները, մասնակցել նաև ուրարտական մշակույթի կերտմանը:

Հայկական լեռնաշխարհի բնիկները մետաղագործության, խեցեգործության և այլ արհեստների դարավոր փորձ և հմտություն ունեին, որոնք նպաստավոր էին ուրարտական արհեստագործության զարգացման համար, որն ավելի առաջադիմաց և կատարելագործվեց:

Հնագետներն ու արվեստագետները առանց դժվարության տարբերում են ուրարտական ճարտարապետությունն ու արվեստը, նյութական մշակույթի բազմազան առարկաները Հայկական լեռնաշխարհի հայկական և տեղական մյուս ցեղերի մշակույթից: Դրա պատճառն այն է, որ Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում տարածված բուն ուրարտական մշակույթը կրել է առավելապես միօրինակ պաշտոնական բնույթ:

Հայկական լեռնաշխարհի մյուս՝ հայկական և այլ ցեղերի կերտած մշակույթը քանակով ավելի մեծ է, բազմազան, բայց լեռնաշխարհի տարբեր մասերում կրել է տեղական բնույթ,

երևան է բերել տեղական ինքնատիպ գծեր ու առանձնահատկություններ: Այսուհանդերձ կարևոր է նշել, որ նրանց միջև արդեն տեղի էր ունենում ընդհանրությունների առաջացումը՝ իբրև հետևանք հայ ժողովրդի կազմավորման առաջընթացի:

Այս պայմաններում ուրարտական մշակույթն իր հերթին մի շարք բնագավառներում զգալի դեր է կատարել հայկական ցեղերի, ապա և ամբողջովին վերցրած հայ ժողովրդի մշակութային զարգացման բնագավառում:

Խոշորագույն նշանակություն ունեցող երևույթ էր երկաթի մասսայական յուրացումը, որը տեղի ունեցավ ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանում: Պակաս կարևոր չէր ոռոգելի երկրագործության զարգացումը, տեխնիկական կուլտուրաների մշակումը և նրանց արտադրանքի վերամշակումը: Հիշենք Քսենոփոնի վկայությունները հայկական գյուղերում գարեջրի և բուսական յուղերի արտադրության մասին: Հայ ժողովուրդը յուրացրեց նաև ուրարտական պետության ժամանակներում առաջադիմած մի շարք արհեստների ոչ միայն տեխնիկատեխնոլոգիական նվաճումները, այլև բազմազան իրերի, առարկաների ընդհանուր տիպերն ու ձևերը, մանավանդ մետաղագործության ու խեցեգործության բնագավառներում⁸:

4. Ուրարտացիները (բուն ուրարտները) ունեցել են իրենց լեզուն, որը հայերեն չէր և ազգակից լինելով խուտիերենին, ինքնուրույն լեզու էր, որով խոսել են բուն Բիայնիլի-ուրարտացիները: Ուրարտական թագավորները այդ լեզվով թողել են շուրջ 550 արձանագրություն: Դրանց թվում կան շատ ընդարձակ տարեգրություններ՝ նրանց ռազմական արշավանքների, շինարարական և այլ գործունեության մասին, ինչպես և պաշտամունքային բովանդակությամբ արձանագրություններ: Դրանք կրել են պետական պաշտոնական բնույթ և նրանց լեզուն ուրարտական պետության բնակչության մեծ մասի լեզուն չի եղել: Ուրարտացիները սեպագիրը փոխ են առել Ասորեստանից, բայց նկատելիորեն փոփոխել, պարզեցրել ու իրենց լեզվի օրինաչափություններին հարմարեցրել:

⁸ Գ. Ա. Տիրացյան, Հայաստանի նյութական մշակույթը Յ. թ. ա. V1—IV դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, էջ 147—156:

5. Ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանում նկատելի առաջադիմություն և զարգացում ապրեցին ոչ միայն տնտեսությունն ու նրա ձևերը, այլև հասարակական հարաբերությունները: Ամբողջ Հայկական լեռնաշխարհում խորացավ սոցիալական՝ դասակարգային շերտավորումը, ավելի մեծ թափով քայքայվեցին ցեղերի ու ցեղախմբերի ներսում պահպանվող տոհմացեղային հարաբերությունները: Այդ ամենի շնորհիվ ավելի մեծ նախադրյալներ առաջացան էթնագենետիկ պրոցեսներին՝ հայ ժողովրդի կազմավորման համար: Բուն ուրարտները Ուրարտական ընդարձակ պետության մեջ բնակչության մի փոքր մասն էին կազմում, զուրկ էին պատմական հեռանկարից և չէին կարող լեռնաշխարհի բնակչությանը միավորել մեկ միասնական ուրարտական ժողովրդի մեջ: Այդ դերը պատմականորեն պատկանում էր պետության բնակչության հիմնական և առաջատար մասը կազմող հայկական ցեղերին ու ցեղախմբերին, որոնց միջև ընդհանրությունների առաջացման և էթնիկ կազմավորման պրոցեսները խոշոր շափերով առաջադիմել էին հենց իր՝ Ուրարտական պետության ներսում:

6. Անհրաժեշտ է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք: Ուրարտական պետությունն իր հզորության ժամանակաշրջանում պատվար հանդիսացավ ավելի զորեղ Ասորեստանի հանդեպ, ապահովելով Հայկական լեռնաշխարհի անվտանգությունն ու անկախությունը երկիրը նվաճել ձգտող Ասորեստանից: Վերջինիս թուլացումը և Մերձավոր Արևելքում պատմաքաղաքական փոփոխությունների ու նոր իրադրությունների առաջացումը նույնպես նպաստավոր եղան հայ ժողովրդի կազմավորման համար, մանավանդ որ թուլացել էր նաև Ուրարտական պետությունը, որի ծայրամասերն անգամ այդ պետության հզորության ժամանակներում հաճախ ապստամբում էին և ինքնուրույնություն ձեռք բերում:

Ուրարտական թագավորների արձանագրություններից երևում է, որ միևնույն վայրերը հարկ էր լինում նորից գրավել և վերագրավել, տեղական ցեղերին հնազանդեցնել, բնա-

կիչներին գերեվարել, նրանց անասունները և ունեցվածքը ավար վերցնել և բուն ուրարտական երկիրը՝ Քիաչնիլի տանել:

Կան այս ամենը հաստատող որոշակի փաստեր և տեղեկություններ, ինչպես սեպագիր արձանագրություններում, այնպես էլ որոշ գրական աղբյուրներում:

Հայասա երկրի՝ համանուն հայկական ցեղային միության (հնում, իբրև կանոն, երկիրը և նրա բնակչությունը միևնույն անունն էին կրում) պատմական զարգացումը չհանգեց կայուն պետականության առաջացմանը և, ինչպես երևում է, Հայասան ունեցավ նույն ճակատագիրը, ինչ հարևան խեթական հզոր պետությունը, կապված Առաջավոր Ասիայում XIII դ. տեղի ունեցող պատմաքաղաքական խոշոր անցքերի և փոփոխությունների հետ: Իր գոյության ժամանակաշրջանում, ինչպես և հետագայում, Հայասան և հայասական ցեղերն ու ցեղախմբերը խոշոր դեր խաղացին հայ ժողովրդի կազմավորման գործում:

Անդրադառնալով Հայասայի լեզվին՝ Ի. Դյակոնովը նշում է, որ եթե նույնիսկ հետևենք Գ. Բ. Ջահուկյանին, ապա պիտի արձանագրենք, որ ինքը լեզուն հնդեվրոպական էր, բայց նրա խոսքի տվյալներով հայերենին մոտիկ չէր⁹: Մերժելով Հայասայի լեզվի հայերեն լինելը, նա միաժամանակ ասում է. «Եթե մի կողմ թողնենք Հայասան, ապա այդ ժամանակներում Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում հայոց լեզվի տարածված լինելու տեսակետը միանգամայն հավանական հիպոթեզ է, թեև դեռևս ապացուցված չէ»⁹: «Ուրարտական տիրապետության ժամանակաշրջանում ևս պրոտոարմենական լեզուն պետք է գոյություն ունենար առնվազն Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում»¹⁰:

⁹ Հետագայում Գ. Բ. Ջահուկյանը փորձ է արել հաստատելու, որ «Հայասայի հիմնական լեզուն եղել է հայերենը» (տե՛ս «Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, զեկուցումների դրույթներ», Երևան, 1987, էջ 145):

⁹ И. М. Дьяконов, К предыстории армянского языка. Историко-филологический журнал, № 4, 1983, с. 160.

¹⁰ И. М. Дьяконов, К предыстории армянского языка, с. 164.

Գ. Ջահուկյանը 1986 թ. լույս բնծայած հոդվածում¹¹ նշում է ուրարտերենում ոչ միայն հայկական բառերի, այլև աստվածությունների անունների փոխառությունը իբրև ուրարտերենի հետ կողք-կողքի ապրող հայկական ցեղերի ներգրումն այդ լեզվում: Որքանով խոսքը վերաբերում է աստվածների անունների փոխառությանը, ապա դա վկայում է հայերենի ենթաշերտի առկայության մասին՝ ուրարտերենում: Առհասարակ հարկ է նկատել, որ հայկական վաղ շերտի առկայությունը ուրարտերենում ունի ոչ միայն լեզվաբանական նշանակություն, այլև հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող կարևոր փաստի արժեք: Հայասայի և Եփրատի վերին հոսանքի տարածքում գտնվող այլ ցեղերի հայալեզու «դառնալու» տեսակետը առաջադրելով՝ Գր. Ղափանցյանը, հավանաբար, նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Եփրատի վերին հոսանքի շրջանից հարավ գտնվող Թեգարամա, Մելիդու, Խաթե, Կումախա (Կոմագենե) երկրների բնակիչները հնդեվրոպական լեզվի կրողներն էին, այսինքն Հայասայի հարավային սահմաններում, ներառյալ նաև Մելիդու—Մելիտեա (Մալաթիայի) շրջանը, բնակչությունը հայալեզու էր¹²: Ի դեպ, նույնը այլ կապակցությամբ պնդում է նաև Ի. Դյակոնովը: Նա ասում է. որ ասուրական Hatti-ի ուրարտական համարժեքն է Hata-ն, որը հատուկ իմաստավորմամբ նշանակում էր Մելիտինյան թագավորություն: «Մելիտինյան առնվազն մինչև VII դ. մ. թ. ա. ուներ լուվական դինաստիա... բայց համաձայն մի շարք հանգամանքների... հարկ է ենթադրել այստեղ զգալի քանակությամբ, թերևս և գերիշխող հայալեզու բնակչության առկայությունը դեռևս XII—VII դդ. մ. թ. ա.»¹³: Ապա Դյակոնովը պնդում է, որ Hata անունից կարող էր առաջանալ հայ անունը: Գր. Ղափանցյանը ենթադրում է, որ խեթական թագավոր-

¹¹ Գ. Բ. Ջահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում. «Պատմա-բանասիրական հանդես», 1, 1986, էջ 43—58:

¹² Гр. Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956, с. 148.

¹³ И. М. Дьяконов, К предыстории армянского языка, с. 172.

ությունն անկումից հետո հայկական ցեղերը հայացրեցին նաև որոշ քանակությամբ խեթերի¹⁴։

Ղափանցյանը խոսում է նաև Մելիտենենին հյուսիս-արևմուտքից սահմանակից Թոգարամ-Թեգարամա երկրի բնակչության հայ լինելու կամ XII—VIII դդ. հայերի հետ ձուլվելու մասին¹⁵։ Թեգարաման հիշատակում են խեթական արձանագրությունները, իսկ ըստ Աստվածաշնչի՝ Աշկենազը, Ռիֆաթը և Թոգարաման Գոմերի որդիներն են, ըստ որում Գոմերը կիմերների էթնիկ անունն է, Աշկենազը՝ սկյուֆների, իսկ Թոգարաման՝ հայերի։

Ըստ հայկական ավանդության, որը պահպանել է Խորենացին, Թորգոմի որդին Հայկն է և հայերն իրենց համարում են Թորգոմից սերված¹⁶։ Հայերի ազգակցությունը Թորգոմի հետ նշել են նաև III—IV դդ. եկեղեցական հեղինակներ Հիպպոլիտը և Նվսեբրիոս Կեսարացին¹⁷։ Պետք է կարծել, որ այս ևս արձագանք-հուշ է հայերի որոշիչ դերի և Թեգարամայի (Թիլ Գարիմուտի) բնակչության՝ հայերի հետ ձուլվելու մասին։ Թեգարամայից արևելք և Մելիտու (Մելիտենեայից) հյուսիս-արևելք Արածանիի ստորին հոսանքի շրջանում, Եփրատ գետի ձախ ափին տարածվում էր Մուփ(անի) հայալեզու (հայկական աղբյուրների Մոփ) երկիրը։

Պատմաքաղաքական նոր և հայ ժողովրդի կազմավորման համար կարևոր իրադրություն էր առաջացել նաև Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում։

Դեռևս վաղ ժամանակներում ակկադական Նարամ-Սին (Նարամ-Սուեն) արքայի (2290—2254) թողած մի սեպագիր արձանագրության մեջ նշվում է, որ արքան Եփրատի ափերով դեպի Հյուսիս և Արևմուտք ձեռնարկած արշավանքի միջոցին նվաճել է Արմանի (Armanum) և Էբլա (Ebla) կոչվող վայրերը։ Իտալական հնագիտական արշավախմբի վերջին տարիներին կատարած պեղումների շնորհիվ պարզված է, որ էբ-

լան գտնվում է Ասորիքում (Սիրիայում), Հալեպից 60 կմ հյուսիս-արևմուտք։ Ինչ վերաբերում է Արմանիին, որը հիշատակված է որպես քաղաք-պետություն, ապա ենթադրվում է, որ այն գտնվել է Հյուսիսային Միջագետքում, Եփրատի ձախափնչա վտակ Խաբուր գետի ակունքների և Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ Սուբարիական երկրում։ Արմանին հիշատակված է նաև ասորեստանյան Սարգոն I արքայի (1980—1948 մ. թ. ա.) մի արձանագրության մեջ։

Հազիվ թե կարելի է անմիջական կապ տեսնել սուբարիական արմանիի և հնդեվրոպական արմենների միջև։

Նախքան մ. թ. XVII դ. Հյուսիսային Միջագետքում առաջանում է Միտանի թագավորությունը՝ խուտո-սուբարիական հիմնական բնակչությամբ։ Միտանի պետության կազմում գտնվում էին նաև Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան գավառները, որոնց թվում նաև Արմե-Շուպրիան իր հայ և խուտո-սուբարի բնակչությամբ։

Դեռևս խեթական պետությունը պատերազմներ է վարել Միտանի պետության հետ, որի կազմում գտնվում էին նաև Հայկական լեռնաշխարհի որոշ գավառները, առավելապես արմե-հայ բնակչությամբ։ Խեթական պետության անկումից հետո նրա տարածքում հաստատված փոյուգիական ցեղերը և նրանց հարևանները նույնպես ռազմաքաղաքական կապեր հաստատեցին Հայկական լեռնաշխարհի հարավի հետ։

XII դարի կեսերին խեթական աշխարհի հյուսիսարևելյան մասերից, Փոքր Հայքի սահմաններից Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասը՝ Շուպրիա երկիրը (պատմական Ալձնիք, Սասուն) թափանցեցին մուշքերը, կասկերը և ուրումայեցիները, ըստ որում ենթադրվում է, որ ուրումայեցիները արմեններ էին։ Հարկ է նշել, որ անկախ այս ցեղերի շարժումներից Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Արմե երկրում, իր նիխրիա կենտրոնով հայ բնակչություն գոյություն է ունեցել վաղ ժամանակներից ի վեր։

Որոշ գիտնականներ հայ ժողովրդի և հայերեն լեզվի առաջացումը կապում են այսպես կոչված «ժովային ժողովրդների» տեղաշարժերի հետ։ Այդ տեսակետը իր որոշակի

14 Гр. Капанцян, *նշվ. աշխ.*, էջ 149։

15 Նույն տեղում, էջ 141—142, 148, 154։

16 Մովսես Խորենացի, *գիրք առաջին*, գլ. Ե, Ժ։

17 Гр. Капанцян, *նշվ. աշխ.*, էջ 154։

արտահայտութիւնն է գտել նաև հայ ժողովրդի պատմութեան ութ հատորյակի առաջին հատորում (գլուխ 9-րդ): Այդ գլխի հեղինակ Ս. Տ. Երեմյանը նշելով, որ մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին մեծ թափ է ստանում ցեղերի տեղաշարժը, գրում է. «ժողի ժողովուրդների» թվում հանդես են գալիս նաև բազմաթիվ թրակա-փոյուզիական ցեղեր, որոնք Փոքր Ասիա էին թափանցում Բալկանյան թերակղզու հյուսիսային մասերից՝ մերձդանուբյան շրջաններից և թերևս մասամբ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կողմերից»: Ապա՝ «Փոքր Ասիա տեղափոխված թրակա-փոյուզիական ցեղերի մեջ առաջիններից էին արիմները (ἄριοι), նախահայերենի կրողները, որոնք աղբյուրների կցկտուր տեղեկութիւնների համաձայն, տեղավորվել են Փոքր Ասիայի կենտրոնական և հարավարևմտյան մասերի մի շարք վայրերում»¹⁸: Հեղինակը պնդում է, որ XII դ. սկզբին երկրորդ անգամ Ասիա թափանցած փոյուզիական ցեղերը հանդիպելով Հալիս գետի հովտում հաստատված իրենց ցեղակից արիմներին՝ նրանց, ինչպես և տեղաբնակ նախաթրակական ցեղերի հետ միասին անցան Եփրատը և 1170-ական թթ. ներխուժեցին Ասորեստանին ենթակա Շուպրիա երկիրը: Այնուհետև ասվում է, որ խեթական թագավորութեան անկումից հետո (մ. թ. ա. 1200—1128 թթ.) թրակափոյուզիական ցեղերը մուշքերի և արիմ-ուրմեացիների հետ միասին «շարժվում են արևելք, դեպի Եփրատ և այնտեղից էլ՝ Հայկական լեռնաշխարհ»¹⁹: Ժամանակի ընթացքում, նշում է Երեմյանը, արմենների լեզուն դառնում է Արմե-Շուպրիա ցեղային միութեան միակ լեզուն: «Մյուս, գեղազանցապես խուրրիական ցեղերի լեզուները աստիճանաբար վեր են ածվում հայոց լեզվի տերիտորիալ բարբառների և հայոց լեզուն ավելի ու ավելի հարստանալով տարածվում է Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններում ապրող ցեղերի մեջ»²⁰: Երեմյանն ընդգծում է Արմե-Շուպրիայի խոշոր դերը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում: Հետագա-

յում Երեմյանն այդ տեսակետը փոխել է և հայ ժողովրդի կազմավորումը դիտում է իբրև Հայկական լեռնաշխարհի բնիկ հնդեվրոպական ցեղերի համախմբման արգասիք:

Այլ է պրոֆ. Ի. Մ. Իյակոնովի տեսակետը: XII դարի կեսերին Շուպրիա երկիրը թափանցած ցեղախմբերի մասին Ասորեստանյան Թիգլաթպալասար I թագավորի (1115—1077) տարեգրութեան մեջ ասվում է. «Իմ թագավորութեան սկզբին 20000 մուշքեր և նրանց հինգ թագավորները, որոնք հիսուն տարի է ինչ նվաճել էին Աշուրին՝ տիրոջ հարկ ու տուրք բերող Ալզի և Պուրուլումզի երկրները, հույսը դրին իրենց հզորութեան վրա և եկան նվաճեցին Կադմուխի երկիրը»: Այնուհետև Թիգլաթպալասարը արձանագրում է, որ անցնելով «Քաշիյարա լեռան դժվարին վայրը, նրանց 20000 ռազմիկների և նրանց հինգ թագավորների հետ Կադմուխի երկրում չափվեցի և նրանց պարտութեան մատնեցի, նրանց մարտիկների դիակ(ներ)ը ինչպես հեղեղ կիտեցի... նրանց հարստութիւնը և ունեցվածքը խլեցի: Նրանց զորքից մնացած 6000 (զինվորները), որոնք փախել էին իմ զենքից, (եկան և) գրկեցին իմ ռաքերը: Նրանց ընդունեցի և որպես իմ երկրի ժողովուրդ համարեցի»²¹:

Մուշքերի երկիրը, որտեղից նրանք եկել էին ըստ հինարևելյան ավանդույթի, համարվում էր փոյուզիական թագավորութիւնը: Թիգլաթպալասարի տարեգրութեան մեջ հիշատակվում են նաև կասկերը և ուրումեացիների՝ 4000 մարդ, որոնք «խաթե երկրի անհնազանդ մարդիկ» էին, եկել և գրավել էին Շուբարեական (իմա՝ խուրիական) Ալզի և Պուրումուզի երկրների բնակավայրերը (նույն տարեգրութեան մի այլ հատվածում 4000 ուրումեացիների հետ հիշատակված են աբաշլացիները, որոնք նույն կասկերն են): Թիգլաթպալասարը սրանց նույնպես ենթարկել է իրեն և գաղթեցրել Վերին Միջագետք»²²:

¹⁸ «Հայ ժողովրդի պատմութիւն», հ. 1, Երևան, 1971, էջ 230.

¹⁹ Նույն տեղում, էջ 237.

²⁰ Նույն տեղում, էջ 240.

²¹ И. М. Дьяконов, Ассииро-вавилонские источники... текст 10 (1, 62), թարգ. տե՛ս Քրեստոմատիա..., էջ 16—17:

²² Նույն տեղում, текст 10 (II, 89).

ի. Մ. Դյակոնովը շատ խոշոր, նույնիսկ որոշիչ դեր է վերագրում մուշքերին հալոց լեզվի ձևավորման գործում: Նա հայերին համարում է Հայկական լեոնաշխարհի բնիկների անմիջական հետնորդներ՝ սկսած ուշ քարեդարից մինչև վաղ բրոնզեդարը, ինչպես և այն խոշոր քաղաքակրթությունների ավանդների կրողներն ու շարունակողները, որոնք ստեղծվել են այստեղ սկսած միջին բրոնզի ժամանակներից մինչև հին ժամանակները²³:

Ի. Մ. Դյակոնովը գտնում է, որ հայերը Հայկական լեոնաշխարհի բնիկներն են իրենց կենսաբանական ծագումով և մշակութային հարուստ ավանդներով, բայց ոչ լեզվով: Նա պնդում է, որ Հայկական լեոնաշխարհի բնիկները սկզբնապես խոսել են հիմնականում խուռիերեն, ուրարտերեն, Վերին Եփրատի շրջանում լուվերեն, իսկ հայերեն նախալեզվի կրողները եղել են մուշքերը: Նախահայերենի երևալը Մերձավոր Արևելքում նա կապում է հնդեվրոպական ժողովուրդների բալկանյան նախահայերենից XIII—XII դարերում ներգաղթելու տեսության հետ, որոշակի պնդելով, որ մուշքերը Փոքր Ասիայում և Եփրատի արևելյան հովտում հայտնվել են խեթական թագավորության անկումից հետո՝ 1165 թ. Փոչուգիայից, բայց նրանք VII դարից հայտնի փոուգացիները չեն, այլ ավելի հին արևելյան մուշքերն են²⁴:

Դյակոնովը նշում է, որ մուշքերը, լինելով քոչվոր, առևտրական շարժուն ժողովուրդ, կարողացան իրենց նախահայերենը տարածել Հայկական լեոնաշխարհի տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների մեջ, որը և ընդհանրանալով դարձավ վաղեմի բնիկների ընդհանուր լեզուն, իր մեջ առնելով այդ բնիկների լեզվի տարրերը:

Ի. Մ. Դյակոնովի հաշվումներով Հայկական լեոնաշխարհը թափանցած մուշքերի քանակը իրենց զբաղեցրած վայրերի բնակչության 25—30 տոկոսից, իսկ ուրարտական թագավորության ամբողջ բնակչության 10 տոկոսից ավելին էր²⁵: Բե-

րելով Թիգլաթպալասարի վկայությունը մուշքերի 20000 զորքը կոտորելու, նրանցից 6000-ին գերի վերցնելու մասին, նա պնդում է, որ Թիգլաթպալասարը բոլորին չկոտորեց, կամ բոլոր մուշքերին, կասկերին և ուրումեներին չգաղթեցրեց Վերին Միջագետք:

Արդ, հարց է առաջանում՝ ի՞նչ մնաց իրենց զբաղեցրած վայրերի բնակչության 25—30 տոկոս, մանավանդ Ուրարտական պետության բնակչության 10 տոկոս կազմող մուշքերից և ապա, կոտորվելուց ու մի մասի Միջագետք գաղթելուց հետո նրանք ի՞նչպես կարող էին «իրենց կրած նախահայերենը» տարածել ամբողջ Հայկական լեոնաշխարհի, այն էլ սոցիալ-տնտեսական և մշակութային բարձր մակարդակ ունեցող հոծ բնակչության մեջ: Ավելի շուտ տեղում մնացած փոքրաքանակ մուշքերը ձուլվեցին ձևավորվող Արմե-Շուպրիայի հայկական էթնիկ ընդհանրությանը: Կարելի է ենթադրել, որ փոուգական ցեղերի կապերը Հայկական լեոնաշխարհի բնիկների հետ և Փոուգիայից եկած մուշքերի հայերի մեջ լուծվելու հանգամանքներն են առիթ տվել Հերոդոտին ասելու, թե հայերը «փոուգական վերաբնակիչներ են», ինչպես և Եվդոկոս Կնիդացուն, թե հայերի լեզուն խիստ փոուգանման է, այսինքն հայերը խոսում են փոուգերենին նման լեզվով:

Հայտնի է, որ նույն ժամանակների սեպագիր արձանագրություններում հիշատակված են ոչ միայն Ուրումայցիները, այլև ներքին Ուրումու, Ուրմե-Արմե հայաբնակ և հայալեզու երկրները: Զևավորվել էր հայկական խոշոր էթնիկ միավոր: Իրավացի է Գր. Ղափանցյանը նշելով, որ այս միջավայրում սահմանամերձ վայրերի՝ VIII դ. անհետացած խուռի-սուբարեական ժողովրդի վերջին ներկայացուցիչները մեծ մասամբ հայացան: Այսպիսով կազմավորվել էր Արմե-Շուպրիա հայկական ցեղային միությունը, որն ընդգրկում էր ընդարձակ տարածք՝ նախի երկրներում՝ Աղձնիք, Անգեղ տունը, Տիգրիսի վերին հոսանքի շրջանները, Մշո և Սասնո լեռներն ու լեռնահովիտները:

²³ И. М. Дьяконов, К предыстории армянского языка..., с. 149.

²⁴ Նույն տեղում, էջ 166, 169—170:

²⁵ Նույն տեղում:

Արմե-Շուպրիա ցեղային միությունը բավական չափ զորեղ էր: Ուրարտական Սարգուրի II թագավորը գրավել էր այս վայրերը, սակայն Արմե-Շուպրիան այնքան էլ հնազանդ չէր ուրարտացիներին և ձգտում էր ինքնուրույնության: Իրա համար նպաստավոր իրավիճակ առաջացավ, երբ 734 թ. Ուրարտական պետությունը ծանր պարսություն կրեց: ասորեստանյան Սարգոն 2-րդ թագավորի՝ երկիրը ներխուժած զորքերից: Այդ ժամանակ կամ փոքր-ինչ հետո, օգտվելով Ուրարտական պետության թուլացումից, Արմե-Շուպրիան անջատվեց նրանից և ինքնուրույնություն ձեռք բերեց:

Այնուհետև Արմե-Շուպրիան դառնում է Հին արևելքում տեղի ունեցող անցքերի մասնակիցը: Հայտնի է, որ 681 թ. Ասորեստանի թագավոր Սինախերիբի որդիները, սպանելով հորը, փախչում են հյուսիս: Աստվածաշնչի թագավորությանց շորրորդ գրքում ասված է, որ Սենեքերիմ թագավորի որդիները՝ Ադրամելեքը և Սարասարը «հարին զնա սրով և ինեանք զերծան յերկիրն Արարադայ»²⁶:

Մովսես Խորենացին նույնպես պահպանել է այդ վկայությունը, որի համաձայն Սենեքերիմին սպանեցին որդիները՝ Ադրամելեքը և Սանասարը և «եկին փախստական առ մեզ»:
Ապա ասվում է՝ «Յորոց զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է Սանասարն. և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն առաջեալ լեան»²⁷:

Այս վկայությունից երևում է, որ Սանասարը բնակեցվել է Արմե-Շուպրիա երկրում: Հուշը հասել է նաև «Սասնա ծոեր» հայկական էպոսին, որտեղ ասվում է, թե Սանասուն կամ Սասուն զավառի անունը առաջացել է Սանասարի անունից: 681 թ. այս անցքերի կապակցությամբ հիշատակված Սկայորդին Արմե-Շուպրիայի իշխանավորն էր: Շուպրիայի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդվում Ասորեստանի Ասարխադդոն թագավորի 673 թ. Շուպրիա կատարած արշավանքի առ-

թիվ թողած արձանագրության մեջ: Պարզվում է, որ Ուրարտուին ննթակա երկրներից զգալի թվով բնակիչներ, որոնք հավանաբար ստրուկներ էին և իշխանավորներին ենթակա աշխատավորներ, փախել և ապաստանել էին Շուպրիայում: Ռուսա թագավորը Շուպրիայի թագավորից պահանջել էր ետ վերադարձնել Ուրարտուից փախածներին, սակայն մերժում էր ստացել: Ասարխադդոնը պարծանքով ասում է, որ «փախըստականներին, որոնք թողել էին իրենց տերերին և փախել Շուպրիա» խիստ պատժել է և վերադարձրել «չուրաքանչյուրին իր երկիրը և իրենց տերերին»²⁸:

Ասարխադդոնը հայտնում է, որ նվաճելով Շուպրիան գերեվարել է նրա բնակիչներին և Ռուսային է վերադարձրել Ուրարտուից փախածներին:

Ասորեստանի թագավորի բարյացակամությունը Ուրարտուի նկատմամբ բացատրվում է նրանով, որ այդ երկու պետությունները կանգնած էին Մեդիայի և Բաբելոնի սպառնալիքի առջև: Ուրարտուից և Ասորեստանից որոշ բնակիչներ Շուպրիա էին ապաստանում, հավանաբար իրենց տերերի բռնությունից և շահագործումից խուսափելու նպատակով, հետևաբար այստեղ ճնշումը, շահագործումը պետք է համեմատաբար մեղմ լինեին: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Շուպրիան դեռևս ապրում էր ռազմացեղային դեմոկրատիայի ժամանակաշրջանում:

Ասորեստանի տիրապետությունը Շուպրիայի վրա կարճատև եղավ: 653 թ. Ասորեստանի դեմ ապստամբել էր Բաբելոնը, որին միացել էր նաև Մեդիան: Ինչպես երևում է, վտանգի ենթարկված Ասորեստանից անջատվում են Շուպրիան և հարավի հարևան երկրները: Աշշուրբանիպալ թագավորի օրոք (668—633) Ասորեստանին ենթակա և հարկատու երկրների ցուցակում չկան Արմե-Շուպրիան, Նաիրին, Խուրուշկիան և Մուսասիրը: Իր ինքնուրույնությունը վերականգնած Արմե-Շուպրիայի կառավարողը դառնում է Սկայորդու որդի Պարուլը, որը VII դարի վերջերին մասնակցում է հինարևելյան տերությունների միջև մղվող պայքարին:

²⁸ Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 428:

²⁶ «Գիրք Թագաւորութեանց 4-րդ», գլ. ԺԹ, 36—37:

²⁷ Մովսես Խորենացի, գիրք առաջին, գլ. ԻԳ:

Կիմերական և սկյութական արշավանքները նկատելիորեն թուլացրել էին ասորեստանյան և ուրարտական թագավորությունները, մինչդեռ պատմական ասպարեզ էին իջել նոր ուժեր: 626 թվականին առաջացել էր Նորբաբելական թագավորությունը, իսկ Կիաքսարի օրոք (625—584) զորեղացել էր Մեդական (Մարաստանի) թագավորությունը, որոնք հակադրվել էին Ասորեստանին և պայքարում էին նրա դեմ: 616 թվականին Բաբելոնը ապստամբություն էր բարձրացրել Ասորեստանի դեմ, դաշնակից ունենալով մեդացիներին (մարերին): Իսկ Ասորեստանի դաշնակիցներն էին Մանա երկիրը և Եգիպտոսը:

Ասորեստանյան զորքերը պարտություն են կրում, որից օգտվելով Կիաքսարը նվաճում և Մեդական թագավորությանն է միացնում Ասորեստանի դաշնակից Մանա երկիրը:

612 թվականին, երբ բաբելական, մեդական և սկյութական զորքերը պաշարում են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, իբրև նրանց դաշնակից հանդես է գալիս Արմե-Շուպրիայի կառավարիչ Պարուլը:

Մովսես Խորենացին, իրեն հասած աղբյուրների հիման վրա գրում է. «...զմերս ասեմ Պարուլ... որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ»²⁹: Վարբակը, ինչպես նշված է գիտական գրականության մեջ, մեդական թագավոր Կիաքսարն է: Նա և Նոր բաբելոնյան Նաբուպոլասար թագավորը սկյութների հետ միասին 612 թ. գրավում են Նինվեն: Մովսես Խորենացին հաղորդում է նաև, որ Վարբակը Ասորեստանի դեմ մեծաքանակ զորք գումարելով, իր կողմն է գրավում նաև Պարուլին. «յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարուլը, թագաւորութեան շուք և ձև նմա խոստանալով»³⁰: Այսպես, Պարուլը նախարար (իշխանավոր) էր և Վարբակես-Կիաքսարը նրան թագավորական շուք և ձև է խոստանում: Պարուլը մասնակցում է Նինվեի գրավմանը, ուստի

անվանապես թվարկելով մարաց թագավորներին, Մովսես Խորենացին ավելացնում է «Իսկ մեր առաջին ի Վարբակայ մար է պսակեալ Պարուլը որդի Սկայորդույ»³¹:

Այս անցքերը քանիցս ուսումնասիրվել և իրենց լուսաբանությունն են ստացել գիտնականների, որոնց թվում նաև Գր. Ղափանցյանի, Բ. Բ. Պիտրովսկու, Ս. Տ. Երեմյանի, Ի. Մ. Դյակոնովի և այլոց աշխատություններում:

Բ. Բ. Պիտրովսկին քննարկելով այս անցքերը հիշատակում է, որ վաղուց արդեն նշվել է Մովսես Խորենացու վկայությունների նմանությունը III դ. վերջերի և IV դարի առաջին կեսի հեղինակ Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության հետ, իսկ Եվսեբիոսն էլ իր հերթին այդ տեղեկությունները ընդօրինակել է Կտեսիասից և Դիոդոր Սիկիլիացուց: Ապա համեմատելով Խորենացու և Եվսեբիոսի համապատասխան բնագրերը և նշելով նրանց մոտիկությունը, մատնացույց է անում այն հանգամանքը, որ Խորենացու մոտ բացակայում է Ասորեստանի դեմ Վարբակի դաշնակից բաբելական թագավոր Բելեսիսի անունը և մեջ է բերված հայ իշխան Պարուլին վերաբերող պատմությունը:

Պիտրովսկին հիշատակում է, որ անգլիական գիտնական Գեդդի 1923 թ. հրատարակած սեպագիր աղյուսակի մեջ պատմվում է մեդացիների կողմից 614 թ. Աշուրի գրավման և ավերված քաղաքում բաբելական թագավոր Նաբուպոլասարի և մեդական թագավոր Կիաքսարի միջև հակասորեստանյան դաշինք կնքելու մասին: Ըստ որում 612 թ. դաշինքի հարում են նաև որոշ վաշկատուն ցեղեր (սոմալան մանդա): Գեդդի կարծիքով դրանք ոչ միայն սկյութներ էին, այլև ուրիշ մանր երկրների ռազմական ջոկատներ³²: Ուրեմն սկայորդու որդի Պարուլը՝ այդպիսի երկրներից մեկի իշխանն էր, որն օգնեց Վարբակ-Կիաքսարին և փոխարենը արքայական թագ ստացավ: Ի. Մ. Դյակոնովը հնարավոր է համարում ոչ միայն

31 Նույն տեղում, գլ. ԻԲ:

32 Բ. Բ. Պիտրովսկի, Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը. ԼՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 6, էջ 22—23:

29 Մովսես Խորենացի, գիրք առաջին, գլ. ԻԱ:

30 Նույն տեղում:

Ուրարտուի տեղում, այլև նրա կողքին հայ-սկյուֆական³³ թագավորության առաջացումը, որը դաշնակից էր Կիաքսարի հետ: Նա գրում է. «Ասորեստանի և Ուրարտուի դեմ թերևս հանդես է եկել նաև հայկական կամ հայ-սկյուֆական առաջնորդը, որին Մովսեսը հորենացին անվանում է Սկայորդու որդի Պարույր»³⁴: Նա նույնիսկ հարց է առաջադրում՝ Երեմիա մարգարեի հիշատակած Արարատյան թագավորությունը վերաբերում է Ուրարտուին, թե հայկական թագավորությանը, այսինքն Արմե-Շուպրիային: Բայց վերջինս հազիվ թե այդպիսի ճանաչում գտած լիներ:

Ասորեստանյան երբեմնի հզոր թագավորության անկմանը հետևեց նաև Ուրարտուի անկումը: 714 թ. Սարգոն Բ-ի արշավանքը և Ռուսա 1-ինի կրած պարտությունը ծանր հետևանքներ ունեցան, սակայն ուրարտական թագավորության անկումը դեռևս հեռու էր: VII դարի առաջին կեսում Ուրարտուի վիճակը նույնիսկ նկատելիորեն կայունացավ, սակայն դա ժամանակավոր բնույթ էր կրում: Ուրարտական թագավորությունից անջատվել էին Արմե-Շուպրիան, Խուբուշկիան, Էրուսասիրը, խոտվություններ, ապստամբություններ էին բռնկվում թագավորության ծայրամասերում:

Ասորեստանի հետ ունեցած մրցակցությունից ստացած հարվածներին ավելացել էին նաև կիմերական, մանավանդ սկյուֆական ցեղերի հարվածները: VII դարի երկրորդ կեսին Ուրարտուն արդեն վերջնականապես թեքվել էր դեպի անկում: Առաջացել էին նաև նոր հակառակորդներ, մասնավորապես նոր բաբելյական թագավորությունը, մանավանդ Մեդիան (Մարաստանը), որը 625 թ. ադատագրվելով սկյուֆական 28-ամյա տիրապետությունից՝ հզորանում էր, դառնալով Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական անցքերի գլխավոր գերակատարը:

³³ Գ. Բ. Զահուկյանը սկայ-ը համեմատում է Բրակյան սկայ-ների ցեղի անվան հետ: Տե՛ս «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները», Երևան, 1970, էջ 67:

³⁴ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 354.

Ուրարտուն, թուլացած և կանգնած արտաքին սպառնալիք վտանգի առջև, շմասնակցեց 612 թ. անցքերին, որից կարելի է ենթադրել, որ Մեդիան և նոր բաբելյական թագավորությունը Ուրարտուն համարում էին Ասորեստանի բարեկամը: Ասորեստանի կործանումից հետո Մեդիան և նոր բաբելյական թագավորությունն իրենց մեջ էին բաժանել սասորեստանյան «ժառանգությունը» և ինչպես լինում է նման դեպքերում, գծով էլ և թշնամացել էին:

609 թ. նոր բաբելյական թագավոր Նաբոպալասարի գորբերը, հետապնդելով Եգիպտոսից օգնություն ստացած ասորեստանյան զորքերին, հասան մինչև Ուրարտուի սահմանները՝ Իսալայից հյուսիս, Տավրոսյան լեռների շրջանը: Այդ նույն ժամանակ Մեդիական բանակը ծանր հարված հասցրեց Ուրարտուին: Ի. Մ. Դյակոնովի կարծիքով մեդացիները իրենց ենթարկեցին Ուրարտուն, միաժամանակ գտնում է, որ Ուրարտուի նվաճումը նրանց կողմից սկսվելով 609 թ. տեղ է որոշ ժամանակ: Նշվում է, որ Մանան, Ուրարտական և Սկյուֆական թագավորությունները, թեև Մեդիային ենթակա, պաշտպանում էին իրենց ինքնությունը և վերջին անգամ հիշատակված Լե 593 թվականին³⁵:

594 կամ 593 թթ. է թվագրվում Երեմիայի մարգարեությունը, որով կոչ է արվում Բաբելոնի դեմ հանել հյուսիսային երկրների մեծ ժողովուրդներին:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ նշվում է. «Առէք նշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն: հրաւիրեցէք ի վերայ դորա գունդս, պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին...»³⁶: Երբայական բնագրում եղել է «զազգս կոչեցէք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Մինւոյ եւ Ասքանազայ...»³⁷:

«Այրարատեան թագաւորութեանցն» հոգնակի ձևը սկզբն-

³⁵ И. М. Дьяконов, История Мидии, с. 116—117.

³⁶ Մարգարեություն Երեմայ, գլ. ԾԱ, 27:

³⁷ Նույն տեղում, ծան. 6:

հայտորեն ծագում է երրայական բնագրից, որտեղ հիշատակված է երեք թագավորություն³⁸:

593 թ. ուրարտական թագավորությունը դեռևս պահպանվում էր, և իրավացի են Գր. Ղափանցյանը, Բ. Պիոտրովսկին և ուրիշները, որոնք գտնում են, որ Այրարատյան (եբրայերեն բնագրում «Արարատայ»), իտրենացու բնագրի մի այլ ձևաչափում՝ «Արարատեան») թագավորության անվանումը վերաբերում է Ուրարտուին:

Հավանական է այն ենթադրությունը, որ ուրարտական թագավորության անկումը տեղի է ունեցել 590 թ., երբ մեղական զորքը արշավանք ձեռնարկելով դեպի արևմուտք՝ Լիդիա, չէր կարող թիկունքում թողնել ուրարտական թշնամի պետությունը: Այսպիսով ըստ Ի. Մ. Դյակոնովի, ուրարտական պետությունն ընկավ մեղացիների հարվածների ներքո: Բ. Պիոտրովսկին, Ն. Հարությունյանը նշում են, որ ուրարտական պետության կործանմանը VI դարի սկզբին նպաստեցին նաև նրա ներքին թուլացումը, իսկ գոյության վերջին շրջանում՝ այդ պետության կազմի մեջ մտնող մի քանի երկրամասերի ապստամբությունները, ուրարտական քաղաքներին և վարչական կենտրոններին հյուսիսից թափանցած սկյութների և այլ ցեղերի հասցրած ծանր հարվածները: Միանգամայն հավանական է, որ Կիաքսարը գրավել էր ուրարտական պետության երկրները, քանի որ 590 թ. պատերազմից հետո Մեդական պետության և Լիդիայի սահմանները Փոքր Ասիայում անցնում էին Հալիս գետով:

Մեդական զորքերը հավանաբար գրավել էին նաև ԱրմեՆուպրիան: Այդուհանդերձ կարելի է ենթադրել, որ եթե ուրարտական թագավորությունն իբրև Մեդիայի հակառակորդը կործանվեց, ապա ԱրմեՆուպրիան, որը Վարբակ-Կիաքսարի բաշնակիցն էր, կարող էր պահպանել իր ինքնուրույնությունը:

³⁸ Մովսես Խորենացու խոսքերը. «Հրաման տուր, ասէ, Այրարատյան Ղազաւորութեանն և Ասքանազեան գնդին» ծագում են Աստվածաշնչից, միայն այն տարբերությամբ, որ Խորենացու մոտ փոխանակ «Այրարատյան թագաւորութեանցն» հոգնակի ձևի բերված է «Այրարատեան թագաւորութեանն» քակի ձևը:

նր, որպիսի հնարավորություն չի բացառում նաև Ի. Դյակոնովը:

Թերևս Արմե-արիմների երկրի շատ հին լինելն են նշանավորում նրա գլխավոր քաղաք Նիխիրիայի անվան, ինչպես և սրիմների երկրի Ingalava (հայկական աղբյուրների Անգեղտուն) գավառը, որի մասին Փավստոս Բուզանդն ասում է. «Ոստան արքունի լեալ էր վաղ վաղ», ըստ որում Անգղ (Անգեղ) ամբողջ Ղափանցյանը նույնացնում է Նիխիրիայի հետ: Դյակոնովն էլ նշում է, որ Նիխիրիան հայտնի էր դեռևս 2-րդ հազարամյակի սկզբներից:

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը XII—VII դդ. մ. թ. ա. շատ էր առաջադիմել և արդեն ձևավորվել էին երկու խոշոր կենտրոններ, որոնք համախմբելով բոլոր հայկական ցեղերն ու ցեղախմբերը, պետք է վճռական դեր կատարեին և իր ավարտին հասցնեին Հայկական լեռնաշխարհի ամբողջ բնակչության և՛ հայկական, և՛ ոչ հայկական (ուրարտների, խուտիների, լուվիների, մուշքերի) էթնիկ միավորների հայալեզու դառնալը և համաձուլվելը կազմավորվող հայ ժողովրդի մեջ, որը տեղի էր ունենում հայ էթնոսի և հայոց լեզվի վճռական և որոշիչ դերի շնորհիվ:

Բ. Պիոտրովսկին իրավացիորեն նշում է, որ «հայ ժողովրդի ձևավորման մեջ բացառիկ նշանակություն են ունեցել ցեղերի երկու միություններ՝ մեկը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Արմինա միությունը (Արևելյան Հայաստան), մյուսը՝ հյուսիս-արևմուտքում՝ Հայկական (Хай-СКИЙ) միությունը (Արևմտյան Հայաստան)³⁹:

Այսպես, արևմուտքից և հարավ-արևմուտքից տեղի է ունենում հայերեն լեզվի տարածումը դեպի Լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան երկրամասերը: Արևմուտքում արդեն հայացել և հայալեզու էին դարձել Հայաստալի տարածքի ոչ հայկական ցեղերը, Թոգարամայի բնակչությունը, Մելիդու-Մելիտենեի լուվիները: Հայկական ցեղեր էին բնակվում Իսու-

³⁹ Բ. Բ. Պիոտրովսկի, Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը, էջ 25. տե՛ս նաև «Банское царство» (Урарту), с. 129.

վա-Սուսիա-Սոփքում և այժմ հայալեզու էին դառնում լեռնաշխարհի կենտրոնական մասի նաիրյան երկրների խուռի և ուրարտական ցեղերը, որոնք պատմական այս ժամանակներում արդեն քայքայվում էին և ենթակա էին անհետացման:

Նույնը տեղի էր ունենում լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, որտեղ, հայկական միջավայրում, արդեն հայալեզու էին դարձել Շուպրիայի սուրարիները, մուշքերը, հայալեզու էին խուրուշկիա-Նաիրի և Տիգրիսի վերին հոսանքի երկրների բնակիչները: Հայոց լեզուն այժմ հարավ-արևմուտքից տարածվում էր դեպի հյուսիս և արևելք: Ինչպես երևում է, այս կողմերում ևս, բացի խուռիներից և IX—VII դարերում հաստատված ուրարտներից, կային նաև հայկական ցեղեր, օրինակ Արածանիի վերին հոսանքի շրջանի Տուարածինյան հովտում՝ հայկական Տուարածատափում: Միանգամայն հավանական է հայկական ցեղերի առկայությունը նաև Հայկական միջնաշխարհի և արևելյան մարզերի այլ վայրերում: Նաև Այրարատ նահանգում. հարցեր, որոնք կարոտ են լրացուցիչ փաստարկների:

Ուրարտական պետության հյուսիսարևելյան մարզերի, մասնավորապես Արարատյան բարեբեր դաշտավայրի և հարակից նախալեռնային երկրամասերի դերը շափազանց մեծ է. եղել ինչպես տնտեսական, նույնպես և ռազմաստրատեգիական առումներով: Դա պարզ երևում է ուրարտական բազմաթիվ արձանագրություններից, ինչպես և այս վայրերում կատարված հնագիտական պեղումների արդյունքներից: Պատահական չէ, որ Արարատյան դաշտավայրում և նրա մերձակայքում գոյություն են ունեցել ուրարտական բազմաթիվ քաղաքներ և ամրոցներ, անցկացվել են ջրանցքներ: Կարելի է ասել՝ Արարատյան դաշտավայրն իր շրջակայքով դարձել էր Ուրարտական պետության կարևորագույն կենտրոնը նրա հյուսիսում: Դրան համապատասխան պետք է մեծ լինեն նաև այս վայրերի բնակչության դերը՝ տարբեր ասպարեզներում, նաև հաջողորմի կազմավորման գործում: Արարատյան դաշտը, ըստ արձանագրությունների, եղել է Ազա երկրի կենտրոնը: Էթնիկ ի՞նչ կազմ ունեն տեղի բնակչությունը՝ պարզ չէ: Ենթադրում

են, որ եղել են խուռիներ, ինչ որ քանակությամբ հարավից եկած ուրարտներ և ուրիշներ, իսկ Ազայի բուն բնակիչները էթնիկ և լեզվական ի՞նչ խմբի էին պատկանում, մի հարց, որը կարող է ուսումնասիրության, որի համար աղբյուր կարող են ծառայել սեպագիր արձանագրություններում պահպանված տեղանուններն ու անձնանունները: Այս ամենը դեռևս ենթակա է պատմալեզվաբանական լուրջ և վերլուծական քննության: Հայկական ցեղերի առկայությունն այստեղ բացառված չէ:

Ուշագրավ է նաև մի կարևոր փաստ. դեռևս VIII դարի առաջին քառորդում Նատի և Սուսանի երկրներից Ազա երկրի էրեբունի քաղաքը վերաբնակեցված 6600 բնակիչները առավելապես հայեր էին (Սուսանի, Սոփքից բերվածները) և ամենայն հավանականությամբ արդեն հայալեզու էին նրանց հետ եկած խատի-խեթերը: 6600-ը փոքր թիվ չէր և Արարատյան դաշտի կենտրոնում բնակեցված այդ հայալեզու բնակչությունը տեղի հայերի հետ միասին կարող էր որոշ դեր կատարել հայերենի տարածման և արմատավորման գործում:

Հայոց լեզվի տարածման և ոչ հայ բնակչության հայերի հետ ձուլվելու՝ հայալեզու դառնալու՝ հայացման հյուսիսարևմուտքից սկսված պրոցեսը նույնպես ծավալ էր ստանում: Ղափանցյանը նշում է, որ հայացիների հետ միասին արևելք էին գալիս նաև նրանց ազգակից պալա (բալա) ցեղերը⁴⁰:

Հայոց լեզվի տարածման և ոչ հայ բնակչության հայացման շարժումները սկսվելով հյուսիս-արևմուտքում և հարավարևմուտքում, շուտով ընդգրկեցին Հայկական լեռնաշխարհի ամբողջ արևմուտքը և առաջանալով՝ հանդիպեցին հայոց միջնաշխարհում և միավորվելով մեծ ուժ և գորություն ստացան: VII դ. վերջերին VI դ. սկզբներին մ. թ. ա. հայ ժողովրդի կազմավորման դարավոր պրոցեսն իր ավարտին էր հասնում և Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հիմնականում հայալեզու էր: Հայոց լեզվի արագ տարածվելը կարելի է բացատրել հայ ժողովրդի կազմավորման դարավոր պրոցեսի վերջին փուլի բուռն ընթացքով, հայկական էթնիկ ընդհան-

⁴⁰ Гр. Капанцян, Историко-лингвистические работы, с. 128.

րությամբ և հայոց լեզվի մեծ կենսունակությամբ: Գրան հա-
կառակ՝ խուռի-ուրարտական ցեղերը կանգնած չէին ժողո-
վուրդ կազմելու ճանապարհին և, աստիճանաբար ձուլվելով
հայերի հետ, պիտի անհետանային, որն արտահայտվեց նաև
նրանց լեզվի մահացման և անհետացման իրողությամբ:
Վերջապես ամբողջ լեոնաշխարհի ոչ հայկական ցեղերի ու
ցեղախմբերի հայացման հիրավի արագ տեղի ունենալը ան-
ուղղակի, բայց կարևոր փաստարկ է այն տեսակետի օգտին,
որ հայկական ցեղեր և ցեղախմբեր բնակվում էին Հայկական
լեոնաշխարհի ոչ միայն հյուսիսարևմտյան և հարավարևմտ-
յան երկրամասերում, այլև հին նաիրյան երկրների հյուսիսա-
յին կենտրոնական մասերում, հայոց միջնաշխարհում:

Գր. Ղափանցյանը և Բ. Բ. Պիոտրովսկին հայ ժողովուր-
դը և նրա լեզուն Եվրոպայից եկած շեն համարում, ընդհակա-
ռակը կանգնած են նրանց բնիկ տեղական (ավտոխթոն) լի-
նելու տեսակետի վրա, չբացառելով հայոց լեզվի կապը (բայց
ոչ նույնությունը) փոքր ասիական, փոռզական լեզուների
հետ: Նրանք միաժամանակ իրավացիորեն նշում են, որ Հայ-
կական լեոնաշխարհի բնակիչները միայն հայեր չեն եղել, այս-
տեղ բնակվել են նաև այլ ցեղեր ու ցեղախմբեր, որոնք հե-
տագյում ձուլվեցին հայ ժողովրդի հետ:

Ղափանցյանը և Պիոտրովսկին քննական մոտեցում են
ցուցաբերում հայկական հինավուրց ավանդությունների, մաս-
նավորաբար Մովսես Խորենացու պահպանած տեղեկություն-
ների նկատմամբ, իհարկե, արժանին մատուցելով դրանց⁴¹:

⁴¹ Ի. Մ. Գյակոնովը բացասական վերաբերմունք է ցուցաբերում հայ-
կական աղբյուրների, մասնավորապես Մովսես Խորենացու պահպանած
ավանդական տեղեկությունների նկատմամբ, մինչդեռ Խորենացին հենվում է
ոչ միայն բանավոր, այլև գրավոր ավանդած տեղեկությունների վրա:
Խորենացին ինքը սուտ, փծուն և անճոռնի համարելով որոշ առասպելներ,
միաժամանակ ասում է, որ կան առասպելներ, «որք զճշմարտութիւն իրաց-
այլարանարար յինքեանս ունին թաքուցեալ»: Ուրեմն ուսումնասիրողի խն-
դիրն է քննական վերլուծությամբ բացահայտել ավանդությունների ու
առասպելների մեջ թաքնված ճշմարտությունը:

Այս ամենով հանդերձ, պետք է մերժելի համարել ավանդական, մանա-
վանդ առասպելական տեղեկությունների ոչ քննական, պարզունակ, նույնիսկ
անառարկելի ընկալումը, իրրև պարզ ճշմարտություն: Բազմակողմանի

Պիոտրովսկին գտնում է, որ այդ ավանդությունների կարևո-
րության անտեսումը և, ընդհակառակը, հունական աղբյուր-
ների հաղորդած տեղեկությունների գերազանահատումը բա-
ցատրվում է մի կողմից՝ հույների տարածմամբ Միջերկրա-
կանի ավազանում և հարակից երկրներում զգալի թվով գա-
ղութների ստեղծմամբ, հետևաբար և աշխարհաճանաչողու-
թյան, ինչպես և հոգեբանության հունական բնույթով, մյուս
կողմից հայոց լեզվի հնդեվրոպական լինելու հանգամանքով,
քանի որ այդ լեզվի նախահայրենիքը սովորաբար տեղադրվում
էր Եվրոպայում՝ Բալկաններում:

Հույն հեղինակների հաղորդած տեղեկությունների հիման
վրա Հ. Մանանդյանը գտնում է, որ հայերը եկել են Բալկան-
ներից և միավորվելով տեղական բնակչության հետ կազմել
հայ ժողովուրդը: Սովորաբար նշվում է, որ այդ հարցում Մա-
նանդյանը հետևում է իր ուսուցիչ Մարկվարտին, սակայն
պետք է ասել, որ Մարկվարտն ավելի զգուշավոր է արտահայտ-
վում: Նա հայերի միգրացիոն ալիքները կապելով Եփրատի
վերին հոսանքի, Փոքր Հայքի հետ, միաժամանակ նշում է, որ
հայերի ներգաղթը Եվրոպայից Փոքր Ասիա դուրս է մնում մեր
պատմական իմացության սահմաններից:

Այժմ մի քանի խոսք Տ. Վ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի
«Индоевропейский язык и индоевропейцы» աշխատու-
թյան մասին: Այդ երկհատոր մեծածավալ աշխատությունը
պարունակում է հսկայական փաստական նյութեր: Նրանում
քննարկված են բազմազան տեսակետներ հնդեվրոպական լե-
զուների, հնդեվրոպացիների նյութական ու հոգևոր մշակույ-
թի մասին: Աշխատության մեջ մեծ տեղ են գրավում հնդեվրո-
պական ցեղերի «նախահայրենիքի» և ընդհանուր նախալեզվի
տրոհման, հնդեվրոպական հիմնական լեզուների առաջացման
ու տարածման (միգրացիայի) ուղղությունների և ուղիների
հարցերը:

քննական վերլուծական մոտեցումը այս և նման դեպքերում գիտական
ուսումնասիրության անխախտ և պարտադիր պայմանն է:

Հնագույն լեզուների և պատմամշակութային բազմազան փաստերի բնութիւնը հիման վրա հեղինակները գալիս են այն եզրակացութեան, որ հնդեվրոպական ցեղերի և հնդեվրոպական ընդհանուր լեզվի «նախահայրենիքը» գտնվել է ոչ թե կենտրոնական կամ հարավարևելյան Եվրոպայում, այլ Մերձավոր Արևելքում և ընդգրկել է Փոքր Ասիան, Հարավային Կովկասը, Հյուսիսային Միջագետքը և Իրանի հյուսիսարևմտյան մասը: Ուրեմն Հայկական լեռնաշխարհն համարյա ամբողջովին գտնվել է այդ ոլորտում:

Տ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի ուշագրավ և գիտական բազմակողմանի ուսումնասիրությունների ուղիներ բացող այս աշխատության նշանակությունը անառարկելի է: Նրա կարևորությունը մեծ է նաև հայ ժողովրդի կազմավորման և հայոց լեզվի առաջացման հարցերի տեսակետից, որքանով խոշոր նպաստ է բերում հայ ժողովրդի և հայոց լեզվի բնաշխարհիկ լինելու օգտին⁴²:

Ուրարտու-Հայասան և հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրության ներկա վիճակը թույլ է տալիս անել մի բանի ընդհանուր բնույթ կրող եզրակացություն.

1. Ասորեստանյան թագավորների թողած սեպագիր արձանագրությունները վկայում են, որ դեռևս նախքան մեր թվականության XIII դարում Վանա լճի հարավարևելյան ավազանում առաջացել էր Ուրուատրի-Ուրարտու ցեղային միությունը, որը հետզհետե ավելի միավորվելով ու զորեղանալով IX դարի առաջին կեսին ձևավորվեց իբրև պետություն: Ուրարտներն իրենց բուն երկիրը անվանում էին Բիայինա-Բիայնիլի (այդտեղից էլ Վան), իսկ պետությունը նույնպես Բիայնիլի: Այսպիսով բուն Ուրարտու-Բիայնիլին, սկզբուսահմանափակվում էր Վանա լճի ավազանով: Շուտով Ուրարտու-Բիայնիլի պետության թագավորները, հենվելով ուժեղ զորաբանակի վրա, ռազմական արշավանքներ ձեռնարկեցին մանավանդ դեպի արևմուտք, հյուսիս ու հյուսիս-արևմուտք և

իրենց տիրապետությունը հաստատեցին ամբողջ Հայկական լեռնաշխարհի բոլոր երկրների, ցեղերի ու ցեղախմբերի վրա: Պետությունը ստեղծել էին ուրարտները, ուստի այն կոչվում է Ուրարտական պետություն, ավելի հաճախ Ուրարտու, բայց Ուրարտուն միատարր էթնիկ կազմ չունեցող, բազմազան էր և էթնիկապես և լեզվով տարբեր ցեղերից ու ցեղախմբերից, որոնց թվում բուն ուրարտները փոքրամասնություն էին, իսկ գերակշռող մեծամասնությունը կազմում էին հայ-արմենական, որոշ վայրերում սկզբնապես նաև խուռի ցեղերն ու ցեղախմբերը: Հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության գոյության ամբողջ ժամանակաշրջանում ուրարտները միասնական ժողովուրդ չստեղծեցին և չէին կարող ստեղծել: Ուրարտական պետությունը տարբեր ցեղերի, ցեղախմբերի և ցեղային միությունների ռազմական ուժով միավորված քաղաքական կազմավորում էր, զուրկ էթնիկական միասնությունից: Այսպիսով, ուրարտացի ասելով պիտի հասկանալ բուն բիայնացի՝ ուրարտներին, իսկ Ուրարտու ասելով՝ Ուրարտական պետությունը, որի բուն ծագումը Հայկական լեռնաշխարհն էր՝ Հայաստանը:

2. Միասնական ժողովուրդ չէին կարող կազմել ոչ միայն Բիայնայի ուրարտները, այլև Հայկական լեռնաշխարհում նրանց հետ միասին բնակվող և պատմության բերումով նույնպես քայքայվող, անհետացող խուռի ցեղերը: Հայտնի է, որ Հին արևելքի հնագույն, անզամ հզոր պետությունները զենքի ուժով քաղաքական միասնություն ստեղծեցին, սակայն բազմազան լինելով խայտաբղետ և այլալեզու էթնիկ խմբերից, նրանց մեջ միասնական ժողովուրդներ չգոյացան, ուստի կործանվելով՝ այդ պետությունները էթնիկ հետորդներ չթողեցին⁴³: Նրանց խայտաբղետ էթնիկ խմբերի ու միավորների հետագա պատմական ճակատագիրը հանգեցրեց նրանց լուծմանը նոր կազմավորող ժողովուրդների մեջ: Նույն ճակատագիրն էր վիճակված, ինչպես Միտանի պետության խուռի-սու-

42 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. II, раздел II, гл. 11—12, с. 892—995.

43 Բ. Բ. Պիտուսկի, Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը, էջ 13—14:

բարիներին, նույնպես և Ուրարտական պետութեանը և ուրարտացիներին:

3. Միանգամայն այլ ընթացք ունեցավ հայ ժողովրդի կազմավորումը տեղում՝ Հայկական լեռնաշխարհում: Այն սկսվել էր դեռևս III հազարամյակում՝ նախնադարյան կարգերի քայքայմանը համընթաց, նկատելիորեն առաջադիմեց II հազարամյակի կեսերին և նոր թափ ու կերպարանք ստացավ հետագայում:

4. Նախքան մեր թվ. II հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Հայասա երկրում, առաջացել էր հայասական ցեղային բավականաչափ զորեղ միությունը, որն իր սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացմամբ ընթանում էր դեպի պետության կազմավորումը: XII դարում հայասական ցեղային միությունն իբրև քաղաքական միավորում քայքայվեց, սակայն մինչ այդ, նաև հետագայում, հայասական ցեղերն ու ցեղային միությունը խոշոր դեր կատարեցին հնդեվրոպական հայերենի տարածման, հայ ժողովրդի կազմավորման գործում և ենթադրվում է, որ իրենց անունը ժառանգություն թողեցին հայ ժողովրդին:

5. Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում XII—VIII դարերում տեղի ունեցավ հայկական ցեղերի միավորումը, որը իր հետ ձուլեց և հայալեզու դարձրեց այդ ընդարձակ շրջանի ոչ հայկական ցեղերին, մասնավորապես թուլացած և քայքայված շուպրիացիներին: Այսպիսով կազմավորվեց Արմե-Շուպրիա հայկական բավականաչափ զորեղ ցեղային միությունը, որը օգտվելով 714 թ. ուրարտական պետության Ասորեստանից կրած պարտությունից և թուլացումից, անջատվեց նրանից և ինքնուրույնություն ձեռք բերեց: Ավելի ուշ այդ ցեղային միության իշխանավորը՝ Սկայրդու որդի Պարույրը ըստ աղբյուրների դաշնակցած Մեդիայի թագավոր Վարբակ-Կիաքսարի հետ մասնակցեց ասորեստանյան պետության կործանման կռիվներին և Վարբակից թագ ստացավ:

Արմե-Շուպրիան ուներ զարգացած երկրագործական, անասնապահական տնտեսություն, արհեստագործություն, այդ թվում տեղական հանքերի մշակման վրա հենված մետաղա-

գործություն: Այսպիսով Արմե-Շուպրիան Հայասայից ավելի ուշ կազմավորված և սոցիալ-տնտեսական, էթնիկական ավելի կուռ հայկական հանրություն էր և փաստորեն կազմավորվող հայ ժողովրդի կորիզի դերը կատարեց, Արմե երկրի արմենների անունը անցավ ամբողջ հայ ժողովրդին:

Էթնոգենետիկ միակ կենսունակ պրոցեսը Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի կազմավորման շարունակվող և խորացած պրոցեսն էր, հայկական էթնիկ տարրի առաջատար և վճռական դերով: Կազմավորվող հայ ժողովրդի մեջ լուծվեցին ինչպես բիայնիլի-ուրարտները, նույնպես և խուտիները, ինչպես և Հայկական լեռնաշխարհում ինչ-ինչ ժամանակներում երևան եկած մուշքերը, իրենց հիմնական էթնիկ զանգվածներից պոկված կիմմերական և սկյութական ընդհանուր անունով աշկուզա, հայկական աղբյուրների ասքանազյան ցեղերը: Եվ, եթե թողարձա երկրի և ցեղերի անունով հայկական գրավոր ավանդությունը հայերին համարում է «թորգոմյան ազգ», ապա աշկուզա էթնիկ խմբերի անունով՝ «Ասքանազյան ազգ»:

Այսպիսով, Ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանը պատմականորեն հանդիսացավ հայ ժողովրդի կազմավորման վաղուց սկսված ընթացքի արագացման և դեպի ավարտը տանող կարևոր դարաշրջան:

Ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանում IX—VII դդ. մ. թ. ա. Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է հարուստ և խիստ բազմազան մշակույթ: Ամենից առաջ դա տեղական ցեղերի մշակույթն էր, որը լեռնաշխարհի սարերով-ձորերով բաժան-բաժան եղած տարբեր մասերում բնակվող ցեղերի ստեղծագործությունը լինելով, ուներ տեղական ինքնատիպ բնույթ, թեև ընդհանրությունները նրանց միջև, ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, արդեն առաջանում էին:

Սկզբնապես նույն բնույթն է ունեցել նաև Բիաինիլի-Ուրուտարի ցեղախմբի մշակույթը: Սակայն ուրարտական պետության առաջացմամբ ստեղծվեց ուրարտական մշակույթը, որը բավականաչափ հարուստ է, ընդգրկում է բազմազան բնա-

գավառներ, բայց կրում է առավելապես պետական պաշտոնական բնույթ, նկատելիորեն միջագետքյան գծեր և որոշակիորեն տարբերվում է լեոնաշխարհի բնիկ մյուս ցեղերի և էթնիկ խմբերի, մասնավորապես հայերի մշակույթներից: Այդպիսին է եղել նաև ուրարտական սեպագրությունը, որը փոխ է առնվել ասորեստանյան սեպագրերից, թեև մասամբ մշակվել, փոխվել է, հանդիսանալով ուրարտական պետության պաշտոնական գիրը, որով ստեղծվել են մեծ թվով արձանագրություններ: Ինչ վերաբերում է արձանագրությունների լեզվին, ապա այն տարբեր է հայերենից, թեև նրա հետ ունի բառապաշարի զգալի առնչություններ և հանդիսացել է բուն Բիայնիլի-ուրարտների գրավոր, հավանաբար նաև բանավոր խոսակցական լեզուն, որն անհասկանալի էր լեոնաշխարհի բնակչության մեծամասնությունը կազմող հայկական և այլ ցեղերի համար ու թերևս մասամբ հասկանալի երկրի խնուր բնակիչներին:

Ուրարտական մշակույթն, իր հինարևելյան գծերով հանդերձ, Հայկական լեոնաշխարհում ստեղծված բնիկ տեղական մշակույթ է, առաջացած լեոնաշխարհի բնակիչների ընդհանուր ջանքերով՝ նրանց պատմության որոշակի դարաշրջանում՝ IX—VII դդ. ուրույն պայմաններում, ուստի այն Հայկական լեոնաշխարհի մյուս, ամենից առաջ հայկական ցեղերի ու ցեղախմբերի կերտած մշակույթի հետ միասին կազմում է հայ ժողովրդի մշակութային դարավոր ժառանգության անբաժան մասը, ինչպես և իրենք ուրարտները հանդիսացան կազմավորված հայ ժողովրդի բաղկացուցիչ մասը:

Ուրարտական պետությունը հինարևելյան հզոր տերություններից մեկն էր, սակայն երկար կյանք չունեցավ և գոյատևելով շուրջ 270 տարի՝ կործանվեց: Մինչդեռ նախքան մեր թվ. I հազարամյակի առաջին կեսում շարունակվում էր հայ ժողովրդի կազմավորման հարաճուն ընթացքը, որն ընդգրկել էր ամբողջ Հայկական լեոնաշխարհը և հանգեց հայ ժողովրդի ձևավորմանը իբրև էթնիկապես միասնական և կենսունակ հանրություն՝ ժողովուրդ, մշտապես հարատևելու պատմական հեռանկարով:

Այսպիսով, Հայկական լեոնաշխարհում—Հայաստանում պատմականորեն կազմավորված առաջին և միակ ժողովուրդը եղել է և մնում է հայ ժողովուրդը:

Կազմավորվող հայ ժողովուրդը,—նշում է Ս. Տ. Երեմյանը,—Ուրարտուի անկումից անմիջապես հետո ստեղծեց իր պետությունը՝ Երվանդյան թագավորությունը⁴⁴:

Արդեն կազմավորված հայ ժողովրդի մասին կարևոր տեղեկություններ են պահպանվել Աքեմենյան Դարեհ արքայի Բեհիսթունյան արձանագրության մեջ, ինչպես և հույն հեղինակների աշխատություններում: Բեհիսթունի եռալեզվյան (հին պարսկերեն, էլամերեն և բաբելերեն) արձանագրության մեջ շարադրված են Իրանում 522—521 թթ. տեղի ունեցած անցքերը և որոշակի տեղ է հատկացված հայերի ապստամբությանը պարսից տիրապետության դեմ: Հայաստանը, իբրև ձևավորված հայ ժողովրդի երկիր, անվանված է Արմինա, իսկ բաբելերեն բնագրում Ուրաշտու (այսինքն՝ Ուրարտու), որը ոչ այնքան վաղ անցյալից եկող անվանում է, քանի որ Արմինան (Արմենիան) նույն Հայկական լեոնաշխարհն է, որտեղ IX—VII դդ. գոյություն ունեւր Ուրաշտու (Ուրարտու) պետությունը⁴⁵:

Հին հունական պատմահայր Հերոդոտոսը (484—425) Արմինան հիշատակում է իբրև կազմավորված հայ ժողովրդի հայրենիքը՝ Արմենիա անվամբ⁴⁶: Մյուս հույն պատմիչ Քսենոփոնը, որը 401—400 թթ. հունական 10000 զորքերի հետ Հայաստանի միջով վերադարձել է Իոնիա, մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հայաստանի և նրա բնակչության՝ արմենների, նրանց բնակավայրերի, տնտեսության և նիստ ու

44 Ս. Տ. Երեմյան, Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները: ՏՆԿ Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 423—443:

45 F. König F., Relief und Inschrift des Königs Darius I, Leiden, 1938. Քարգմ. տե՛ս Գ. Մ. Նալբանդյան, Դարեհ Վշտասպի բիսթունյան արձանագրությունը, Երևան, 1964, պր. 6, 26—30: ՏՆԿ նաև՝ Քրիստոֆա-տիա..., էջ 154—156:

46 Հերոդոտոս, Քարգ, Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 79—80:

կացի մասին⁴⁷: իր «Կյուրոպեդիա» աշխատության մեջ, որը վերաբերում է մ. թ. ա. VI դ. անցքերին, Քսենոֆոնը խոսում է ոչ միայն Արմենիայի, այլև «արմենների թագավորի», նրա հարստությունների և զորքի մասին, հաղորդելով, որ «Արմենների հեծելազորը մոտ ութ հազար է, և հետևազորը մոտ 40 հազար»⁴⁸:

Քսենոֆոնը հիշում է արմենների թագավորի երկու որդիներին՝ Տիգրանին և Սաբարիսին (հավանաբար Շավարշ), սակայն թագավորի անունը չի հիշատակում, իսկ Մովսես Խորենացին հաղորդում է, որ հայոց թագավորը եղել է Երվանդը:

Այսպիսով, դեռևս VI դ. մ. թ. ա. հայ ժողովուրդը պատմության ասպարեզ էր իջել իբրև արդեն ձևավորված ժողովուրդ, իր բուն հայկական պետականությամբ:

Վերջում հարկ ենք համարում նշել, որ Ուրարտուի, ուրարտական պետության և մշակույթի վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ, ինչպես Սովետական Միության մեջ, այդ թվում՝ Հայաստանում, նույնպես և արտասահմանում և ուրարտագիտությունն ստացել է միջազգային բնույթ: Հայ ժողովրդի կազմավորման հարցի վերաբերյալ փաստական նյութը սակավ է, երբեմն հակասական, ուստի հարցի վերաբերյալ գրվել և հրատարակվել են զգալի քանակությամբ տարաբնույթ աշխատություններ, հոդվածներ, արտահայտվել են տարբեր տեսակետներ: Այս պայմաններում վերջին տարիներին հրատարակ են հանվել նաև այնպիսի աշխատություններ, հոդվածներ (առավելապես ոչ մասնագետ հեղինակների գրով), որոնց բնորոշ են միատեսակ թերություններ՝ փաստերի ոչ գիտական ընկալում և մեկնաբանություն, տվյալ հարցում պատմական օրինաչափությունների անտեսում, իսկ երբեմն էլ գրվածքի հարմարեցում ինչ-ինչ միտումների:

⁴⁷ Քսենոֆոն, Անարազիս, Թարգ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, գիրք չորրորդ, գլ. 3—5-րդ, էջ 88—98:

⁴⁸ Տե՛ս Մանուկյան Է., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944, հ. Ա, էջ 395—412:

Ներկա աշխատությունը շարադրելիս հարկ չենք համարել քննարկման առարկա դարձնել Ուրարտուին ու հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող տարբեր տեսություններն ու տեսակետները և ելակետ ենք ունեցել հարցերը ներկայացնել դրական շարադրանքով՝ գիտությանը այժմ մատչելի աղբյուրների և փաստերի ուսումնասիրության հիման վրա:

К ВОПРОСУ УРАТУ И ОБРАЗОВАНИЯ АРМЯНСКОГО НАРОДА

Вследствие разложения первобытного общинного строя в середине II тыс. на северо-западе Армянского нагорья возникает союз племен Хайаса, явившийся значительным явлением на пути этногенетических процессов образования армянского народа. Дальнейшее развитие повело к образованию государственности. Первым государством возникшим на территории Армянского нагорья было Урарту. Первоначально оно занимало юго-восточный бассейн озера Ван. В IX в. Урарту распространило свою власть над всем нагорьем. Однако политическое единство не привело к этическому единству. Урартское государство состояло из различных племен—урартов (самозвание биайнили), хурритских, армянских и др. племен и этнических групп в числе которых урарты составляли меньшинство.

В дальнейших этногенетических процессах ведущая роль принадлежала армянским этническим группам. На юго-западе Армянского нагорья образуется союз армянских племен, известный под названием Арме-Шуприя. Происходит дальнейшая консолидация армянских этнических групп как на северо-западе, так и на юго-западе страны и процесс образования армянского народа постепенно охватывает все Армянское нагорье.

Ни урарты, ни хурриты, обитавшие на Армянском нагорье, не стояли на пути образования народности.

Они были лишены исторической перспективы и в ходе образования армянского народа ассимилировались и перестали существовать, а их языки стали мертвыми.

Единственная жизненная и перспективная этническая общность на территории Армянского нагорья— исторической Армении была армянская, которая продвигалась к завершению своего формирования как единый народ и как таковой была признана персами, греками и др. народами.

Таким образом первым и единственным народом возникшим на территории Армении был и остается армянский народ.

Գ. Խ. ՍԱՐԿՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՅԻՐԸ

(Հայ ժողովրդի կազմավորման խնդրի շուրջը)

Հին Առաջավոր Ասիայի հասարակութիւնների կյանքում մ. թ. ա. II հազ. երկրորդ կեսին—I հազ. առաջին կեսին հանդես են գալիս տարբեր բնույթ կրող պատմական երկու պրոցեսներ՝ հայ ժողովրդի կազմավորման և Հին Արևելքի խոշորագույն տեղութիւններից մեկի՝ Ուրարտական տեղութիւն առաջացման, ծաղկման ու քայքայման պրոցեսները: Թեև այդ պրոցեսներն ընթացել են ըստ էութիւն միաժամանակ և միեւնույն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, և թեկուզ հենց այդ պատճառով փոխկապակցված պիտի լինեին, սակայն պատմական գիտութիւն մեջ նրանց կապը դեռևս պատշաճ կերպով չուսարանված չէ:

Այդ հանգամանքը բացատրվում է, մեր կարծիքով, առաջին հերթին օբյեկտիվ պարագաներով՝ հիշյալ պրոցեսների բնույթների տարբերութեամբ և պատմական մեխանիզմների զանազանութեամբ, որոնք հանգեցրել են պատմական աղբյուրների մեջ նրանց խիստ տարբեր արտացոլմանը, ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով:

Ուրարտուի պատմութիւնը բավական լիարժեք է արտացոլվել ահպանված աղբյուրներում: Վերջիններիս երկու հիմնական խմբերը՝ նյութական և գրավոր աղբյուրները (ուրարտական և ասորական սեպագիր արձանագրութիւններն ու վավերագրերը) ոչ միայն օրրստօրե աճող ինֆորմացիա են մատուցում պետութիւն ռազմական կազմակերպութիւն, նրա տնտեսական կառուցվածքի, գյուղատնտեսութիւն ու արհես-

տագործության, նյութական ու հոգևոր մշակույթի. Կրոնի, լեզվի ու դպրության մասին, այլև հնարավորություն ապահովելու և քայլ առ քայլ հետևելու նրա՝ հզոր տերության փոխակերպմանը, ապա և քայքայմանը:

Ի տարբերություն սրա, հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը ծայրահեղորեն աղոտ է լուսավորված առկա աղբյուրներով, մի հանգամանք, որ վիճակված է գրեթե բոլոր այն ժողովուրդներին, որոնք կազմավորվել են հին շրջանում, տեղական գրավոր աղբյուրների բացակայության պայմաններում: Հարևան երկրների դպրություններում լավագույն դեպքում հիշատակվում են միայն կազմավորվող ժողովուրդների հետ նրանց շփման դեպքերը, իսկ սեփական, ուշ շրջանում ծագած դպրությունները պահպանում են այդ հնագույն ժամանակների մասին սոսկ մշուշապատ և նախորդ դարերի ընթացքում կերպարանափոխված ավանդություններ:

Հնագիտական աղբյուրները, ինչպես հայտնի է, ի վիճակի չեն միանշանակ պատասխան տալու էթնոգենեզիսին վերաբերող հարցերին: Գալով մարդաբանությանը, պետք է ասել, որ այդ հարցերին պատասխանելու նրա մեծ ունակությունը էպիստեմոլոգիայի տակավին անկատար վիճակով: Այս պարագաներում առավել շոշափելի և հուսալի պատմական աղբյուր է համապատասխան ժողովրդի լեզուն: Լեզուն, ինչպես հայտնի է, հսկայական ինֆորմացիա է պարունակում. նրանում գաղտնագրված է տվյալ ժողովրդի ողջ պատմությունը, հատկապես՝ այլ ժողովուրդների հետ նրա շփումների պատմությունը՝ սկսած նրա ծագման և կազմավորման ժամանակներից¹:

¹ Լեզվի այսպիսի դիրքը, սակայն, նրա ֆեոդալացման, տվյալ ժողովրդի առավել բնորոշ և ցցուն հատկանիշից հետազոտողի աչքում ժողովրդի միակ հատկանիշի վերածվելու վտանգ է պարունակում, ինչպես այդ երևում է էթնոգենեզիսին նվիրված որոշ աշխատություններից: Իրականում լեզուն էթնոսի հատկանիշներից ամենակարևորն է, բայց ոչ միակը: Այն ուղեկցվում է մարդաբանական և մշակութային հատկանիշներով: Վերջիններիս բացատրումը կամ թերագնահատումը կարող է հանգեցնել այն գրույթի բացասմանը, որ ժողովուրդը կազմավորվում է բազմաթիվ ցեղերից՝ ան-

Այս բոլորը վերաբերում է նաև հայերի էթնոգենեզիսին: Չնայած հիշատակված օբյեկտիվ պատճառներին (նշված երկու պատմական պրոցեսների տարաբնույթ լինելուն և աղբյուրների մեջ նրանց արտացոլման քանակի ու որակի տարբերությունը), նրանց տարանջատումը և զատ-զատ դիտարկումը, որ բնութագրական է մեր պատմական հետազոտությունների համար, չի կարելի արդարացված կամ հեռանկալորենցող համարել: Պետք է համառորեն որոնել նրանց փոխադարձ կապերը, նրանց հատման կետերը, և նրանց փոխափանցումը բացահայտող փաստեր, ընդ որում, կողմնորոշվելով ոչ այնքան դեպի նոր նյութերի հայտնագործումը, որքան ի նորոթ թերթատելով ու համապատասխան տեսանկյուններով դիտարկելով ու զննելով արդեն առկա՝ Հայկական լեռնաշխարհին և հարևան երկրներին վերաբերող բավական ծավալուն ու բազմատեսակ նյութը:

Նման տեսանկյունից առավել կարևոր պետք է համարել նշված երկու պրոցեսների, այն է՝ հայ ժողովրդի կազմավորման և Ուրարտական տերության գոյատևման, ժամանակի և տարածքի տեսակետներից համընկնելու հանգամանքը:

* * *

Ժողովրդի ծագումն ու նրա կազմավորումը պատմաբանում նրա հանդես գալու պրոբլեմի երկու կողմերն են ներկայացնում: Ժողովրդի ծագման խնդիրներն ուսումնասիրելիս հիմնականում խոսք է լինում նրա բաղադրատարր հանդիսանալիք միավորների էթնիկական և լեզվական նկարագրի մասին: Ժողովրդի կազմավորման խնդիրների հետազոտությունը կոչված է հիմնականում պարզելու այդ բաղադրատարրե-

հրածեղտ պայմանների հասունացման համընթաց, որ ժողովուրդը, ցեղի հետ համեմատած, նոր որակ է հանդիսանում, վերջին հաշվով, հենց ժողովուրդ հասկացության պատմականության բացասմանը: Այն տանում է դեպի ցեղ- ժողովուրդ-ազգ հասկացությունների շփոթում կամ միախառնում:

սի պատմական համագործակցության բնույթը, կոնկրետ գրականությունները, ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները և այլն:

Այս առումով հնդեվրոպական նախահայրենիքի պրոբլեմը, որը հսկայական նշանակություն ունի հայ ժողովրդի, ինչպես և մնացած հնդեվրոպալեզու ժողովուրդների ծագման խնդրի համար, և որը վերջին տարիներին դարձել է աշխույժ քննարկման առարկա շնորհիվ սովետական երկու լեզվաբանների՝ Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի առաջադրած՝ նախահայրենիքի աշխարհագրական տեղադրման նոր, նախորդներից էապես տարբերվող, տեսակետի², դուրս է մնում ներկա աշխատության շրջանակներից, քանի որ վերջինս նվիրված է հայ ժողովրդի կազմավորման, և ոչ ծագման խնդիրներին: Նշենք նաև, որ դա առավելապես լեզվաբանական, իսկ ժողովրդի կազմավորման պրոբլեմը՝ առավելապես պատմագիտական պրոբլեմ է:

Այս տեսակետից մեզ համար ելակետային է հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ տարբեր կարծիքների ներկայացուցիչների կողմից առարկություններ շառաջացնող այն փաստը, որ հայ ժողովուրդը կազմավորվել է մի տարածքում, որը հետագայում նրա անունով անվանվել է Հայկական լեռնաշխարհ: Ընդամին, հայերը ոչ միայն առաջին, այլև միակ ժողովուրդն են, որ կազմավորվել է այդ տարածքում: Այն ամենը, ինչ եղել է նրանից առաջ՝ եղել են ցեղեր, ցեղախմբեր, նույնիսկ՝ պետություններ, բայց ոչ հազարամյակների կյանքի ուղի ենթադրող էթնիկական ընդհանրություն՝ ժողովուրդ:

Նման մոտեցման դեպքում առաջնակարգ նշանակություն է ստանում Հայկական լեռնաշխարհի կամ նրա մերձակայքի այն էթնալեզվական տարրերի որոշումը, որոնք կարելի է

հաստատապես կամ բարձր հավանականությամբ դասել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ժամանակագրական տեսակետից առավել վաղ, կարելի է ասել, նախնական, մասնակիցների շարքը: Կողմնակիցնք ընդգծել, որ այստեղ, ինչպես և նախորդ պնդման դեպքում, մենք չենք ձգտում ինչ-որ նոր խոսք ասել, այլ շարադրում ենք այն տվյալները, որոնք գերհստում են գիտության մեջ վերջին տասնամյակների ընթացքում:

Քանի որ մեզ հետաքրքրող տարածքի էթնալեզվական տարրերը, բացի խուռականից, ուրարտականից, խեթականից ու լուվականից, ներկայացված չեն սեփական գրավոր հուշարձաններով, որոնք թույլ կտային համոզիչ եզրակացություններ անել նրանց լեզվական պատկանելության մասին, իսկ թվարկված տարրերը հայալեզու չեն, ստիպված ենք նշանակալից շահով կողմնորոշվել ցեղատեղանուններով (Этногеогенез): Այս տեսակետից հսկայական նշանակություն ունի այն փաստը, որ այն ցեղատեղանունները, որոնցում հնարավոր է տեսնել հայ ժողովրդի կազմավորման մասնակիցների հատկանիշներ, սեղմ խմբով տեղավորված են սահմանափակ տարածքում:

Եթե սկսենք թվարկել մեզ հետաքրքրող տարրերը հյուսիսից հարավ, ապա առաջինը պետք է հիշատակվի Հայաստանի երկիրը, որը տեղադրվում է լեռնաշխարհի հյուսիսարևմուտքում, էապես դուրս ելնելով նրա սահմաններից Սև ծովի ուղղությամբ: Ինչպես հայտնի է, այն հիշատակվում է XV—XIII դդ. մ. թ. ա. վերաբերող խեթական աղբյուրներում: Որպես խեթական թագավորության համառ հակառակորդ՝ «Հայաստ» անվանման համադրումը «հայ» ինքնանվանման հետ բազմամյա պատմություն ունի և այսօր ներկայանում է որպես առկա տարբերակներից առավել համոզիչը³: նրա

3 Բр. Капанцян, Хайаса—колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1948, с. 27 слл.

4 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 190 (Ս. Տ. Երեմյանի բաժինը):

2 Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, I—II, Тбилиси, 1984 (այսուհետև տեքստում՝ ИЕЯИ):

քնակչության լեզվի խնդրի շուրջը ծավալված վեճերը (հայերենի նախնին է, ցեղակից է խեթա-հնդեվրոպականին, խուռներենին)⁵ չեն խանգարում ընդունելու իրեն՝ ցեղանվան կողմից թելադրվող այն կարծիքը, որ հայասցիները անմիջական մասնակից են եղել հայ ժողովրդի կազմավորմանը, քանի որ այդ պրոցեսի մեջ են ներգրավվել նաև մի շարք այնպիսի ցեղեր, որոնք խոսել են հայերենից տարբեր՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներով (ինչպես, օրինակ, ֆրանկների գերմանալեզու ցեղերը ոչ միայն մասնակցել են ֆրանսիացիների կազմավորմանը, այլև տվել են նրանց իրենց անունը):

Հայաստացի հարավ, Եփրատի ձախափնյակում, ընկած էր ասորեստանյան աղբյուրների Սուխմու (խեթական աղբյուրների Զուխմա կամ Մուխմա) երկիրը, որի մասին քիչ բան է հայտնի: Նրա անունը, սակայն, համառորեն համադրում են «սոմեխի» ցեղանվան հետ, որը հայերի նկատմամբ կիրառում են վրացիները (այստեղից էլ Սոմխեթի՝ Հայաստան): Հենց այս շրջաններում է ենթադրվում այն վայրը, ուր հայկական ցեղերը կարող էին տեղական շփումներ ունենալ վրացականների հետ⁶:

Ավելի հարավ, Եփրատի աջափնյակում, ընկած էր Թեգարամա երկիրը (ասուրական աղբյուրների Թիլ-Գարիմմուն), որը նույնացնում են Աստվածաշնչի «Թոգարմայի տան» հետ (Մն. 10: 3; Ա. Մն. 1: 6; Եզ. 27: 14): Հայկական պատ-

⁵ Капанцян, Хайаса, с. 78 сл.; Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, 1964; И. М. Дьяконов, Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван, 1968, с. 211—214 (այսուհետև տեքստում՝ ПАН).

⁶ Гр. Халатянц, О некоторых географических названиях древней Армении в связи с данными Ванских надписей, «Древности восточные», Труды Восточной комиссии Импер. арх. общества, т. II, вып. 2, 1901, с. 126; Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, с. 24 сл.; Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1954, с. 172. Հեղինակը գտնում է, որ Զուխմա-Սուխմու երկիրը ոչ միայն մերձ էր Հայաստանին, այլև նրա մասն էր կազմում: Տե՛ս նաև Дьяконов, ПАН, с. 180 слл.

մական ավանդությունը, որ գրի է առնված V դ., հայ ժողովրդի ծագումը կապում է հենց «Թոգարմայի տան» հետ, համարելով Թոգարմային (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ Թորգոմ, «Տուն Թորգոմայ») հայերի նախնի և անվանագիր Հայկի հայր⁷:

Թեգարամային հարում էր նրա հետ սերտորեն կապված Մալդիան (ըստ խեթական աղբյուրների, ըստ ասուրականների՝ Մելիդ(դու), ուրարտականների՝ Մելիտեա, անտիկ Մելիտենեն, արդի Մալաթիան), Եփրատի արևմտյան ափին: Նախքան հայերին «արմենացիներ» (ἀρμένιοι) անվանելը, հույներն, ըստ երևույթին, կոչել են նրանց «մելիտենացիներ» (μελιτιτῆς)⁸, թերևս, հայկական հնագույն պետական կազմավորումներից մեկի («Թոգարմայի տուն» — «Տուն Թորգոմայ») կենտրոնի անվամբ, պետություն, որի առկայությունն այստեղ ենթադրում է Ի. Մ. Դյակոնովը⁹:

Մալաթիայից հարավ, դեպի Միջերկրականը ձգվող լայնածավալ տարածության վրա գտնվում էր ասուրական աղբյուրների հաթթի, ուրարտականների հաթե, հաթի երկիրը: Այս անունը, բայց ոչ տարածքը, ժառանգված էր Փոքր Ասիայի կենտրոնական մասում գտնված խեթական պետությունից, որը դուրս էր եկել պատմաբանից XIII դ. վերջերին, սակայն թողել էր ուժեղ ավանդություններ, որոնք շարունակում էին գործել Եփրատից դեպի արևմուտք ընկած փոքր պետություններում (այսպես կոչված «ուշխեթական» պետություններ): հաթթի/հաթե տեղացեղանունը նույնպես, Հայաստանի նման, ներկայացվում է գիտական հետազոտություններում որպես «հայ» ինքնանվանման հնարավոր նախատիպ¹⁰:

⁷ Капанцян, Хайаса, с. 140; ПАН, с. 180 слл.

⁸ St. I կոթողը ըստ W. K. Pritchett, D. A. Arnyx, The Attic Stela, "Hesperia", XXII, 1952, 4; XXV, 1956, 3; XXVII, 1958, 3—4.

⁹ Հղումը տրվում է ըստ И. М. Дьяконов, Малая Азия и Армянское нагорье около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей, ВДИ, 1981, 2, с. 56, пр. 101.

¹⁰ Дьяконов, ука., соч., с. 60 слл.

¹¹ Ն. Տաշյանի և Պ. Ենդեհի կարծիքը, որը հետագայում զարգացրել է Ի. Մ. Դյակոնովը:

Բնական է, որ այս կամ այն տեղացեղանվան սոսկական նմանությունը հայերի ցեղանվանը ինքնըստինքյան չի կարող նրանց հարազատության կամ նույնության ապացույց չանդիսանալ: Սակայն պատմաբանները հենվում են տվյալ դեպքում ոչ թե մեկ առանձնակի, այլ զանգվածային, տարածքային նմանությունների վրա, որ արդեն այլ մոտեցում է պահանջում: Մյուս կողմից, այս պարագաներում (այսինքն՝ համեմատաբար փոքր, սահմանափակ տարածքի վրա իրենց ձևով կամ բովանդակությամբ հարազատ տեղացեղանունների կուտակման պարագաներում) սևեռուն ուշադրության են արժանի այդ տարածքի նաև մնացած անունները: Այսպես, օրինակ՝ խեթական աղբյուրների Իսուվա (ասուրականների Իսուա, Իշուա, հավանաբար՝ ուրարտականների Մուփա¹¹, անտիկ աղբյուրների Սոֆեննե և հայկականների Մոփք) երկիրը և ասուրական աղբյուրների Կումմուխ (ուրարտականների Կումախա, անտիկ՝ Կումմազեննե) երկիրը, որոնք գտնվում էին Եփրատի, համապատասխանաբար, ձախ և աջ կողմերում, Մալղիա-Սեփտենեից արևելք ու հարավ և կարող էին թեկուզ մասամբ բնակեցված լինել հայալեզու ցեղերով:

Այսպիսով, վերին Եփրատի հովտի երկրները, սկսած հյուսիսում ընկած Հայաստանից մինչև հարավում տեղավորված Մելիտենեն, համատարած կերպով առնչվում են հայերի ցեղանուններին: Պարզ է դառնում, որ հենց այստեղ է գտնվել հայ ժողովրդի կազմավորումը սկզբնավորող ցեղերի նախնական բնավայրը: Հիշատակված անունների մեջ, սակայն, բացակայում են այնպիսիները, որոնք առնչվեին ուրիշ ժողովուրդների միջև հայերի առավել տարածում գտած (գործնականորեն՝ միակ, եթե վերանանք վրացական «սոմեխի»-ից) «արմ» արմատի հետ կապված անվանմանը: Այդ ցեղանվան ծագումը մինչև օրս լիովին պարզված չէ: Այդօրինակ վիճակի պատճառներից է նաև այն, որ նշված առմ հնչյունափոխակցությունը բավական տարածված է բազմաթիվ լեզուների մեջ:

¹¹ Տե՛ս Н. В. Арутюнян, Топонимика Урарту, «Хурриты в Урарту», 1, Ереван, 1985 (այսուհետև տեքստում՝ ТУ), с. 237.

Բավական կլինի նշել այս կապակցությամբ «արամեացիներ» ցեղանունը, որն արդեն հնում զուգադրվել է «արամեացիներ» ցեղանվան հետ և առիթ տվել այդ երկու՝ լեզվով իրարից միանգամայն տարբեր ցեղերին՝ սեմիտ-արամեացիներին և հնդեվրոպացի-հայերին, ընդհանուր ծագում վերագրելու համար¹²:

Մինչև օրս էլ հիշյալ ցեղանվան հետ նմանություն ցուցաբերող տերմինների որոնումը հայկական էթնալեզվական տարրի ճանաչման հիմնական ուղիներից մեկն է: Առայժմ նրա ամենավաղ և բացարձակորեն անկասկածելի ձևը մնում է Դարեհ I-ի Բեհիստունյան արձանագրության (520 թ. մ. թ. ա.) «Երմինա» (և «արմինյա» — արմինացի) տերմինը: Նրան հաջորդում են հունական «Արմենիա» և «արմենիոս» — արմենացի (Հեկատոյոս, Հերոդոտոս և այլ հեղինակներ) տերմինները: Եվելի վաղ ձևեր որոնելիս կանգ են առնում Ակկադի թագավոր Նարամսուենի արձանագրության մեջ հիշատակվող «Արմանում» տերմինի վրա, որը հանդիպում է էբլայի անվան կողքին՝ «և» շաղկապով միացած, և «Արմի» տերմինի վրա, որը հանդիպում է հենց էբլայում (Թել-Մարդիխ՝ Հալեպից հարավ՝ Միրիայում), ընդ որում դարձյալ էբլայի անվան հետ նույն ձևով լծորդված վիճակում¹³: Սակայն այս տեղանունները քիչ թե շատ հստակորեն չեն տեղադրվում քարտեզի վրա, իսկ նրանց սերտ կապը էբլայի հետ թելադրում է հետազոտողներին փնտրել այդ երկիրը էբլային մոտ վայրերում: Բացի այդ, մ. թ. ա. III հազ. այդ տեքստերի և հաջորդ՝ «արմեն» ցեղանվան հետ համեմատելի, տերմինների միջև ժա-

¹² Strab., I, 2, 34; XVI, 4, 27.

¹³ Տե՛ս Ur Excavation Texts, I, 7, 17; II, 4; III, 24: Ar-ma-nam^{kl} u Eb-la^{kl} «(քաղաք) Արմանում և (քաղաք) Էբլա», Ri-i š^d Adad LU-GAL Ar-ma-nim^{kl} «(Թիշ-Աղազ, արքա (քաղաք) Արմանումի) և այլն: Հալեպի հետ Արմանումի հնարավոր նույնացման մասին տե՛ս Cambridge Ancient History, 1 2, 3d Edition, p. 442 (C. J. Gadd). Տե՛ս նաև П. Гарелли, Замечания по топонимике из архивов Эблы, в кн. «Древняя Эбла», М., 1985, с. 284 слл. Հեղինակը, գտնելով, որ Արմի քաղաքը պետք է որոնել էբլայի մոտերքը, չի բացառում, որ այն կարող էր գտնվել և Հալեպի շրջանում:

մանակագրական բավական էական խզումը դժվարացնում է այդտեղ ժառանգորդություն ենթադրելը: Հստակորեն չեն տեղադրվում նաև Հոմերոսի «արիմները», որոնք նույնպես հաճախակի գուգադրվում են «արմենի» հետ¹⁴:

Բեհիստունյան արձանագրությանը նախորդած ժամանակներին վերաբերող՝ մեզ հետաքրքրող տերմիններից ուշագրություն ատվել արժանի են ուրարտական արձանագրությունների Արմե և Ուրմե(ու) երկրների անունները (մ. թ. ա. VIII դ. առաջին կես), և ակներևաբար սրանց հետ առնչվող՝ ասուրական արձանագրությունների «ուրումու», «ուրումացիներ» ցեղանունը (մ. թ. ա. XII դարի վերջը): Սրանց առավելությունը, բացի այն, որ նրանք տեղադրվում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, այսինքն վերը մեր թվարկած երկրներին կից, նաև այն է, որ նրանք հիշատակվում են հատկապես ուրարտական և ասուրական աղբյուրներում, որտեղ և, էլնելով նրանց ժամանակագրական և աշխարհագրական ընդգրկումից, պետք է սպասվեին տեղեկություններ հայ ժողովրդի կազմավորման մասին¹⁵:

Ասորեստանյան թագավոր Թիգլաթպալասար I-ի (1115—1077 թթ.) արձանագրությունները 1115 թ. տակ հիշատակում են նրա զորքերի ընդհարումը մուշկերի հետ, որոնք պարտություն են կրում և ընդունում Ասորեստանի թագավորի իշխանությունը: Հաջորդ տարի նույն այս վայրերում ասորեստանցիները ընդհարվում են ուրումացիների և կասկացիների (ուրիշ արձանագրություններում՝ արեշլացիների) հետ, որոնք որակված են որպես «խեթերի երկրի անհնազանդ մարդիկ»¹⁶:

¹⁴ Տե՛ս ПАН, с. 225.

¹⁵ Արմե՝ УКН, 156, DI+DII₁₁; Капанцян, Хайаса, с. 140 сл. Пиотровский, О происхождении армянского народа. Ереван, 1946, с. 9 сл.; Ուրմե՝ УКН, 41, С₃:5; 127, VI₅; 128, A IV₂₄:25: Ուրմեու՝ УКН, 40 лиц. ст. А₃:9; 155 А₂₂: Ի. Մ. Գյակոնով, **Խեթեր, փոյուզիացիները և հայերը**, «Տեղ. ՀՍՍՀ ԳԱ, Հաս. գիտ.», 1956, № 11, էջ 76: Ս. Տ. Նեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, ՊՔՀ, 1959, № 3, էջ 62 և հաջ.:

¹⁶ АВНИУ, 10 (I, 62). 20 հազար մուշկացիներ (muškašja) և «թագավորների» գլխավորությամբ դրանից 50 տարի առաջ գրավել էին

Այս արևելյան մուշկերի կամ մուշկացիների և ուրումուների կամ ուրումացիների, որպես պրոտոհայկական ցեղերի խնդիրը, բավականաչափ շոշափվել է գրականության մեջ, և այն այստեղ հանգամանորեն շարադրելու անհրաժեշտություն չկա: Խնդիրը հարուցել է Ի. Մ. Գյակոնովը, որը էպպես ավելի քիչ նշանակություն է տալիս հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցելու առումով ուրումուններին (մասնավորապես և առանձին կարևորություն չի տալիս նրանց ցեղանվան նմանությունը հայերի ցեղանվանը), քան «արևելյան» մուշկերին: Սրանց մեջ է տեսնում նա պրոտոհայեր լինելու հիմնական թեկնածուներին, ի տարբերություն «արևմտյան» մուշկերի՝ փոյուզիացիների¹⁷: Միևնույն ժամանակ ասուրական աղբյուրներում նրանց տված ընդհանուր՝ «մուշկեր» անվանումը հարում է Հերոդոտոսի այն հաղորդմանը, թե հայերը «փոյուզական արտագաղթողներ են», ինչպես և հույն հեղինակների՝ հայերի և փոյուզիացիների մոտիկության մասին տեղեկություններին ու մի շարք լեզվաբանների՝ հայերենի և փոյուզերենի հարազատության մասին կարծիքին:

Արձանու ստորին հոսանքի և Տիգրիսի վերին հոսանքի միջև գտնվող Ալզի և Պուրուլումզի երկրները և այդ տարում (1115 թ.) ներխուժել Տիգրիսի վերին հոսանքից հարավ գտնվող Կատմուխի երկիրը: Հաղթելով նրանց, արքան իր հպատակների թվին է դասում նրանցից մնացած 6 հազար հոգուն: Տե՛ս նաև АВНИУ, 12, 13, 18—^{KUR} Muš-ki (երկիր) Մուշկի»: Շարունակության մեջ (АВНИУ, 10 (I, 89)) նկարագրվում է, թե ինչպես հաջորդ 1114 թ. նույն այդ երկրների տարածքում Թիգլաթպալասար I-ը հանդիպում է 4 հազար կասկացիների և ուրումացիների՝ «խեթերի երկրի անհնազանդ մարդկանց», որոնք գրավել էին «(աստված) Աշտուրին (այսինքն Ասորեստանին) ենթակա շեները»: Նրանք առանց ճակատամարտի անձնատուր են լինում և արքան ընդունում է նրանց՝ իրենց հարստության և մարտակազմերի հետ միասին, իր հպատակության տակ: Տե՛ս նաև АВНИУ, 13, ուր ասված է 4 հազար ուրումացիների և արեշլացիների մասին (վերջիններս փոխարինում են այստեղ АВНИУ, 10-ում հիշատակված կասկացիներին): Տե՛ս նաև АВНИУ, 11, 12:

¹⁷ Տե՛ս Ի. Մ. Գյակոնով, **Խեթերը, փոյուզիացիները և հայերը**, էջ 71 և հաջ., մանավանդ, ПАН, էջ 214 և այլն:

Այս բոլորի հետ մեկտեղ, սակայն, ամենևին պետք չէ թերագնահատել «ուրումու» ցեղանվան հնչյունական տեսքը: Հայերի ցեղանվան հետ նույնանալու հավակնող տերմինների խմբին այս ցեղանվան պատկանելու հավանականությունը սաստկանում է Վանա լճից արևմուտք ընկած տարածքում աուրական աղբյուրների հիշատակած այն «Ներքին Արու-մու»¹⁸ երկրի առկայության հանգամանքով, որի անունը գործ-նականորեն համընկնում է Ուրմե(ու) տերմինի հետ: Այդ երկրի տեղադրման ոչ բավարար հստակությունը փոխհատուց-վում է նույն այդ տարածքում Ուրմե(ու) և Արմե երկրների առկայությամբ, որոնց հետ, կամ որոնցից մեկնումեկի հետ նա, թերևս, նույնական է¹⁹:

Գալով ուրումացիների հետ համատեղ հանդես եկող կաս-կացիներին (կասկերին), որոնք երեք այլ դեպքերում համա-նման կոնտեքստներում փոխարինված են արեշլացիներով, չպետք է մոռանալ, որ երկու այս ցեղանունների կրողներն էլ ապրելիս են եղել Սև ծովի հարավարևելյան մերձափնյա շրջանում, այսինքն՝ Հայաստյի անմիջական հարևանությամբ: Չի կարելի իսպառ բացառել այն հնարավորությունը, որ Թիգ-լաթպալասար I-ի այս արձանագրությունների կասկա-արեշ-լացիները ներառնում էին նաև Հայաստյի բնակիչներին: Նմանօրինակ ենթադրությանը չէր հակասի այն հանգաման-քը, որ կասկա-արեշլացիների համար այստեղ կիրառված է «խեթերի երկրի անհնազանդ մարդիկ» արտահայտությունը, որը նշանակում է միայն, որ նրանք եկել են անդրեփրատյան շրջանից:

Միաժամանակ այս ենթադրությունը հնարավորություն կատեղծեր «հայական» և «արմենական» բաղադրատարրերի միջև նոր շոշափելի շփման կետեր հայտնաբերելու համար:

«Խեթերի երկրի անհնազանդ մարդկանց» շարքն են դաս-ված նաև ուրումացիները, որոնք ևս, հետևաբար, եկել են անդրեփրատյան շրջանից: Գալով մուշկերին, նրանց ելակետը

նշված չէ: Ասված է միայն, որ նրանք ներխուժել են Ալդի և Պուրուզումզի երկրները, իսկ այնուհետև, 1115 թ.՝ Կատմութի երկիրը: Սակայն նրանց համար ևս դժվար է պատկերացնել որևէ այլ ելակետ, քան մերձեփրատյան շրջանը:

Հետաքրքրական է, որ ցեղանունների այս զույգը՝ մուշկու-ուրումու, որը ենթադրաբար կապված է հայ ժողովրդի կազ-մավորման հետ, իր զուգահեռն է գտնում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդես եկող անձնանունների մի զույգի մեջ, ընդ որում այդ զուգահեռն ամրապնդվում է աշ-խարհագրական գործոնով: Խոսքը Արամ-Մշակ զույգի մա-սին է: Հայկի հետնորդներից Արամը, պատմում է Մովսես Խո-րենացին, որի անունով են կոչում հայ ժողովրդին բոլոր մնա-ցած ազգերը, արշավում է անդրեփրատյան շրջանը, նվաճում այն, և թողնում այնտեղ որպես վերակացու իր մերձավորնե-րից Մշակին: Վերջինս քաղաք է կառուցում և անվանում այն իր սեփական անունով: Մովսեսը հատուկ նշում է, որ հները, չկարողանալով ճշգրտորեն արտասանել նրա անունը, քաղաքն անվանում էին Մաժաք (որը հայտնի Կեսարիան է)²⁰:

Մշակ անունը հնչյունական տեսակետից միանգամայն համադրելի է «մուշկու»-ի հետ: Այսպիսի «զույգային» նմա-նությունը, մանավանդ երբ այն ամրապնդվում է տարածքի նմանությամբ, ըստ երևույթին չպետք է շտապել դասելու «պա-տահական» համընկնումների շարքը, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ պատմահոր բաղմաթիվ նմանօրինակ ցուցումներ գտել են իրենց հաստատումը:

Այսպիսով, ի մի բերելով Ուրարտական տերության առա-ջացման նախօրեին հայ ժողովրդի նախնական բաղադրատար-րերի աշխարհագրական տեղադրման մասին տվյալները, կա-րելի է նշել, որ նրանք, խեթա-լուվական և խուտական բնակ-չության հետ մեկտեղ, գրավում էին Եփրատի փոքրասիական հոսանքի հովիտը և ձգտում դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջանները, դեպի Վանա լճի ավազանը, ուր հնուց ապրում էին ուրարտական ցեղերը:

¹⁸ АВНУ, 23(II, 2).

¹⁹ Տե՛ս ստորև, էջ 101:

Հարկ է ընդգծել, որ հնդեվրոպացիների նախահայրենիքի տեղագրման մասին նոր տեսություն հեղինակները սկզբունքորեն համաձայն են այս եզրակացության հետ, ինչպես որ այդ երևում է նրանց հետևյալ արտահայտությունից. «Հնդեվրոպացիների մերձավորարևելյան նախահայրենիքը ընդունելու դեպքում ենթադրվում է պրոտոհայերենի համեմատաբար փոքր տեղաշարժ՝ փոքրասիական տարածքի սահմաններում, որտեղ այն կարող էր շփվել անատոլիական (այսինքն՝ իեթալովական—Գ. Ս.) լեզվական աշխարհի հետ: Այստեղից պրոտոհայերը հետագայում տարածվում են պատմական Հայաստանում՝ Հայկական լեռնաշխարհում, մակաշերտվելով խուռի-ուրարտական ենթաշերտի վրա»²¹:

Ուրարտական տերության առաջացումը կարծես վարագուրում է երկու հարյուրամյակից ավելի մի ժամանակաշրջանով Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցող էթնիկական անցուղարձը: Երբ որ այդ վարագույրը Ուրարտական տերության անկումից հետո, մ. թ. ա. VI դ. սկզբին, կրկին էտ է քաշվում, պարզվում է, որ լեռնաշխարհում էական փոփոխություններ են տեղի ունեցել. բացվում է հայ էթնալեզվական տարրի տարածման միանգամայն այլ պատկեր՝ այն գրավել է արդեն լեռնաշխարհի ճնշող մասը: Մանթանանք այդ իրավիճակին ավելի հանգամանորեն:

* * *

Հայկական լեռնաշխարհի ետուրարտական ժամանակաշրջանի պատմության հիմնական աղբյուրներն են Աքեմենյանների եռալեզու արձանագրությունները, հատկապես Բարեհ I-ի Բեհիստունյան արձանագրությունը, և հույն պատմագիրների երկերը՝ Հերոդոտոսի «Պատմությունը», Քսենոփոնի «Կյուրոսի դաստիարակությունն» ու «Անաբասիսը»:

²¹ ИЕЯИ, II, с. 912.

Մեր խնդրից դուրս է բյուր հույների՝ Կունաքսայի ճակատամարտից հետո տեղի ունեցած նահանջի ճանապարհորդման «Անաբասիսի» բաղմիցս ուսումնասիրված տվյալների նոր մեկնաբանման փորձ կատարելը: Անհրաժեշտ ենք համարում միայն հիշեցնել այդ երկի էթնաաշխարհագրական մի քանի տվյալներ, որոնք գիտության մեջ առանձին տարակարծություններ չեն առաջացրել:

Դեպի հյուսիս նահանջելիս, հույներն անցնում են կարգուխնների երկրով և հասնում Կենտրիտես գետին (Արևելյան Տիգրիս կամ Ջերմ, Բոհտան), որը, ըստ Քսենոփոնի պնդման (IV, 3,1), կազմում էր Հայաստանի սահմանը: Հիրավի, գետի հակառակ ափին նրանց սպասում էին Հայաստանի սատրապ Օրոնտասի զորքերը (III, 5, 17; IV, 3,3—4): Անցնելով գետը, հույները շարժվեցին Հայաստանի տարածքով մինչև Տելեբոաս գետը, որի տակ պետք է հասկանալ Արածանու ձախ վտակ Մեղը կամ Մեղրագետը (Ս. Տ. Երեմյան)՝ վանա լճից արևմուտք: «Այս վայրը կոչվում էր Արևմտյան Հայաստան» (ὁ δὲ τόπος οὗτος Ἀρμενία ἐκάλετο ἢ πρὸς ἑσπέραν), գրում է Քսենոփոնը (Anab. IV, 4, 4): Նրա կառավարիչը (հյուպարքոս՝ ὑπαρχος) Տիրիբազոսն էր, որը իր զորքերի հետ միասին հետապնդեց հույներին համարյա մինչև Տելեբոասի (Մեղը և Արածանու միախառնման վայրը: Անցնելով Արածանին, հույները շարունակում են ընթանալ դեպի հյուսիս՝ կրկին Հայաստանի սատրապ Օրոնտասին ենթակա տարածքով (IV, 5, 10):

Այս նկարագրությունից պարզվում է Հայաստանի և Արևմտյան Հայաստանի սահմանի մի փոքր հատված՝ ըստ Քսենոփոնի, որն անցնում էր Մեղ գետի երկայնքով՝ Տարոն գավառում: Այդ սահմանի շարունակության մասին մնացյալ տեղեկությունները շատ ավելի ընդհանուր բնույթ ունեն: Մենք գտնում ենք դրանք «Անաբասիսի» եզրափակիչ հատվածում (VII, 8,25) և հավանաբար դրանք ընդմիջարկության հետևանք են, բայց այդ ընդմիջարկությունը արված է գիտակ մար-

դա՛ ձեռքով²² Այստեղ Արևմտյան Հայաստանի հյուսարքոս Տիրիբազոսի իշխանության ոլորտի մեջ են ներառված փաստիանների (φαστιανοί) և հեսպերիտների (ἑσπερίται) գրադեցած տարածքները: Երկու այդ շրջանն էլ հստակորեն տեղադրվում են քարտեզի վրա, շնորհիվ հայ միջնադարյան տոպոնիմիկայի: Փաստիանները իրենց անունը թողել են հայկական Բասեան գավառին, իսկ հեսպերիտները (կամ, որ նույնն է՝ Հերոդոտոսի սասպելյոները (σάσπειρες) Սպերբավառին: Քսենոփոնը հաղորդում է նաև, որ հյուսիսում, դեպի Մոս շարժվում էին հույները, Հայաստանը հարևան էր խալկոնների երկրին (γ.ά. 93εζ-IV, 5, 34):

Հիրավի, Արաքսն (Քսենոփոնի մոտ՝ Փասիս)²³ անցնելով, Երանք դեմ են առնում խալկոնների, տաոխների և փաստիանների զորքերին (IV, 6, 5): Փաստիանների պես, տաոխներն ու խալկոնները ևս հեշտությամբ տեղադրվում են միջնադարյան հայկական տոպոնիմիկայի օգնությամբ. առաջինները՝ Տայք (վյոաց. Տաո) նահանգում, երկրորդները՝ Խաղտիք (ուրարտական աղբյուրների Halitu—УКН, 278₄) գավառում, քանի որ խալկոնները, ինչպես հայտնի է, համապատասխանում էին մերձսևծովյան խալդայներին²⁴:

Այսպիսով, Հայաստանի և Արևմտյան Հայաստանի սահմանն ըստ Քսենոփոնի՝ վանա լճից արևմուտք ընկած շրջանից ձգվում էր դեպի հյուսիս՝ Սև ծովի հարավարևելյան մերձսևծովյա վայրերը, որտեղ էլ ապրում էին հիշատակված ցեղերը:

²² См. М. Н. Максимова, Ксенофонт и его «Анабасис», в кн. Ксенофонт, Анабасис, М.—Л., 1951, с. 286.

²³ Քսենոփոնը տարբերում է նույն այդ անունով երկու գետ՝ Արաքսը և Ռիոնը: Համապատասխանաբար նա փաստիաններ է անվանում և՛ այն ցեղերին, որոնց մենք այստեղ անդրադարձանք, և՛ Ռիոնի ավազանում ապրող ցեղերին, այսինքն՝ կոլխերին (V, 7, 36), սակայն հստակորեն տարբերում է նրանց իրարից:

²⁴ Այդ նշել է դեռևս Ստրաբոնը (XII, 3, 30 և հաջ.). «ներկայիս խալկոնները հնում կոչվել են խալդայներ (χάλδαῖοι): Հենց նրանց երկրի դիմաց էր գտնվում Փաոնակիան» և այլն: Քսենոփոնը երկու անվանումներն էլ օգտագործում է:

Ուրեմն, ըստ «Անաբասիսի» տվյալների, Հայաստանը մ.թ. ա. 400 թ. բաժանված էր երկու մասի՝ «բուն» Հայաստանի և Արևմտյան Հայաստանի: Հավանական է, որ վերջինիս հյուսարքոս Տիրիբազոսը ենթակա էր Հայաստանի սատրապ Օրոնտոսի իշխանությանը (քանի որ սատրապը ավելի բարձր պաշտոն էր), թեև «Անաբասիսի» տեքստից այդ անմիջականորեն չի հետևում:

Մեր հետապնդած նպատակի համար սույն հարցի աջ կամ այն լուծումը առանձին կարևորություն չունի: Կարևորը համոզվելն էր, որ Հայաստանը բաժանվում էր երկու մասի: որոնցից Քսենոփոնին որպես «բուն» Հայաստան էր ներկայանում նրա արևելյան մասը:

Անցնենք Քսենոփոնի «Կյուրոսի դաստիարակության» տվյալներին, նախապես նշելով, որ բարոյաէթիկական բնույթ կրող այս երկում, որն ընդհանրապես չի համապատասխանում պատմական երկին ներկայացվող պահանջներին, Հայաստանին վերաբերող մասերը ճանաչված են գիտության մեջ որպես համեմատաբար ավելի արժանահավատ²⁵, թեկուզ հենց այն պատճառով, որ ինքը Քսենոփոնն այստեղ բավական երկար ժամանակ է անցկացրել: Բացի այդ, տվյալ դեպքում մենք դիմում ենք այդ երկրում պարունակվող միայն աշխարհագրական տեղեկություններին, որոնց վրա հեղինակի բարոյաէթիկական հայացքներն առանձնապես ազդել չէին կարող:

«Կյուրոսի դաստիարակությունում» խոսք չկա Արևմտյան Հայաստանի մասին, հիշատակվում է սոսկ Հայաստանը: Այդ դո՞ք սա նշանակում է, որ խոսքն այստեղ միայն «բուն» Հայաստանին (այսինքն՝ սրա արևելյան մասին) է վերաբերում: Այդ լիովին չի բացառվում, թեև քիչ է հավանական: Հայաստանին սահմանամերձ ցեղերից այստեղ հիշատակվում են միայն մերձսևծովյան խալդայները («Անաբասիսի» խալկոն-

²⁵ См. N. Adontz, Histoire d' Arménie. Les origines du Xe siècle au VI^e (Av. J. C.), P., 1946, p. 335 sqq. 2. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Երևան, 1944, էջ 17 և հաջ.: Дьяконов, ПАН, с. 183 слл.

խաղաղայնները), սակայն այդ կարելի է վերագրել ինչպես ամբողջ, այնպես էլ «բուն» (այսինքն՝ արևելյան) Հայաստանին, որը, ինչպես հիշում ենք, սահմանակից էր նրանց: Մեզ համար կարևոր է համոզվել մի այլ բանում, այն է, որ անկախ Քսենոփոնի կողմից «Կյուրոսի դաստիարակութունում» Արևմուտքյան Հայաստանը Հայաստանի մեջ մտցնելու-չմտցնելու հանգամանքից, նա վերջինիս կազմում անպայմանորեն տեսնում է նաև «բուն Հայաստանը»: Իսկ սա աներկբայելի է, որովհետև «Անաբասիսի» հեղինակը չէր կարող Հայաստանի մասին իր պատկերացումից բացառել նրա այն մասը, որը նա իր աշխատությունների մեջ համարում է «բուն» Հայաստան:

Դիմենք այժմ Հերոդոտոսին: Հայաստանը (Ἀρμενίη և Արմենիս) և հայերը (ἄρμένιοι ~ արմենիոյ-արմենացիներ) հիշատակվում են նրա «Պատմության» մեջ տարբեր կոնտեքստներում, այդ թվում և այնպիսիներում, որոնք թույլ են տալիս որոշել նրա պատկերացումները երկրի սահմանների մասին: Հերոդոտոսը վկայում է, որ Հայաստանում են գտնվել ոչ միայն Եփրատի, այլև Հալիս գետի ակունքները: Վերջին տեղեկությունը ուրվագծվում են Հայաստանի հյուսիսարևմտյան սահմանները, որոնք ելնելով այս վկայությունից, Հերոդոտոսին ներկայանում էին որպես Եփրատի վերին հոսանքից, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններից, բավական հեռու դեպի հյուսիս-արևմուտք տարածված: Նրա պատկերացմամբ, հետևաբար, Հայաստանն ընդգրկում էր նաև Փոքր Հայքը (նախկին Հայասան), որը, սակայն, որպես այդպիսին նա չի հիշատակում, և որը, ուրեմն, նրա ժամանակներում գեոևս չէր զատվել Հայաստանից²⁵:

²⁵ Փոքր Հայքն անհայտ է, ըստ երևույթին, նաև Քսենոփոնին: Նրա մասին հնագույն տեղեկությունները տալիս է Պոլիբիոսը, որը հիշատակում է այն որպես «սատրապ» Միհրդատի իշխանության տակ գտնվող երկիր (XXV, 2, 3—13) և հակադրում «Հայաստանի մեծ մասին» (XXV, 2, 13), որը գտնվում էր Արտաքսիասի (Արտաշես I-ի) իշխանության ներքո: Ավելի ուշ շրջանի հեղինակները՝ Ստրաբոնը, Կուրցիուս Ռուփոսը, հասցնում են Փոքր Հայքի գոյությունը մինչև մ. թ. ա. III և IV դարերը, մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակը, երբ, Ռուփոսի համաձայն, Մեծ Հայքի և

Հերոդոտոսի երկու այլ տեղեկությունները վերաբերում են Հայաստանի արևմտյան և հարավային սահմաններին: «Կիլիկեցիներին...», գրում է նա, մեջ բերելով Միլեթյան տիրան Արիստագորասի խոսքերը, որը Սպարտա էր ժամանել համոզելու նրա թագավորին արշավել Պարսկաստան, և ցուցադրում էր բոլոր իր հիշատակած երկրները պղնձյա տախտակի վրա փորագրված քարտեզի վրա²⁷, «հաջորդում են հայերը (արմենացիները)..., հայերից հետո... մատիենները» (V, 49): Այնուհետև, Սարդես քաղաքից մինչև Սուզա (Շոշ) ձգվող հուշակավոր աքեմենյան թագավորական ճանապարհը նկարագրելիս, նա գրում է. «Կիլիկիայի և Հայաստանի (Արմենիայի) սահմանը նավարկելի գետն է, անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց և կես փարսախ տարածության վրա կատանհինգ կայան՝ իջևանատներով. այնտեղ կա նաև պահակակետ: Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսուն շորս կայան, հարյուր երեսուն յոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են շորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Հայաստանից (Արմենիայից), իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքներով²⁸:

Փոքր Հայքի ջրկանները կոչվում էին Գավազամելայի ճակատամարտում (331 թ.), պարսկական բանակի կազմում: Փոքր Հայքի առանձնացումը Հայաստանից, հավանաբար, պետք է ըվագրել մ. թ. ա. IV դ. առաջին կեսով:

²⁷ Դրանից առաջ Արիստագորասը Միլեթում խորհրդակցել էր իր մերձավորների հետ, այդ թվում՝ հայտնի լոգոգրափոս Հեկատայոս Միլեթացու, որը խորհրդակցության ժամանակ «թվարկեց Դարեհին հպատակ բոլոր ժողովուրդները» (V, 36): Համարվում է, որ Արիստագորասի իր հետ Սպարտա բերած քարտեզը, ինչպես և նրա տեղեկությունները Աքեմենյան տերության ժողովուրդների մասին, գալիս էին Հեկատայոսից:

²⁸ Թարգմանությունն այստեղ և ստորև՝ Ս. Մ. Կրկյաշարյանի: Տե՛ս Հեռոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986:

ինչպես տեսնում ենք, մեջբերված հաղորդումներից առաջինը երկրորդի հակիրճ ամփոփումն է: Այստեղ Հայաստանի արևմտյան սահմանը միանգամայն հստակորեն է ներկայացված. դա Եփրատ գետի փոքրասիական հատվածն է: Հարավային սահմանը այդչափ պարզորոշ չի ներկայանում. բայց քանի որ Թագավորական ճանապարհը, որն ըստ Հերոդոտոսի անցնում էր Հայաստանի վրայով, ձգվում էր, ինչպես հայտնի է, Տիգրիսի հյուսիսային հոսանքին զուգընթաց, ապա հենց այդ հոսանքն էլ պետք է ընդունել որպես Հայաստանի հարավային սահման, արդեն այդ ժամանակներից սկսած: Այդ սահմանն այնուհետև պահպանվել է դարերի և հազարամյակների ընթացքում:

Հերոդոտոսի հիշատակած 56 $\frac{1}{2}$ փարսախը, ճաշվելով

Եփրատի անցումից, հասցնում է մեզ մինչև Վանա լճի հարավակողմը, մինչև այն Կենտրիտես (Ջերմ, Բոհտան, Արևելյան Տիգրիս) գետը, որը Քսենոփոնը հիշատակում է որպես Հայաստանի և նրանից հարավ ընկած Կարդուխների երկրի սահման (Anab., IV, 3, 1): Հերոդոտոսի տվյալներից բխում է, որ այդ տեղից արևելք էլ սկսվում էր մատիենների երկիրը, որի միջով Թագավորական ճանապարհը ձգվում էր գրեթե երկուսկես անգամ ավելի երկար տարածությունը, քան Հայաստանի միջով: Ծիշտ է, Հերոդոտոսի «Պատմության մեզ հասած տեքստում այդ երկրով անցնող ճանապարհատվածի երկարությունը բնութագրող փարսախների, ինչպես և կայանների թվերը շեն պահպանվել, սակայն հետազոտողները վերականգնում են դրանք, հանելով մնացած երկրների համար անաղարտ պահպանված թվերի գումարները ողջ ճանապարհի համար դարձյալ անաղարտ պահպանված ընդհանուր հանրագումարային թվերից (V, 52, 53)²⁹:

Վերը մեջբերված հատվածի տեքստը վնասված է նաև այլ տեղերում և վերականգնված՝ հետազոտողների կողմից: Այս-

²⁹ Տե՛ս Народы нашей страны в «Истории» Геродота, М., 1982, с. 158, հունարեն տեքստը:

պես, որպես Ζαβατος³⁰ վերականգնված Զավ (Զար) հիփոնիսի փոխարեն մեզ հասած տեքստում ընթերցվում է «ὄστος ἐπιϋνρ», «ἐπιϋνρիսին»: Այնուհետև, ἐξ δὲ τούτης τῆς Ἀρμενίης ἐσβάλλοιτο ἐς τὴν Μαιναγίην γῆν σταθμοὶ εἰσι τεσσαράς [καὶ τριακοντα...] և այլն՝ «Այս Հայաստանից (Արմենիայից) ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա [երեսուն] չորս կայան [...]» նախադասությունը մեզ հասած տեքստում հաջորդում է Կյուրոսի կողմից Գյունդես գետը 300 ջրանցքների բաժանելու մասին հիշատակմանը³¹: Տեքստի այդպիսի վիճակում գործն այնպես է ներկայանում, թե Հերոդոտոսի հիշատակած չորս գետն էլ՝ Տիգրիսը, Մեծ և Փոքր Զավերը, Գյունդեսը (Դիլայան) հոսում են Հայաստանի միջով, որ ոչ միայն հեռու է իրականությունից, այլև հակասում է Հերոդոտոսի իսկուրիչ տվյալներին:

Այս իմաստով կարելի է մտածել միայն Տիգրիսի մասին, բայց արգեն ոչ Մեծ Զավի, որ թեև ըստ Հերոդոտոսի իր ակունքն ունի Հայաստանում (տե՛ս ստորև, էջ 70, ծան. 35), սակայն տվյալ կոնտեքստում, ուր խոսքը նրա նավարկելի հատվածի մասին է, Հայաստանին չի առնչվում (ավելորդ է խոսել այս առումով Փոքր Զավի և Գյունդեսի մասին, որոնք հոսում են Հայաստանի սահմաններից շատ հեռու՝ հարավ-արևելքում): Տեքստի նրատարակիչները տեղափոխել են այդ նախադասությունն այնտեղ, ուր մենք գտնում ենք այն վերը թարգմանաբար մեջբերված հատվածում (էջ 65): Նրանք նաև վերականգնել են երկու գետերի միասնական Զավ անունը: Այս վերականգնումներով վերանում են առկա տեքստի ներքին հակասությունները, քանի որ ստացված տարբերակը լիովին համապատասխանում է Հերոդոտոսի վերը հիշատակված թվական տվյալներին և նրա այն ցուցումներին, որոնց համաձայն Փոքր Զավի (V, 52) և Գյունդեսի, այսինքն՝ Դիլայանի (I, 189, 202) ակունքները գտնվում են Մատիենում: Մնում է Տիգրիսի խնդիրը, այն իմաստով, որ պարզ չէ, թե որ գետը նկատի ունի Հերոդոտոսը՝ իրական Տիգրիսը (այսպես կոչ-

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 388, ծան. 708 և հաջ.:

³¹ Նույն տեղում, էջ 159 և հաջ.՝ հունարեն տեքստը և թարգմանությունը:

ված Արևմտյան Տիգրիսը), թե՛ Արևելյան Տիգրիսը (Կենտրոն-տես, Ջերմ, Բոհտան): Քանի որ խոսքն այստեղ թագավորական ճանապարհի վրա գտնվող շորս գետանցների մասին է, և առաջինն էլ հիշատակված է Տիգրիսի գետանցը, ապա պետք է եզրակացնել, որ Հերոդոտոսը նկատի է ունեցել Արևելյան Տիգրիսը (թագավորական ճանապարհը Հայաստանի տարածքում բուն Տիգրիսը չէր հատում):

Այսպիսով, կարելի է նշել, որ, ըստ Հերոդոտոսի, Հայաստանի և Մատիենեի սահմանը սկսվում էր Վանա լճից հարավ ընկած շրջանում:

Եթե Հերոդոտոսի մոտ Հայաստանի արևմտյան ու հարավային սահմանների խնդիրը այդպիսի տեսք ունի, ապա նրա արևելյան ու հյուսիսային սահմանների մասին հեղինակը ուղղակի ցուցումներ չի տալիս: Անուղղակի ցուցումներ է պարունակում նրա՝ Արևմենյան սատրապությանների (հարկային շրջանների) հայտնի ցուցակը (V, 90—96): Այստեղ կարդում ենք (V, 93). «Պակտոլիկներից, արմենացիներից և հարևաններից մինչև Եվփոսիանը ստացվում է շորս հարյուր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն էր»: Այնուհետև (V, 94)՝ «Մատիենների, սասպեյրների և ալարոդացիների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»:

Գիտական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել այն պնդմանը, թե XVIII սատրապությունը, XIII-ի նման, բնակեցված է եղել հայերով³²: Այս պնդումը, որն ինչպես կտեսնենք, իր հիմքում ճշմարտացի է, կարոտ է, սակայն, հիմնավորման, քանի որ Հերոդոտոսը այդ սատրապության կապակցությամբ հայերին չի հիշատակում, այլ հիշատակում է միայն մատիեններին, ալարոդացիներին և սասպեյրներին: Իսկ չէ՞ որ Հերոդոտոսը XVIII սատրապության և նրա էթնիկական կազմի վերաբերյալ միակ աղբյուրն է: XVIII սատրապու-

թյունն, ըստ Հերոդոտոսի, անմիջականորեն սահմանակից է եղել XIII սատրապությանը: Այդ պարզվում է թագավորական ճանապարհի նկարագրությունից, որտեղ ասված է, թե այն Հայաստանից անցնում էր անմիջապես Մատիեննե: XVIII սատրապության ցեղերից մատիենները մեզ արդեն հայտնի են. նրանց երկիրը ձգվում էր, ըստ Հերոդոտոսի, Հայաստանի՝ Վանա լճից հարավ անցնող սահմանից դեպի արևելք: Սասպեյրները (Քսենոփոնի հետպերիտները) ապրում էին Սև ծովի հարավարևելյան մերձափնյա շրջաններում (հայկական Սպեր գավառը): Ի դեմս ալարոդացիների ցեղանվան հետազոտողները իրավացիորեն տեսնում են ուրարտացիների ցեղանվան հունական տառադարձումը: Ալարոդացի-ուրարտացիները, ի՞նչ էլ ենք XVIII սատրապության մասին Հերոդոտոսի տրված լինելից, ապրում էին մատիենների և սասպեյրների³³, այսինքն՝ Ուրմիա լճի ավազանի և Սև ծովի հարավարևելյան մերձափնյա շրջանների միջև: Այս տարածքը կարելի է գնահատել որպես, մի կողմից, նախկին Ուրարտական տերության կորիզի, այն է՝ Վանա լճի ավազանի արևելյան մասի (որտեղ գտնվում էր նաև Տուշպա մայրաքաղաքը) և, մյուս կողմից, ուրարտական իշխանության հյուսիսային հենարան հանդիսացող Արարատյան դաշտի, այսինքն՝ Արաքսի միջին հոսանքի հովտի (որը կրել է խիստ հատկանշական Այրարատ անունը) զուգակցություն:

Պետք է ենթադրել, որ XVIII սատրապության հյուսիսային և արևելյան սահմանները մոտավորապես համընկնում էին նախկին Ուրարտական տերության համապատասխան սահմանների հետ, անցնելով, հավանաբար, Սևանա լճի մյուս կողմը և մոտենալով Կուրի հովտին³⁴:

³² Հերոդոտոսի այն ցուցումը, թե սասպեյրները Մեդիայի (Մարաստանի) անմիջական հարևաններն են եղել (I, 104, 110: IV, 37), նկատի ունի ըստ ամենայնի Մեդիական տերության քաղաքական սահմանները, որոնք ընդգրկում էին և՛ Մատիեննե, և՛ նախկին ուրարտական հողերը: Հմմտ. ПАИ, էջ 240, ծան. 133:

³⁴ Հմմտ. Գ. Ա. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), ՊՐՀ, 1980, № 4, էջ 92:

³² Տե՛ս М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 381; И. М. Дьяконов, История Мидии, М., 1956, с. 343; М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, с. 111 և ուրիշ:

Այս պատկերացումների հիման վրա ուրվագծվում է նաև Հայաստանի հյուսիսարևելյան սահմանը՝ ըստ Հերոդոտոսի, կամ, որ նույնն է՝ XIII և XVIII սատրապությունների սահմանը. դա մի գիծ էր, որ ձգվում էր Վանա լճից³⁵ դեպի Սև ծովի հարավարևելյան անկյունը: Այդ գծի ետև տարածված էր XVIII սատրապությունը, որը բնակեցված էր, ըստ Հերոդոտոսի, ոչ թե հայերով, այլ ուրարտացիներով (ալարողացիներով), մատիեններով և սասպեյրներով:

Այսպիսի սահմանների առկայությամբ XVIII սատրապությունը հիմնականում համընկնում է Քսենոփոնի «բուն» Հայաստանի հետ, կամ, ավելի ճիշտ, ներառում այն: XIII սատրապությունն էլ, հետևաբար, ներառում է նրա «Արևմուտյան Հայաստանը»³⁶, իսկ Հերոդոտոսի իմացած Հայաստանը Քսենոփոնի «Արևմտյան Հայաստանն» է:

Հերոդոտոսն, ինչպես տեսնում ենք, այս խնդրում արմատապես տարբերվում է Քսենոփոնից, որը «բուն» Հայաստանը տեսնում է հենց այնտեղ, ուր Հերոդոտոսն ընդհանրապես հայեր չի նկատում: Այդ երևույթի բացատրությունը կարելի կլիներ թերևս փնտրել երկու պատմիչներին բաժանող շուրջ 50

³⁵ Սրան մասամբ հակասում է Հերոդոտոսի ցուցումներից միայն մեկը, այն է՝ թե Մեծ Զավի ակունքները Հայաստանում են: Դրանք իրականում գտնվում են Ուրմիա և Վանա լճերի միջև, նրանցից գրեթե հավասար հեռավորության վրա: Սակայն հնարավոր է, որ այստեղ գործ ունենք Հերոդոտոսի թույլ տված սխալի հետ, որն առաջացել է թերևս տվյալ դեպքում Մեծ Զավը (որի անունը, ինչպես հիշում ենք, բացակայում է Հերոդոտոսի «Պատմության» մեզ հասած տեքստում), մի այլ գետի, գուցե հենց Արևելյան Եփրատի (Կենտրիտև) հետ շփոթելու հետևանքով: Այդ գետի մտերեքով էր անցնում, ըստ Հերոդոտոսի, Հայաստանի և Մատիենների սահմանը և, ըստ Քսենոփոնի, Հայաստանի և Կարդուխների երկրի սահմանը (Anab., IV, 3, 1):

³⁶ Ըստ Քսենոփոնի (VII, 8, 25, տե՛ս վերը, էջ 61) Արևմտյան Հայաստանի հյուսիսարևմտյան Տիրիազոսի իշխանությունն ընդգրկում էր հսպեբրիտներին, իսկ ըստ Հերոդոտոսի, նրանց համապատասխանող սասպեյրները վերաբերում էին ոչ թե XIII, այլ XVIII սատրապությանը: Հավանաբար սասպեյր-հեսպեբրիտների բնակության տարածքը բաժանված էր երկու սատրապությունների միջև:

կամ ավելի տարիների ընթացքում³⁷ տեղի ունեցած փոփոխությունների մեջ: Սակայն նման բացատրությունն անտեղի է, ինչպես ցույց են տալիս Աքեմենյանների եռալեզու արձանագրությունները, առաջին հերթին՝ Բեհիստունյանը:

Այդ արձանագրություններում, ինչպես արդեն նշվել է, մենք հանդիպում ենք Արմենիա տերմինի առաջին աներկբայելի և հնչյունաբանորեն կատարյալ «Արմինա» ձևին, ինչպես և նրանից ածանցված «արմինիյա» (արմինացի, հայ) ձևին, որոնք հետագայում կիրառվում են նաև այլ Աքեմենյան արքաների արձանագրություններում: Բեհիստունյան արձանագրությունը Հայաստան-Արմինան տեղադրելու երեք հնարավորություն է ընձեռում: Առաջինը նրանում Աքեմենյան տեղությունը կազմող երկրների թվարկման որոշակի կարգն է: Այդ թվարկման մեջ Արմինան հիշատակվում է Մադա (Մեդիա, Մարաստան) և Կատպատոկա (Կապպադովկիա) երկրի միջև, մի հանգամանք, որ մատնացույց է անում ճիշտ Հայկական լեռնաշխարհը, որը հիրավի ընկած էր Մեդիայի և Կապպադովկիայի միջև³⁸: Երկրորդ հնարավորությունը կապված է Արմինա տեղանվան՝ արձանագրության տարբերակներում հերթագայման փաստի հետ: Եթե «Արմինան» կիրառվում է հին պարսկերենով գրված տարբերակում, իսկ էլամերենով գրվածում տեսնում ենք նրա տարատեսակ «Նարմին(ու)յան», ապա բաբելոններենով (ակկադերենով) գրված տարբերակում, նույն կոնտեքստներում, կիրառված է Ուրաշտու (=Ուրարտու) տեղանունը³⁹:

³⁷ Տե՛ս Дандамаев. Луконин. նշվ. աշխ., էջ 110, որտեղ վկայակոչված է հետազոտողների մեծամասնության այն կարծիքը, թե սատրապությունների Հերոդոտոսյան ցանկը թվագրվում է մ. թ. ա. V դարի կեսերով: Քսենոփոնն էլ եղել է Հայաստանում, ինչպես հայտնի է, մ. թ. ա. 461—400 թթ.:

³⁸ Տե՛ս Дьяконов, История Мидии, с. 355.

³⁹ ԸՆԴ հնչակապակցությունը պահպանվում է ակկադերենի ասուրական բարբառում, որով գրված են գրեթե բոլոր այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում է Urartu տեղանունը: Բաբելոնյան բարբառում, որն ընկած է ակկադերեն գրական լեզվի հիմքում, որը և կիրառված է Բեհիս-

Քանի որ ասուրա-բաբելական դպրական ու աշխարհագրական ավանդույթները երկուեկես հարյուրամյակի ընթացքում նախքան բեհիստունյան արձանագրությունը Ուրարտու ասելով հասկացել է Ուրարտական տերության տարածքը, և քանի որ այս արձանագրության մեջ Ուրարտու անվանումը, հերթագայելով Արմինա անվանման հետ, հանդես է գալիս որպես հնաբանություն, այսինքն՝ որպես տուրք միջազետքյան քարացած ավանդույթին, ապա բնական կլինի այստեղ ևս ընկալել այդ անվանումը նախկին Ուրարտական տերության տարածքի, այսինքն, ըստ էության, Հայկական լեռնաշխարհի, իմաստով:

Արմինայի տեղագրման երրորդ հնաբանությունը կասկած է այն տեղանունների հետ, որոնք հիշատակվում են այդ երկրի ապստամբության ճնշման առիթով: Դրանք հինգն են. Զուգահյա, Տիգրա, Ուհյամա, Իզալա, Աուտիյարա: Որքան ինձ հայտնի է, դրանցից հաստատորեն տեղագրվում է միայն Իզալան, որը համադրում են ասուրական աղբյուրների Իժալայի և ուրարտականների Իշալայի հետ: Սա Ասորեստանի մարզերից մեկն է, որ գտնվում էր Հյուսիսային Միջագետքում, Տիգրիսի ակունքներից հարավ⁴⁰: Ըստ արձանագրության տրվյալների, արմինացիները ներխուժել էին այստեղ իրենց երկրից, հանգամանք, որը հաստատում է տեղագրման ճշգրտությունը: Սրանից, համենայն դեպս, հետևում է, որ Արմինան տարածվում էր նաև XIII սատրապության մեջ, որը, ըստ Հերոդոտոսի, ընդգրկում էր ողջ նրա իմացած Հայաստանը:

տունյան արձանագրության համար, այդ հնչակապակցությունը փոխարկվում է Տ/Մ-ի: Այստեղից էլ Արաժիս ձևը:

40 Հ. Մանանդյանը տալիս է մնացած տեղանունների տեղագրման փորձերի հանրագումարը (Քննական տեսություն, էջ 52 և հաջ.): Նրանք պատկանում են Յուստինի, Մարկվարտին ու Սանդալճյանին: Զուգուն (Զուգահյա) համեմատվում է արդի քրդական Զոգակի հետ, Տիգրան՝ Տիգրիսի ափին գտնվող Քիլ ամրոցի հետ: Ուշագրության է արժանի Աուտիյարայի համարումը քրդական Քիյարիի (Մարկվարտ) և հայկական միջնադարյան գավառ Այտրուանքի հետ (Սանդալճյան), որպիսի համարությունները տեղագրում են Աուտիյարան մոտավորապես միևնույն վայրում՝ Մեծ Զավի

Այսպիսով, ոչինչ չի խանգարում շարունակելու ընդունել այն տեսակետը, որ Բեհիստունյան արձանագրության համաձայն Արմինան գրավում էր մոտավորապես Ուրարտական տերության տարածքը, կամ որ գրեթե նույնն է՝ Հայկական լեռնաշխարհի տարածքը: Նմանօրինակ պատկեր է ստացվում նաև Քսենոփոնի երկերից: Առանձնակի դիրք են գրավում միայն Հերոդոտոսի տվյալները, որոնք ժամանակի տեսակետից այդ երկու աղբյուրների արանքում են գտնվում, բայց երկուսին էլ հակասում են:

Պարզ է դառնում, որ կամ Հերոդոտոսի տվյալները չեն համապատասխանում պատմական իրականությանը, կամ էլ նրանք կարող են հատուկ մեկնաբանություն: Վերջինս մեզ շատ ավելի հավանական է թվում: Խնդիրը, մեր կարծիքով, հանգում է Հերոդոտոսի աղբյուրներին, ավելի ճիշտ, այն հարցին, թե որտեղից է փոխառել Հերոդոտոսը «ալարողացի» տերմինը և ի՞նչ կարող է նշանակել այն նրա մոտ:

Հետազոտողները նշում են, որ Հերոդոտոսը լավատեղյակ է եղել Աքեմենյան տերության գործերին, մի բան, որ ի հայտ է գալիս նրա տվյալները պարսկական նյութերի հետ համեմատելիս: Նշվում են, նախ և առաջ, Հերոդոտոսին նախորդած լոգոգրափոսների, մասնավորապես՝ Հեկատայոսի կուտակած գիտելիքները, որոնք լայնորեն օգտագործել է Հերոդոտոսը: Այնուհետև գալիս են այն տեղեկությունները, որ մատուցում էին Հունաստանում հանգրվանած պարսիկ ականավոր գործիչները: կամ նրանց հետնորդները (սովորաբար բերվում է Զուգյուրոսի որդի Մեգաբիդոսի օրինակը) կամ էլ, ընդհակառակն, պարսից տերությունում ապրած հույները: Դրանց հաջորդում են Հերոդոտոսի՝ ղեպի Պարսկաստան, էկբատան կատարած

հովտում՝ Զուլամերկի և Թևանդուզի միջև: Հատկանշական է, որ բոլոր այս տեղագրումները, ներառյալ և Իզալայինը, կարծես շարված լինեն Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանների երկայնքով: Սրանից ելնելով կարելի է ենթադրել, որ Հայաստանի դեմ Դարբի I-ի կազմակերպած արշավանքները իրականացվում էին նույն այն երթուղիներով, ինչ որ Ասորեստանի արքաների՝ IX—VIII դդ. Ուրարտուի դեմ ձեռնարկված արշավանքները:

ճանապարհորդության ընթացքում անձնական ծանոթության և հարցուփորձի միջոցով հայթայթած տեղեկությունները: Վերջապես, Հերոդոտոսի՝ որպես պարսկական տերության մասը կազմող Հալիկաոնաս քաղաքում ծնված և ապրած մարդու համար արժանահավատ տեղեկությունների աղբյուր էր նրա ուղղակի կամ անուղղակի ծանոթությունը տերության պաշտոնական վավերագրերին, որոնք, ինչպես հայտնի է, անհրաժեշտ դեպքերում պատճենների ձևով տերության վարչական կենտրոն Սուզայից (Շոշ) տարածվում էին տարբեր սատրապուսթյունները: Այդ պատճենները կազմվում էին արամեերեն լեզվով, որը տերության դիվանատան պաշտոնական լեզուն էր, իսկ այնուհետև, սատրապուսթյուններում թարգմանվում տեղական բնակչության լեզուների⁴¹:

Այսպիսի պրակտիկայի լավագույն օրինակ է հենց Քեհեստունյան արձանագրությունը: Նախ և առաջ, Դարեհն ինքն այստեղ նշում է, որ հրամայել է արտագրել այն կավե աղյուսակների և կաշվե փաթեթների վրա, այսինքն՝ համապատասխանաբար, ակկադերեն և արամեերեն լեզուներով: Այնուհետև հաղորդում է, որ տարածել է արձանագրության բովանդակությունը բոլոր երկրներով մեկ: Երկրորդ, իսկապես որ գտնված են այդ արձանագրության հատվածներ ինչպես կավե աղյուսակների վրա՝ ակկադերեն լեզվով⁴², այնպես էլ կաշվե փաթեթների՝ արամեերենով: Վերջիններս (արամեերեն տարբերակի հատվածները) գտնվել են հրեական մի ռազմական բնակավայրի արխիվում՝ Նեղոսի էլեփանտինե կղզում: Ի դեպ, դրանցում պահպանվել է հատկապես Արմինա-Ուրարտուի՝ Դարեհի դեմ ապստամբության մասին հատվածը⁴³:

Այսպիսով, Աքեմենյան տերության պաշտոնական վավերագրերի ներթափանցումը Հոնիա, որտեղ գտնվում էր Հերո-

դոտոսի հայրենի Հալիկաոնաս քաղաքը, կարելի է միանգամայն բնական համարել: Հենց նման մի աղբյուրից էլ, ինչպես կարծում է հետազոտողների մեծամասնությունը, ծագում է Հերոդոտոսի սատրապուսթյունների ցանկը⁴⁴, որի մեջ մենք հանդիպում ենք «ալարոդացիներ» ցեղանվանը:

Նթև, որ կասկածից դուրս է, այդօրինակ վավերագրերի հունական տարբերակները ստեղծվում էին այն արամեերեն պատճենների հիմքի վրա, որոնք ուղարկվում էին արքայական դիվանատանից սատրապական դիվանատաները, ապա դժվար չէ պատկերացնել այդ ցեղանվան ծագումը: Բանն այն է, որ քսեմենյան եռալեզու արձանագրությունների Արմինա-Ուրարտու միացյալ հասկացությունը, որը պարսկական տարբերակում հանդես է գալիս որպես Արմինա, իսկ բաբելյականում՝ որպես Ուրարտու /Uraštu < Uratu/, արամեական տարբերակում գրված է 'rṣ' ձևով⁴⁵, առանց ձայնավորների, որը կարելի էր ընթերցել տարբեր եղանակներով՝ Արարատ, Արարոտ և այլն: Այստեղից մինչև ἀλαρόδοιο մեկ քայլ է, և այդ քայլը արել են հունական թարգմանիչները, որոնց մոտ նայ Դ-ն տարնմանությամբ դարձել է նայ Լ, մի երևույթ, որ հատուկ է շատ լեզուների (հմմտ. ուս. дилектор, коллитор):

Այսպիսով, Հերոդոտոսի ալարոդացիներն արտացոլում են պարսկական տարբերակի Արմինան, արմինացիներին:

Ἀλαρόδοιο տերմինը հանդիպում է միայն Հերոդոտոսի մոտ և ընդամենը երկու անգամ: Դառնանք նրա երկրորդ կիրառմանը (VII, 79): Այստեղ այն հանդես է գալիս Հունաստանի վրա արշավող Քսերքսես արքայի զորքը կազմող ցեղերի և ժողովուրդների թվարկման մեջ: Թվարկումը կազմում է 35 զլուխ՝ գրքի մի քանի էջ (VII, 61—95): Մեզ հետաքրքրող

⁴¹ Տե՛ս Дандамаев, Луконин, Культура и экономика древнего Ирана, с. 126 сл.

⁴² Տե՛ս R. Koldewey, Das wieder erstehende Babylon, Lpz., 1914, S. 200 ff.

⁴³ A. Ungnad, Aramäische Papyrus aus Elephantine, Lpz., 1914, S. 83; C. Die Darius-Inschrift aus Behistun.

⁴⁴ Дандамаев, Луконин, նշվ. աշխ., էջ 110. «Հերոդոտոսի սատրապուսթյունների ցանկը Հեկատայոսի կամ Դիոնիսիոս Միլեթացու միջնորդությամբ ծագում է Հոնիայի արքայական դիվանատան պաշտոնական պարսկական աղբյուրից»: Հղումները՝ նշված աշխատության մեջ: Տե՛ս նաև Дьяконов, История Мидии, с. 341.

⁴⁵ Տե՛ս Ungnad, Aramäische Papyrus, S. 83 ff.

տեղում կարգում ենք. «ալարողացիները և սասուկերները ար-
շավում էին կոլխերի նման գինված»:

Որտեղի՞ց է հայտնվել այս թվարկումը և այս կոնկրետ
ցուցումը Հերոդոտոսի մոտ: Այս կապակցությամբ նա ինքը
հաղորդում է (VII, 100). «Երբ զորքն արդեն հաշվել էին և
դասդասել, Քսերքսեսը կամեցավ անձամբ ստուգատես կա-
տարել, անցնելով շարքերի միջով: Նա այդպես արեց, և ուզ-
մակառք նստած, անցնելով յուրաքանչյուր ազգության բոլոր
չոկատների առաջով, հարցնում էր նրանց անունները, իսկ
գրագիրները գրում էին, մինչև որ նա ծայրից ծայր անցավ
ամբողջ հեծելազորի և հետևակի առաջով»:

Այսպիսով, ալարողացիների մասին այս տեղեկությունը
ևս, նախորդի նման, ծագում է արքունի դիվանատան վավե-
րագրերից, և այն հասել է Հերոդոտոսին սատրապությունների
թվարկման ուղուն համանման ուղիով:

Ալարողացիների հիշատակման երկու դեպքերում էլ, ինչ-
պես սատրապությունների ցանկում, այնպես էլ Քսերքսեսի
զորքը կազմող ցեղերի թվարկման մեջ, մենք հանդիպում ենք
նաև հայերի (արմենացիների) հիշատակմանը: Արդյո՞ք այս
հանգամանքը չի հակասում վերև արված եզրակացությանը:
Ըստ երևույթին՝ ոչ: Բանն այն է, որ Հայաստանը (Արմենիան)
և հայերին (արմենացիներին) Հերոդոտոսը հիշատակում է
նաև մի շարք այլ դեպքերում, որոնց մի մասին մենք վերը
ժանոթացանք Հայաստանի սահմանների մասին նրա պատ-
կերացումները պարզելիս: Օրինակ, մենք նրանից տեղեկանում
ենք նաև Բաբելոնից Եփրատի վրայով Հայաստան տանող
առևտրական ուղու մասին (I, 194), այն մասին, թե հայերը
փոյուզիացիների արտագաղթողներն են (V, 73), որ նրանք
անասուններով հարուստ են (V, 49) և այլն: Հայաստանի վե-
րաբերյալ տեղեկությունների թիվը Հերոդոտոսի մոտ բավա-
կան մեծ է և դրանցից ոչ բոլորն են, որ ծագում են պարսկա-
կան պաշտոնական վավերագրերից: Դրանց մեծ մասը, ըստ
իրենց բնույթի, վերագրելի է Հերոդոտոսին նախորդած լա-
զոգրափոսներին, իր սեփական դիտարկումներին ու հարցու-
փորձին՝ ճանապարհորդության ժամանակ և այլն, մի խոսքով՝

Աքեմենյան տերութայան կյանքի մասին այն ոչ պաշտոնական
աղբյուրներին, որոնք վերը թվարկեցինք: Դրանք բոլորը, ափե-
լի ճիշտ՝ դրանցից աշխարհագրականորեն որոշակիները, վե-
րաբերում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասին,
XIII սատրապության մեջ մտնող տարածքին: Հայաստանի և
հայերի մասին այս տեղեկություններն են, ահա, որ Հերոդո-
տոսի պատկերացումներից դուրս են մղել ալարողացիների
մասին պարսկական տվյալների այն բաժինը, որը արամեա-
կան տերմինաբանությունը ('רר) հետևող վավերագրերում
կարող էր վերաբերել Հայկական լեռնաշխարհի՝ Հերոդոտոսի
կողմից հաստատորեն Հայաստան համարված մասին: Մյուս
կողմից, Հերոդոտոսի՝ Հայաստանին վերաբերող տեղեկու-
թյունների ամբողջությունից երևում է, որ պատմահայրը
ոչինչ չի իմացել Հայկական լեռնաշխարհի արևելյան մասում
հայերի գոյության մասին, բացի այն, ինչ նրան հասել է
պարսկական պաշտոնական վավերագրերից, իսկ սրանցում
պարսկական տարբերակի Արմինան անվանված է եղել 'רר'
հունարեն է՝ ալարողացիների երկիր: Այսպիսով, Աքեմենյան
արձանագրությունների տերմինաբանության երկվակն բնույ-
թը, որը հանգեցրել էր միևնույն երկիրը՝ Հայաստանը, երկու՝
Արմինա և Ուրարտու անուններով հորջորջելուն, Հերոդոտոսի
մոտ արտահայտվել է այդ իսկ երկիրը երկու մասի՝ Հայաս-
տանի և ալարողացիների երկրի, բաժանելու մեջ: Այլ խոսքով,
Հերոդոտոսի մոտ առաջացել է հայերին (արմենացիներին)
անվանելու համար մի երկրորդ՝ ալարողացիներ, ցեղանունը⁴⁶:

Այսպիսով, ի դեմս Հերոդոտոսի, ալարողացիների պետք
է հասկանալ ոչ թե ուրարտացիներին, որոնք արդեն (կամ
համարյա արդեն) գոյություն չունեին, լուծված լինելով հայա-
լեզու ասորի մեջ, այլ հենց հայերին: XIII և XVIII սատրա-

⁴⁶ Ննաբավոր է, որ դրան նպաստել է Հայաստանի՝ երկու սատրապու-
թյունների միջև Հերոդոտոսի ժամանակ արդեն իսկ գոյություն ունեցած բա-
ժանումը, որի իրականացումը հետազոտողները վերագրում են Դարեհ I-ի
որդի Քսերքսեսի ժամանակներին: Տե՛ս Дандамаев, Луконин, նշվ. աշխ.,
էջ 111:

պությունների մասին Հերոդոտոսի տվյալների այսպիսի մեկնաբանման դեպքում նրանց և ավելի վաղ շրջանի աղբյուրի՝ Բեհիստունյան արձանագրության, ու ավելի ուշ շրջանի աղբյուրի՝ Քսենոփոնի հրկերի տվյալների միջև եղած հակասությունը վերանում է:

Սակայն մնում և մեծ հետաքրքրություն է առաջացնում Հերոդոտոսի մոտ Հայաստանի երկատումը երկու սատրապությունների այն սահմանագծով, որը մենք վերը փորձեցինք ցուցադրել: Բեհիստունյան և Աքեմենյանների այլ արձանագրությունների մեջ իր հաստատումը չգտնելով, այս բաժանումը ի հայտ է գալիս Քսենոփոնի «Անաբասիսում», ընդ որում Հերոդոտոսի մոտ հանդես եկող բաժանման գիծը մտավորապես համընկնում է Քսենոփոնի «բուն» և Արևմտյան Հայաստանների սահմանագծին:

Մենք առաջ ենք քաշում մի ենթադրություն, որը ստորև կփորձենք հիմնավորել, այն է՝ որ Հայաստանը հարավից հյուսիս՝ Վանա լճից մինչև Սև ծովի հարավարևելյան մերձափնյա շրջանը հատող այդ գիծը, արեմենյան արձանագրություններում շարտահայտվելով հանդերձ, սերում է Աքեմենյան տերության առաջացումից շատ ավելի վաղ ժամանակներից և արտացոլում նախորդ դարերի՝ հայ ժողովրդի կազմավորման հետ կապված իրադարձություններն ու երևույթները:

* * *

Մենք ծանոթացանք Հայկական լեռնաշխարհի էթնիկական իրավիճակին երկու կտրվածքով՝ ուրարտական նվաճումների և ուրարտական տերության ստեղծման նախօրեին (շուրջ 800 թ. մ. թ. ա.) և նրա անկումից (շուրջ 600 թ. մ. թ. ա.) հետո: Տարբերությունը հսկայական է. եթե առաջին դեպքում հայկական տարրը կենտրոնացած էր Եփրատի վերին հոսանքի հովտում և Արածանու ու Տիգրիսի վերին հոսանքի երկայնքով ձգտում էր դեպի արևելք, Վանա լճի կողմը, ապա երկրորդում Հայկական լեռնաշխարհի գործնականորեն ողջ տարածքն արդեն հագեցած է հայկական տարրով այն չափով, որ ստացել

է Հայաստան անունը: Հարց է ծագում, թե ինչպես է կատարվել այդ փոխակերպումը, ինչպիսիք են եղել նրա կոնկրետ ընթացքն ու դրսևորումները, որոնք վարագուրված են մեզանից Ուրարտական տերության երկդարյա գոյությանը: Այս հարցը մենք տալիս ենք այն համոզմամբ, որ եթե նման մի պրոցես իսկապես տեղի ունեցած լինի⁴⁷, ապա այն չի կարող իր հետքերը թողած չլինել մեզ հասած սկզբնաղբյուրների մեջ, որոնք տվյալ ժամանակաշրջանի համար բավական հարուստ են (Իհարկե, հին աշխարհի մասշտաբներով), ինչպես և այն համոզմամբ, որ անհրաժեշտ որոնումները ի վիճակի են վեր հանել այն:

⁴⁷ Կարելի է, իհարկե, նաև այսպիսի հարց տալ, թե արդյո՞ք տեղի է ունեցել նման մի պրոցես և արդյո՞ք ողջ Հայկական լեռնաշխարհը ի սկզբանե անտի բնակեցված չի եղել միայն հայերով: Այս հարցին տրված դրական պատասխանով կրացածներ նրանց տարածման ուղիների և ձևերի գիտական ուսումնասիրման անհրաժեշտությունը: Սակայն մեզ այդ հարցի պատասխանը բացասական է ներկայանում, թեկուզև հենց այն պատճառով, որ այդ դեպքում Ուրարտական պետությունը, տերությունը, նյութական և հոգևոր մշակույթը, լեզուն և դպրությունը, որոնք անխախտելի, բացարձակ պատմական իրականություն են, տեղի չէին ունենա: Համենայնդեպ, դրանք թեկուզ հետավոր կերպով այն տեսքը չէին ունենա, որը գծագրվում է առկա հարուստ և բազմազան աղբյուրների հիման վրա: Այն պատկերացումը, թե որևէ օտար դինաստիա կարող էր պարտադրել իր լեզուն (իսկ որտեղի՞ց է ներմուծվել ուրարտերեն լեզուն, եթե Ուրարտոսի տարածքից դուրս ոչ մի տեղ այն վկայված չէ), իր նյութական մշակույթը (որը նույնպես որևէ այլ տեղ չի վկայված) և մնացած հատկանիշները էթնիկապես միատարր, միալեզու հպատակների զանգվածին՝ մոտենում է անհեթեթության և պատմականորեն աննախադեպ է: Քիչ չեն պատմությանը ծանոթ օտար դինաստիաներ: Օրինակ, այդպիսի մեկը գոյություն է ունեցել Միտաննիում, որտեղ թագավորները, ի տարբերություն իրենց հպատակների՝ խուտիների, ունեցել են հնդիրանական անուններ: Բայց Միտաննիում ոչ միայն խոսել, այլև գրել են խուտերեն և մնացյալ ողջ մշակույթն էլ, ամբողջությամբ վերցրած, խուտական է եղել: Այդ համարանությունը (անալոգիայով), եթե օտար մի դինաստիա ընկներ հայկական միջավայրը (օրինակ՝ Արշակունիները), ապա այն զուցե պահպաներ իր անձնանունները, բայց ստեղծված պետության լեզուն (այդ թվում՝ գրավորը) և մշակույթը հայկական կլինեին: Այսպիսով, այս դեպքում հնարավոր չէ խոսել օտար դինաստիայի մասին, եթե նույնիսկ կարելի լիներ մատնացույց անել, թե որտեղի՞ց, ո՞ր միջավայրից է նա ներմուծվել:

Մենք կցանկանայինք մեջ բերել նշված կամ նույնանման պրոցեսների վերաբերյալ երեք ասույթ, որոնք պատկանում են հայ ժողովրդի ծագման խնդրին տարբեր մոտեցումներ դրսևորող հեղինակների:

Գր. Ղափանցյանը իր «Հայասան հայերի բնօրրան» գրքի «Հայերի տեղաշարժը դեպի Ուրարտու» բաժնում գրել է. «Սկսվում էր հայ վերաբնակիչների ինչ-որ ներածում հայարամեական և սուբարա(խուրրիտա— Գ. Ս.)-ուրարտական նախրական էթնամշակութային աշխարհների սովորաշերտի մեջ, որն իմ կարծիքով տեղի էր ունենում ավելի շուտ խաղաղ ճանապարհով, քան նվաճման, թեև հայ-արամենները լուրջ ռազմական ուժ էին ներկայացնում, որը հստակ դրսևորվեց Դարեհ I-ի հետ ընդհարումների ժամանակ»⁴⁸:

Ի. Մ. Դյակոնովը հին աշխարհում էթնիկական տեղաշարժերի տեսակներին նվիրված իր աշխատության մեջ գրում է. «Հաճախ, երբ խոսում են էթնիկական տեղաշարժի մասին, իրականում նկատի են ունենում լեզվական տարածքների տեղաշարժը: Սակայն դրանց պատճառները կարող են երկակի լինել. ոչ միայն տվյալ լեզվի կրողների իրական տեղափոխությունը, այլև մի լեզվի տեղափոխությունը նախապես մեկ ուրիշ լեզվից կամ լեզուներից օգտվողների վրա»⁴⁹:

48 Գր. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, с. 151. Այս բաժնի վերնագրից երևում է, որ Գր. Ղափանցյանը հայերի տեղաշարժի սկիզբը լեռնաշխարհում առնչում է Ուրարտական պետության թուլացման ու անկման ժամանակաշրջանի հետ (մ. թ. ա. VI դարի սկիզբ) և ոչ թե ավելի վաղ ժամանակների, ինչպես որ ենթադրվում է մեր սույն աշխատության մեջ: Սակայն տվյալ դեպքում, երբ խոսքը պրոցեսի բնույթի, և ոչ՝ ժամանակի մասին է, այդ տարբերությունը կարևոր չէ:

49 И. М. Дьяконов, Типы этнических передвижений в ранней древности (с конца IV тыс. по начало I тыс. до н. э.). «Древний Восток», 4, Ереван, 1983, с. 13. Հեղինակը բնութագրում է էթնիկական տեղաշարժերի հին աշխարհում տարածված նաև այլ տեսակներ: Մեջբերված ընդհանուր դրույթը կոնկրետացված է հայերի տեղաշարժերի նկատմամբ նրա ԲԱՈ աշխատության մեջ (էջ 230 և հաջ.), որտեղ նա խոսում է պրոտոհայերի ենթադրական թվաքանակի մասին, համեմատած տեղական բնակչության հետ և վերջինիս երկլեզվության ժամանակաշրջանի մասին, երբ այդ բնակչությունը, հայերեն ընդունած լինելով հանդերձ, դեռևս որոշ

Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը գրում են... «Մենք միշտ հատուկ վերապահություն ենք անում այն իմաստով, ոչ վերջին հաշվով դիտարկում ենք ոչ այնքան բարբառ-էթնոսների-տեղաշարժերը, որքան իրենց՝ բարբառների, որոնք մակաշերտվում են տարբեր էթնոսների վրա: Բարբառների շարժումը և տերիտորիալ տեղաշարժերը առաջանում են այն էթնոսի որոշակի մասի շարժման և տեղափոխման հետևանքով. որը հաղորդում է իր լեզուն ուրիշ, հնարավոր է, ռասայի տեսակետից իրենից տարբեր, էթնոսի: Իհարկե, էթնոսի որոշակի մասը տեղափոխվում է մի տարածքից մյուսը, բայց այն ոչ թե դատարկություն է լցնում, այլ ներմուծվում է այդ շրջանների տեղական բնակչության մեջ, հաճախ փոխելով նրա լեզվական և ուրիշ նկարագիրները»⁵⁰:

Այս երեք քաղվածքներից առաջինում շեշտը դրվում է հայկական տարրի խաղաղ տեղաշարժման վրա, իսկ մյուս երկուսում ավելի ընդհանուր ձևով, անց է կացվում միևնույն գաղափարը, այն է, որ հնում տվյալ լեզվի տարածումը մի այլ լեզվական միջավայր տեղի է ունեցել երկու փոխկապակցված ձևերով. որպես այդ լեզուների կրողների ֆիզիկական շարժման արդյունք և որպես արդյունք լեզուների շարժման, որոնք էստաֆետային ձևով ընդունվում էին հարևան էթնիկական զանգվածների կողմից: Պետք է ընդունենք, որ Հայկական լեռնաշխարհում ևս մեզ հետաքրքրող պրոցեսը իրականացել է նույն այս ձևերով, դրանց զուգակցման և համագործակցության պայմաններում:

Ժամանակի տահպանում էր նաև իր լեզուն: Սրան հաջորդում է նրա փոփոխման անցումը հայերենին, որն իր հերթին ներծծում է ենթաշերտային լեզուներից նրանց բառապաշարի և հնչյունական տարրերի մի մասը:

50 Т. В. Гамкредидзе, В. В. Иванов, К проблеме прародины носителей родственных диалектов и методы их установления. (По поводу статей И. М. Дьяконова в ВДИ, 1982, № 3 и 4), ВДИ, 1984, № 2, с. 119. Անկասկած, լեզու-էթնոսի հենց այս տիպի տեղաշարժերը նկատի ունեն վկայակոչված հեղինակները, երբ գրում են, որ պրոտոհայերը տարածվել են «պատմական Հայաստանում՝ Հայկական լեռնաշխարհում, մակաշերտվելով խուրի-ուրարտական ենթաշերտի վրա»: Տե՛ս վերը, էջ 60:

Սակայն մեր նպատակն է դիտարկել այս պրոցեսը ոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. VIII—VII դդ. շրջանակներում, և կոնկրետ պատմական պայմաններում՝ Ուրարտական հզոր տերութայան առկայությամբ: Այս հանգամանքը պարտավորեցնում է մեզ հենց սկզբից անդրադառնալ այն տարակուսանքին և անվստահությանը, որը կարող է առաջացնել ինքը՝ Ուրարտական տերութայան նման տերություններում այդօրինակ պրոցեսների հնարավորության մասին ենթադրությունը: Այդպիսի տարակուսանքին պատշաճ պատասխան ենք համարում պատմական համաբանության վկայակոչումը, սակայն ոչ թե հեռավոր ու վերացական համաբանության, այլ կոնկրետ մի օրինակի, որը մոտ է մեր պարագային և՛ ժամանակագրական, և՛ տարածքային, և՛ տիպարանական տեսակետներից: Խոսքը արամեացիների էթնալեզվական տարածման մասին է՝ Ասորեստանյան տերութայան ողջ հողերով մեկ, տերություն, որն էլ ավելի հզոր էր, քան Ուրարտականը:

Արամեական ցեղերը հայտնվել են Սիրիայում և Միջագետքում հարավից մ. թ. ա. XIV—XIII դդ. սահմանազլխին և այդ ժամանակից սկսած, անշեղորեն առաջացել են դեպի հյուսիս և արևելք՝ այսպես կոչված «բերրի կիսալուսնի» տարածքով: Ասորեստանի թագավորներ Սալմանասար I-ը (1274—1245), Թուկուլթի-նինուրթա I-ը (1244—1208), հատկապես, Թիգլաթպալասար I-ը (1115—1077), իսկ այնուհետև Աշշուրբելիալան (1047—1057), Աշշուրդան II-ը (934—912), Աշշուրնափրապալ II-ը (883—859) բազմիցս արշավել են արամեացիների վրա, որոնք հիմնադրել էին իրենց իշխանությունները Դամասկոսում, Յահուդիում (Սամալ), Բիթ-Ազուսիում, Թիթ-Բախիանիում՝ Հալեպի շրջանում, Եփրատի և Խաբուրի վրա և շատ ուրիշ տեղերում: Սակայն նրանք ի վիճակի չէին խոչընդոտելու արամեացիների առաջխաղացումը: Առաջավոր Ասիայի արամեականացումը իրականանում էր մեծ չափով արամեերեն լեզվի տարածման միջոցով: Ասորեստանյան տերության կործանման պահին (VII դ. վերջը) այդ լեզուն արդեն հասցրել էր ողողել նրա ամբողջ տարածքը, ներառյալ

բուն Ասորեստանը և Բաբելոնիան, և դուրս մղել ակկադերենը խոսակցական ոլորտից: Օբյեկտիվորեն դրան նպաստում էր VIII—VII դդ. Ասորեստանի թագավորների՝ տերութայան մեծալից մյուսը հպատակեցված էթնիկական զանգվածների վերաբնակեցման քաղաքականությունը: Այնուհետև արամեերենը դառնում է նաև արամեանյան պետական դիվանատան գրավոր լեզուն («կայսերական արամեերեն»), «արամեական կոյնե»): Առանձին արամեական գյուղեր պահպանվել են մինչև օրս: Արամեացիների հետնորդներն էին միջնադարյան սիրիացիները (ասորիները), իսկ այժմ էլ՝ արդի ասորիները⁵¹:

Արամեական կամ հայկական էթնալեզվական տարրի Ասորեստանյան կամ Ուրարտական տերությունների նման քաղաքական կազմավորումների տարածքով մեկ սփռվելու պրոցեսը դիտարկելիս չպետք է մոռանալ, որ խոսքը հինարևելյան տերությունների մասին է, որոնք դժվարությամբ են բավարարում ընդհանրապես տերությունների (державы) էության մասին ընդունված պատկերացումներին: Դրանք, նույնիսկ ամենահզորները, թուլահող ռազմաքաղաքական միավորումներ էին՝ անկայուն պետական սահմաններով, որոնք միշտ չէ որ ի վիճակի էին վերահսկել իրենց զբաղեցրած հսկայական տարածքներում տեղի ունեցող կենսական երեվոլյուցիաները և որոնք հիմնականում և առաջին հերթին կողմնորոշված էին հպատակ բնակչությունից ինչ գնով էլ լինի, հարկեր ու տուրքեր կորզելու նպատակին⁵²:

Այդ պատճառով նրանց սահմաններում տեղի ունեցող էթնալեզվական պրոցեսները նրանց տիրակալների հոգսերի առարկա էին դառնում միայն իրենց սրման և ռազմական սպառնալիքի վերածման պահերին: (Հենց այդ պահերին էլ

51 *Տե՛ս* СИЭ, «Арамен» հոդվածը (հ. 1, էջ 692—696): И. М. Дьяконов, Народы Древней Передней Азии, в кн. «Переднеазиатский этнографический сборник», М., 1958; նույնի, ПАН, էջ 191; Г. М. Аветисян, Ранние сведения о распространении арамейских племен по Северной Месопотамии и Армянскому нагорью, ՊՐԷ, 1984, № 3;

52 Der Alte Orient in Stichworten, Lpz., 1978, s. v. և այլն:

միայն դրանք հետքեր են թողել մեզ հասած աղբյուրների մեջ):

Այժմ անդրադառնանք հայկական և ուրարտական ցեղերի շփումներին: Դրանք սկսվել են մ. թ. ա. II հազարամյակում, տեղի կես հազարամյակից ոչ պակաս և ավարտվել ուրարտացիների տարրալուծմամբ հայերի մեջ: Այդ շփումների ցուցանիշների միջև առաջին հերթին պետք է առանձնացնել նրանց դրսևորումը լեզվի ոլորտում: Դա հայերենի և ուրարտերենի համար ընդհանուր բառամթերքն է, որը նշմարվում է ուրարտական արձանագրություններում և հայոց լեզվի բառակազմում: Ընդհանուր բառերի թիվը տարբեր ուսումնասիրողների մոտ զանազան է, բայց բոլոր դեպքերում խոսքը տասնյակների մասին է, և այդ քիչ չէ, եթե հաշվի առնենք ուրարտերենի մեզ հայտնի բառակազմի սահմանափակ և միակողմանի բնույթը⁵³, Այս ցուցանիշի թերությունն այն է, որ դժվար է որոշել այս կամ այն փոխառության ճշգրիտ ժամանակը՝ շփումների ընդհանուր ժամանակագրական շրջանակի ներսում: Փոխառության ուղղությունը ևս միշտ չէ, որ ակնբախ է, սակայն մեզ տվյալ դեպքում ավելի հետաքրքրում է ոչ թե գործի այդ կողմը, այլ ինքը՝ ընդհանուր բառերի առկայությունը որպես շփումների գոյության մասին աներկբայելի վկայություն: Մեզ հետաքրքրող շփումներն ուսումնասիրելու համար բավական հետաքրքրական բնագավառ կարող է դառնալ ուրարտական պանթեոնը (դիցաշարը), որի աստվածների ցուցակը փորագրված է Վան քաղաքի շրջակայքում գտնվող «Մհերի դուռ» կոչված արձանագրության մեջ: Այդ արձանագրությանը և ուրարտական պանթեոնին ընդհանրապես, դիմել են մեծ թվով հետազոտողներ և դրանց հետ կապված շատ հարցեր կարելի է պարզված համարել⁵⁴: Շոշափվել են

⁵³ Տե՛ս Գր. Ղափանցյանի, Հր. Աճառյանի, Ի. Մ. Դյակոնովի, Գ. Բ. Զահուկյանի, Մ. Լ. Խաչիկյանի և այլոց աշխատությունները:

⁵⁴ Տե՛ս Գր. Ղափանցյանի, Ն. Ադոնցի, Բ. Բ. Պիտտովսկու, Գ. Ա. Մելիքիշվիլու, Գ. Բ. Զահուկյանի, Ս. Հմայակյանի և այլոց աշխատությունները:

նաև այդ պանթեոնի և հարևան Միջագետքի ու Փոքր Ասիայի հասարակությունների պանթեոնների միջև եղած կապերի խնդիրները: Վերջին ժամանակներս հատուկ ուշադրություն է դարձվում արձանագրության մեջ Հայկական լեռնաշխարհի ոչ ուրարտական հասարակությունների աստվածությունների հիշատակման խնդրին:

Այլ փորձերի հեղինակները, որպես կանոն, ելնում են այն լեռնային ընդունվող ենթադրությունից, թե «Մհերի դուռ» արձանագրության մեջ արտացոլվել է ուրարտական, այսպես ասած «կայսերական» պանթեոնը, այսինքն՝ ոչ միայն բուն ուրարտական աստվածները, այլև տերության միավորած երկրների աստվածները: Բայց չէ՞ որ IX դ. 10-ական թթ., երբ գրվել է արձանագրությունը, Ուրարտական տերություն դեռևս գոյություն չի ունեցել, այլ եղել է համեմատաբար փոքր մի ուրարտական թագավորություն, որի տարածքը մեզ բավական լավ հայտնի է սկզբնաղբյուրների տվյալներից: Այն տարածված է եղել Վանա լճի ավազանում և ձգվել է դեպի հյուսիս-արևմուտք՝ Արաքսի հովիտը և դեպի հարավ-արևելք՝ Ուրմիա լճի հարավային մերձափնյա շրջանը: Գոյություն չի ունեցել, հետևաբար, նաև «կայսերական» պանթեոն: Այսուհանդերձ, պարզորոշ ցուցանիշներ կան, որ «Մհերի դուռ» արձանագրության աշխարհագրությունը նրան ժամանակակից ուրարտական թագավորությունից ավելի լայն է⁵⁵: Մենք

⁵⁵ Մեր կարծիքով այստեղ պետք է ոչ թե կայսերական պանթեոն տեսնել, այլ Ուրարտական թագավորությանը նախորդած ժավալուն ցեղային միության՝ Նաիրիի ավանդույթների՝ առաջին ուրարտական թագավորների կողմից սահմանման ու օգտագործման մի փաստ: Իսկ Նաիրի ցեղային միավորումը, ինչպես հայտնի է, ժամանակ առ ժամանակ ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի ողջ արևմտյան և հարավային մասերը, ներառյալ բուն Ուրարտուի տարածքը, այսինքն՝ Վանա լճի ավազանը (ինքն այդ լիճը անվանում էր «Նաիրիի ծով»): Ի հաստատում մեր կարծիքի, կարելի է վկայակոչել մեզ հայտնի ուրարտական թագավորներից երկրորդի՝ Սարգուրի I-ի (ասուրական արձանագրությունների Սեդուրին, որը հիշատակված է մ. թ. ա. 832 թ. տակ. տե՛ս АВИИУ, 28, 141 և հաջ.), տիրող սաշարը նրա ասուրերեն արձանագրության մեջ, որը ուրարտական թագա-

այստեղ կվկայակոչենք միայն երկու փաստ, որոնք վերաբերում են ավյալ աշխատության մեջ մեզ հետաքրքրող արևմտյան ուղղությանը: Առաջինը Կուեռա աստծու հիշատակումն է, որը հանդիպում է «Մհերի դուռ» արձանագրությունից և Վանա լճի ավազանից բացի (ՄԿԽ, 114; 106¹³, դիցանուն պատկանող տեղանվան (?) մեջ՝ 58²³), նաև Եփրատի հյուսիսային (փոքրասիական) հոսանքի հովտում՝ Սարգուրի II-ի արձանագրությունում (ՄԿԽ, 158³¹)՝ աստվածանուն պարունակող

վորության մեջ հայտնի առաջին վավերագիրն է: Այդտեղ առանձնապես կարևոր են «Երկիր» նաիրիի թագավոր» (LUGÁL KUR Na-i-ri) և «արքայից արքա» (LUGÁL LUGÁL meš) (ՄԿԽ 1, 2 և 4) արտահայտությունները: «Նաիրի» տերմինի այն նշանակություններից, որոնք ի վայր են գալիս Սալմանասար III-ի օրոք (մ. թ. ա. 859—824 թթ.) առարկան արձանագրություններում, այն է՝ նաիրի՝ լայն իմաստով (ABINIV, 53, 34), նաիրի՝ որպես Ասորեստանյան փոխարքայություն (նույն տեղում, 40. D, e) և նաիրի՝ որպես Վանա լճից հարավ ընկած հուրուշիա երկրի այլ անվանում (նույն տեղում, 27, 1, 20 և հաջ.), Սարգուրիի արձանագրության մեջ հանդես է գալիս, անշուշտ, առաջինը: (Ըստ երևույթին, Ուրարտուի և նույն այդ ժամանակներն առաջացած՝ հուրուշիա թագավորության առաջին արքաները վիճարկում էին «Նաիրիի թագավոր» պատվավոր տիտղոսը): Դրա մասին է վկայում նաև «արքայից արքա» տիտղոսը, որը վերակենդանացնում է հիշողության մեջ ասորական արձանագրությունների տառնյակ «Նաիրիի թագավորների» մասին հիշատակումները, բայց իր պատշաճ հիմքը և հիմնավորումը չի գտնում ուրարտական երկրորդ թագավորի փաստական համեստ վիճակի մեջ: «Երկիր» նաիրիի թագավոր է անվանում իրեն նաև Սարգուրի I-ի որդին, Իշպուինին, Կելիշիի երկրի վրան արձանագրության ասորական տարբերակում (ՄԿԽ, 19³), մինչդեռ ուրարտական տարբերակի համապատասխան տեղում կարգում ենք «Իսայինի», որը մարարտուի կայուն տեղական անվանումն է՝ նրա պատմության սկզբից մինչև վերջն ընդգրկող ժամանակաշրջանում: Ռուսա I-ի (735—714) Թոփուզավալի երկրի վրան արձանագրության մեջ (ՄԿԽ, 264) ուրարտական կրկնաչափի (տող 29) ասուրերեն տեքստում համապատասխանում է արդեն ոչ թե «Նաիրին», այլ «Ուրարտուն» (տող 27): Ըստ երևույթին, Ուրարտական լեզու վերոհիշյալ իմաստով արդեն չկար, դեռ է նետվել Ուրարտուի տիրակալների կողմից: Ուրարտում «նախարարական» (նաիրիական)՝ պետական բնույթի ավանդույթների գոյության փաստը հաստատվում է ըստ երևույթին, նաև Ի. Մ. Դյակոնովի նշած այն հանգամանքով, որ ուրարտա-

Վուեռաիտաշի քաղաքանվան մեջ⁵⁶: Երկրորդը «Մհերի դուռ» արձանագրության մեջ հանդիպող Շերիթու դիցանունն է, որը Ն. Ադոնցը հպանցիկ, բայց ինձ թվում է, միանգամայն հիմ-

կան արագադիր հավանաբար իր ակունքն է ունեցել ոչ թե միջինասորական շարժության մեջ, ինչպես վիճարկող արձանագրությունների դիրքը, այլ դեռևս խեթա-խուտիական դարձվածքի մեջ՝ II հազարամյակի կեսերին (տե՛ս նրա «Урартские письма и документы», М.—Л., 1963, с. 20): Գուցե նմանօրինակ ավանդույթ է սեպագրական դարձվածքի կողքին ուրարտական հիբրոգլիֆային դարձվածքը:

⁵⁶ Այն Եզրակացությունը, թե Կուեռա աստծու պաշտամունքը Եփրատի ափերն է բերվել հենց ուրարտացիների կողմից, այսինքն, թե Կուեռաիտաշին հիմնադրվել ու անվանակոչվել է Սարգուրի II-ի նախորդներից մեկի՝ Մենուայի կամ Արգիշտի I-ի կողմից, որոնք նույնպես եղել են Եփրատի ափերին, չի կարող համարվել միակ հնարավորը: Հնդհակառակն, ուրարտական արձանագրությունների հատուկ էր նվաճված երկրների տեղական անվանումների առատ հիշատակումը և սույն արձանագրության մեջ Կուեռաիտաշիի կողքին՝ մեկուկես տասնյակ այդպիսի անվանումների առկայությունը հավանական է դարձնում այդ քաղաքի անվան ոչ ուրարտական ծագման մասին կարծիքը: Ծիշտ է, դրա երկրորդ քաղաքիչը՝ taše-ն համընկնում է յուրարտերեն taše «նվեր» բառի հետ, և անշուշտ հենց «նվեր» էլ նշանակում է (Queraitaše - «Կուեռայի նվեր»), սակայն այդ բառը գրեթե նույն դրամամբ (taze) և կուցե՝ նույն հնչմամբ, հատուկ է նաև խուեերենին (տե՛ս М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1966, с. 40, 48, 50) և աշխարհագրական այս վայրերում լիովին կարող է հենց խուեերեն համարվել (հմտ. ստորև, էջ 99): Ի դեպ, նույն արձանագրության մեջ հիշատակվում է մի այլ հարևան քաղաք՝ Taše («նվեր») անունով: Այն լայն համանմանեցումները, որ արվում են գրականության մեջ Կուեռա դիցանվան կապակցությամբ (վրաց. Քվիրիա, լատ. Քվիրիուս և այլն) մեզ տեղին է թվում լրացնել ևս մի համարությամբ՝ հայերեն կուտ-է անեզական բառի հետ: Հայերենում կա նաև կուտ ածական և մակբայ: ինչպես և կուլ բայը: Բառարաններում կուտ-էր կապում են սրանց հետ և իմաստավորում որպես «կոածո»: Սակայն այս իմաստավորումը կարող է և ժողովրդական ստուգաբանության արդյունք լինել, ընդ որում նեմացուցիչ բնույթի, որ միանգամայն բնական կլինեի քրիստոնեայի գիտակցության մեջ, որը մերժում է «կոածո», այսինքն ձեռագործ աստվածներին: Այդ դեպքում կարելի կլինեի ընդունել, որ կուտ-էր ինքնուրույն բառ է, և նրա նմանությունը կուտ-ին կարող է զուտ արտաքին համարվել ու այն կարող է ծագել լինել Կուեռա դիցանունից, որը, թերևս, ընդունված է եղել հին հայերի մեջ Կուեռայի պաշտամունքի հետ միասին, իսկ հետագայում դարձել է հասարակ անուն՝ կուտ-է իմաստով: Ուշագրության է արժանի Ն. Վ.

նավոր կերպով, համեմատում է Արածանու հովտում՝ Քալուի շրջանում գտնվող Շերեթերիա երկրի անվան հետ⁵⁷։

Այս և նմանօրինակ փաստերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների ոչ ուրարտական աստվածությունների որոնումը ուրարտական դիցաշարում («ՄՏԵՐԻ դուռ» արձանագրության մեջ) և, հետևաբար, նաև այստեղ հայ-ուրարտական մշակութային առնչությունների որոնումը լավ հեռանկարներ ունի։

Դիմենք այժմ ուրարտական արձանագրությունների այն կոնկրետ նյութին, որը վերաբերում է Ուրարտական թագավորության ծավալման և նրա՝ Ուրարտական տերության վերածման պատմությանը։ Մեզ այստեղ հետաքրքրում է հատկապես դեպի արևմուտք, դեպի Եփրատի հովիտը, առաջխաղացման ընթացքը։ Եթե ճիշտ են վերը վկայակոչված կարծիքները (որոնց մենք համաձայնեցինք) Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերից դեպի նրա խորքը հայկական էթնակազմական տարրի տեղաշարժման մասին, մերթ լեզվի դիֆուզիայի մերթ նրա կրողների խաղաղ տարածման կամ ռազմական բախումների հետ կապված միջոցներով, ապա հնարավոր է, որ մենք

Հարությունյանի (Бнайнили, Ереван, 1970, с. 354) առաջ քաշած համեմատությունը VIII դարի հայ հեղինակ Հովհան Մամիկոնյանի «Իշատակած Կուռ առասպելական անձնական ու սեպ սեղանվան հետ Այդ անձնանունը հանդես է գալիս Կուռ, Մեղտես և Հոռի եռյակի կազմում, որի անդամները հիմնադրել էին համանուն շեներ։ Սրանց համեմատում են հին առասպելական ավանդության Կիյ, Շիկ և Խորիլ եռյակի հետ (տե՛ս Կ. Բ. Айвазян, История Тарона и армянская литература IV—VII вв., Ереван, 1976, с. 279)։ Կուռն դիցանվան համադրումը նույն հեղինակի կողմից Արարտյան դաշտի Կուռլիի հովտի անվան և Կուռզանի ցեղանվան հետ (Бнайнили, с. 353) պակաս համոզիչ է, որովհետև այս դեպքում զո՞վար կլինե՞ր բացատրել ձայնավորների տարբերությունը և դիցանվան ցուցիչ (դե-տերմինատիվի) բացակայությունը այս անուններում, այն դեպքում, երբ բոլոր երեք անվանումներն էլ միևնույն՝ ուրարտական աղբյուրների մեջ են հանդիպում։

⁵⁷ N. Adonts, Histoire d'Arménie. p. 226. Այլ կարծիք է Գր. Հափանցյանը, տե՛ս նրա «Об урартском божестве Шибиту», Ереван, 1947.

վերոհիշյալ նյութի մեջ հայտնաբերենք այդ պրոցեսի հետքերը։

Ուրարտական պետության ռազմական առաջընթացը, նրա իշխանության տարածումը Վանա լճի ավազանում ամփոփված սկզբնական թագավորության տերիտորիայից ողջ Հայկական լեռնաշխարհի, այնտեղ այդ ժամանակ բնակվող բազմաթիվ և բազմալեզու ցեղերի ու ցեղախմբերի վրա և, այդպիսով, նրա վերածումը Ուրարտական տերության (կամ կայսրության) սկսվում է Մենուա թագավորի օրոք (810—776 թթ. մ. թ. ա.)։ Մեզ այստեղ, ինչպես ասացինք, առաջին հերթին հետաքրքրում է նրա արևմտյան, այսինքն՝ դեպի հայալեզու ցեղերով զբաղեցված շրջանները կատարած արշավանքների շարքը։ Դրանցից մեկի Երթուղին պարզորոշ արտահայտվել է Բալուում գտնված մի արձանագրության մեջ (УКН, 39)։ Դրա մեկնաբանությունը տրված է Ն. Վ. Հարությունյանի կողմից⁵⁸, որն ի մի է բերում նաև նախորդ հետազոտողների կատարած աշխատանքները։ Այդ արշավանքի երթուղին անցնում էր Արածանու հովտով, Շերեթերիա «քաղաքի երկրով» (որը հենց նոր հիշատակվեց մի այլ կապակցությամբ)⁵⁹, Խուզանա «քաղաքի երկրով», Մուփա (հայկական Մոփս) երկրով⁶⁰ դեպի Եփրատ։ Հասնելով այստեղ, Մենուան

⁵⁸ Бнайнили, с. 163 сл.

⁵⁹ Քալուի УКН. 39 արձանագրությունը ըստ երևույթին գտնվում է հենց Շերեթերիա երկրում (տե՛ս Գ. Ա. Меликушвили, Нагри—Урарту, Тбилиси, 1959, с. 244)։ Մենուայի մի այլ արձանագրություն՝ УКН. 42-ր, Բալուին մերձակա Պաղինում, հաղորդում է այստեղ՝ հավանաբար՝ Շերեթերիայում, ոմն Քիթիանիի մարզի կառավարիչ (ԱՆ EN. NAM) նշանակելու մասին։ Քիթես դա երկրի «թագավորն» (առաջնորդն) էր, որը, տեղի տալով առանց պայքարի, թողնվել է որպես երկրի ղեկավար և ստացել «մարզի կառավարիչ» պաշտոնը (տե՛ս Меликушвили, Нагри—Урарту, с. 245)։ Քիթիանի անունը հետազոտողներին հիշեցնում է փոքրասիական անվանաձևեր (տե՛ս նույն տեղում)։ Կարելի է նրա հետ ենթադրաբար համադրել նաև հայերեն «թաթ» բառը, որից մ. թ. V դարում ունենք Թաթուլ և Թաթիկ անունները։ Տե՛ս Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 257 և հաջ.։

⁶⁰ Ն. Վ. Հարությունյանի հաղորդման համաձայն՝ УКН-ում սխալմամբ՝ «քաղաք»։

ընթացավ գետի երկայնքով դեպի հարավ և հասավ Մելլտեա (նեռկ. Մալաթիա) քաղաքը, որի շրջանը սահմանակից էր Խաթե երկրին: Մենուան, հավանաբար, այս երկիրն էլ է մտել Խաթի (Խաթե, Խաթինա, ասուր. Խաթթի) տեղանունը: Ժամանակ ակներևաբար կիրառվում էր մի լայնածավալ տարածքի նկատմամբ, որը ձգվում էր Եփրատի աջափնյակից դեպի Միջերկրականը:

Մենուայի արևմտյան արշավանքներից մեկ ուրիշը նկարագրված է Մուշ քաղաքում գտնված մի արձանագրության մեջ (ՄԿՄ, 41) և, հավանաբար, նրանից ոչ հեռու գտնվող Թրմեհրդի արձանագրության (ՄԿՄ, 40) մեջ: Ըստ Մուշի արձանագրության, կարելի է վերականգնել արշավանքի հետևյալ երթուղին. (կոտրվածք)—(քաղաք)⁶¹ Կուլմերի—(կոտրվածք)—(քաղաք) Աթաունե—(երկիր) Ուրմե—(էրկիր) Արխի—(կոտրվածք)⁶²:

Կուլմերի քաղաքը նույնն է, ինչ ասուրական արձանագրությունների Շուբրիա երկրի Կուլլիմերի քաղաքը, ու թերևս նույնական է նաև Մենուայի արձանագրություններից մեկի

⁶¹ Տե՛ս ՄԿՄ 41, ծան. 1, որտեղ քննարկվում է առկա տեքստում բացակայող դետերմինատիվի խնդիրը: ՄԿՄ 40, B5-ում Կուլմերին հիշատակված է (քաղաք) դետերմինատիվով:

⁶² Երթուղու այսպիսի ընթացքը հիմնված է պահպանված հատվածների ընթերցման հետևյալ, ՄԿՄ-ում առաջարկված, կարգի վրա. a. առաջակողմը, b. աջ կողմը, c. հետևի կողմը, d. ձախ կողմը: Այս հերթականության մեջ անկասկածելի են a և d կետերը՝ սկիզբը (ներածություն) և վերջը (պնծքի բանաձև): Մյուս երկու՝ աջ և հետևի կողմերի ընթերցման հերթականությունը տեսականորեն կարելի է և հակառակը պատկերացնել: Այսպես, օրինակ, Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի տարագրությունները, արունակող կոթողների արձանագրությունները, ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու պետք է ընթերցվեն այսպես. առաջակողմ-հետևի կողմ-ձախ կողմ-աջ կողմ: Կակայն մեր դեպքում տեքստը ավարտը ակներևաբար ընկնում է ոչ թե աջ, այլ ձախ կողմի վրա, ուստի և կարելի է մտածել, որ այստեղ հերթականությունը սկզբունքորեն այլ է, քան երկու վկայակոչված քարակոթողների վրա, այսինքն հենց այն է, որը առաջարկում է ՄԿՄ, 41-ում Գ. Ա. Մելիքիշվիլին: Այս կարծիքն ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ վկայակոչված քարակոթողներում (Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի) առաջակողմը և հետևի կողմը գրեթե կրկնակի անգամ լայն են աջ և ձախ կողմերից, ուրեմն և նրանք գլխավոր կողմերն էին և պետք է օգտագործվեին առաջին հերթին:

նույնպես երկրի հետ: Կուլմերին հայկական Քղիմարն է (բյուզ. Χουλιμαρον). ուստի և տեղադրվում է Սասնա լեռններից հարավ, Բատման գետի ձախ ափին՝ Նփրկերտ-Մայաֆարկինի դիմաց⁶³: Քանի որ Շուբրիա անվանումը ուրարտական արձանագրություններում չի օգտագործվում, այս հավանական ենթադրություն է արված այն մասին, որ այդ երկիրն այստեղ հիշատակվել է իր կենտրոններից մեկի՝ Կուլմերի անվամբ, իսկ հիշատակման այդպիսի ձևը ուրարտական արձանագրություններում հաճախ է հանդիպում⁶⁴: Հնարավոր է, որ Կուլմերի քաղաքի անվամբ կոչվել է ոչ թե ամբողջ Շուբրիան, այլ միայն նրա մի մասը: Ըստ արձանագրության, Մենուան այստեղ մի քարակոթող է թողնում:

Երթուղու հաջորդ կետը, կոտրվածքից հետո, Աթաունե քաղաքն է, որը կարող է և՛ պատկանած, և՛ չպատկանած լինել այդ երկրին: Սակայն Աթաունեին հաջորդող Ուրմե երկիրը, հակառակ գոյություն ունեցող տեսակետների, ակներևաբար առանձին երկիր է, այսինքն չի նույնանում ոչ Կուլմերիի (Շուբրիայի, եթե ընդունենք հիշատակված ենթադրությունը), ոչ էլ Աթաունեի հետ, քանի որ Մենուան, հիշատակելով այս վերջին քաղաքը, այնուհետև շարունակում է այսպես . [u]š-ta-di^{KUR} Ur-me-i-e-di, այսինքն՝ «ես ուղևորվեցի դեպի (երկիր) Ուրմե»⁶⁵: Այնուհետև հաջորդում է այն հաղորդումը, թե Մենուան այս երկրում ևս քարակոթող է կանգնեցրել, մի

նշենք նաև, որ մի շարք այլ կոթողների դեպքում արձանագրություններն արված են միայն առաջակողմի և հետևի կողմի վրա, իսկ աջ ու ձախ կողմերը դատարկ են (օր. ՄԿՄ, 20, 24, 40 և այլն): Իսկ Մուշի քարակոթողի շորս կողմերը գրեթե իրար հավասար են. այսպես, առջևի և հետևի կողմերի տողերը միջին հաշվով բաղկացած են 5 նշանից, իսկ աջ և ձախ կողմերի տողերը՝ 4 նշանից: Ուստի այստեղ տեքստը կարող էր ընթանալ շրջագծով՝ ձախից աջ: Տեքստի բովանդակությունը ևս վկայում է ընթերցման այսպիսի հաջորդականության մասին (տե՛ս ստորև, ծան. 66):

⁶³ Арутюнян, ТУ, с. 117 сл.; N. Adonts. Histoire d' Arménie, p. 126.

⁶⁴ Տե՛ս Д. Н. Саркисян, Страна Шубрна в урартских надписях. «Древний Восток», 2, Ереван, 1976, с. 129.

⁶⁵ Նույն տեղում, էջ 125 և հաջ.:

հանգամանք, որը կրկին անգամ վկայում է Ուրմե երկրի՝ Կուլմերի քաղաքի երկրից (այսինքն՝ Շուբրիայից) տարբեր լինելու մասին: Ուրմե երկրի տեղադրման ժամանակ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ սույն արձանագրության մեջ խոսքը որևէ այլ երկրի մասին չէ, քան հենց այն երկրի, որտեղ գրվել է տվյալ արձանագրությունը կրող քարակոթողը: Հիրավի, Մենուան գրում է. [h]a-a-ú-bi KUR Ur-me-i-e te-ru-b[i] i-ni DUB-te «ես նվաճեցի (երկիր) Ուրմեն, որեցի այս քարակոթողը»⁶⁶:

Այստեղից անմիջապես հետևում է, որ եթե կոթողը in situ է գտնվում, որը կասկածի տակ առնելու հիմք չկա, ապա Մուշի հովիտը, այսինքն՝ Արածանու ձախ վտակ Մեղի կամ Մեղրագետի հովիտը, մտնում էր Ուրմե երկրի մեջ: Այս երկիրը, ուրեմն, իր դիրքով համընկնում է հայկական Տարոն գավառի հետ, որի կենտրոնը Մուշ քաղաքն էր:

Երթուղու վրա գտնվող հաջորդ երկիրը Արխին է, որը հիշատակված է արձանագրության մեջ ուղեորական հոլովածևով՝ Ar-hi-i-e-di [. . .] «ղեպի (երկիր) Արխի [. . .]»:

Գրականության մեջ այս Արխի երկրի տեղադրությունը բավականաչափ հստակ չի ներկայացված: Նշվում է, որ այն տարբերվում է նույնանուն երկու երկրներից, որոնցից մեկը, որ հիշատակված է Արգիշթի I-ի տարեգրությունում գաղնվում էր Ուրմիա լճից հարավ, իսկ մյուսը (ՄԿՈ, 445₂)՝ այդ լճից դեպի Կասպից ծովը տանող ճանապարհին: Նշվում է նաև, որ այդ երկիրն ընկած էր Վանա լճից հարավ-արևելք: Ուրմե երկրի և Կուլմերի քաղաքի հարևանությամբ, քանի որ հիշատակվում է դրանց հետ միասին⁶⁷: Մինչդեռ հնարավորություն կա գտնելու նրա ճշգրիտ տեղադրությունը: Եթե շարունակենք

⁶⁶ Ի դեպ «այս» i-ni դերանունը հաստատում է նաև քարակոթողի արձանագրության ընթերցման այն հաջորդականությունը, որին մեկ համաձայն ենք, հետևելով Գ. Ա. Մելիքիշվիլուն: Եթե աչ կողմի վրա խոսք կա ինչ-որ մի քարակոթողի հաստատման մասին, ապա ետևկողմում հաջորդվում է տվյալ քարակոթողի հաստատման մասին, որը, հետևաբար կանգնեցվել է այն առաջինից հետո:

⁶⁷ Տե՛ս Арутюнян, ТУ, с. 43.

արշավանքի երթուղին Քղիմար-Մուշ գծով, նույն ուղղությամբ, ապա այն կրերի մեզ հայկական Հարթ գավառը, որն անմիջականորեն սահմանակից էր Տարոնին հյուսիսից և հյուսիս-արևելքից: Հարթ գավառը հիշատակում է Մովսես Խորենացին (I, 10—12) և, որպես Տուրուբերան նահանգի գավառ «Աշխարհացույցը»:

Եթե պարզվում է, որ Արխի երկրի և Հարթ գավառի տարածքները համընկնում են, ապա մեր կարծիքով, առանձին խոչընդոտներ չկան նույնացնելու համար նաև նրանց անվանումները: «Հարթ»-ը նշանակում է «հարթեր», «նախնիններ»: այս ստուգաբանությունը ժամանակին տրվել է Մովսես Խորենացու կողմից:

Archi-Հարթ համադրումը լրացվում է Պլինիոս Ավագի կողմից Արածանու վրա գտնվող Archene հայկական գավառի հիշատակությամբ, որը, ըստ Յ. Մարկվարտի և Հ. Մանանդյանի, համապատասխանում է Հարթին⁶⁸:

Արխի երկրի հիշատակմանը հաջորդող կոտրվածքը հնարավորություն չի տալիս համոզված կերպով պնդելու, որ արշավանքն ավարտվել է հենց այս երկրում և շարունակություն չի ունեցել: Սակայն այդ շատ հավանական կթվա, եթե հաշվի առնենք, որ դրա նկարագրության համար տեղ չկա. քարակոթողի ձախ կողմի կոտրվածքում պետք է տեղավորվեր նաև թագավորի տիտղոսաշարը և անեծքի բանաձևի սկզբնական մասը, այն էլ շատ կարճ տողերով գրառված ձևով: Բացի այդ, Մենուան, թողնելով Արխի-Հարթը, արդեն մտնում էր դեռևս իր հոր՝ Իշպուհինիի օրոք Ուրարտական թագավորությանը պատկանած տարածքը⁶⁹:

⁶⁸ Plin., Hist. Nat., VI, 31, 1—3; J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 77; Յ. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1954, с. 146.

⁶⁹ Գալով արշավանքի սկզբնակետին, բազային, այդ մասին արձանագրության մեջ տվյալներ չեն պահպանվել և կարելի է միայն ենթադրություններ անել: Այն պետք է գտնվեր Վանա լճից հարավ: Հնարավոր է, որ դա Ուրարտի քաղաքն էր, ուրարտական համանուն շրջանի կենտրոնը և խոշորագույն ռազմական հենակետը՝ հարավում: Այդպես է բնութագրվում այն ըստ VIII դ. վերջերի ասուրական տվյալների՝ 714 թ. դեպի Ուրարտու կա-

Թրմերդի՝ Մենուային պատկանող արձանագրության մեջ (Մուշից ոչ հետո) նույնպես հիշատակվում է Ուրմե երկիրը (Ուրմեու՝ KURUr-me-úđևով) և Կուլմերի քաղաքը (ՄԿԽ, 40, A3, 3; B5): Արձանագրությունը պահպանվել է քարակոթողի երեք բեկորների վրա: Բեկորների՝ ՄԿԽ-ում առաջարկված դասավորության դեպքում Ուրմեուի հիշատակումը նախորդում է Կուլմերիի հիշատակմանը: Եթե այսպիսի դասավորումը ճիշտ է և, մյուս կողմից, ճիշտ է ՄԿԽ, 41-ի (այսինքն՝ Մուշի արձանագրության) ընթերցման մեր ընդունած հաջորդականությունը, ապա Թրմերդի արձանագրության մեջ խոսքը մեկ ուրիշ՝ Նյուսիսից դեպի հարավ ուղղված արշավանքի մասին պիտի լինի: Սակայն ըստ Լեհման-Հաուպտի կուսման (ՄԿԽ, 40, ժան. 5) հավանական է բեկորների նաև այլ հերթականություն, որի դեպքում մեզ հետաքրքրող տեղանունների հիշատակման կարգը ՄԿԽ, 40-ում և 41-ում կհամընկնեն: Այդ դեպքում երկու արձանագրությունները կարող են կամ միևնույն արշավանքի, կամ, գուցե, միևնույն երթուղիով կատարված երկու արշավանքների նկարագրությունները լինել:

Արձանագրությունները խոսում են քաղաքների ավերման, ինչ-որ շինությունների հրկիզման, մարդկանց ոչնչացման մասին՝ Կուլմերի երկրում, և, միևնույն ժամանակ, այստեղ մի ամբողջ շինարարության, երկրի տիրակալին ինչ-որ պայմաններով իր տեղում թողնելու մասին: Ուրմե(ու) երկրի հետ, որքան կարելի է դատել արձանագրությունների աղճատ բո-

տարած արշավանքի մասին Սարգոն II-ի հաղվետվության և դրան նախորդած տարիներին Ուրարտուում գործած ասորեստանյան հետախույզների զեպույցների (АВНИУ, 277 և հաջ., Ուայախս, Ուասի, Ուեսի՝ 50, 2, 3, 4, 5, 3, 9, 14, 17, 18, 27, 50): Սակայն դեռևս Մենուայի օրոք, Աղթամար կղզում գտնված նրա մի արձանագրության մեջ (ՄԿԽ, 62, ետևակողմ, 3) հիշատակվում է Ուիշինի քաղաք-ամրոցը, որը պետք է նույնացնել Ուայախսին (այդպես է ն. Հարությունյանի կարծիքը, իսկ ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու, Ղեփշինին նույնանում է Հին Ուայախսի հետ՝ ՄԿԽ, 445), որն արդեն այն ժամանակ, բարենպաստ ռազմատրատեգիական դիրքի շնորհիվ, կարող էր ռազմական հենակետ լինել:

վանդակությունից, Մենուան ավելի դաժանաբար է վարվել-այստեղ խոսվում է միայն նվաճման, տարածքի յուրացման, մարդկանց կոտորելու մասին:

Ըստ երևույթին դիմադրությունն այստեղ ավելի ակտիվ է եղել:

Մենուայի երրորդ արշավանքը արևմտյան ուղղությամբ նկարագրված է ՄԿԽ, 28 արձանագրության վերին մասում: Արձանագրությունը հիշատակում է արշավանքի ճանապարհին ընկած տասը երկրներ, բայց դրանց թիվը հավանաբար ավելի է եղել՝ ձախ կոտորված մասում ենթադրելի է ևս հինգ երկրների հիշատակումը: Մեզ համար առավելապես կարևոր է այն հանգամանքը, որ պահպանվել են արշավանքի ելակետային և եզրափակիչ վայրերի անվանումները, և որ այդ երկու տեղանունն էլ քաջ հայտնի են ու ճշգրտորեն տեղադրվում են քարտեզի վրա: Դրանցից առաջինն է Բաբանախի (ասուրական արձանագրությունների Բաբխի) երկիրը, որ գտնվել է Արևմտյան և Արևելյան Տիգրիսների միախառնման վայրում⁷⁰: Երկրորդը՝ Իշալա քաղաքն է՝ ասորեստանյան Իծալա նահանգը, որը գտնվում էր Տիգրիսի ակունքներից հարավ ընկած շրջանում:

Արևմտյան ուղղությամբ ևս մի արշավի մասին կարելի է վերահասու լինել նույն այդ ՄԿԽ, 28 արձանագրության առաջակողմի տվյալների հիման վրա: Այստեղ կրկին անգամ հիշատակվում են Խաթի և Ալզի երկրները: Վերջինս գտնվում էր Տիգրիսի ակունքների ձախ ափին, Իշալայի դիմաց: Այն հանգամանքը կարող է հուշել, որ Ալզի—Խաթե արշավը արեվելքից դեպի Իշալա կատարված արշավանքի ստրատեգիական, թեև, ըստ երևույթին, ոչ անմիջական շարունակություն է եղել⁷¹: Հետագայում Մենուան կրկին անգամ ստիպված է

70 Տե՛ս Меликишвили. Нагри—Урарту, с. 50.

71 Ն. Վ. Հարությունյանը գտնում է, որ արշավը դեպի Ալզի—Խաթե եղել է կարծես թե դեպի Կուլմերի—Ուրմե(ու)—Արխի արշավանքի շարունակությունը (Бивайнли, с. 170 и сл.): Արխի երկրի մեր առաջագրած տեղադրության կապակցությամբ մենք չենք կարող համաձայնվել այդ կարծիքի հետ:

ծղել արշավել Ալզիի դեմ՝ այս երկրում ծագած ապստամբու-
թյան կապակցությամբ⁷²:

Փորձենք հանրագումարի բերել Մենուայի երեք արևմու-
լան, այն է՝ ա. Արածանու հովտով դեպի Եփրատ ու, այնու-
հետև, անդրեփրատյան շրջանը, բ. դեպի Կուլմերի-Ուրմե(ու)-
Արսի և գ. Տիգրիսի վերին հոսանքի հովտով դարձյալ դեպի
Պփրատ և անդրեփրատյան շրջանը կատարած արշավանքնե-
րի մասին մեր ունեցած տվյալները: Կարևորներից մեկն այս-
տեղ այդ արշավանքների ժամանակագրության հարցն է,
իհարկե, ոչ բացարձակ ժամանակագրության, որը որոշելու
համար տվյալները պակասում են, այլ հարաբերական: Մեզ
բնական է թվում այն ենթադրությունը, թե արևմտյան ուղ-
ղությամբ առաջին արշավանքը կամ արշավանքները Կուլմերի
(Շուբրիա)-Ուրմե(ու)-ի կողմը կատարվածներն են եղել:
Սույն եզրակացության հիմքը այն նկատառումն է, որ այդ
երկրները փակում էին երկու այն ստրատեգիական ուղիները,
որոնք տանում էին, մեկը Արածանու, մյուսը՝ Տիգրիսի հով-
տով, դեպի Մենուայի գլխավոր նպատակակետը՝ Եփրատի
հովիտը: Եվ միայն դրանց նվաճումից հետո կարող է սկսվել
ազմերթը՝ այդ ուղիներով: Այդ հեռավոր արշավանքները
ձեռնարկելու համար անհրաժեշտ էր ոչ միայն նախապես հար-
թե նրանց իրականացման ճանապարհները, այլև թիկունքում
բացօտ երկրներ շփողներ: Գալով այդ երկու ուղիներով հե-
տագայում կատարված արշավանքների հարաբերական ժա-
մանակագրությանը՝ դժվարանում ենք որևէ հաստատուն խոսք
ասել:

Արևմտյան ուղղությամբ Մենուայի ռազմական քաղաքա-
կանության արդյունքներն էին, այսպիսով, առաջին հերթին
Վանա լճի և Եփրատի միջև ընկած մի ծավալուն տարածքի
նվաճումը և Եփրատի ավազանում, գետի աջ և ձախ ափերին,
Մեկիտեա (Մալաթիա) քաղաքի շրջանում, ինչպես և նրանից
հարավ և հյուսիս՝ կարևոր ռազմաստրատեգիական պլացդար-
մի ստեղծումը: Այդ պլացդարմն այնուհետև օգտագործեց Մե-
նուայի որդի ու հաջորդ՝ Արգիշթի I-ի թագավորը:

Բարեբախտաբար, այդ արքայի գործերը գրանցված են
Նրա տարեգրության մեջ, որի էական մասը պահպանվել է
և հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել թագա-
վորի ռազմական ձեռնարկումների, հատկապես՝ մեզ հե-
տաքթորո՞ղ արևմտյան արշավանքների հերթականության և
մանրամասների մասին: Այդպիսի արշավանքները երեքն են
եղել և տեղի են ունեցել Արգիշթի I-ի թագավորության IV, XII
և XIV տարիներին, այսինքն՝ մ. թ. ա. 783, 775 և 773 թթ.⁷³:

Այդ արշավանքներից առաջինը (ՄԿԻ, 127 II⁵-22) ուղղը-
ված է եղել անդրեփրատյան խաթե (խաթի) երկրի դեմ և շո-
շափել է նրա ճանապարհին ընկած մի քանի երկրներ, այդ
թվում՝ Սուփա երկիրը (որը նշված չէ այդ արշավանքի նկարա-
գրության մեջ, սակայն հիշատակվում է հաջորդ, V տարվա
նկարագրության մեջ, ուր խոսվում է խաթե և Սուփա երկրը-
ների 6.600 ռազմիկներին նորակառույց էրեբունի բերդաքա-
ղաքում տեղավորելու մասին)⁷⁴ և մեզ արդեն ծանոթ Մեկի-
տեա քաղաքը: Արշավանքի նպատակն էր լայնացնել ու ամ-
րապնդել Մենուայի նվաճումները Եփրատի ավազանում: Ըստ
երևույթին այն բավարար արդյունքներ էր տվել, քանի որ Ար-
գիշթին հետագայում (համենայն դեպս՝ մինչև իր իշխանու-
թյան XV տարին, որի վրա տարեգրությունն ընդհատվում է)
կարիք չի ունեցել նոր ջանքեր թափելու մերձեփրատյան եր-
կրների նվաճման կամ հնազանդ վիճակում պահելու համար:
Այս արշավանքից Արգիշթին վերադարձել է հարուստ ավա-
րով բեռնավորված, մասնավորապես, գերեվարելով նաև 30
հազար մարդ:

Սակայն 775 թ. (Արգիշթիի իշխանության XII տարին)
իրադարձությունները ցույց տվին, որ Ուրարտական տերու-
թյան արևմտյան հեռավոր սահմանների ամրապինդ վիճակը
դեռևս պետության ներքին, մասնավորապես, նրա կենտրոնի
և արևմտյան սահմանի միջև ընկած շրջանների հանգստու-

73 Մենք հետևում ենք տարեգրության բաժինների այն հերթականությա-
նը, որ սահմանել է Գ. Ա. Մելիքիշվիլին:

74 Տե՛ս Меликшвили, Наирн—Урарту, с. 246.

⁷² ՄԿԻ, 375²²⁻²⁴.

թյան երաշխիք չէր: Այդ տարվա համար տարեգրությունը հիշատակում է «Տուարածյան հովտի» երկրի՝ ^{KUR}TU-a-ra-si --ni-e-i-hu-[bi], հնազանդեցման մասին: Հետազոտողները առանց տատանման տեղադրում են այդ երկիրը հայկական Տուարածատաի, այսինքն «Տուարածի դաշտ» գավառի տարածքում, որը հիշատակվում է «Աշխարհացույցում» որպես Տուրուբերան նահանգի գավառներից մեկը, որն ընկած էր Հարթ գավառից դեպի հյուսիս-արևելք: Բացի այդ, Tuarasi-բառին հայկական ծագում է վերագրվում⁷⁵: Հնարավոր է, որ հենց այս վայրն է հիշատակվում Տուարիզու կամ Տուարիծու անվան տակ, Ասորեստանի թագավոր Քիզլաթպալասար I-ի նվաճած քաղաքների թվարկման մեջ (АВВИУ, 45 և ծան. 2):

Արգիշթի I-ի իշխանության հաջորդ՝ XIV տարում, այսինքն՝ մ. թ. ա. 773 թ., Մենուա թագավորի արշավանքից հետո երկրորդ անգամ, արևմտյան ուղղությամբ մի արշավանքի նպատակակետ է դառնում Ուրմե երկիրը (ՄԿՈ, 127, VI⁵⁻⁷; 128, A 4²⁴⁻²⁵): Արգիշթին ավերում է երկիրը և մեծ քանակությամբ մարդիկ վերաբնակեցնում տերության կենտրոնը՝ Քիաշիլի: Տարեգրության մեջ հիշատակված համապատասխան թիվը՝ 24 (?) հազ. 813 մարդ, վերաբերում է այդ տարվա ընթացքում երկու տարբեր ուղղություններով կատարված արշավանքներին: Կրկին անգամ Ուրմե երկրի վրա արշավելու անհրաժեշտությունը ցույց է տալիս, որ տերության կենտրոնին այդքան մոտ գտնվող այս երկիրը, սակայն, տակավին մնում էր ոչ լիովին հնազանդեցված և ուրարտական թագավորի համար ծանր հոգսերի առարկա:

Այս եզրակացությունը հաստատվում է Արգիշթիի որդի և ժառանգորդ Սարգուրի II թագավորի ժամանակներին վերաբերող տվյալներով: Այս արքան նույնպես տարեգրություն է թողել, որի պահպանված մասը, ճիշտ է, որոշ բացերով, լուսավորում է նրա իշխանության ժամանակը մինչև մ. թ. ա. 739 թ.: Հավանաբար նրա սկզբնատարվան են վերաբերում

⁷⁵ Տե՛ս Գ. Բ. Զահուկյանի «Ուրարտերենը և հայերենը» հոդվածը ներկա գրքում:

տարեգրության՝ Մելիտեա քաղաքի վրա կատարված արշավանքի մասին տեղեկությունները (ՄԿՈ, 156, B 1²⁷ և հաջ.), որը, սակայն, ավելի մանրամասն նկարագրված է Եփրատի ափին գտնված՝ Իզողլուի հայտնի արձանագրության (մեզ հայտնի ուրարտական արձանագրություններից ամենաարևմուտյանի) մեջ (ՄԿՈ, 158): Հնարավոր է, որ արշավանքի պատճառն էին ուրարտական գահի փոփոխության կապակցությամբ ծագած անհնազանդության դրսևորումները: Մելիտեայի թագավոր Խիլարուադան, արշավանքից սարսափած ու թողություն խնդրելով, ներումն էր ստացել ոսկուց, արծաթից ու անասուններից բաղկացած տուրքը մուծելու պայմանով: Մի շարք քաղաք-ամրոցներ խլվել էին նրանից ու միացվել Ուրարտական տերության բուն տարածքին: Դրանցից մի քանիսը իրենց հետքերն են թողել հայկական տեղանունների միջև և անբունազբոս կերպով տեղադրվում են Մելիտենեի շրջանում, Եփրատի գույգ ափերին: Սրանցից են Խազանի-Խոզանը, Գաուրախի-Գավրեքը, Թում(ե)իշկի-Թումիսա-Թմնիսը, Մանինու-Մենաինը, Արուշի-Ալոշը, Կուլբիտարիինի-Կոդոբերդը⁷⁶: Մելիտեայի թագավորությունից անջատված քաղաքների թվին է պատկանել նաև վերը հիշատակված Կուե-Ուիտաշե քաղաքը (հմմտ. վերը, ծան. 56. ևս մի փաստ հօգուտ այն բանի, որ այս անվանումը տեղական էր և ոչ ուրարտական), ինչպես և Տաշե քաղաքը: Արշավանքի կապակցությամբ հիշատակվում են նաև Կամանի, Կարնիշի, Մուշանի երկրներն ու Խիլարուադա արքայի թագավորանիստ քաղաքներից Սասինին: Սարգուրին տեղահան է արել նաև բնակչության մեծ գանգվածներ:

Հաջորդ արշավանքը դեպի Եփրատի հովիտը Սարգուրի II-ը, ելնելով նրա տարեգրության տվյալներից (ՄԿՈ, 155, E³⁶ և հաջ.), իրականացրել է երկու տասնամյակ անց, 746 կամ 747 թ.⁷⁷: Այս անգամ, սակայն, արշավանքի նպատակը ոչ թե ծայրամասային շրջանների հնազանդեցումն էր, այլ նվաճողական նոր պլանները, քանի որ տարեգրության մեջ

⁷⁶ Տե՛ս Арутюкян, ТУ, S. V.

⁷⁷ Տե՛ս Меликишвили, Наирн—Урарту, с. 249.

հիշատակվում է, որ այստեղ ոչ մի ուրարտական արքա գեոևստք չէր դրել: Սարգուրի II-ը մտնում է Կումախա (աւուրական աղբյուրների Կումամուխ, անտիկ Կումամագենն)՝ Մելիտենեից հարավ գտնվող երկիրը, անցնելով նաև Մելիտենեի վրայով: Կումախայի թագավոր Կուշտաշպիլին հնազանդվում է և թողություն ստանում, Սարգուրին մեծ ավար է տանում: Այս արշավանքը հավանաբար կոչված էր ամրապնդելու Ուրարտուի իշխանությունը անդրեփրատյան շրջաններում և համախմբելու նրա արևելափոքրասիական և հյուսիսաստրական դաշնակիցների ուժերը Ասորեստանի դեմ, որը նոր հզոր վերելք էր ապրում Քրգլաթպալասար III թագավորի օրոք⁷⁸: Ապասվող բախումը տեղի ունեցավ 743 թ. հենց այս Կումախա-Կումամուխ երկրում և ավարտվեց Ուրարտուի ու նրա դաշնակիցների պարտությունը:

Իր այս երկու արևելյան արշավանքների միջև Սարգուրի II-ը բազմաթիվ պատերազմներ է վարել տերության այլևայլ ծայրամասերում: Սակայն մեր ուշադրությունը գրավում են նրա երեք այնպիսի ռազմական ձեռնարկումները, որոնք կապված էին տերության ներքին շրջանների հետ, ընդ որում դրանք դարձյալ կապվում են արևմտյան ուղղության հետ:

753 կամ 752 թ. մ. թ. ա., տարեգրության համաձայն (ՄԿԽ, 156, DI+DII₁₁), տեղի է ունեցել արշավանք դեպի Արմե երկիրը և նրա թագավորական քաղաք Նիխիրիան: Իր հաղթանակը Արմեի նկատմամբ Սարգուրին հիշատակում է Ասորեստանի նկատմամբ տարած հաղթանակի կողքին. հավանաբար, երկու բախումներն էլ միևնույն արշավանքի ժամանակ են տեղի ունեցել: Այս ենթադրությունը հաստատվում է Նիխիրիա քաղաքի տեղադրությամբ, որը կատարվում է նրա՝ հայկական նփրկերտ գավառի (այժմ՝ Մայաֆարկին) հետ նույնացման միջոցով⁷⁹: նփրկերտը գտնվում էր Աղձնիք նա-

հանգում, Կուլմերի-Շուբրիայից արևմուտք և Ուրմեից հարավարևմուտք: Նրա հարավային սահմանը Տիգրիս գետն էր, որի այն կողմը տարածվում էին Ասորեստանյան տերության հողերը:

Արմեի և Ուրմեի հարաբերակցությունը դիտարկելիս հարկ է հաշվի առնել, որ քանի որ երկուսն էլ հիշատակվում են միևնույն աղբյուրի՝ Սարգուրի II-ի տարեգրության մեջ, ապա դժվար է դրանք նույնացնել տարածքների առումով: Ավելի շուտ խոսքը երկու երկրների մասին է: Գալով նրանց անվանումներին, պետք է կարծել, որ դրանք միևնույն էթնատեղանվան երկու տարբերակներ են՝ սկզբնական ձայնավորի հերթագայմամբ: Եթե հաշվի առնենք, որ «ուրարտերենի, հավանաբար նաև ակկադերենի ուն մեծ մասամբ փաստորեն հաղորդում է օ ձայնավորը» (Դյակոնով), ապա այստեղ կարելի է ենթադրել ա ձայնավորի երկու տարբեր արտասանություններ. բաց՝ ա և փակ՝ օ, որոնք և տվել են մի դեպքում Արմե, մյուսում Օրմե (որը գրանցվել է որպես Ուրմե)⁸⁰: Այս երեք վույթը (ա-ի բաց և փակ արտասանությունը) հատկանշական է, համենայն դեպս, արդի հայերենի որոշ բարբառների համար:

Երկու այս երկրների կապակցությամբ կարելի է անել նաև հետևյալ ենթադրությունը: Աշշուրնաժիրապալ II-ը (884/3—859 թթ. մ. թ. ա.) հիշատակում է, ինչպես հայտնի է, ներքին Ուրումու երկիրը (ԱՅԻՄ, 23, II, 2), որը հետազոտողները (սովորաբար պարզապես Ուրումու անվան տակ) համեմատում կամ նույնացնում են Ուրմեի հետ և կապում ուրումու ցեղերի հետ: Այդպիսի անվանում (այսինքն՝ ներքին Ուրումու) կրող երկիրը կարծես թե ենթադրում է նաև մեկ այլ՝ Արտաքին Ուրումու կամ սոսկ՝ Ուրումու անունով երկրի գոյությունը: Այս վերջինը կարելի կլիներ նույնացնել Արմե երկրի հետ, որն ավելի մոտ էր գտնվում Ասորեստանին (անմիջապես Տիգրիսի մյուս ափին), քան Ուրմեն, որն ընկած էր ավելի հեռու՝ հյուսիս-արևելքում:

⁸⁰ Տե՛ս Դյակոնով, с. 226. Ի. Մ. Դյակոնովը գտնում է, որ անվանման հիմքը եղել է օ(а)մ:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում:

⁷⁹ В. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946. Հավանական է, որ Նիխիրիան համընկնում է խեթական աղբյուրների Նախիրայի հետ (ԲԱԽ, с. 36):

752—751 թթ. կապակցութեամբ տարեգրութեան մեջ հիշատակվում է մի մեծ արշավանք՝ Ուրմե երկրի դեմ (ՄԿԽ, 155, A22 և հաջ.), որը, ինչպես պարզվում է, շէր հպատակվել ուրարտական իշխանութեանը, հակառակ Սարգուրիի նախորդների ջանքերին: Ուրարտուի թագավորը հաղորդում է 11 ամբողջների ավերման, 9600 տղամարդկանց, կանանց և դեռահասների տեղահանման և մեծ քանակութեամբ խոշոր ու մանր եղջերավոր անասուններ ավարառելու մասին:

Բինգյուլում գտնված մի արձանագրութեան հատվածի վրա (ՄԿԽ, 157) ընթերցվում է, որ Սարգուրի II-ը նվաճել է այստեղ Ալուշի[...]-յա երկիրը⁸¹:

Վերջապես, Դավթի բլրի վրա (Արգիշթիխինիլի-Արմավիր) գտնված մի արձանագրութեան մեջ (ՄԿԽ, 4185) տեղեկություն է պահպանվել այն մասին, որ Սարգուրի II-ն այստեղ ևս ստիպված է եղել ուժ գործադրել, այն դեպքում, երբ այս երկիրը նվաճվել էր դեռևս նրա հոր՝ Արգիշթի I-ի օրոք⁸²:

Արանով ավարտվում են ուրարտական աղբյուրների տեղեկությունները տերութեան արևմտյան մասում և ընդհանրապես ներքին շրջաններում անհնազանդ երկրների ու ցեղերի հետ տեղի ունեցած բախումների մասին: Սարգուրի II-ի հաջորդներից և ոչ մեկը տերութեան գոյութեան մնացած մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում (մ. թ. ա. VIII դ. երկրորդ կես-VII դ.) չի հիշատակում ոչ Ուրմե(ու) երկիրը, ոչ վերը թվարկած երկրներից որևէ մեկը և ոչ էլ ընդհանրապես տերութեան որևէ այլ ներքին շրջան՝ մեզ հետաքրքրող (այսինքն՝ բախումների) իմաստով: Նման լուսնյակ պատճառներին մենք դեռ ստորև կանդրադառնանք: Գալով Եփրատի հովտին ու անդրեփրատյան շրջանին, ապա այդ մեծ ժամանակամիջոցում հիշատակվում է միայն մեկ, Ռուսա II-ի (685—645 թթ.) օրոք իրականացված արշավանք, որն ուղղված էր Մուշկինի, Խաթե և Խալիտու երկրների դեմ (ՄԿԽ, 278):

Եթե այժմ հանրագումարի բերենք ուրարտական թագավորների՝ իրենց տերութեան հզորութեան գագաթնակետին,

այսինքն, մ. թ. ա. VIII դարի առաջին կեսում, արևմուտքում իրականացրած ռազմական ձեռնարկումները, ապա մեր առջև կգծագրվի նրանց աշխարհագրական ծավալման երկու պլան, երկու եզր: Դրանցից մեկը՝ հեռավոր կամ խորքային եզրը, անցնում էր Եփրատի հովտի երկայնքով, և դարձել էր Ուրարտական տերութեան ու փոքրասիական, այսպես կոչված «ուշխեթական», բայց իրականում էպպես հայալեզու մանր թագավորությունների կոնտակտային գոտի: Մյուսը՝ մոտակա եզրը, դեպի լեռնաշխարհի կենտրոնը ձգտող հայկական էթնալեզվական տարրի հիմնական զանգվածի ճակատագիծն էր, որտեղ առաջին հերթին տեղի էին ունենում հայկական տարրի բախումները հակառակ ուղղությամբ, այսինքն՝ դեպի արևմուտք շարժվող ուրարտական ռազմական մեքենայի հետ: Այդ գիծը ձգվում էր հարավից հյուսիս՝ Արմե(նփրկերտ)—Կուլմերի (Շուբրիա—Սասուն)—Ուրմե(ու) (Տարոն)—Արխի (Հարթ)—Տուարածինիեի խուբի («Տուարածի հովիտ»)—Տուարածատափ)—Ալուշի[...]-յա (Բինգյուլի) միջով դեպի Եփրատի ակունքները: Թեև ուրարտական հզոր թագավորները հաստատորեն ամրացել էին Եփրատով անցնող արևմտյան սահմանի վրա, բայց և այնպես նրանց տերութեան կենտրոն Բիսյնիլիի և այդ սահմանի միջև գոյություն ուներ մի պատվարի դեմս հիշատակված երկրների, որը ժամանակ առ ժամանակ ակտիվանալով, դառնում էր ուրարտական թագավորների համար առավել շոշափելի ու վտանգավոր: Մենք արդեն ակնարկել ենք Ուրարտու պետութեան ներսում այդօրինակ ներքին բախումների եզակի բնույթը⁸³, ինչպես և այն հանգամանքը, որ դրանք խմբավորված էին բավական հստակորեն գծագրվող մի սահմանագծի վրա: Նկատի ունենալով այդ ժամանակներում և այդ տարածքներում հատկապես հայկական, և ոչ թե որևէ այլ, ցեղերի գերագույն ակտիվութեան հանգամանքը, հարկ է մտածել, որ սա իրոք հայկական էթնալեզվական տարրի հիմնական զանգվածի տարածման արևել-

⁸¹ ՄԿԽ, 157 և ծանոթությունները:

⁸² Տե՛ս Арутюнян, Бнайнили, с. 238 и сл.

⁸³ Ն. Վ. Հարությունյանը որակում է այդ բախումները որպես արավական տարրիակա: Տե՛ս Бнайнили, с. 229, 234, 249.

յան եզրն է, այն տեսքով, որին ուրարտական թագավորները հանդիպել էին իրենց դեպի արևմուտք առաջխաղացման ժամանակ և որը նրանց հաջողվում էր պահպանել իրենց հզորության գագաթնակետին: Այլ խոսքով ասած, այստեղ, այս երկու սահմանների միջև, գծագրվում է, եթե կարելի է այսպես ասել, մի «նախնական» Հայաստան: Ուշադիր զննելով նրա տարածքը, կարելի է նկատել, որ այն զարմանալիորեն զուգահեռվում է Հերոդոտոսի պատկերացրած ողջ Հայաստանի տարածքին: Բացահայտվում է, ուրեմն, ևս մի հիմք Հերոդոտոսի այդորհնակ պատկերացման համար. այն արձանագրում է Հերոդոտոսից դարեր առաջ գոյություն ունեցած իրավիճակը: Եթե այդ պատկերացումը V դարի համար ժամանակավրիպություն (անաքոնիզմ) էր (քանի որ Հայաստանն այդ ժամանակ արդեն ընդգրկել էր լեոնաշխարհի նաև արևելյան մասը), ապա Ուրարտական կայսրությանը նախորդող և նրա սկզբնական ժամանակաշրջանների համար այն իրականություն էր⁸⁴:

Ահա, եթե ուրարտական թագավորներին այսպես թե այնպես հաջողվում էր ժամանակավորապես արգելակել այլ «նախնական» Հայաստանի ընդարձակումը դեպի արևելք, ապա նրանց ուժերից վեր էր կասեցնել էթնալեզվական խրմբերի ներծծումը, դիֆուզիան, ու առավել ևս հարևան ցեղերին հետևողականորեն փոխանցվող հայոց լեզվի երթը, որոնք, դժվար է ասել, թե այդ ժամանակ արդեն լեոնաշխարհի արևելյան հատվածի որ անկյունն էին հասցրել հայացման օջախները: Այդ պիտի պարզեն ապագա հետազոտությունները:

⁸⁴ Այդ նույն «նախնական» Հայաստանը իր տարածքով համապատասխանում է նաև Քսենոփոնի «Արևմտյան Հայաստանին» (տե՛ս վերը): Ընդհանրապես, նրա առկալությունը նշված սահմաններում, թույլ է տալիս նոր բացատրություն տալ Հայաստանի՝ Աքեմենյան տերության մեջ երկու ժամանակված լինելու խնդրին: Նշենք նաև, որ մեր ակնարկած «նախնական» Հայաստան հասկացությունը սկզբունքորեն տարբեր է Ս. Տ. Երևմյանի ենթադրած «նախնական Հայաստանից», որը նա տեսնում է փոքրասիական քաղաք Կեսարիայի շրջակայքում, այդպես թարգմանելով Մովսես Խորենացու «Պրոտի Արմենիա» («Առաջին Հայք») արտահայտությունը:

* * *

Այսպես, ուրեմն, Սարգուրի II-ին հաջորդած ուրարտական թագավորների արձանագրություններում, ընդհուպ մինչև տերության անկումը, մենք այլևս չենք հանդիպում վերը նշված երևույթները հիշեցնող որևէ մի բան: Այդպիսի լուծությունը կարող է երկու բացատրություն ունենալ: Կամ դրա պատճառը Սարգուրիից հետո նկատվող՝ համապատասխան աղբյուրների խիստ կրճատման հանգամանքն է, կամ էլ այն, որ իրենց նախկին հզորությունը կորցրած ուրարտական թագավորները այլևս ի վիճակի չէին դիմագրավելու իրենց տերության տարածքում տեղի ունեցող դանդաղ, բայց հաստատուն էթնիկական շարժումներին: Մտահոգված լինելով առաջին հերթին տերության արտաքին սահմանների պահպանման խնդրով՝ նույն Ասորեստանի ագրեսիայից և Առաջավոր Ասիայում այդ ժամանակները հայտնված կիմներական, իսկ այնուհետև՝ սկյութական ցեղերից, նրանք, հավանաբար, ինքնահոսի էին մատնում այդ, մասամբ իսկապես անորսալի, շարժումները, որոնք, սակայն, հետագայում իրոք որ ճակատագրական նշանակություն ունեցան տերության փլուզման խնդրում:

Համենայն դեպս, այդ լուծության պատճառ չէր կարող դառնալ նշված տեղաշարժի դադարը, որովհետև այդ կհակասեր VI դարի մեզ արդեն ծանոթ հանրագումարին՝ Ուրարտական տերության գրեթե ողջ տարածքում արդեն Հայաստանի գոյության փաստին:

Սակայն ուրարտական աղբյուրներում համապատասխան տվյալների բացակայությունը ամենևին չպետք է խանգարի մեզ շարունակելու մեր որոնումները և մեզ հետաքրքրող պրոցեսի հաջորդ փուլերի հետազոտությունը. այն միայն նոր աղբյուրային բազայի հայտնաբերման խնդիրն է հարուցում: Այդպիսին գտնում ենք վաղմիջնադարյան հայկական աղբյուրներում, մասնավորապես՝ Մովսես Խորենացու պատմության մեջ: Բնականաբար, մենք այդ դեպքում հաշվի ենք առնում այն հսկայական տարբերությունը, որ կա մի կողմից՝ ուշ շրջա-

նին պատկանող այդ աղբյուրի, որն ընդունակ է պահպանելու հազարամյա հնություն ունեցող իրադարձությունների սոսկ հեռավոր արձագանքները, այն էլ՝ փոխակերպված վիճակում, և մյուս կողմից՝ իրադարձություններին ժամանակակից այն աղբյուրների միջև, որոնք մենք նոր դիտարկեցինք: Այդ տարբերությունից բխում է նաև իրենից այդքան հեռու ժամանակաշրջանի վերաբերյալ Մովսես Խորենացու բերած տվյալների օգտագործման միանգամայն այլ մեթոդիկայի անհրաժեշտությունը: Այդպիսի մեթոդիկայի մշակման գործում վերջին տասնամյակների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել, որը հիմք է ծառայում պատմահոր մատուցած նյութը որպես պատմական աղբյուր կիրառելու հետագա փորձերի համար⁸⁵:

Վերը զուգահեռ անցկացվեց ասուրական աղբյուրների մուշկու և ուրումու ցեղանունների գույգի և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Մշակ և Արամ անձնանունների միջև: Այժմ մենք պիտի դիտարկենք «Հայոց պատմության» տվյալները էլ ավելի հին պրոցեսի՝ Հայկական լեռնաշխարհի բնակեցման մասին:

⁸⁵ Վերջին ժամանակները մեր հանրամատչելի մամուլում, հեռուստատեսային հաղորդումներում և, ցավոք սրտի, երբեմն նաև գիտական մամուլում մեր այս աշխատության մեջ շոշափվող խնդիրների շուրջը զարգացվել են «տեսակետներ», որոնք պատկանելով գործին անտեղյակ և մասնագիտությամբ այդ հարցերից հեռու կանգնած անձնավորությունների, բնակաշարը պարունակում են բազմաթիվ արտառոց սխալներ ու մերձեցումներ: Վերջիններիս մեջ հատկապես նշելի է այն, որ ելույթների հեղինակները ի վիճակի չեն տեսակավորելու պատմական աղբյուրները ըստ նրանց տեղեկատվական արժեքի հատկանիշի: Այսպես, իրադարձություններին ժամանակակից սեպագրական վավերագրերը և Մովսես Խորենացու որևէ հաղորդումը՝ իրենից ավելի բան մեկ հազարամյակ առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին, նրանք պարզուսակ կերպով հակադրում են միմյանց: Մինչդեռ այդ երկու տիպի պատմական աղբյուրները, նրանցից իրական պատմագիտական նպաստ ստանալու համար, պահանջում են միանգամայն տարբեր մոտեցումներ, մշակման տարբեր մեթոդներ, որոնք վաղուց ի վեր հայտնի են աղբյուրագիտության մեջ, բայց, բնականաբար, անհայտ են մնում այդ հեղինակներին:

Գիտական գրականության մեջ բավարար արտացոլում չի ստացել այն փաստը, որ «Հայոց պատմության» մեջ ներկայացված է Հայկական լեռնաշխարհի բնակեցման ոչ թե մեկ, այլ երկու ալիք: Հետազոտողների սկեռուն ուղադրությանն է արժանացել (իրեն՝ Մովսես Խորենացու ցուցաբերած ընդգրծված հետաքրքրության հետքերով) միայն դրանցից երկրորդը, որ կապված է Հայկի անվան հետ: Նրան է ներկայացնում պատմահայրը որպես հայ ժողովրդի նախնի, իր հերթին նրա ծննդաբանությունը աստվածաշնչային Թորգոմի, Թիրասի և Գոմերի միջոցով հասցնելով մինչև Հաբեթ՝ Նոյի որդին: Թե՛ պատմահոր, և թե՛ արդի հետազոտողների կողմից անհամեմատ ավելի քիչ ուղադրության է արժանացել լեռնաշխարհի բնակեցման առաջին ալիքը, որն իբր տեղի է ունեցել Հայկից երեք սերունդ ավելի վաղ և կապված է եղել աստվածաշնչային Սեմի՝ Նոյի որդու, և նրա որդի Տարբանի հետ: Որպես այս երկու ալիքների մասին տեղեկությունների աղբյուր, Մովսես Խորենացին հիշատակում է, համապատասխանաբար, հույն փիլիսոփա Օլիմպիոդորոսի բանավոր հաղորդումը (միաժամանակ և ժողովրդական ավանդությունները) և Մար Աբաս Կատինայի մատյանը: Մենք այստեղ չենք մտնի Խորենացու այս երկու աղբյուրների խնդրի հետ կապված մանրամասների մեջ. մեզ համար կարևոր է միայն իմանալ, որ պատմահայրը Հայկական լեռնաշխարհի բնակեցման վերաբերյալ իր ձեռքի տակ ունեցել է երկու տարբեր աղբյուր, որոնց տվյալները նա պիտի համաձայնեցնեք միմյանց, մի բան, որ նա, ինչպես կտեսնենք, կատարել է:

Որ Մովսես Խորենացին իրոք երկու տարբեր հաղորդումներ է ունեցել իր ձեռքի տակ, և ոչ թե հորինել է նրանցից մեկը, ակնհայտ է դառնում հետևյալ պարագայից: Պատմահոր վերաբերմունքը այդ երկու հաղորդումների նկատմամբ ամենևին հավասար չէ: Եթե նա անվերապահորեն հավատացել է Հայկի մասին Մար Աբաս Կատինայի պատմածին և ներկայացնում է նրա հետ կապված իրադարձությունները որպես աներկբայելի փաստեր, ապա Օլիմպիոդորոսի պատմածը Սեմ-Տարբանի վերաբերյալ նա վերապատմում է սոսկ որպես իր

ականջին հասած մի լուր, որի իսկութունը ինքը չի երաշխավորում և նույնիսկ մասամբ փորձում է նսեմացնել դրա նշանակությունը: Բանն այն է, որ այս վերջին հաղորդումը ըստ էության խանգարում է Հայկի՝ որպես հայ ժողովրդի միանձնյա սկզբնավորողի վերաբերյալ պատմահոր հիմնադրույթին, և նա ավելի շուտ կանտեսեր այն, եթե կարողանար, քան թե, չլինելու դեպքում, կհորիներ:

Ահա «Հայոց պատմության» համապատասխան հատվածը: I, 6. «Ուլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Պատմեցից ձեզ, ասէ, և զրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս և բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մատեան լեալ զՔսիսութեան (Նոյի—Գ. Ս.) և զորդոց նորա, որ այժմ ոչ ուրեք երևի, յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի: Յետ նաւելոյն Քսիսութեան ի Հայս և դիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սեմ ընդ արևմուտս հրաւիսոյ դիտել զերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստի միով լերամբ, գետոյ ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն երկրուանեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեառնն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդուցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերօք և հնգետասան դատերօք և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարան, և զանուն տեղոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօնք. զի անդ գառաջինն սկիզբն եղև բաժանելոյ որդոց նորա ի նմանէ»: <...> Եւ այնոքիկ զրոյցք սուտ և կամ թէ արդարև լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ: Այլ վասն գիտելոյ քեզ զամենայն, որ ինչ ի լրոյ և որ ինչ ի գրոց՝ անցանեմ ընդ բնան ի գիրսս յայսոսիկ, զի իմասցիս զառ քեզ պարզամտութիւն իմոց խորհրդոցս»:

I, 10. «Որում (Բելին—Գ. Ս.) ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ շու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հրաւիսոյ, հանդերձ որդուք իւրովք և դատերօք և որդոց որդուք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Եր-

թեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս:

«Եվ ինքն խաղայ, ասէ, այլով աղխին ընդ արևմուտս հրաւիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն: Յիշի և աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստի միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս»:

Այս երկու հաղորդումները մի քանի ընդհանուր գծեր են պարունակում, որոնցից առաջին հերթին կշեշտենք աստվածաշնչական թեմաները: Առաջին հաղորդման մեջ այդպիսին է Նոյի որդի Սեմի առկայությունը, նրա՝ դեպի Հայկական լեռնաշխարհ տեղաշարժի ելակետը, այն տեղը, ուր Նոյը ցամաք ելավ, այսինքն՝ այստեղ շնչատակաված Արարատ լեռը: Երկրորդ հաղորդման մեջ դա Նոյի որդի Հաբեթն է և նրա սերունդները՝ Գոմերը, Թիրասը, Թորգոմը:

Այնուհետև դա նաև Բաբելոնն է, Հայկի տեղաշարժի ելակետը, որի ներմուծումը որպես այդպիսին իր հերթին կապված է աշտարակաշինության և լեզուների առաջացման աստվածաշնչական մոտիվների հետ: Եվ ոչ միայն ինքը՝ Բաբելոնն է, այլև, որ ավելի կարևոր է մեզ համար, ավանդության մեջ նրա առկայությունից բխող՝ տեղաշարժի ընդհանուր ուղղությունը հարավից դեպի հյուսիս: Այս ամբողջ տեղաշարժը՝ Բաբելոնից դեպի Հայկական լեռնաշխարհ, կարելի է համարել Աստվածաշնչի ներմուծում: Սրա հետ է կապվում նաև, ակնհերևաբար, «երկիրն Արարադայ»-ի, որպես Հայկի ճանապարհին առաջին հանգրվանի ներկայացումը: Ինչպես նշել է

Մ. Աբեղյանը⁸⁶, վկայակոչելով Գեղեցիքին և այլ հետազոտողների, Մովսես Խորենացու Արարադը այսօրվա Արարատը չէ, որը նա անվանում է Մասիս, այլ Կորդուքի Արարադ լեռը: Այդպես է նաև Փավստոս Բուզանդի մոտ⁸⁷:

Աստվածաշնչական այս թեմաների ներմուծումը ազգային ավանդության մեջ անպայման Խորենացուն վերագրելու որևէ անհրաժեշտություն չկա: Շատ հավանական է, որ նա ստացել է դրանք պատրաստի վիճակում, հիշյալ ավանդության կազմում, թեև, իհարկե, Սիմ լեռան անունը աստվածաշնչային Սեմով ստուգաբանելը բավական հատկանշական է նրա մեթոդիկայի համար: Մ. Աբեղյանը ցույց է տվել, որ աստվածաշնչական թեմաները կարող էին միահյուսվել հայ ազգային ավանդություններին նաև Մովսես Խորենացուց անկախ և նրանից ավելի վաղ⁸⁸:

Ինչևիցե, մեջբերված հատվածներում մեզ տվյալ էրեպոսը հետաքրքրում է ոչ թե աստվածաշնչից ծագող նյութը, այլ այն, ինչ նրանց մեջ պարունակվում է այդ նյութից գալիս: Այստեղ առաջին պլանի վրա է մղվում այն դերը, որ ազգային ավանդությունը վերագրում է Տարոն և Հարք գավառներին:

Հետաքրքրական է, որ Սեմի և Հայկի ուղիները դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը գործնականորեն նույնն են⁸⁹: Սեմը Կորդուքի Արարադ լեռից ճանապարհվում է դեպի Հյուսիս-արևմուտք և գալիս-հասնում Տարոն: Հայկը, դարձյալ, ըստ երևույթին, Կորդուքում⁹⁰ հանգրվանելուց հետո, դիմում է դեպի Հյուսիս-արևմուտք և գալիս հասնում Հարք գավառը, որ Տարոնի անմիջական հարևանն էր: Այսպիսով, երկու ավանդությունն էլ համառորեն հանդես են բերում միևնույն շրջանը:

Մեր հետազոտության համար արտակարգ կարևոր է այն հանգամանքը, որ Տարոն-Հարքի շրջանը համընկնում է Ուր-

մե(ու)—Արխիի շրջանի հետ, որին մենք հանդիպեցինք Մենոս արքայի՝ Մուշի արձանագրության մեջ: Մուշ քաղաքը, որտեղ գտնվել է այդ արձանագրությունը, որում գրված է՝ «Ես նվաճեցի (երկիր) Ուրմեն, դրեցի այս քարակոթողը: Դեպի (երկիր) Արխի [...], ինչպես հայտնի է, Տարոնի կենտրոնն է, որով և Տարոնն ու Ուրմե(ու) երկիրը նույնանում են, եթե ոչ լիովին, գոնե իրենց տարածքների մի մասով: Հենց այդ երկիրն էլ, ինչպես տեսանք, հայկական ցեղերի և ուրարտական ռազմական մեքենայի հակամարտության ամենահոուն կետն էր, հայկական էթնալեզվական զանգվածի բաստիոնը, որը ոչ մի կերպ չէին կարողանում ընկճել ուրարտական երեք հզորագույն թագավորներ, հակառակ իրենց կատարած բազմաթիվ արշավանքներին:

Մյուս կողմից, հենց այդ շրջանն է, ավելի ճշգրիտ՝ Հարքը (կամ Արխին, եթե հետևենք մեր առաջարկած նույնացմանը), որ ներկայացված է Մովսես Խորենացու մոտ որպես Հայկի տեղաշարժերի և նրա սերունդների՝ Հայկական լեռնաշխարհում տարածման ելակետ:

Այս համընկնումները ուղեկցվում են ևս մի հանգամանքով: Ըստ Մովսես Խորենացու հաղորդումների, Հայկի տեղաշարժերը և նրա որդիների տարածումը ուղղված են վերոհիշյալ ելակետից միայն դեպի արևելք, ավելի ճիշտ, երեք ճյուղավորմամբ, դեպի հարավ-արևելք, արևելք և Հյուսիս-արևելք⁹¹, բայց ոչ դեպի արևմուտք, այսինքն՝ այնպիսի տպավորություն է ստացվում, որ կարծես դրանք այն շարժման անմիջական շարունակություններն են, որ ժամանակին սկսվել էր Եփրատի հովտից և ապա պատվարվել վերոհիշյալ Արմե—Կուլմերի (Շուրբիա)—Ուրմե(ու)—Տուրաթինիեի խորհի—Ալուշի[...] ամրացման վրա մ. թ. ա. VIII դ. առաջին կեսում՝ ուրարտական երեք հզոր թագավորների օրոք⁹²:

86 Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 182:

87 Փավստոս Բուզանդ, II, 10:

88 Աբեղյան, նշվ. աշխ., էջ 568 և հաջ.:

89 Այդ նշել է դեռևս Մ. Աբեղյանը. տե՛ս նույն տեղում, էջ 185:

90 Կաղմյանների նախարարական տոհմը կապված էր Կորդուքի հետ: Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 418.

91 Ն. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, 1944, էջ 28:

92 Այստեղից ոմանք կարող են այն տպավորությունը ստանալ, թե մենք թվագրում ենք Հայկի անձնավորությանը մ. թ. ա. VIII—VII դդ.: Իհարկե,

Հետևենք Հայկի և նրա ղավակների տեղաշարժերին Հարթից՝ ըստ Մովսես Խորենացու (I, 11—12): Լուր առնելով Բելի բանակի՝ «յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ», այսինքն՝ Կորդուք, ուր գտնվում էր Արարադ լիճը, ներխուժելու մասին, Հայկը շարժվում է Հարթից դեպի Վանա լիճը, շրջանցում այն և կանգ առնում լճից արևելք ընկած մի տեղանքում, որը Բելի հետ տեղի ունեցած ճակատամարտից հետո անվանվում է «Հայոց ձոր»: Այս տեղանքը քաջ հայտնի է միջնադարյան հայ հեղինակներին: Հայկն այստեղ դաստակերտ է շինում ու անվանում այն «Հայք» (այժմ՝ «Խեք»): Այսպիսով, ճակատամարտը տեղի է ունեցել ուրարտական ցեղերի օրրանի հենց կենտրոնում⁹³: Սա Հայկի տեղաշարժման առաջին՝ արևելյան ուղղությունն է: Հայկի թոռը՝ Կադմոսը վերադառնում է իր

դա շի համապատասխանի իրականությունը: Հայկը առասպելական հերոս է, սկզբնապես՝ աստված և ոչ՝ կոնկրետ պատմական գործիչ: Առասպելները հնագույն պատմական իրադարձությունների և երևույթների մասին կարող են սոսկ հեռավոր հուշեր պարունակել և ոչ թե տալ դրանց նկարագրություններ: Ահա, մեր կարծիքով, Հայկի և նրա որդիների տեղաշարժերը մոտավորապես արտացոլում են մ. թ. ա. VIII—VII դարերում կայացած՝ հայ էթնակազմական զանգվածի տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհում: Սակայն ինքը Հայկը կարող էր պաշտամունքի առարկա լինել դրանից դարեր առաջ, դժոռն հայ ժողովրդի կազմավորմանը նախորդած ժամանակներում: հայաթաղու ցեղերի միջավայրում: Հայկին որպես կոնկրետ-պատմական գործիչ օգրոտորեն թվագրել ցանկացողը անխուսափելիորեն ընկնում է անհարմար վիճակի մեջ, ինչպես որ այդ տեղի է ունեցել վերջերս, օրինակ, Լ. Միրիջանյանի հետ (տե՛ս նրա «Պատմության և առասպելի սահմանները», Կրեան, «Լույս», 1986 բրոշյուրը): Այստեղ հեղինակը, մի կողմից, Հայկին բնակեցնում է մ. թ. ա. 2500 թ. (էջ 105), մյուս կողմից հայտնում, թե ինքը՝ «միամբուտաբար» կարծել է, թե «Արամազդը, Անահիտը, Աստղիկը, Վահագնը, Միհրը և մյուսները» Հայկի պաշտած աստվածներն են եղել (էջ 98): Հանրահայտ է, սակայն, որ այս դիցաբանները (բացառությամբ Աստղիկի) հայոց մեջ են մտել միայն իրանական աշխարհի հետ սերտ շփումներ սկսվելուց հետո, ամենավաղը՝ մ. թ. ա. VI—V դդ.: Ուրեմն, ըստ նույն Լ. Միրիջանյանի, Հայկը ապրած պիտի լինի նաև դրանից հետո, այսինքն կամ ինքն իրենից 2000 տարի ոչ կամ 2000 տարի շարունակ... Իսկապես որ «միամիտ» կարծիք է, ինչպես որակում է ինքը Լ. Միրիջանյանը, շոթվելով իր բրոշյուրի էջերում բազմաթիվ նմանօրինակ կարծիքներ:

⁹³ Տե՛ս ստորև, էջ 120 և ծան. 103:

տիրույթները (Կորդուք): Այս «վերադառնալու» հանգամանքը պետք է վերագրել, ըստ երևույթին, վերը հիշատակված աստվածաշնչական մոտիվների ազդեցությունը, որոնք, ինչպես ասվեց, թելադրել են Հայկի՝ հարավից (Բաբելոնից) հյուսիս շարժվելու գաղափարը: Պետք է ընդունել, որ այդ մոտիվներից զերծ տարբերակում Կադմոսը, մյուսների նման, շարժվելիս է եղել հակառակ ուղղությամբ՝ Հարթից դեպի Կորդուք⁹⁴: Սա էլ տեղաշարժի երկրորդ՝ հարավարևելյան ուղղությունն է:

Հայկի անդրանիկ որդի Արամանյակի որդիներից Մանավազը մնում է Հարթում, իսկ Բազը տեղափոխվում է Վանա լճի հյուսիսարևմտյան ափը և իր անունով անվանում ազգավառը Բզնունիք, լիճն էլ՝ Բզնունյաց ծով: Նրան կից բնակվում է նրա եղբայր Խոռը (Խորխոռունիք գավառ): Ինքն Արամանյակը անցնում է հյուսիս-արևելք և բնակվում մի լեռան ստորոտում, որն անվանում է իր անունով Արագած (Արագածոտն գավառ): Նրա որդի Արամայիսը գետափին կառուցում է Արամվիր քաղաքը, տալով նրան իր անունը, իսկ գետն անվանում Երասխ՝ իր որդի Երաստի անունով: Նրա որդիներից մեկ ուրիշը, Շարան, նստում է Շիրակ գավառում, որն այդպես է կոչվում ըստ նրա անվան: Արամայիսի Ամասիա որդին իր անունն է տալիս Մասիս լեռանը: Արա որդիների՝ Փա-

⁹⁴ Ավանդության այդպիսի տարբերակի հետքերը կարծես թե պահպանվել են թե՛ Խորենացու, և թե՛ Անանուն պատմիչի (Սերևոսի «Պատմությանը» կից մեզ հասած, այսպես կոչված «Նախնական պատմության» հեղինակի) մոտ: Հայկը, փաստորեն, երկու անգամ է տրամադրում իր թե՛ Կադմոսին նրա տիրույթները, առաջին անգամ՝ Բաբելոնից գալիս, այնուհետ հանգրվանելու ժամանակ («Տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդոյ Արամանեկայ», I, 10), երկրորդ անգամ՝ Բելի հետ ունեցած ճակատամարտից հետո («Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն», I, 12): Նույնը, ավելի շեշտված, տեսնում ենք Անանունի մոտ. Բաբելոնից գալիս՝ «նո զնա(զերկիրն Արարադայ—Գ. Ս.) Հայկն կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում որդոյն Արամեանկայ» («Պատմութիւն Սերևոսի», Երևան, 1979, էջ 48) և ճակատամարտից հետո՝ «նո ի ժամանակ մահուան իւրոյ ետ զնա (նույն երկիրը—Գ. Ս.) կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում, որդոյ Արամեանկայ» (էջ 50): Անանունի մոտ

ռոխի ու Յուլակի անուններով այդ լեռան լանջին հիմնադրվում են Փառախոտ և Յուլակերտ շեները: Երրորդ ուղին՝ Գեղամը շարժվում է դեպի մոտակա լիճը և անվանում այն իր անունով Գեղամա լիճ, որ այժմյան Սևանն է, Գեղ լեռը և Գեղա(ր)քու- նիք գավառը: Սրա որդի Միսակի անունից իր անվանումն է ստանում Միսական (Սյունիք) նահանգը, իր թոռան Գառ- նիկի անունից՝ Գառնի ամրոցը: Նույն Միսակի զավակները ժառանգում են և «զղաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին գաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ կոչի Հնարա- կերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա (Մի- սակի—Գ. Ս.) անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա» (II, 8): Այս էլ Հայկի և նրա զավակների տեղաշարժի երրորդ՝ հյուսիսարևելյան ուղղութիւնն է:

Տեսնում ենք, որ այստեղ Մովսեսը խորենացին, իր սովո- թության համաձայն, լայնորեն օգտագործում է անձնանուննե- ռը, տեղանունները, գետանունները, լճանունները, լեռնանուն- ները և այլն իր ստուգաբանական որոնումների համար, տրվ- լալ դեպքում նպատակ ունենալով կապել Հայկի ու նրա զա- վակների տարաբնակեցման պատմությունը Հայկական լեռ- նաշխարհի որոշակի շրջանների հետ: Ընդամին, թեև բացառ- ված չէ, որ թվարկված ստուգաբանությունների որոշ մասը նա ստացել է արդեն պատրաստի վիճակում, այսուհանդերձ, նրանց բնույթը և կատարման մեթոդիկան շատ են մերվում պատմահոր ձեռագրին: Սրանից կարելի է եզրակացնել, որ նրա կոնցեպցիայի թելադրող և առաջատար տարրը ոչ թե վերո- հիշյալ անուններն էին ու նրանց ժողովրդական ստուգաբա- նությունը, որ պայմանավորեին շարժման ուղղությունները, այլ հենց իրենք պատմական ավանդության մեջ տրված այդ ուղղություններն էին, որոնց համար էլ Մովսեսը խորենացին

մենք հանդիպում ենք նույնիսկ ձևակերպման բառացի կրկնության: Բնա- կան է ենթադրել, որ մեկը մյուսի հետագա կրկնությունն է և նախնական ավանդության մեջ այս երկուսից մեկը չի եղել: Այդ մեկը, մեր կարծիքով, առաջին հիշատակումն է, քանի որ նա է կապվում աստվածաշնչային մո- տիվների հետ:

ստուգաբանական օրինակներ ու ապացույցներ էր որոնում և գտնում: Կարելի է չկասկածել, որ նրա համար դժվար չէր լինի նման օրինակներ գտնել նաև Հայկական լեռնաշխարհի ուրիշ շրջաններում, եթե Հայկյանների շարժման մասին ավանդու- թյան մեջ նրան հաղորդված ուղղութիւնները տանեին դեպի այդ շրջանները:

Ուստի մենք կարող ենք, առ ի չգոյն ժամանակով իրա- դարձություններին ավելի մոտիկ սկզբնաղբյուրի, հենվել հնա- գույն շրջանից մինչև V դարը հարատևած այդ ավանդության՝ որպես Հայկական լեռնաշխարհով մեկ հայկական էթնալեզ- վական տարրի տարածման պրոցեսը կամ նրա մի մասն աբ- տացյուղ մոդելի վրա: Այդպես վարվելու դեպքում մենք հաշ- վի պիտի առնենք նրա մեջ արտացոլված՝ և՛ շարժման բնդ- հանուր արևելյան ուղղությունը, և՛ սրա երեք ճյուղավորում- ները՝ հարավ-արևելք, այսինքն՝ Կորդուք, արևելք, այսինքն՝ Ուրարտուի բնօրրան Բիայնիլիի կենտրոն, ու հյուսիս-արևելք՝ ժամանակակից Հայկական ՍՍՀ տարածք:

Սակայն արդյո՞ք չկան ուրիշ աղբյուրներ, որոնք սատա- րեին մեզ Մովսեսը խորենացու այս տեղեկությունները ըստ: արժանիւնն գնահատելու գործում: Վերցնենք, նախ, նրա նշած հարավարևելյան ուղղությունը: Վաղուց ի վեր Կաղմոս անձնանունը զուգադրվում է ասորեստանյան Կաղմուխի նա- հանգի հետ: Հիրավի, Կաղմուխին Կաղմոսին հատկացված Կորդուքի անմիջական հարևանն է, նրանց բաժանում է միայն Տիգրիս գետը⁹⁵: Այնուհետև, հանրահայտ է Ստրաբոնի հետև- յալ հաղորդումը. «Ահա մի հին ավանդություն այս ազգի մա- սին: Արմենոս, Թեսալիայի Արմենիոն քաղաքից, որ գտնվում է Ֆերեսի և Լարիսայի միջև, Բոյբեյի վրա, ինչպես ասացինք, Յասոնի հետ արշավեց Հայաստան: Սրա անունով է կոչվում Արմենիա, ինչպես ասում են Փարսալացին Կյուրսիլոս և Լա- րիսացին Մեդիոս, երկուսն էլ զինակից Ալեքսանդրի: Նաև թե Արմենոսի հետ եկողները, բնակեցան Եկեղիք (Աշուշդուր)»:

⁹⁵ Арутюнян, ТУ, S. V.

որ նախապես Սոփաց տակ էր, մյուսները՝ Սյուսպիրիտիսում (Σουσιπίριτις) մինչև Կալաքեն և Ադիաբեն, Հայաստանի սահմաններից դուրս» (Strab., XI, 14, 12)⁹⁶:

Մի կողմ թողնենք Յասոնի և Արմենոսի անձնավորությունները և անդրադառնանք նշված շարժումների երթուղիներին, որոնք վաղուց ի վեր ուշադրության առարկա են⁹⁷: Այստեղ նշված Ակիլիսենեն (Եկեղիքը) Եփրատի փոքրասիական հատվածի հենց այն հովտի կարևոր մասն է կազմում, որի մասին որպես հայկական էթնալեզվական տարրի օրրանի, վերը մանրամասն խոսվեց: Սյուսպիրիտիս տեղանվան մեջ, ճշգրտելով այն Սյու(ս)պիրիտիսի, տեսնում են ասուրական աղբյուրների Շուբրիան, այսինքն՝ Սասունը, որը, ևս, էնչպես տեսանք, գտնվել է հայկական էթնալեզվական տարրի սկզբնական տարածման ոլորտում: Այնուհետև, խոսվում է քաջ հայտնի Կալաքենում (Ասորեստանի երբեմնի մայրաքաղաք Կալխուի շրջակայքը) և Ադիաբենում հայերի տարածման մասին, նշելով հանդերձ, որ դրանք Հայաստանի սահմաններից դուրս են: Սակայն Շուբրիա-Սասունից դեպի այդ երկրները այլ ճանապարհ չկա, քան Կորդուքի վրայով⁹⁷, որի մասին առանց անտնը տալու, խոսում է Մովսես Խորենացին, որպես Կադմոսին հատկացված երկրամասի:

Պատմահոր նշած մյուս ուղղությունների գնահատման խնդրում որոշակիորեն օժանդակում են հենց ուրարտական աղբյուրների մի քանի տվյալներ: Գիտական գրականության մեջ նշված է այն դերը, որ կատարել է հայկական տարրի տարածման խնդրում ուրարտական թագավորների՝ էթնիկա-

⁹⁶ Քարգմ. Հր. Աճառյանի, տե՛ս «Ստար աղբյուրները հայերի մասին», № 1, Ստրաբոն, Երևան, 1940, էջ 60 և հաջ.:

⁹⁷ J. Marquart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919, S. 15.

⁹⁸ Այստեղից, էնչպես և Մովսես Խորենացու հաղորդածից, երևում է, որ Կորդուքը հնագույն ժամանակներից պետք է գեթ մասամբ բնակեցված լիներ հայերով: Քսենոփոնը չի նշում այդ հանգամանքը, անվանելով Կորդուքը «Կարգուսների երկիր»: Քաղաքականորեն Կորդուքը միացվել է Հայաստանին բավական ուշ՝ միայն Տիգրան II-ի օրոք:

կան դանգվածների վերաբնակեցման քաղաքականությունը, որը հար և նման էր հարևան Ասորեստանյան տերության որդեգրած համապատասխան քաղաքականությանը⁹⁸:

Ուրարտական արքաների արշավանքների ժամանակ կատարված բնակչության խոշոր զանգվածների տեղահանումների օրինակները բազմաթիվ են⁹⁹, և նրանց մի խոշոր մասը անմիջականորեն վերաբերում է մեզ այստեղ հետաքրքրող տերության արևմտյան շրջաններին: Դիտարկենք դրանցից Արգիշթի I-ի՝ հաթե և Մուփա երկրներից բերած և նորակառույց էրեբունի բերդաքաղաքում տեղավորած 6.600 ռազմիկների հայտնի դեպքը (ՄՀՈ, 128 A 215-22): Սույն հաղորդումը մի շարք եզրակացությունների և ենթադրությունների տեղիք է տվել: Նախ և առաջ համարում են, որ այս ռազմիկները կարող էին հայալեզու լինել¹⁰⁰, քանի որ ծագում էին հայալեզու ցեղերի տարածման շրջանից՝ Եփրատի վերին հոսանքի հովտից, որտեղ գտնվում էին հաթե և Մուփա երկրները: Այնուհետև, ըստ երևույթին էրեբունիում այս ռազմիկների բնակեցման հետ է կապվում նաև «Մհերի դուռը» արձանագրության մեջ բացակայող Իուարշա աստծու այստեղ հայտնիվելու հանգամանքը: Այս աստվածությունը էրեբունիում հանդես է գալիս երկու նույնական արձանագրություններում, որոնք տեղավորված են նրա սրբավայր «սուսիի» մուտքի աջ և ձախ կողմերում¹⁰¹: Քանի որ էրեբունի քաղաքի անունը

⁹⁸ Дьяконов, ПАН, с. 233.

⁹⁹ Տե՛ս И. М. Дьяконов, К вопросу о судьбе пленных в Ассирии и Урарту, ВДИ, 1952, № 1, с. 90 и сл. Տեղահանված բնակչության մի մասը, ըստ հեղինակի կարծիքի, օգտագործվում էր թագավորական և տաճարալիք տնտեսություններում որպես ստրկական աշխատանքային ուժ, մյուս մեծ մասը ընկնում էր մասնավոր սեփականատերերի ձեռքը կամ քնակեցվում հողաբաժինների վրա որպես պետական ստրկական ուժ: Մի նշանակալի մասն էլ ներմուծվում էր զորքի մեջ որպես սահմանամերձ ամրոցների կայազոր (էջ 99 և հաջ.): Հենց այդպիսին էր Արգիշթի I-ի էրեբունիում բնակեցրած ռազմիկների ճակատագիրը (էջ 90):

¹⁰⁰ Дьяконов, ПАН, с. 233.

¹⁰¹ ՄՀՈ, Новые урартские надписи, № 8—9, Дьяконов, ПАН, с. 233. Г. А. Меликишвили, К вопросу о хетто-цупанийских переселенцах в Урарту, ВДИ, 1948, № 2, с. 40 сл.

դեռևս համոզիչ կերպով չի ստուգաբանվում, կարելի է ենթադրել նաև, որ այն նույնպես աղերսվում է հաթե և Սուփա երկրներից տեղափոխված ուղղակիների լեզվի հետ և որ գուցե նրա ստուգաբանությունը պետք է որոնել հայոց լեզվում:

Ի՞նչ բախտ է վիճակվել այդ բնակչությանը Արարատյան դաշտում: Այդ մասին դատողություններ անելու համար մենք այսօր, թերևս, միայն մեկ փաստ ունենք, որը, սակայն, կարող է շատ ինֆորմատիվ լինել: Էրեբունիի հիմնադրումից շուրջ հարյուր տարի անց, էրեբունի-Արինբերդից մոտավորապես տասը կմ դեպի արևմուտք գտնվող Թեյշեբախի—Կարմիր բլրի՝ Ռուսա II-ին պատկանող արձանագրության մեջ կրկին անգամ հիշատակվում է նույն Իուարշա աստվածությունը՝ Իարշա ձևով: Այն հանդիպում է ուրարտական դասական աստվածների թվարկման մեջ¹⁰², իրեն հասանելիք զոհի՝ մեկ ոչխարի հիշատակման հետ միասին: Եթե վերջնականորեն հաստատվի այն կարծիքը, որ Ի(ու)արշա աստվածությունը հիբրավի էրեբունի տեղափոխված 6.600 խաթեական ու ծուփայական ուղղակիների հետ է կապված, ապա կարելի կլինի էզրակացնել, որ սրանց սերունդները հետագա հարյուրամյակի ընթացքում տարածվել են այստեղ գտնվող Ազա երկրով մեկ, համենայն դեպս, թափանցել են Թեյշեբախի: Բացի այդ, կարելի կլինի խոսել այդ էթնիկական շերտի սույն շրջանում ունեցած էական նշանակության մասին, եթե նրա աստվածությունը ներմուծվել էր ուրարտական պաշտոնական դիցաշարի մեջ:

Եթե ընդունելու լինենք, այսպիսով, որ Արարատյան դաշտում արդեն մ. թ. ա. VIII դ. սկզբներին հայալեզու բնակչության մի կղզյակ էր առաջացել, որը գնալով մեծանում էր, ապա հնարավորություն է ստեղծվում այսօրինակ էրեբունի-

¹⁰² УКН, 4487-8. Աստվածներն այստեղ դասավորված են այսպիսի հերթականությամբ. Խալդի, Թեյշեբա, Շիվինի (կոտրվածք), Ուարթաանի, Խալդիի զենքը, Խալդիի դարպասը, Իարշա: Տե՛ս Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, с. 16 сл., 38, 94. Հեղինակի կարծիքով Ի(ու)արշա աստվածությունը, հավանաբար, կապված է եղել Արարատյան դաշտի Ազա երկրի տեղական բնակչության հետ:

ները համարել Մովսես Խորենացու «Պատմության» այն տվյալների հաստատումներից մեկը, որոնցում մատնանըված է հայ էթնալեզվական տարրի տարածումը դեպի Արարատյան դաշտը ու այնուհետև դեպի Սյունիք ու «դաշտն Աղուանից և լեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ» և մինչև «Ուտէացւոց և Գարդամանացւոց և Սաղեացւոց և Գարգարացւոց» հողերը (II, 8): Նման կղզյակները նաև պիտի որոշակի շափով ուղղություն տային դեպի արևելք տեղաշարժվող հայալեզու էթնիկական հիմնական զանգվածին:

Ուրարտական թագավորների ձեռնարկած վերաբնակեցումների հսկայական մասշտաբների (մեզ հասած տվյալների հանրագումարային թվերը վկայում են մի քանի հարյուր հազար մարդու տեղաշարժի մասին) և տարբեր էթնիկական միավորների առկայության պայմաններում, տերություն տարբեր մասերում պիտի գոյանային էրեբունու նման բազմաթիվ կղզյակներ՝ օժտված էթնիկական ամենատարբեր նկարագրերով: Առանձնապես մեծ պիտի լիներ նման կղզյակների կուտակումը տերության կորիզ հանդիսացող՝ նեղ իմաստով Ուրարտու-Բիաջնիլիի տարածքում, ուր, ինչպես հայտնի է, փոխադրվում էր տեղահանված զանգվածների զգալի, եթե ոչ հիմնական, մասը: Դրանց մի խոշոր բաժինը աղբյուրների տվյալների համաձայն դուրս էր բերված հատկապես արևմտյան՝ մերձեփրատյան, անդրեփրատյան շրջաններից, Ուրմե երկրից:

Մեզ հայտնի է մի փաստ (գուցե մեզ չհասած շատերից մեկը) Ուրմե երկրից հազարավոր մարդկանց տեղահանման և Բիաջնիլիում բնակեցնելու մասին (УКН, 127 VI₅₋₇) նույն Արգիշթի I թագավորի օրոք, որ իրականացրել էր էրեբունիի բնակեցումը: Այդ զանգվածին կարելի է վերագրել նույն դերը, որը խաղացած պիտի լինեին Խաթե և Սուփա երկրներից Արարատյան դաշտ տարվածները, այսինքն՝ համալեզու զանգվածների համար ձգողական ուժի դերը: Այս ևս կհամընկներ Մովսես Խորենացու տվյալների հետ, այս անգամ՝ Հայկի շարժ-

ման մասին դեպի Վանա լճից արևելք ընկած Հայոց ձոր¹⁰³ գավառը:

Այս բոլորը պետք է նպաստեր Ուրարտական տերության ողջ տարածքի հայացման արագացմանը:

Այն, ինչ այստեղ ասվում է հայալեզու տարրի մասին, կարելի է վերագրել նաև ուրիշ ոչ ուրարտալեզու տարրերին, որոնց նույնպես Վանի թագավորները վերաբնակեցնում էին տերության մի ծայրից մյուսը: Սրանց հատվածների միջև ևս պիտի ծագեին ձգողական ուժեր: Այդ բոլորը, հակառակ ուրարտական արքաների նախնական դիտավորության, որն ի թիվս այլ նպատակների, նաև իրենց իշխանության համար վտանգավոր էթնիկական այդ զանգվածների մասնատումն ու տարանջատումն էր հետապնդում, ջուր էր լցնում լեռնաշխարհի բնակչության համախմբման, կոնսոլիդացման ընթացքի ջրաղացին:

Միաժամանակ, սակայն, նմանօրինակ վերաբնակեցումները և նրանց հետևանքները պետք է գնահատել որպես Ուրարտական տերության տարածքի հայացման ընթացքի վրա ազդող սոսկ օժանդակ գործոն, որպես մի դրսևորում զանգվածային էթնալեզվական առաջխաղացման այն հիմնական գործոնի, որը բազմալեզու տերության շրջանները մեկը մյուսի հետևից ներգրավում էր հայկական էթնոսի կամ հայոց լեզվի, կամ թե՛ մեկի, թե՛ մյուսի, գերակշռության ոլորտը: Մուսն դրույթը հիմնավորելիս դարձյալ հնարավորություն ունենք հենվելու Մովսես Խորենացու մատուցած տվյալների վրա: Պատմահայրը քանիցս շեշտում է, որ Հայկը և հայկյաններն իրենց տեղաշարժերի ժամանակ ոտք են կոխում այնպիսի հողեր, որտեղ արդեն տեղական բնակչություն կար, այսինքն, արտահայտվելով այսօրվա լեզվով, նստում էին որոշակի ենթաշերտի վրա: Ըստ երևույթին այդ ենթաշերտի խնդիրը ոչ

¹⁰³ Խիստ հատկանշական է այս իմաստով հենց «Հայոց ձոր» անվանումը: Նման անունները, ինչպես նշում է Ի. Մ. Դյակոնովը, կարող են հանդես գալ միայն էթնիկապես խորթ միջավայրում, որպես տարբերակիչ ցուցանիշներ:

պակաս չափով է հետաքրքրել պատմահորը, քան այն զբաղեցնում է այսօրվա հետազոտողներին:

Պատմահայրը շորս անգամ անդրադառնում է այդ խընդրին: Այդ դեպքերից երկուսը մենք արդեն ցուցադրել ենք վերը՝ ընդհանուր կոնտեքստում. այժմ բերենք դրանք առանձին: Գրանցից առաջինը վերաբերում է Հայկի նախնական հանգրվանին՝ «Արարադի երկրում», այսինքն՝ Կորդուքում (տե՛ս վերը, էջ 110, ծան. 90). «Երթեալ բնակ է ի լեռնոտին միում ի շաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. գորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» (I, 10):

Երկրորդ դեպքը, նույն գլխում, վերաբերում է Հայկի գալըստյանը Հարթ-Տարոն, որտեղից էլ սկսվում է նրա զավակների տարաբնակեցումը. «Յիշի և աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս»:

Նախքան երրորդ դեպքին անցնելը նշենք, որ, ինչպես արդեն ասված է գրականության մեջ¹⁰⁴, երկու հիշատակությունը այն մասին, թե այստեղ մեջբերված Մար Աբասը հաստատում է «նախապես հիշված (ասացեալ) անգիր զրույցները», վերջիններիս տակ նկատի ունեն պատմահոր նախորդ հաղորդումները Սեմի և Տարբանի մասին: Առաջին հիշատակությունը նկատի ունի Սեմի ելակետը Հայկական լեռնաշխարհի խորքը մտնելուց առաջ՝ Արարադ լեռան շրջակայքը, իսկ երկրորդը, Միմ լեռան շրջակայքը, այսինքն՝ Տարոնը, որտեղ Սեմը բնակվելու է թողնում իր որդի Տարբանին: Վերջին հանգամանքն արտահայտվում է նաև տեղանքի նկարագրության նույնությամբ մեջ. «և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ» (I, 6) և «ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսո-

¹⁰⁴ Աբեղյան, նշվ. աշխ., էջ 180:

րիկ, առ երկայնաճախի միով լեռամբ» (I, 10): Այս կերպ **Սեմ-Տարբանի** մասին հաղորդումը կապակցված է Հայկի մասին հաղորդման հետ:

Ընդգծենք, որ երկու դեպքում էլ պատմահայրը շեշտում է այս վայրերի տեղական բնակչության սակավությունը:

Ահա և երրորդ դեպքը, որն ավելի հանրագումարային բնույթ ունի. «Բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն (Մար Աբասը—Գ. Ս.), թէ ի յոլով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկրիս մերում ցան ու ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ» (I, 12): Այստեղ նույնպես ընդգծված է տեղաբնիկների սակավությունը. սակայն դրա կողքին մեր ուշադրությունն են գրավում երկու արտահայտություն: Առաջինն այն ցուցումն է, որ տեղաբնիկները ապրում էին «ի յոլով տեղիս... յերկրիս մերում» («Մեր երկրում... բազմաթիվ տեղերում»): Սրանով նրանց սակավությունը թեև չի բացասվում, բայց ընդունվում է, որ նրանք տարածված էին ոչ միայն Կորդուքում ու Տարոնում, այլ ամբողջ երկրով մեկ: Երկրորդը պատմահոր շեշտված այն պնդումն է, որ, չնայած այս հանգամանքին, Հայկը մնում է «բնիկ մեր նախնի»: Տպավորությունն այն է, որ Մովսեսն հորենացին կարծես ստիպված է հաղորդում տեղաբնիկների մասին և երկչուցում է, չլինի թե այդ հաղորդումը վնասի Հայկի առաջնությունը: Այդ տպավորությունն ուժեղանում է, նախ. Մար Աբասի սույն հաղորդմանը տված՝ Մովսեսն հորենացու «սքանչելի» (այսինքն՝ զարմանալի, որոշ իմաստով՝ տարօրինակ) որակումից և, երկրորդ, այն թերահավատ վերաբերմունքից Սեմի և Տարբանի մասին (այսինքն՝ Հայաստանի առաջին բնակեցման մասին) ավանդությանը, որի մասին նա գրում է. «Եվ այսոքիկ զրոյցք սուտ և կամ արդարև լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ» («սուտ են թե ճշմարիտ այս զրույցները՝ մեր գործը չէ») (I, 6): Ինչպես էլ գնահատելու լինենք այս վերաբերմունքը, այն, համենայն դեպս, վկայում է, ինչպես վերը մեկ անգամ արդեն նշել ենք, որ պատմահայրը ինքը չի հորինել այս պատմությունը, այլ ստացել է ինչ-որ աղբյուրից: Հորի-

նել այն. և դրանով կասկածի տակ դնել Հայկի առաջնությունը, նա բնավ շահագրգռված չէր:

Չորրորդ հիշատակումը հետևյալն է. «Այլ մոռացաք և զդոնեայ Սլաքն անուանեալ այր, զոր ոչ կարեմ հաւաստեալ ասել, ի Հայկա՞յն եթէ յառաջագունից քան զնա եղիլոց յաշխարհիս, զոր հին զրոյցքն պատմեն լինել» (II, 8):

Ուշ շրջանի (այսինքն՝ վաղ միջնադարի) հեղինակ Մովսեսն հորենացու հաղորդումները, որոնցում պահպանվել է հայ ազգային պատմական ավանդությունը, ինչպես տեսանք, ոչ միայն օրգանապես միահյուսվում են խեթական, ասուրական, ուրարտական, հին պարսկական, արամեական և հին հունական աղբյուրների հաղորդումների համակարգին, այլև ունակություն են ցուցաբերում լրացնելու դրանք իրենց համահնչուն, ուստի և վստահությունն արժանի, ընդ որում նաև շատ կարևոր, տվյալներով:

Որքա՞ն է տեղի Հայկական լեոնաշխարհի ցեղերի, հատկապես ուրարտացիների ձուլման ընթացքը, դժվար է ասել ստուգապես: Բայց մեզ համար կարևոր է պարզել ոչ թե այն ժամանակը, երբ անհետացել են, այսինքն՝ դադարել են իրենց լեզվով խոսելուց, վերջին ուրարտացիները, այլ այն, թե երբ են նրանք դադարել պատմական դեր խաղալուց, երբ են թողել պատմաբանը¹⁰⁵: Այդ ժամանակը համընկնում է Ուրար-

¹⁰⁵ Եթե մեկը ցանկանա պնդել, թե մ. թ. ա. II—I հազ. վերաբերող այս պատմական պրոցեսները համեմատելի են միջնադարում, մ. թ. II հազ. սկզբներին, այսինքն շուրջ 2000 տարի անց տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերին, ասենք, թյուրքական ցեղերի՝ Միջին Ասիայից Մերձավոր արևելք ներխուժելու և այստեղ հաստատվելու հետ, ապա նա սոսկ կամ պատմականության սկզբունքին անտեղյակ է կամ էլ հեծնում է հնացած պատկերացումների: Ինդիրն այն է, որ մ. թ. ա. II—I հազ. եզրին Մերձավոր և Միջին արևելքում դեռևս չկար ոչ մի կազմավորված ժողովուրդկային սոսկ ցեղեր, ցեղային միություններ, ժողովուրդին նախորդող որոշ հեղհեղով էթնիկական ընդհանրություններ, որոնց մի մասը նույնիսկ պետություններ էին ստեղծել և ստեղծում, սակայն դրանցից ոչ մեկը դեռևս ժողովուրդ չէր, որի կարևորագույն հատկանիշներից է արտակարգ դիմադրողականությունը և հազարամյակների զոյատևման հանգեցնող կայունությունը:

տական պետության անկման ժամանակին, այսինքն ընկնում է մ. թ. ա. VI դ. առաջին տասնամյակներին: Սակայն դրան նախորդել են, ինչպես երևում է թագավորական արձանագրությունների քանակության և կազմի կրած փոփոխություններից, նվազման տասնամյակներ, VII դարի վերջին տասնամյակները: Այդ ժամանակաշրջանի ուրարտական արձանագրությունների՝ երկու կետերում կուտակվածության փաստը, այն է՝ պետության կենտրոնում (Թոփրախ կալե) և Արարատյան դաշտում (Կարմիր բլուր), այսինքն՝ տերության սոսկ արևելյան մասում, հիմք է տալիս եզրակացնելու, որ այս տերությունը որոշակի փուլում երկփեղկվել էր արևելյան ու արևմտյան մասերի հենց վերջ քանիցս հիշատակված սահմանադատ գծով, որով և արևմտյան մասում գոյություն ունեցած «նախնական» Հայաստանը վերածվել էր առանձին թագավորության¹⁰⁶: Այդ դեպքում ավելի ուժեղ պատմական հիմքեր է ստանում Մովսես Խորենացու հաղորդումը Պարույրի, որպես հայկական առաջին թագավորի մասին, որը ստացել էր իր

նր: Դրանք այն աղյուսներն էին, որոնցից պետք է կազմավորվեին ռեզիդենցիաները՝ Կարսի կենտրոնը, հայերը, վրացիները: Միջնագրում, ի տարբերություն դրանից, ժողովուրդներն այստեղ վաղուց ի վեր գոյացած էին և գրաված իրենց կայուն տարածքները: Դրանք նույն պարսիկները, հայերը, վրացիներն էին և ավելի ուշ գոյացած ժողովուրդներ՝ ասորիները, արաբները և այլն: Այս պարագաներում ներխուժած թյուրքական ցեղերը, հիրավի, դուրս էին մղում, բնաջնջում կամ տիրապետության տակ առնում առկա ժողովուրդներին, մինչդեռ հնում, առկա դաժան ու արյունալի ռազմական արշավանքների, պատերազմների ու այլևայլ բախումների կողմից, ժողովրդակազմավորման պրոցեսները և նրանց հետ կապված էթնակական տեղաշարժերը համեմատաբար խաղաղ բնույթ էին կրում: Ինչպես հայերի կապակցությամբ նշել է Գր. Ղափանցյանը (տե՛ս վերը, էջ 80): Թագավորական բախումները, ինչպես այդ կարևոր է հետևեցնել վերը հիշատակված արամեական (էջ 82) և հայկական էթնակազմական տեղաշարժերի օրինակից, ավելի մեծ շահով ծագում էին առկա տերությունների՝ նման տեղաշարժերին դիմագրավելու պատճառով, քան դրանց բուն էության հետևանքն էին:

¹⁰⁶ Սա իր տարածքով ըստ էության պետք է համընկներ Հերոդոտոսի իմացած Հայաստանի և Քսենոփոնի «Արևմտյան» Հայաստանի հետ: Տե՛ս վերը: 124

թագը Մարաստանի (Մեդիայի) թագավորից ի հատուցումն Ասորեստանի կործանման և նրա մայրաքաղաք Նիվեի գրավման (մ. թ. ա. 612 թ.) գործում նրան ցուցաբերած օգնության¹⁰⁷:

Ինչպես հետևում է ուրարտերենի և հայերենի մեջ ընդհանուր բառերի առկայությունից, ենթադրյալ հայկական Ի(ու)արշա աստվածության ընդգրկումից ուրարտական պաշտոնական դիցաշարի մեջ ու այլ նմանօրինակ փաստերից, ուրարտական և հայկական էթնոսների շփումները ուրարտական պետության շրջանակներում բավական աշխույժ ու բազմակողմանի են եղել և հավանաբար արտահայտվել են նաև հայերի մասնակցությամբ՝ ուրարտական ռազմավարական ապարատին, մի բան, որ շատ հատկանշական է նման անցողական իրավիճակների համար: Սակայն այդ հինարևելյան տիպի ծանրաշարժ ապարատը, որի գոյության հիմքը պետության էթնիկական խայտաբղետությունն էր, արդեն ապրել էր իր դարը և փլվելու նախօրյակին էր գտնվում: Հայերը այն շեփականեցին, այլ մերժեցին, որպես իրենց համար օրգանապես օտար մի երևույթ, և այն կորսվեց ու թաղվեց իր բազմաթիվ ատրիբուտների, մասնավորապես և սեպագիր դպրության հետ միասին: Ուրարտական մշակույթից պահպանվեց և հայերին անցավ միայն այն, ինչ գոյություն ուներ ժողովրդի ոլորտում՝ նյութական ու հոգևոր մշակույթը, շինարարական և արհեստագործական հմտությունները և այլն, ու բացի այդ՝ մարդաբանական նկարագիրը:

Հայերը ստեղծեցին իրենց առաջին համահայկական պետությունը անհամեմատ ավելի փոքր ռազմավարական ապարատով, որպիսի հնարավորությունն ընձեռվում էր նրա հպատակների էթնիկական միատարրությամբ: Այն կուտակել էր իր մեջ հայկական էթնոսի՝ նախորդած պատմության ողջ պետական փորձը և իր հերթին հիմք դարձավ հին հայ-

¹⁰⁷ Մ. Խոհ., I, 21: Տե՛ս Բ. Բ. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946.

կական պետականության, որը գոյատևեց մեկ ամբողջ հազարամյակ, մինչև մ. թ. V դարը:

* * *

Ներկա մեր աշխատությունը հավակնություն չունի ոչ վերջնականապես լուծելու քննության առարկա խնդիրը, ոչ էլ նույնիսկ մատնանշելու այդ խնդրի լուծման միակ ճանապարհը: Այստեղ առաջարկվում է նշված պրոցեսի կոնկրետ-պատմական դրսևորման հնարավոր ուղիներից մեկը, որը մեր կարծիքով համապատասխանում է առկա պատմական փաստերին: Սրանով ամենևին չի բացառվում այլ ուղիների որոնման անհրաժեշտությունը, միայն թե այդ որոնումը չընթանա փաստերի անտեսման ճանապարհով:

УРАРТСКАЯ ДЕРЖАВА И АРМЯНЕ

Раздельное изучение истории государства Урарту и протекавших на той же территории Армянского нагорья и в те же хронологические сроки процессов образования армянского народа едва ли имеет дальнейшие перспективы: необходимо их комплексное исследование.

Изучение данных ассирийских, урартских, древнегреческих, арамейских и раннесредневековых армянских (Мовсес Хоренаци) источников приводит автора к выводу, что этнические процессы образования армянского народа не только не замерли в период существования урартской державы (VIII—VII вв. до н. э.), но протекали все это время с еще большей интенсивностью. Вследствие этого, еще в бытность Урартской державы, ее территория, включая и колыбель урартских племен—бассейн оз. Ван, подверглась арменизации. Таким образом, под конец своего существования, Урартское государство лишилось всякой социально-этнической базы и рухнуло, открыв дорогу для политического оформления уже этнически господствовавшего на Армянском нагорье армянского народа в первое обшеармянское государство.

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԵՐԵՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

1. 1. 1. Հայաստանում տարածված սեպագիր արձանագրությունների մասին առաջին տեղեկությունը տվել է պատմահայր Մովսես Խորենացին: Խոսելով Վանա լճի արևելյան ափին Շամիրամի շինարարական գործերի մասին՝ նա գրում է. «Իսկ զընդգեմ արեգական կողմն անձալին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս զանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց, որոշ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»:

1. 1. 2. Սակայն Խորենացու հաղորդումը ուշագրություն է գրավում միայն XIX դարում: 1827 թ. Ֆրանսիայի ասիական ընկերությունը Վանի շրջանն է գործուղում Ֆ. Ե. Շուլցին, որը ընդօրինակում է 42 արձանագրություն: Սկիզբ է առնում վանյան տիպի սեպագիր արձանագրությունների հավաքման և ընդօրինակման գործը, որ շարունակվում է նաև մեր օրերում: Գիտությունը հայտնի այդ արձանագրությունների թիվը այժմ հինգ հարյուրի է հասնում:

1. 1. 3. Վանյան տիպի՝ հետագայում ուրարտերեն կոչված արձանագրությունների հայտնի դառնալուց հետո սկսվում է

1 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 54.

նրանց ուսումնասիրության և մեկնաբանության փորձերի շըրջանը: Քանի դեռ չէին գտնվել վերծանման լուրջ կովաններ չիտնականները հայտնում էին ամեն տիպի իրարամերժ կարծիքներ: Այսպես, Փ. Լենորմանը կապ էր տեսնում այդ արձանագրությունների լեզվի և վրացերենի միջև, Ա. Դ. Մորաջանը դրանց լեզուն համարում էր հայերենը, Լ. Գե Ռոբերը այն դիտում էր որպես ասուրերենին մոտ սեմական լեզու²:

1. 1. 4. Ուրարտական արձանագրությունների լեզվի գիտական վերծանման սկիզբը դրվում է XIX դարի 80-ական թվականներին՝ նշանավոր ասուրագետներ Ս. Գյուլյարի և Ա. Սեյսի կողմից: Սրանց կատարածի և ուրարտագիտության հետագա զարգացման էությունը հասկանալի դարձնելու համար մեզ հարկավոր է որոշ շեղում կատարել և ընդհանուր բնույթի մի քանի տեղեկություն տալ:

1. 2. 1. Վանյան տիպի կամ ուրարտական արձանագրությունները գրված են ասուրական (ասորեստանյան), այսպես կոչված, բևեռագիր կամ սեպագիր արձանագրությունների տարատեսակով: Քանի որ ասուրական գրության համակարգը XIX դարի առաջին կեսին բավարար չափով հայտնի էր, և արդեն ձևավորվել էր ասուրագիտությունը որպես հատուկ բնագավառ, ուրարտական արձանագրությունները հնարավոր էր կարդալ, բայց հասկանալու համար հարկավոր էր մեկնաբանել նրանց լեզուն:

1. 2. 2. Գոյություն ունի հին տեքստերի վերծանման և մեկնաբանության երեք հիմնական ուղի (մեթոդ)՝ համակցական (կոմբինատորային), զուգադրական և ստուգաբանական, որոնցից առաջին երկուսը սերտորեն կապված են և հաճախ բերվում են միևնույն անվան տակ: Համակցական մեթոդը ելնում է իր իսկ տեքստի ներքին և արտաքին առանձնահատկություններից, այն կազմող միավորների կրկնություններից և քանակական փոխհարաբերություններից, հաշվի է առնում տեքստի հնարավոր նպատակադրումը, ի՞նչ իրի վրա և որտե՞ղ գրված լինելը, գրելու հանգամանքների մասին հնարավոր տե-

ղեկությունները: Զուգադրական մեթոդը գործում է այն ժամանակ, երբ միևնույն տեքստը գրված է մեկից ավելի լեզուներով (կան երկլեզվյան և եռալեզվյան արձանագրություններ), և հնարավոր է դրանցից հայտնիի (հայտնիների) հիման վրա հասկանալ անհայտը, պարզել բառերի և բառակապակցությունների փոխհարաբերությունը: Եթե երկլեզվյան կամ եռալեզվյան արձանագրություններ չկան, հետազոտողը փաստորեն փորձում է համակցական մեթոդի միջոցով այդպիսի արհեստական զուգահեռ տեքստ ստեղծել իր սեփական լեզվով, վերջին հաշվով՝ տեքստը թարգմանել: Ստուգաբանական մեթոդը զուգադրականի նման հիմք ունի ծանոթ և անծանոթ լեզուների տվյալների համեմատությունը, սակայն եթե զուգադրականի դեպքում կատարվում է տեքստերի համեմատություն, և փորձ է արվում պարզել անծանոթ տեքստի միավորների իմաստը, ապա ստուգաբանականի դեպքում համեմատվում են ծանոթ լեզվի միավորները (բառերը և մասնիկները) անծանոթ լեզվի միավորների հետ ըստ համահնչության, և փորձ է արվում պարզել դրանց իմաստը, հասկանալ տեքստը կամ տեքստի անծանոթ հատվածները: Ստուգաբանական մեթոդը հաշտություն գործում է այն դեպքում, երբ մենք գործ ունենք շեղակից լեզուների կամ, հազվադեպ, միևնույն լեզվի զարգացման տարբեր փուլերի հետ. այլ դեպքերում այս մեթոդը կարող է տեղիք տալ թյուրիմացությունների, և նրանից պետք է օգտվել զգուշորեն: Ամենից ավելի հավաստի արդյունքներ են ստացվում, եթե ուսումնասիրությունը սկսվում է համակցականից և զուգադրականից, ապա, որոշ տեղեկություններ ձեռք բերելուց հետո, օգտագործվում է ստուգաբանական մեթոդը, եթե, իհարկե, սրա կիրառությունը ընդհանրապես հնարավոր է:

1. 2. 3. Ուրարտական տեքստերի մեկնաբանության՝ Ս. Գյուլյարի օգտագործած մեթոդը համակցական էր: Նա նկատում է³, որ ուրարտական արձանագրություններից շա-

³ S. Guyard, Les inscriptions de Van, „Journal asiatique“, 15 188, p. 540—543 (հետագա հրատարակությունների կատարվել են 1883—1884 թթ.):

² Հմտ. В. В. Пиотровский, Ванское царство, М., 1959, с. 11.

տերի վերջում կան կրկնվող նշանախմբեր և, հենվելով այսուր հայտնի դեպքերի վրա, անում է այն եզրակացությունը, որ դրանց տակ թաքնված է անեծքի կամ սպառնալիքի բանաձև. արձանագրության հեղինակը աստվածային պատիժ է սպառնում այն մարդկանց, ովքեր կհանդգնեն արձանագրությունը փշաջնել կամ տեղահան անել: Քանի որ մոտավորապես հայտնի էր սպառնալիքի բնույթը, սրանով իսկ Ս. Գյուլյարը կրկնվող հատվածների համար փաստորեն ստեղծում է արհեստական զուգահեռ տեքստ, որի միջոցով հնարավոր է դառնում պարզել անծանոթ լեզվի առանձին միավորների արժեքը: Ա. Սեյսը կատարում է հաջորդ քայլը՝ 1882 թ. սկսած հրատարակելով հայտնի արձանագրությունները՝ իր թարգմանությունը հանդերձ⁴: Սրանից հետո ուրարտագիտությունը արագ կերպով առաջադիմում է: Հայտնաբերված ուրարտա-ասուրական երկլեզվյան արձանագրությունները հնարավորություն են տալիս ստուգելու կատարված թարգմանությունների արդյունքները: Աշխատանք է տարվում ինչպես ուրարտական նոր տեքստերի հրատարակության, այնպես էլ նրանց թարգմանության ու մեկնաբանության ուղղությամբ: Հրատարակվում են ուրարտական արձանագրությունների ժողովածուներ (կորպուսներ) և քերականություններ, գրվում ուրարտական պետությունը, մշակույթին, կյանքին նվիրված բաղմամբիվ ուսումնասիրություններ: Այս գործում իրենց արժեքավոր ներդրումն ունեն նաև հայ գիտնականները:

Ա. Սեյսից հետո ուրարտական արձանագրությունների՝ իրենց ժամանակի համար ամենից ավելի ամբողջական ժողովածուները հրատարակել են նախ Հ. Սանտալճյանը⁵, ապա մեզ ավելի մոտ ժամանակներում Ֆ. Վ. Քյոնիգը և Գ. Ա. Մելիքիշվիլին⁶:

⁴ A. H. Sayce, The cuneiform inscriptions of Van, „Journal of Royal Asiatic Society“, 14, 1882 և հջ.

⁵ J. Sandaljian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900 (յրացումները «Հանդես ամսօրյալում», 1913):

⁶ F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, 1—2.

Ուրարտագիտության զարգացման մեջ էական ներդրում են կատարել Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, Յ. Ֆրիդրիխը, Ա. Գյոտցեն, Ֆ. Վ. Քյոնիգը, սովետական գիտնականներից Ի. Ի. Մեշչանինովը, Գ. Վ. Սերեթելին, Բ. Բ. Պիտրովսկին, Գ. Ա. Մելիքիշվիլին, Ի. Մ. Դյակոնովը, մեր ժամանակի հայ գիտնականներից Գ. Ա. Ղափանցյանը, Ն. Վ. Հարությունյանը, Մ. Ա. Խարայելյանը, Հ. Կարագյոզյանը և ուրիշներ:

Ուրարտերենի ծագումնաբանական բնույթին, ցեղակցական կապերին և հայերենի հետ ունեցած փոխհարաբերությունը մի քանի աշխատություն է նվիրվել նաև մեր կողմից:

1. 3. 1. Վանյան սեպագիր արձանագրությունների լեզվի համար այժմ գրեթե բոլորի կողմից գործածվում է ուրարտերեն անվանումը՝ ըստ ասուրական արձանագրությունների մեջ տրված Urartu երկրանվան: Քանի որ ուրարտական արձանագրությունների լեզվի կրողները իրենց երկիրն անվանում են Biainili հոգնակի ձևով, հնարավոր է սրա եզակի ձևի վրա հիմնված բիայնեբեն անվանումը ևս: Ուրարտագիտության զարգացման վաղ շրջանում տարածված է եղել նաև խալդեբեն անվանումը, որ, ինչպես արժ հայտնի է, կապված է ուրարտացիների գերագույն աստծու՝ Haldi-ի անվան հետ: Մանրամասնությունները թողնելով հետագա շարադրանքին՝ այստեղ նշենք, որ Urartu անվանումը պահպանվել է Այրարատի (Արարադ, Արարատ) և Biaina անվանումը՝ Վանի անվան մեջ:

1. 3. 2. Ի՞նչ լեզու է ուրարտերենը կամ բիայներենը: Այս հարցին ճիշտ պատասխանելու համար հարկավոր է նկատի ունենալ, որ ուրարտագիտության ձևավորումից հետո էլ շարունակվում են հայտնվել այնպիսի տեսակետներ, որոնք հիմնված են մասնակի նմանությունների հապճեպ ընդհանրացումների վրա և զուրկ են գիտական արժեքից: Այսպես, Մ. Գ. Զանաշվիլին հայտնել է այն կարծիքը, որ ուրարտական

Graz, 1955. Դ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.

արձանագրությունների լեզուն վրացերենն է: Ուրարտական արձանագրությունների վերևում հիշված ժողովածուն կազմող Հ. Սանտալճյանը փորձել է դրանց լեզուն մեկնաբանել հայերենի, Ա. Կ. Գլեյեն, Ա. Պայազատը և ուրիշները՝ հյուսիսկովկասյան լեզուների հիման վրա: Ուրարտերենը հայերեն կարգալու անհաջող փորձեր կատարվում են նաև մեր օրերում՝ լեզվաբանական համալսարանի անհատական գիտելիքներ շունեցող դասնական անձերի կողմից, որոնք չի կարելի լուրջ ընդունել:

1. 3. 3. Գիտության զարգացման արդի փուլում կարելի է ասել, որ ուրարտերենը ինքնուրույն լեզու է, որ չի նույնանում բրեկ այլ լեզվի հետ: Խոսք կարող է լինել միայն նրա մերձավոր և հեռավոր ցեղակցական հարաբերությունների մասին: Տարածված է այն վարկածը, որ ուրարտերենին մերձավոր ցեղակից է խուրերենը, ընդ որում, ցույց են բերվում քերականական և բառային մի շարք օրինաչափ համապատասխանություններ⁷: Իհարկե, այս ընդհանրություններն այն աստիճանի չեն, որ հնարավոր լինի ուրարտերենի մասին խոսել որպես խուրերենի շարունակություն⁸: Զխոսելով այն մասին, որ ուրարտացիների մասին հիշատակություններ կան մ. թ. ա. XIII դարից սկսած, երբ խուրերենը լայնորեն տարածված խոսակցական լեզու էր, և որ վերջինս շարունակում էր գործածական լինել ուրարտերենի լայն գործածության շրջանում, նշենք, որ երկու լեզուների միջև գոյություն ունեն նշյունական, քերականական և բառային նշանակալից տարբերություններ: Խուրերենի և ուրարտերենի՝ քիչ թե շատ որոշված իմաստով շուրջ երեք հարյուրական բառերից ամենահամար-

⁷ Հմտ. հատկապես Գ. Ա. Меликишвили, Урартские египетские надписи, М., 1960, с. 89—92, И. М. Дьяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков, «Передне-азиатский сборник», М., 1961, с. 369—374, I. M. Diakonoff, Hurrisch und Urartäisch, München, 1971, М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985.

⁸ Մի ժամանակ հայտնված այս սխալ կարծիքը իր հողմածներում համառորեն պաշտպանում է Խ. Իշխանյանը՝ ուրարտերենի համար գործածելով «նոր խուրերեն» անվանումը:

ձակ համեմատությունների դեպքում էլ հնարավոր է լինում ցույց տալ միայն 25—30 տոկոսի ընդհանրություն⁹:

1. 3. 4. Տարբեր հետազոտողների կողմից փորձեր են արվել որոշելու խուրա-ուրարտական լեզուներին մերձավոր ցեղակից այլ լեզուներ և բարբառներ: Այսպես, Օ. Մասոնը փորձել է Կիպրոսում գտնված և մ. թ. ա. II հազարամյակին վերագրվող կիպրո-մինոյական տեքստերի լեզուն մեկնաբանել որպես խուրական բարբառ¹⁰: Մեր կողմից 1976 թ. փորձ է արվել Կիպրոսի հին վանկագիր տեքստերի լեզուն (VIII—II դդ. մ. թ. ա.)՝ էտեոկիպրերենը, մեկնաբանել որպես խուրա-ուրարտական¹¹. «1976 թ.,—գրում է Ի. Մ. Գյակոնովը.— Գ. Բ. Զահուկյանի կողմից (երևանում) ուշադրություն դարձվեց դեռևս չմեկնաբանված էտեոկիպրերենի (հնագույն կիպրերենի) ձևաբանական կազմիչների կապին խուրերենի հետ. այսպիսով, բացառված չէ, որ էտեոկիպրերենը (և ավելի վաղ կիպրո-մինոյերենը) կարող է մտցվել խուրա-ուրարտական (ալարողյան) լեզվաընտանիքի մեջ որպես երրորդ անդամ»¹²: Պետք է անհաջող համարել կովկասյան կենդանի լեզուների

⁹ Որոշ չափազանցում նկատվում է հատկապես Ի. Մ. Գյակոնովի և նրա հետևորդների աշխատություններում: Հմտ. հատկապես I. M. Diakonoff Hurrisch und Urartäisch, München, 1971, М. Л. Хачикян, Хурритский и урартские языки, Ереван, 1985. վերջինիս մեջ, գրված Ի. Մ. Գյակոնովի գաղափարների ազդեցության տակ, համեմատվում է 82 բառային ընդհանուր միավոր, ընդ որում զգալի թվով դեպքերում գրվում է հարցական կամ նշվում «թերևս», չեն առանձնացվում հնարավոր փոխառությունները, զգալի թիվ են կազմում բռնազբոսիկ մասնատումներն ու իմաստների կամայական մեկնաբանությունները: Շատ ավելի զգուշավոր են խուրերենի և ուրարտերենի այլ հետազոտողներ. հմտ., օրինակ, E. Laroche, Gles-saire de la langue hurrite, 1, Paris, 1976, p. 14—15.

¹⁰ O. Masson, Présence éventuelle de la langue hurrite sur les tablettes cypro-minoënes d'Enkomi, „Journal of the Royal Asiatic Society“, 2, 1972, p. 159—163.

¹¹ Գ. Բ. Джайкян, К интерпретации этеокипрско-греческой билингвы, «Известия АН СССР. Серия лит. и яз.», 1976, 2, с. 155—163.

¹² Древние языки Малой Азии, М., 1980, с. 105: Հմտ. նաև

մեջ խուռա-ուրարտական լեզվաընտանիքին մերձավոր ցեղա-
կից լեզուներ որոնելու փորձերը: 1954 թ. Ի. Յ. Բրաունը և
Գ. Ա. Կլիմովը առաջ են քաշում ուրարտերենի և արևելակով-
կասյան, հատկապես նախյան լեզուների մերձավոր ցեղակցու-
թյան գաղափարը¹³, որ վերջին ժամանակներս վերարժարծվել
է Ի. Մ. Դյակոնովի կողմից¹⁴: Սակայն բերված փաստերը կամ
կասկածելի են, կամ սխալ, կամ ակնհայտորեն անբավարար
այս դրույթը հիմնավորելու համար. մեր տպավորությունն
այն է, որ առավելագույնս կարող է խոսք լինել հեռավոր ցե-
ղակցության (միևնույն նոստրատիկ ընդհանրությանը պատ-
կանելու) մասին, այն էլ եթե ստուգենք և զտենք բերվող
արևելակովկասյան նյութը¹⁵:

հետևյալ կարծիքը. «20-րդ դարի 70-ական թվականներին ֆրանսիական գիտ-
նական Օ. Մաոնի և սովետական գիտնական Գ. Բ. Զահուկյանի կողմից
ենթադրություն է արվել վանկագիր կիպրո-մինոյական (II հազարամյակ
մ. թ. ա.) և Լտևոկիպրական արձանագրությունների (I հազարամյակ մ. թ.
ա.) լեզվի՝ խուռերենի հետ ունեցած ցեղակցության մասին...» («Источни-
коведение Древнего Востока», М., 1984, с. 110—111).

¹³ И. Я. Браун, Г. А. Климов, Об историческом взаимоотноше-
нии урартского и иберийско-кавказских языков, «IV (XI) научная
сессия Института языкознания АН Груз. ССР. План работы и тезисы
докладов», Тбилиси, 1954, с. 49.

¹⁴ И. М. Дьяконов, Хурритско-урартский и восточнокавказские
языки, «Древний Восток», 3, Ереван, с. 25—38.

¹⁵ Ի. Ս. Դյակոնովի տեսակետի համառոտ քննադատությունը տրված է
մեր մի հոդվածում՝ Գ. Ե. Ժայկյան. Об урартских заимствованиях в
армянском языке, «Культурно-наследие Востока», Л., 1985, с. 371:
Մեր կարծիքը մնաց նույնը I. M. Diaconoff, S. A. Starostin, Hurro-
Uartian as an Eastern Caucasian, „Münchener Studien zur Sprach-
wissenschaft“ (տպագրության մեջ) գրքի ձեռագրին թուրքիկ կերպով
ժանոթանալուց հետո, թեև այստեղ արտաքննապես տպավորիչ է բերված
զուգահեռների առատությունը: Պատմահամեմատական մեթոդի նման շա-
րաշահման դեպքում, երբ վերականգնվում է նախալեզվի ութսունից ավելի
հնչույթների համակարգ (այն էլ չհաշված կրկնակ բաղաձայնները), որ մի
քանի անգամ գերազանցում է խուռերենի և ուրարտերենի համար հենց իր
խսկ. Ի. Մ. Դյակոնովի տված համակարգերը, երբ համեմատվող արձատները
հաճախ շատ կարճ են, և երբ բառերին վերագրվում են իմաստների ամեն
տիպի կամայական անցումներ, կարելի է «ապացուցել» ամեն ինչ:

2. 1. Ի՞նչ հարաբերության մեջ է ուրարտերենը հայերենի
հետ: Այս հարցին ճիշտ պատասխանելու համար հարկավոր է
բացառել արդի գիտության զարգացման միտումներին անհա-
բիր երկու կարծիք:

2. 1. 1. Նախորդ շարադրանքի ընթացքում խոսվեց ուրար-
տագիտության ձևավորումից առաջ Ա. Գ. Մորտմանի հայտ-
նած այն կարծիքի մասին, որ վանյան արձանագրությունների
լեզուն հայերենն է: Այդ կարծիքը մի կողմ դրվեց արձանա-
գրությունների վերծանումից և մանավանդ ասուրա-ուրարտա-
կան Լրկլեզվյան արձանագրությունների հայտնաբերումից
հետո: Ուրարտերենը որպես հայերեն մեկնաբանելու Հ. Սան-
տալճյանի փորձը ենթարկվում է այնպիսի մասնագետների
խիստ քննադատությանը, ինչպիսիք են Ա. Սելյաբ, Ա. Մեյեն և
Հ. Աճառյանը: Մասնավորապես վերջինս իր «Հայոց լեզվի
պատմության» մեջ քննելով Սանտալճյանի փաստերը՝ գրում
է. «Այս բոլորից կարող ենք եզրակացնել, որ Սանտալճյանի
փորձն էլ խաղերենը կապելու հայերենի հետ ապարդյուն
է»¹⁶: Մեր օրերում ևս ոմանց կողմից կատարվող սիրողական
փորձերը մոտակա քննության դեպքում հայտնաբերում են
ուրարտերենի ու հայերենի պատմության փաստերի անբավա-
րար իմացություն և քննադատության շին դիմանում:

2. 1. 2. Ուրարտերենի և հայերենի փոխհարաբերության
վերաբերյալ երկրորդ բացառելի կարծիքը պատկանում է
Գ. Ղափանցյանին, որը ելնում էր մի կողմից՝ հայերենի խառ-
նածին բնույթի և մյուս կողմից՝ ասիանիկ կոչված հատուկ
լեզվախմբի գոյության՝ այժմ գիտության կողմից մի կողմ
թողնված տեսակետներից: Ըստ Գ. Ղափանցյանի՝ «Հայերենը
իր գերակշռող ծագումնային բովանդակությամբ կանգնած է
մեջտեղում՝ խուռա-ուրարտական, խեթա-լուվական և վրա-
ցական, այդ ասիանիկ լեզուների խմբերի միջև, ուր մտնում
են նորագույն հետադատությունների նաև լիկիերենը, լիդիերե-
նը և էտրուսկերենը: Հարկավոր է նկատի ունենալ, որ վրացե-
րենը գլխավորապես կովկասյան է (հարավկովկասյան) և ցե-

¹⁶ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1, 1940, էջ 172:

ղակից մեռած աղվաներենին և Հյուսիսային Կովկասի ժամանակակից կենդանի լեզուներին (չերքեզերեն, ուբիխերեն, աբխազերեն, լեչեն-ինգուշերեն և Դաղստանի լեզուներ), թեև մեկ թույլ ոտքով կանգնած է նաև փոքրասիական լեզուների հոգի վրա: Իսկ հայերենը ուժեղ կերպով տոգորված է հնդեվրոպական լեզվատարրերով, որ նրան հաղորդում են արտաքնապես խառնված ծագումնային բնույթ»¹⁷: Իրականում՝ 1) հայերենը հնդեվրոպական լեզու է, որ ենթարկվել է Առաջավոր Ասիայի (այդ թվում Փոքր Ասիայի) լեզուների ազդեցությանը. 2) խեթա-լուվական լեզուները (այդ թվում՝ նաև լիկիերենը և լիդիերենը) հնդեվրոպական լեզուներ են՝ զգալի թվով ոչ հնդեվրոպական փոխառություններով. 3) խուռա-ուրարտական լեզուները, ինչպես նշվել է, առանձին ընտանիք են կազմում, և խոսք կարող է լինել նշված լեզուների հետ միայն հեռավոր ցեղակցության հնարավորության մասին. 4) վրացերենը ճանրերենի (լազերենի), մեգրելերենի և սվաներենի հետ միասին կազմում է առանձին՝ բարթվելական կոչված լեզվախումբը, որի՝ հյուսիսկովկասյան լեզուների հետ ունեցած ցեղակցական փոխհարաբերության հարցը առայժմ վիճելի է:

Իր «Ուրարտուի պատմության» մեջ Գ. Ղափանցյանը բերում է հայերենի մեջ պահպանված ուրարտական 29 բառ¹⁸: Մրանցից թողնելով համեմատաբար հավաստիները և ավելացնելով մի քանիսը՝ հետագայում նա տալիս է մի այլ թիվ՝ 20 բառ¹⁹: Սակայն, ինչպես կտեսնենք, սրանք էլ հարկավոր է ենթարկել համապատասխան տեսակավորման և մաղել ոչ հավաստիները:

2. 2. Ինչպես ուրարտագիտության առաջընթացը (նոր արձանագրությունների հայտնագործումն ու ընթերցանություն-

ներ, լեզվական փաստերի նոր մեկնաբանությունները, ուրարտերենի տեղակցական կապերի ու լեզվական առնչությունների նոր լուսումնասիրությունները), այնպես էլ հայերենագիտության, հնդեվրոպաբանության, նոստրատիկ լեզվաբանության և լեզվաբանական այլ բնագավառների նվաճումները մեր օրերում հնարավորություն են տալիս ավելի ճշգրտորեն լուծելու հայ-ուրարտական լեզվական առնչությունների հարցը: Եթե մի ժամանակ հայ-ուրարտական ընդհանրություններ ասելով սովորաբար հասկանում էին հայերենի ուրարտական փոխառությունները, ապա մենք այժմ հնարավորություն ունենք տարբերելու հայ-ուրարտական լեզվական զուգադիպումների մի քանի շերտ:

2. 2. 1. Հայ-ուրարտական զուգադիպումների առաջին շերտը կազմում են, այսպես կոչված, «տարրական» ցեղակցության բառերը, մասնավորապես ձայնարկությունները, բնաձայնությունները, մանկական բառերը, որոնք անկախ լեզուների ցեղակցական փոխհարաբերությունից և պատմական շփումներից, կարող են նմանություններ ունենալ բոլոր լեզուներում: Ցավոք սրտի, ուրարտական արձանագրություններում այդպիսի բառեր գրեթե չեն ավանդվել, բայց ահավասիկ այդպիսի մի քանի զուգադիպություն հայերենի և ուրարտերենին ցեղակից խոսերենի միջև. հայ բրբռ. մա, մամ—խուռ. amma «մայր»²⁰. հայ. բրբռ. առռ «ծեր կին, պառավ», առտա «մայրիկ»—խուռ. attai (ուրարտ. ate) «հայր». հայ. ծիծ—խուռ. zizzija:

2. 2. 2. Հայ-ուրարտական զուգադիպությունների երկրորդ շերտը կազմում են հեռավոր ցեղակցության կամ, այսպես կոչված, նոստրատիկ ընդհանրությունից եկող բառերը: Լեզվաբանության մեջ, մասնավորապես նրա զարգացման արդի փուլում, տարբերում են մերձավոր և հեռավոր ցեղակցության գաղափարները. առաջինը բնութագրում ներլեզվա-ընտանիքային (միևնույն լեզվաընտանիքին պատկանող լե-

17 Г. А. Капанцян, К происхождению армянского языка, «Историко-лингвистические работы», 2, Ереван, 1975, с. 212—213.

18 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 37—40.

19 Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 130—139.

20 Այս բառի իմաստի համար տե՛ս И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967, с. 133.

զոնների), երկրորդը՝ միջլեզվաբնույթային (առանձին լեզվաբնույթային) ցեղակցությունը: Համեմատական լեզվաբանության ձևավորումից հետո շատ հետազոտողներ նկատում են տարբեր լեզվաբնույթների միջև այնպիսի նմանություններ, որոնք դժվար է բացատրել փոխառությունից, շփումներով և ենթաշերտային ազդեցությամբ: Հ. Պեդերսենը 1903 թ. հրդեհվորոպական, սեմաքամական, ուրալայթայան և, թերևս, ուրիշ լեզվաբնույթների՝ հեռավոր ցեղակցությամբ կապված ընդհանրությունը նշանակելու համար ներմուծում է նուստատիկ անվանումը: Հետագայում, երբ տարբեր լեզվաբնույթների նախալեզուների վերականգնման աշխատանքը լայն ծավալ է ստանում, և հնարավորություն է ստեղծվում համեմատելու նախալեզվական ձևերը, նոստրատիկ լեզուների ուսումնասիրության համար գիտական ամուր բազա է ստեղծվում. ձևավորվում է նոստրատիկ լեզվաբանության ժամանակակից տարբերակը, որ բացի Հ. Պեդերսենի նշած լեզվաբնույթներից ներքաշում է նաև քարթվելական, դրավիդյան և այլ լեզվաբնույթների նյութը: Վ. Մ. Իլիշ-Սվիտիչի կողմից հիմք է դրվում նոստրատիկ լեզուների բառարանի կազմմանը²¹:

Ի՞նչ կարելի է ասել խուռա-ուրարտական լեզվաբնույթի հեռավոր ցեղակցության մասին, կապ ունի՞ արդյոք նա այլ լեզվաբնույթների հետ, թե՞ կանգնած է մեկուսի: Այդ հարցին դրական պատասխան է տրվել մեր կողմից դեռևս 1963 թ.՝ նախքան նոստրատիկ լեզվաբանության նոր տարատեսակի ձևավորումը: Ըստ սկզբնական կարծիքի՝ ուրարտերենը և խուռերենը կողմնական ցեղակցության մեջ են հնդեվրոպական լեզվաբնույթի հետ²²: Հետագայում մեր կողմից ուղղակի կերպով նշվում է խուռա-ուրարտական լեզվաբնույթի պատկանելությունը նոստրատիկ ընդհանրությանը, բերվում

են նոր փաստեր, և կատարվում ճշգրտումներ²³: Մեր տվյալները հաշվի են առնվել նոստրատիկ լեզվաբանության ներկայացուցիչների կողմից: Վ. Մ. Իլիշ-Սվիտիչը մտադիր էր լրացնել նոստրատիկ ընդհանրության մասին իր հավաքած փաստերը մեր տվյալներով, բայց վաղաժամ մահը նրան այդ հնարավորությունը չտվեց. այդ լրացումը մասնակիորեն կատարել են Ա. Բ. Դուրոպովսկին և ուրիշները: Մեր կողմից բերվում են մեծ քանակությամբ քերականական և բառային ընդհանրություններ, որոնք, բնականաբար, շոշափում են հայերենի բառապաշարը այն չափով, որ չափով հայերենը որպես հնդեվրոպական լեզու ժառանգել է դրանք հնդեվրոպական (կրճատ՝ հ.-ե.) լեզվից. ահավասիկ մի քանի օրինակ. խուռ., ուրարտ. ag- «տանել, անցկացնել»—հ.-ե. *ag'-, հայ. ած-եմ, խուռ., ուրարտ. ar- «տսլ»—հ.-ե. *ar- «հատկացնել, բաժին հանել, լուրացնել», հայ. առնում (առ-), ուրարտ. at- «ուտել»—հ.-ե. *ed-, հայ. ուտ-եմ, ուրարտ. d- «անել»—հ.-ե. *dhē-«գնել, անել», հայ. դ-ն-եմ, խուռ. anni «այն», ուրարտ. ini «այս»—հ.-ե. *e-no- «այն», հայ. -ն, այ-ն, ն-ա. խուռ., ուրարտ. man- «լինել»—հ.-ե. *men-, հայ. մնամ, ուրարտ. -me «ինձ»—հ.-ե. *(e-)me, հայ. իմ, ին-ձ, ուրարտ. me(i) «մի՛»—հ.-ե. *mē, հայ. մի՛, ուրարտ. pari(e) «մինչև»—հ.-ե. *per- «առաջ, դեմը, այն կողմը», հայ. առ ժմոտ, դեպի՛, ուրարտ. par- «քշել, տանել»—հ.-ե. *per- «անցկացնել, փոխադրել», հայ. հորդեմ «ճանապարհ բանալ», խուռ., ուրարտ. taše «նվիր»—հ.-ե. *dō- «տալ», հայ. տամ, տուր-ք, խուռ., ուրարտ. uli- «այլ»—հ.-ե. *aljo-, հայ. այլ և այլն²⁴:

²³ Հմմտ. հատկապես Գ. Բ. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967; Մեր կողմից գրվել, բայց չի հրատարակվել խուռա-ուրարտական լեզվաբանի նոստրատիկ բնույթի մասին նաև հատուկ հոդված: Ավելորդ շեշտ համարում նշել, որ Գ. Ղափանցյանը դեռևս 1939-ին (Ուրարտի պատմությունը, էջ 28—30) բերում է ուրարտա-հնդեվրոպական 7 ընդհանուր բառ, բայց դրանք նա համարում է հնդեվրոպական ներդրում ուրարտերենի մեջ:

²⁴ Այս կապակցությամբ առնվազն տարօրինակ է թվում Ի. Մ. Դյակոնովի և, նրա հետևողությամբ, Մ. Լ. Խաչիկյանի ոչ լուրջ վերաբերմունքը

²¹ В. М. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, 1—2, М., 1971—1976 (3-րդ լրացուցիչ պրակը լույս է տեսել 1984 թ.):

²² Գ. Բ. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ереван 1963. 138

2. 2. 3. Հայ-ուրարտական զուգադիպումների երրորդ շերտը կազմում են ուրարտերենից հայերենի փոխառած բառերը: Ուրարտական արձանագրությունների միօրինակությունը (դրանք վերաբերում են գերագանցապես ուղղմական արշա-

մեր վարկածի նկատմամբ: Նրանց բննադատության փորձերի մեջ, որոնք ուղեկցվում են խուռաուրարտա-արևելակովկասյան մերձավոր ցեղակցության խախտող գաղափարի մատուցմամբ, շփոթվում են հեռավոր և մերձավոր ցեղակցության գաղափարները, հաշվի չեն առնվում նոստրատիկ լեզվաբանության տվյալները, նյութին ամբողջության մեջ բնեկու փոխարեն հրամցվում են առանձին փաստեր: Այդ տեսակետից հատկապես բնորոշ է Մ. Լ. Խաչիկյանի՝ վերևում հիշատակված գիրքը, որի մեջ մեր կողմից կատարված հնդեվրոպա-խուռաուրարտական բազմաթիվ՝ երկու հարյուրակից անցնող բառաբերականական համեմատություններից նշված է միայն մի քանի բառ (այն էլ ոչ թե անմիջաբար մեր գրքից, այլ Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի գրքի միջնորդությամբ) առանց որևէ վերապահման: Գործին անտեղյակ ընթերցողը կարող է ստանալ այն տպավորությունը, թե մեր վարկածը հենվում է միայն այդ բառերի վրա: Սակայն տեսեք, թե ինչպե՞ս են կասկածի տակ առնվում նույնիսկ հատուկ ընտրված այդ զուգահեռները:

1) խուռ. aš-, eš- (ըստ Դյակոնովի և Խաչիկյանի՝ aš-) շնտույն ուրարտ. aš- (ըստ Դյակոնովի և Խաչիկյանի՝ aš) շնտույ մնայ, Թող-նել—հ.-ե. *es- շնտույն համեմատությունը համարվում է կասկածելի և դրա փոխարեն որպես խուռաուրարտականի աղբյուր առաջարկվում է ոչ ավելի, ոչ պակաս ընդհանուր արևելակովկասյան *V(r)SwV նախածնը:

2) ուրարտ. al- շուտել, խժոեյ, ոչնչացնել—հ.-ե. *ed- զուգահեռի փոխարեն (*) առաջարկվում է ուրարտերենի համար արևելակովկասյան *ā(w)V աղբյուր-նախածնը:

3) ուրարտ. pari(e) «մինչև, դեպի» (ըստ Դյակոնովի և Խաչիկյանի՝ parə)—հ.-ե. *per, *peri «առաջ, միջով, դեմը» զուգահեռը մերժվում է այն պատճառով, որ խուռաուրարտերենի և ուրարտերենի հատուկ են ետագրությունները: բայց ահա ի՞նչ է ստում Գ. Ա. Մելիքիձիլիին (նշվ. աշխ., էջ 78). «Ամենայն հավանականությամբ նախդիր է նաև pari/e-ն (pari, parie գրություններ)»: բերված բոլոր օրինակները նախդրային են (հմտ. kufeadi pare URU Կիտա KUR Buštue «հասա մինչև վիտիկա քաղաք Բուշուու երկիրը»), էլ չենք խոսում այն մասին, որ ուրարտ. pari(e) —հ.-ե. *per(i) զուգահեռը հաստատվում է ուրարտ. par- բռնել, տանել—հ.-ե. per- շանցկացնել բայական զուգահեռով:

Մենք չենք խոսում բերված շրջորդ զուգահեռի մասին (հ.-ե. *bhfg'h—ուրարտ. burgana «ամբողջ»), որովհետև այն մերը չէ (այս

ովանքներին, ջրանցքաշինությանը և կրոնական ծիսակատարություններին, հատկապես աստվածներին մատուցող զոհերին կամ պաշտոնական գրություններ ու մակագրություններ են՝ վերջին դեպքում խիստ համառոտ) և բացահայտված ու բացատրված բառերի ոչ մեծ քանակը (թիչ թե շատ հավաստի մեկնաբանված բառերի թիվը երեք հարյուրակից չի անցնում) հնարավորություն չեն տալիս որոշելու հայերենի ուրարտական փոխառությունների ընդհանուր քանակը, բայց եղած նյութի ընդհանրացման հիման վրա, և մի կողմ նետելով զանազան անհավաստի ստուգաբանությունները, կարելի է տալ դրանցից հավաստիների հետևյալ ցանկը²⁵.

baba «լեռ» — բարայ «բլուր».

burgana «բերդ, ամբողջ» — բուրգն²⁶.

harhar-š- «քանդել, ավերել» — խարխար-եմ «քանդել, խարխուլել» (խար-խալ-եմ, խարխուր, խարխուլ).

šani «աման» (<ակադ. šannum «կաթսա» <շումեր.) — սառ, -ի «կաթսա»²⁷.

te-ae «մեծ» («շատ») — հայ. *տե, տի- (տի-եզերք, տի-կից, *տի-այր >տեի բառերում)²⁸.

ul(u)ni «տղտ» — ուղտ, -ու:

դեպքում էլ բարդ հարցը մատուցվում է պարզունակ ձևով՝ magister dixit («ուսուցիչն ասաց»): այստեղ մենք գործ ունենք պարզապես փոխառության հետ (հմտ. 2. 2. 3):

Նշենք, որ եթե նույնիսկ ապացուցված համարենք խուռաուրարտա-արևելակովկասյան ցեղակցությունը, այն չի կարող խանդարել հեռավոր ցեղակցության վարկածին, եթե, իհարկե, համեմատություններն օրինալափ լինեն և ընդգրկեն լեզվի նախնական բաղադրիչները:

²⁵ Հմտ. Г. Б. Джаукян, Об урартских заимствованиях в армянском языке, «Культурное наследие Востока», Л., 1985, с. 364—372.

²⁶ Ըստ Հյուբշմանի: Armenische Grammatik, էջ 392) և Աճառյանի (Հայ. արմատական բառարան, I, էջ 488) ասոր. būrgā ձևից, բայց այս դեպքում անբացատրելի է մնում հայ. -ն-ն («ուրգն»):

²⁷ Ուրարտերենի միջոցով փոխառված լինելու օգտին է խոսում հուլովման -ի-ով հիմքը:

²⁸ Եթե ծագումը հնդեվրոպական չէ. հմտ. լիտվ. dīdis «մեծ» (հ.-ե. *dei-):

Քիչ թե շատ հավաստիորեն որոշվող այս բառերի կողքին կան մի շարք զուգադիպումներ, որոնց բնույթը չի ունի պարզ չէ: Այսպես, եթե մենք ենթադրենք ուրարտական բարբառներում ր/լ հերթագայություն, կամ ուրարտական -ի ու 1-ի այնպիսի արտասանություն, որ դրանք հայերի կողմից որոշ տարածքներում խառնված լինեն, ապա հնարավոր է վերևում բերված բառերին ավելացնել հետևյալները.

harari «խաղաղություն, բարօրություն» — խաղաղ.

guldi(ni) «խոպան (?), անպտուղ (?)» — կորզ «խոպան, անմշակ».

ull-še «ուրիշ» — ուրիշ²⁹.

Ջանազան նկատառումներով այժմ չի կարելի հավաստիորեն մեկնաբանել ուրարտերեն և հայերեն հետևյալ բառերի փոխհարաբերությունն ընդհանուր՝ փոխառությունն, թե՞ պատահական զուգադիպություն լինելը.

euri «տեր» — արի-որդ (*«տիրորդի»)³⁰.

ka- «կանգնել, հայտնվել» — կա³¹.

patari(e) «քաղաք» — փար «պտույտ, շրջան» (փոք, փոքոր), չպատ³².

29 Չ. Աճառյանը (Շայ. արձատական բառարան, 32, էջ 585—586) համարում է որոշ բառի տարբերակ: Հնարավոր է ենթադրել բաղադրություն (կոնտամինացիա):

30 Ըստ Գ. Ղափանցյանի (Շայոց լեզվի պատմություն, Երև. 1961, էջ 134), որ միացնում է նաև որևառ «մարդիկ» բառը՝ մեկնաբանելով այն «տերեր, մեծեր». բնականաբար ենթադրվում է ուրարտ. e-ի լայն՝ a-ին մոտեցող արտասանություն:

31 Եթե 1) ճիշտ է ուրարտ. բառի դյակոնոլյան մեկնությունը (И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963, с. 89), 2) հնարավոր է ուրարտ. k—հայ. կ համապատասխանությունը և 3) հայ.

բառը կապ չունի Գ.-ի. *gũā- «գալ» արմատի հետ:

32 Եթե patari բառի մեջ իրոք կարելի է առանձնացնել -ari ածանց (հմմտ. М. Л. Хачикян, Хурритский и урартские языки, Ереван, 1985, с. 62), և եթե ուրարտ. բառի սկզբնական իմաստն է «ցանկապատված տեղ», ինչպես, օրինակ, ուսու. город բառում: Ինչպես նշել ենք, Ի. Մ. Գյակոնովը և նրա հետևողները, Մ. Լ. Խաչիկյանը մեծ համարձակություն են ցուցաբերում խոտական և ուրարտական ածանցների առանձնացման հարցում՝ հենվելով հաճախ մեկ-երկու օրինակի վրա և չափազանցելով խոտա-ուրարտական մերձավորությունը:

tar(a)mana/i,e-ll (հգն.՝ ինչ-որ կառույց. ըստ Ի. Մ. Գյակոնովի՝ «աղբյուր, ջրելատեղ» (?)) — բրբռ. քարմա «տախտակաշեն վերնատուն. բարձրաշեն հարկարաժին եկեղեցում. փալատաշեն հենակառույց վազերի համար. խաղողի վազ»³³.

u-dull (uldi) «խաղողի այգի» — առլի (առլլի) «խաղողի որթ» (հմմտ. ուտիերեն ʔul «խաղող») ³⁴.

uell- «ժողով (?). ջոկատ (?), աշխարհազոր (?))» — գելդ (գիւղ), գելդ-ջ³⁵:

Անհնար չէ ենթադրել, որ -եւան-ով վերջացող տեղանուններում պահպանված լինի ուրարտ. ebani «երկիր» բառը՝ հետադաշում մասամբ բաղադրվելով իրանական ծագման աւան (պրթ. āvān) և վան (իրան. vān) բառերի հետ: Կարելի էր ենթադրել նաև ուրարտ. alie «ասում է, խոսում է» հաճախադեպ ձևի պահպանումը հայ. աղէ՛ «հապա, բայց արդ» բառի մեջ բարացած ձևով, բայց վստահելի ապացույցներ բերել դժվար է: Կասկածելի են pag(i)ani(e) «տավար, նախիր» — պախրէ «տավար, նախիր»³⁶, pulusi(e) «կոթող, արձանագրություն» — փող, pitulie «ջարդի, ոչնչացնի» (պպառնու ձև) — բրբռ. (վան, Խլաթ) պտլիլ «փշանալ, ավերվել»³⁷, susi (e) «պաշտամունքային կառույց՝ տաճար (»)» —

³³ Ուրարտերեն բառի մեկնաբանությունը պայմանական է, և համեմատվող հայերեն բառը թերևս ավելի ճիշտ է որոշում այդ իմաստը: Ակնհայտորեն վերջում է Ի. Մ. Գյակոնովի համեմատությունը հայ. քարմալուր բառի հետ:

³⁴ Չ. Աճառյանը (Շայ. արձատական բառարան, 42, էջ 416) նշում է նաև արար. davāil «խաղողի տեսակ» բառը, բայց առանց սրա հարաբերությունը հայ. և ուրարտ. բառերի հետ որոշելու:

³⁵ Ըստ Գ. Ղափանցյանի (Շայոց լեզվի պատմություն, էջ 139), թեև u > q համապատասխանությունը հնարավոր է (հմմտ. Uel kuni > Պելա(ս) Բունի), բայց կան իմաստային և հնչյունական դժվարություններ:

³⁶ Հնարավոր է հայ բառի սեմական ծագումը (հմմտ. ասոր. baqrā, Կրր. bāqār, արար. baqra՝ ըստ Չ. Աճառյանի (Շայ. արձատական բառարան, 42, էջ 7):

³⁷ Իմանությունը պատահական է, եթե, մանավանդ, հայ. բայը կապված է պատլիլ համեմատ ըստի հետ, որ Չ. Աճառյանը (նշք, 42, էջ 43) բխցնում է արարերեն bil «սուտ լինել, չզործել, վերացվել» արմատից:

սիւս «ցանկապատված որսատեղ» և այլ բառերի համեմատութիւնները:

2. 2. 3. 2. Հայերենի ուրարտական փոխառութիւնների վերևում քննված ցանկը հենվում է ուրարտական աշխատագրութիւնների ուղղակի տվյալների վրա: Սակայն նախ և որ մի կողմից՝ այդ արձանագրութիւնների տվյալները խիստ թերի են և արտացոլում են ուրարտական բառապաշարի շինչին մասը, մյուս կողմից՝ մեծ թիվ են կազմում հայերենի բառապաշարի շատուգաբանված բառերը, որոնց մեջ պետք է զգալի լինի հայերենի ուրարտական ենթաշերտի ներդրումը: Իսկ կա՞ն արդյոք այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորութիւն տան բացահայտելու հայերենի բառապաշարի ուրարտական տարրերը անուղղակի կերպով: Այդ հարցին կարելի է պատասխան տալ՝ մատնանշելով ուրարտական ենթաշերտի որոշման մի շարք ուղիներ:

2. 2. 3. 2. 1. Ուրարտագետների կողմից ուրարտերենի մեջ ցույց տրված հնչյունական ու ձևաբանական առանձնահատկութիւնների և, մասնավորապես, բառակազմական տարրերի (վերջածանցների) հիման վրա հայերենի շատուգաբանված շերտի մեջ կարելի է առանձնացնել այնպիսի բառեր, որոնց աղբյուրը կարող է լինել ուրարտերենը: Հայերենի ուրարտական փոխառութիւններին նվիրված մեր արդեն հիշված հոդվածում³⁸ բերված այդպիսի բառերից նշենք՝ ա) խաղախ «նավ(ակ)», խաղախ «կաշի, մորթ», կամախ «նվեր», կանջուխ (կաննոխ) «գավազան, ցուպ, ձող», կանուխ, մեղեխ «կացնի կոթ», մեղմեխ «նենգ», ոսոխ, պարեխ «ծայռ», բ) խաբխախ, խոբխախ. գ) դիւրին, խոբին, խոթին. դ) ձախող-եմ, խնող-եմ. ե) ախնոբ «գոհհիկ», գոթոբ «ներկի տեսակ», խոլոբ/ո (խոժոո. հմմտ. նաև խոշոբ, խոժոո). կոտոբ, սալոբ (թերևս ուրարտերենից կամ խոտերենից է նաև ակկադ. šallūru-ն), սոլոբ, ամուբ (այստեղից ամբոց), բարուբ «պարրվակ», զանգուբ, մաբուբ, մսուբ, փթուբ, փշուբ (և փուլսբ.

հմմտ. ուրարտ. iph(u)- «փշրել, ջարդել»): զ) բնդեն «աղբարգեղ», եղեամն, եղերդն, եղեգն, լիսեռն, խոլոբն. մասն. ոստղն և այլն: վ. Թենեցյանուն ուրարտական ծագում է վերագրում ծառանուններ և թփանուններ կազմող -նի ածանցին³⁹, թեև այս ածանցով բառերը հանդիպում են գերազանցապես ուշ շրջանում, և դժվար բացատրելի է վերջին ի-ի պահպանումը, բայց խուռական և, թերևս, համապատասխան ուրարտական հիմք տնեցոյ խնոբենի (խոտ. hinzuri) և ճոնենի (խոտ. nurantu <ակկադ. nurimdu) բառերը ցույց են տալիս այս տեսակետի հավանականութիւնը. հմմտ. նաև արմառենի, դարխենի «դափնի», դդմենի, թգենի, բթենի, խաղողենի, կասկենի «շագանակենի», կննենի, հագոբենի⁴⁰, նշտաբենի, նշենի, սարդենի, ցրդենի, ուռենի (ուռ «ճյուղ, ընձյուղ»), այլև -նի-ով (հին *-ինի) նվենի: Երկրորդաբար ածանցը դրվել է հնդեվրոպական ծագման (լաստենի, կուենի, մոբենի և այլն) և տարբեր աղբյուրներից փոխառված (կեռասենի, վարդենի) բառերի վրա:

2. 2. 3. 2. 2. Հայերենի շատուգաբանված բառերի մեջ կան իմաստային (թեմատիկ) այնպիսի խմբերի պատկանող բառեր, որոնց համար հնարավոր է ենթադրել ուրարտական ծագում: 2. Աճառյանը նշում է բառերի ութ այդպիսի իմաստային խումբ, որոնցից հանելով այժմ ստուգաբանվածները՝ կարելի է բերել հետևյալները՝ ա) գույների նշանակումներ՝ երփն. բոյբ, գորշ, հիր «կապույտ», կառաշ. բ) մետաղների անուններ՝ երկաթ, կապար, ոսկի. գ) բուսանուններ՝ ծիրան, եղի(ն)ն, կոտիմն, ցորեան. դ) ամանների անուններ՝ զուշ «տաշտ», կարաս, սափոր. ե) ջուլհակութիւն տերմիններ՝ ազրն, գորգ (բայց հմմտ. խեթ. kurk(a)- «ծածկոց»), կապեռո, կծիկ.

³⁹ V. Bănățeanu, Terminologia arborilor în limba armeană, „Studii și cercetări lingvistice”, 1960, 3, p. 359—375. Observații în legătură cu termenii pentru arbuști în limba armeană, „Studii și cercetări lingvistice”, 1961, 4, p. 515—540. „Urartean suffixes in Classic Armentan”, „Revue de linguistique”, 1961, 1, p. 85—107.

⁴⁰ 2. Աճառյանը (Հայ. արմատական բառարան, 32, էջ 7—8) բխեցնում է ասորերենից, բայց ավելի հավանական է հակառակ ուղին:

³⁸ Г. Б. Джаукян, Об урартских заимствованиях в армянском языке, «Культурное наследие Востока», Л., 1985, с. 367—368.

կկել (կկոց), հիւսել. զ) ազգականների անուններ՝ աներ (.-ե.°), զոբանչ(°), խնամի, փեսայ. է) դրամական միավորների անուններ՝ խեբեւէշ. ր) գրի հետ կապված բառեր՝ գիծ, կածիւն «գրիչ» և այլն:

2. 2. 3. 2. 3. Կան հայերենի և վրացերենի ու կովկասյան այլ լեզուների համար ընդհանուր բառեր, որոնք չեն կարող չխեցվել մեկը մյուսից, և որոնց աղբյուրը կարող է լինել ուրարտերենը. հմմտ. ծիրան—վրաց. չերամի, արխ. a-չարամ. հայ. ընկոյզ (եթև հ.-ե. ծագում չունի)—վրաց. nigozı (օս. änguz, ängoza. այլ լեզուներում առանց սկզբնավանկի). հայ. ձեփ—վրաց. չեբո «խեփ, սոսիսձ». հայ. կուռ-ք, կոել—վրաց. չրա «խփել» և այլն:

2. 2. 3. 2. 4. Հայերենում կան ակկադական մի շարք փոխառություններ, որոնք գոնե մասամբ կարող են միջնորդավորված լինել (ինչպես ժամանակին նշել են Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ն. Ադոնցը) ուրարտերենով. սրա համար օրինակ կարող է ծառայել սան-ի «կաթսա» բառը (<ուրարտ. šani<ակկադ. šannu(m)). հմմտ. նաև ն. ասուր. anūtu (հին սոնտու) (սարք, գործիք, անոթ)՝ հայ. անալք, ակկադ. kimabhu «գերեզման»՝ հայ. կմախ-ք, կմախիք «մեռելի վրա սուգ, հուղարկավորություն»,* gīru «կիր»՝ հայ. կիր և այլն:

2. 2. 3. 2. 5. Եթե խուռա-ուրարտական լեզվաընտանիքը պատկանում է նոստրատիկ ընդհանրությունը, ապա կարելի է նշել հայերենի մեջ առկա այնպիսի նոստրատիկ արմատներ, որոնց աղբյուրը կարող են լինել խուռերենը կամ ուրարտերենը. հմմտ. հայ. ծորել—քարթվ. *cwar-/cur- «կաթել», ուրալ. *c'or- «կաթել, հոսել, ծորալ», գրավիդ. *c'ōr-/cur- «կաթել, հոսել, ծորալ», ալթ. *čur(λ) -«կաթել, հոսել, ծորալ». հայ. բրբռ. ծուլ «ցատկ»՝ սեմ.-քամ. *šl —ուրալ. *c'elā-«ցատկել, ժուլ լինել». կառ «փուշ»՝ ուրալ. *kara, գրավիդ. *karta)-«փուշ»՝ ալթ. gara- «ծայր» և այլն:

2. 2. 3. 3. 1. Ուրարտերենը կարևոր դեր է կատարել հայերենի հատուկ անունների կազմավորման մեջ: Հայաստանի շատ տեղանունների հիմքում ընկած են ուրարտական հասարակ անունները: Ահավասիկ մի քանի տիպական օրինակ.

Գառնի տեղանունը, ինչպես ցույց է տրվել մեր կողմից⁴¹, պիտի ծագած լինի ուրարտ. garini «բերդ, ամրոց» (°) բառից. մանավանդ որ այդ անունը հանդիպում է դեռ ուրարտական շրջանում Giarniani ձևով (հետաքրքրական է նշել, որ ia կապակցություններ տրվում է քմայնացած ձայնավորը որպես տեղական խոսվածքի հատկանիշ)⁴²: Կարբի տեղանունը ամենայն հավանականությամբ ծագում է ուրարտ. qarbi(š) «ծայր (°)» հասարակ անունից. Գեղա(ր)ուլի տեղանվան ուրարտական աղբյուրի՝ Uelikuni-ի մեջ (կա նաև Uelikubi գուգահեռ ձևը) հավանաբար առկա է ueli «ժողով, ջոկատ, աշխարհադր (°)» բառը և այլն:

Վերևում նշվեց, որ տեղանվանական -եան կազմիչը հավանաբար գալիս է ուրարտ. ebanı «երկիր» բառից: Հասարակ անունների համար վերևում հիշված ածանցական շատ ձևեր համապատասխան զուգահեռներ ունեն նաև հատուկ անունների մեջ և հաճախ գալիս են հենց ուրարտերենից՝ -նի-ով (Բրչնի, Գառնի, Մուղնի, Պարնի և այլն), -ևան(ի)-ով Աբեղեան-ի <Abiliani, Ախուրեան < Ahuriani, այլև Բաւեան, Խորձեան-ի և այլն), -ունի-ով (Բժնունի-ի, Խորխոռունի-ի, Հաւնունի-ի և այլն) և այլ վերջածանցներով: -ունի-ով վերջացող շատ տոհմանուններ (նախարարական տների անուններ), որոնք -ի հոգնակերտով ստացել են տեղանվանական արժեք (հմմտ. Խորխոռունի տոհմանուն—Խորխոռունի տեղանուն), անշուշտ, գալիս են ուրարտական շրջանից, թեև -ունի-ն մասամբ տարածվել է ոչ ուրարտական (այդ թվում իրանական) ծագման հիմքերի վրա. հետաքրքրական է նշել, որ -ունի-ով տեղանունները տարածված են եղել հատկապես Վասպուրականում և հարակից շրջաններում:

2. 2. 3. 3. 2. Սակավ նկատելի է ուրարտական անձնանունների և դիցանունների ազդեցությունը հայերենի վրա, որ

41 Գ. Բ. Զահուկյան, Ստուգարանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 96:

42 Կ. Վ. Арутюнян, Бийниги, Ереван, 1970, с. 427—428. Զարմանալի կերպով հեղինակը ոչինչ չի ասում մեր ստուգարանության մասին և ընդհանրապես խուսափում է ուրարտերենի վերաբերյալ կարծիքները քննարկելուց:

բացատրվում է կրոնագաղափարական ուշ փոփոխություններով: Հավանական է ուրարտ. Araza դիցանվան պահպանված լինելը հայոց տոմարի առաջ ամսանվան մեջ. ինչ-որ աղբյուրների հիման վրա՝ Գրիգոր Տաթևացին այդ անունը կապում է Առաջ հատուկ անվան հետ՝ նշելով, որ այն կրել է Հայկի յոթ որդիներից մեկը⁴³: Հայերեն Առամ անվան մեջ պիտի պահպանված լինի ուրարտական Aramu անունը, որ կրելիս է եղել ուրարտական վաղ թագավորներից մեկը:

2. 2. 4. Հայ-ուրարտական զուգադիպությունների շորորդ շերտը կազմում են ուրարտերենի՝ հայերենից կատարած փոխառությունները: Երկար ժամանակ ուրարտագետների և հայագետների մեջ տիրապետում էր հայ-ուրարտական ընդհանուր բառերը միայն որպես հայերենի ուրարտական փոխառություններ բացատրելու միտումը: Այդ միտումը շարունակում էր իներցիայի ուժով նաև հետագայում, երբ տիրապետող դարձավ այն կարծիքը, որ հայկական ցեղերը եղել են ուրարտական պետության մեծաքանակ էթնիկական տարրերից մեկը և մեծ դեր են խաղացել ուրարտական պետության կյանքում: Հնարավոր է նույնիսկ, որ Erimena թագավորի անունը արմեն անվան ուրարտական տառադարձությունն է: Եղած ընդհանուր մտայնության պայմաններում հետազոտողները կանգնում էին անլուծելի հակասությունների առջև. այսպես, մի կողմից՝ հայ. սուր բառը համարվում էր բնիկ հնդեվրոպական, մյուս կողմից՝ կապվում ուրարտական Šuri(e) «զենք, սուր» բառի հետ. մի կողմից՝ ծառ բառը մեկնաբանվում էր հնդեվրոպական հողի վրա (ծառ < *g'ɽso-), մյուս կողմից՝ կապվում ուրարտական Z/šari(e) «այգի» բառի հետ և այլն: 1963 թ. մեր կողմից հստակ կերպով ձևակերպվում է այն միտքը, որ հայերենի ուրարտական փոխառությունների կողքին պետք է տարբերել ուրարտերենի հայկական փոխառությունները⁴⁴:

⁴³ Գրիգորի Տաթևացու Գիրք հարցմանց, 4. Պոլիս, 1729, էջ 200.

⁴⁴ Գ. Բ. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, с. 133.

Այդ միտքը հետագայում արտահայտում են նաև ուրիշները⁴⁵:
2. 2. 4. 1. Մի կողմ թողնելով ուրարտերենի մեջ հայերեն բառեր փնտրելու անհաջող սիրողական փորձերը՝ մեր վերջին ժամանակներիս ուսումնասիրությունների հիման վրա տանք այդ բառերի բառերի քիչ թե շատ հավաստի ցանկը⁴⁶.

2) հայ. աւելի, յ-աւելուլ (հ.-ե. *obhel-, որտեղից հուն. ὄφελος «ավելացնել, մեծացնել», ընդ որում հայերեն և հունարեն բառերի հավանական աղբյուրն է *bhel- «փչել, ունցընել. բխել. առատ լինել» արմատը, որտեղից հայ. բեղուն. բեղմն) — ուրարտ. abili-d(u)- «միացնել, ավելացնել» (abili) «ավելի» + d(u)-«անել», այսինքն՝ բառացի «ավելի անել»): 2 հայ. արծուի (հ.-ե. *ɽg'ɽp(i)ɽo-, որտեղից հ. հնդկ. 𑀧𑀺𑀢𑀺 քառաձայն սուրացող (արծվի մասին)», ավեստ. əṛəzɽfya- «արծիվ») — ուրարտ. aršibi- (Aršibi- — Մենուա թագավորի ձիու անունը): 3) հայ. ծառ, -ոյ (հ.-ե. *g'ɽso-. հմմտ. հուն. կրեա. γάρρα «փայլա. ձեռնափայտ, հ. իսլ. kjarr «թուփ») — ուրարտ. zari (šari) «այգի»): 4) հայ. սուր, սուրբ, սուր բան, սայր. կտր ող գործիք, թուր» (հ.-ե. *k'ō-ro-՝ *k'e-՝ /k'ō- «սրել» արմատից, որտեղից նաև սայր և սալ «սալ. դարբնի սալ, սուր կռելու սալ»): *ɽ-ով ձևեր են նաև վերին գերմ. har «գերանդի սրելու գործիք», մ. ստ. գերմ. haren «սրել») — ուրարտ. Šuri «սուր (*), զենք (*):

Արանց կարելի է ավելացնել նաև մի շարք այլ բառեր, որոնք մեր նախորդ աշխատություններում մասամբ դիտվել են որպես հեռավոր ցեղակցության հետնորդներ.

5) հայ. անդ «արտ», բրբռ. հանդ «արտ, դաշտ. մի օրվա արածելիք արոտ», հանդավար «հող. կալվածք. սուն, տեղ, կողմ», հանդավորեք «տան ներսի կողմ, բակ», այլև

⁴⁵ Հմմտ., օրինակ, И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1968, с. 135. «Հայ ժողովրդի պատմություն», 1, Երևան, 1971, էջ 420 և այլն:

⁴⁶ Գ. Բ. Джаукян, Об урартских заимствованиях в армянском языке. «Культурное наследие Востока», Л., с. 369. Գ. Բ. Զահովյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 1, էջ 54—55:

անդեայ, անդի «տավար, նախիր» (հ.-հ. *andh-, որտեղից թոխ. *ll. ant, l' ante* «հարթութուն», կիմբ. *enderig սեզ», բրետ. ovnner «եքինջ»*)—ուրարտ. *andani «հանդ(°)»* գավառ(°). շրջան(°)» (թերևս «հանդեր» իմաստով, եթե *-ani-ն* հայ. *-ան(ի) հոգնակերտ-հավաքականն է, և վերջինս իրանական ծագում չունի*). 6) հայ. *արմ(ն), (գ)արմ, արմատ «արմատ. ցեղ, զարմ»* (հ.-հ. *or-mo-՝ *er- «շարժել, հուզել. բարձրացնել» արմատից, որտեղից նաև հայ. *որեալ»*)—ուրարտ. *armuzi «ընտանիք (°), սերունդ (°)»* (ավելի հիշում է՝ «զարմ, սերունդ». *-uzi-ն* կամ ուրարտ. *ածանց է գամ, թերևս, հայ. -ոց-ը՝ ածանցական հին առումով*). 7) հայ. *առնեմ «անել, շինել»* (հ.-հ. *ar-n-՝ *ar- «հարմարեցնել» արմատից)—ուրարտ. *arniuse «արարք»* (ուրարտերենում այս բաղանջան բուն բայական ձևը չի ավանդված). 8) հայ. *անյար շհարող, անջատ»* (ան- < հ.-հ. *ar- և յար < հ.-հ. *ar- «հարմարեցնել») —ուրարտ. *anar-duni «անկախ»*. 9) բամ, բան (հ.-հ. *bhā- «խոսել») —ուրարտ. *bauše «խոսք, հրաման, իր, բան»* (բայական ձևը չի ավանդված). 10) հայ. *ծով* (հ.-հ. *g'obh-(°). հմմտ. հ. *իռլ-go, հ. իռլ. kaf «ծով»*) —ուրարտ. *šue «լիճ»* (°). 11) հայ. *ցեղ, -ի, -ից* (հ.-հ. *skel- «կտրել», որտեղից նաև հայ. *ցելուլ «ճեղքել»*) —ուրարտ. *zil (i)bi/e «ընտանիք, սերունդ, ցեղ»*:

Այս թիվը հավանաբար կավելանա, եթե ճշտվեն ուրարտական մի շարք բառերի իմաստներ, և մեկնաբանվեն անհայտ իմաստով բառերը:

2. 2. 4. 2. Եթե հայերն ապրել են ուրարտացիների կողքին և նույնիսկ բառեր տվել նրանց, ապա սլարգ է, որ չի կարող հայկական տարրը ի հայտ չգալ ուրարտական արձանագրություններում ավանդված դիցանուններում, անձնանուններում, ցեղանուններում և տեղանուններում:

Ուրարտական արձանագրություններում ավանդված զիցանուններում հնարավոր է բացահայտել հայկական բառերով ու արմատներով մեկնվող հետևյալ շերտը. *Airaini—հայ. այր* (հ.-հ. *anrjā, հմմտ. հուն. *ἄντρον «այր, քարայր»*), *այբայից. *Aršibedini—հայ. արծուի* (հին *արծիւի < հ.-հ. *rğ'ip(i)jō-

հմմտ. հ. *հնդկ. rjipyā- «ցած սուրացող (արծվի մասին)», ալեաս. arəzifya- «արծիվ»* + *ղի(p) «աստված»* (հ.-հ. *dhēs-). *Arū'arasi—հայ. *արա,-ոյ* (հին *արաո-) + *-arasi (°)*. *Ašti-uzi—հայ. աստուած «հաստող, հաստատող»* կամ հ.-հ. *ansu- + *diu- + *ած-*). *Šinuḫardi—հայ. ծին* (հին *ծին < հ.-հ. *g'e-nos-) : *հայ. արգ կամ ուրարտ. ardi- «ուժ. իշխանություն»* (և «աստված (°)») : *Turani—հայ. սուր(-ք)* (հ.-հ. *dō-ro-), *սուրան- «տրոդ, պարզեող, բաշխող, շնորհող». *Zluquni—հայ. ձուկն* (հին *ձուկուն < հ.-հ. *g'hukon (հմմտ. հ. պրոս. *suckaus* (եզ. հայց.) «ձուկ» լիավ. *žukly's «ձկնորս»*) և այլն):

2. 2. 4. 3. 1. Քանի որ տեղանունների մեջ ամենից ավելի սահմանափակ իմաստային դաշտերի վրա են հիմնված ջրանունները և լեռնանունները, որոնց ստուգաբանությունը դրա շնորհիվ համեմատաբար ավելի վստահելի է, մեր քննությունն սկսենք նրանցից⁴⁷:

Պատմական Հայաստանի տարածքի գետանունների սեպագիրը հիշատակություններում կարելի է մատնանշել հնաբավոր հետևյալ հայկական ստուգաբանությունները (էտիմոնները).

Alaini (գետակ վանից ոչ շատ հեռու՝ այժմյան Ենգուսներշա՝ լը)—աղ. առաջին հայացքից հնարավոր է թվում *աղային սկզբնաձևը, բայց աղ բառը այդ շրջանում պիտի ունենար աղի- հիմքը, և ի-ի անկումն անբացատրելի է հմմտ. նաև *Alia, Aliala* և *Alištu* (հետագա Աղսախ) քաղաքանունները:

Aršania (հայ. Արածանի)—արծ- «սպիտակ (°)» (հմմտ. *արծար, արծնեմ, արծարծեմ* < հ.-հ. *arg'- «փալլուն. սպիտակ» արմատից). հնարավոր է, որ նախքան սպիտակ և ներմակ բառերի փոխառությունը հաշիբենում այդ գաղափարն արտահայտվեր արծ- հիմքով, որ առկա է նաև ուրարտական

47 Թղպեհ հիմնական աղբյուրներ են ծառայել հետևյալ ուսումնասիրությունները. *И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 2—4, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи. М., 1960, Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985.*

և ակհադական աղբյուրներում բերված այլ տեղանուններում՝ Arša-bi(i)a (*), Aršidu, Arš/zašku, Aršugu, Aluarša, Balduarša և Gtzuaršu⁴⁸.

Guguna(ini) (գես Վանի շրջանում) — գոգ, -ոյ (Ն.-Ե. *ghegh-).

Uluruš (գես, լեռ և երկիր Անձիտի շրջանում կամ մերձակայքում) — ուր (Ն.-Ե. *uel-/yl- «ոլորել, պտտել» արմատից՝ -որ ածանցով (*). *uel- ձայնդարձային ձևից է ծագում գելում «ոլորել, պրկել», *uel- ձևից՝ գի և գի-որ, *ul- կամ *yal- ձևից՝ գալ-ար):

Կարելի է բերել և այլ հնարավոր դուզահեռներ, բայց դրանց հավանականությունը պակաս կլինի. այսպես Ruru-ն կարելի է կապել առու-ի հետ որպես առանց նախահայելվածի ձև (Ն.-Ե. *sreu- «հոսել»), Innaia-ն և Qallania-ն մեկնաբանվել որպես հայերենի հնդեվրոպական հիմքերից էկոդ ձևեր (Innaia < Ն.-Ե. *snā-ja՝ *sna- «հոսել» արմատից, որից հայ. նայ «թաց», Qallania < Ն.-Ե. *gʷslāniā՝ *gʷel- «ցած հոսել, թափվել»), բայց այս բոլորը կմնան ենթադրություններ, և ոչ ավելին: Վերջին երկուսի հետ միասին հիշատակվող Alluria/u գետանվան (այլև նույնանուն լեռնանվան) հիմքում կարող է ընկած լինել այլու բառը, եթե, մանավանդ, այն կապված է մեր ժամանակներում պահպանված Այուր գյուղանվան հետ (Վանի շրջանում):

2. 2. 4. 3. 2. Լեռնանուններից, բացի գետանունների կապակցություն հիշված Aršabi(i)a-ից, Aršidu-ից և Alluria/a/u-ից, նշենք նաև հետևյալները.

Ark/qania (Վանա լճից հարավ-արևմուտք) — արքայ (ծագումն անհայտ. հունական հնագույն փոխառություն).

Erit/dia (ալժմյան Սիփանը. համատ. նաև Eridia քաղաքանունը՝ Վանա լճից հյուսիս) — երիթ «մեծ սեպ». եթե Սիփանը

լեռնանունը կապված է սեպ բառի հետ և ծագում է թերևս ուրարտերենից (հմտ. նաև վրաց. sipi «գլաքար»), ապա այս համեմատության հավանականությունն ավելի է մեծանում.

Haštarae (Եփրատի վերին հոսանքի շրջանում. հմտ. խեթ. աղբյուրների Haštera, Hašteria քաղաքանունը) — հաստ, հաստոյր (Ն.-Ե. *pasto-).

Karnišie (Մալաթիայից ոչ շատ հեռու. հմտ. խեթ. Karina, պետինգերյան քարտեղի Cornē. հմտ. նաև Karania տեղանունը) — քար, հգն. քարիք, հգն. հյգ. քարիցս (Ն.-Ե. *kar-°).

Matni/ū (Վանա լճից հարավ-արևմուտք) — մատն «բլուր» (կապ ունի՞ արդյոք մատն կամ ափսոս. mati- «լեռնագահաթ» բառերից մեկնումների հետ)⁴⁹.

Šahišara (Եփրատի վերին հոսանքի շրջանում) — Տաի (հայ. սահ-°) — սար, -ոյ (կասկածելի է վերջին -a-ի պատճառով. հայ. -ո-ով հիմքը ենթադրել է տալիս *Šahišaru ձև).

Suira (Վանա լճից հարավ-արևմուտք) — սուր (Ն.-Ե. *k'ō-ro-՝ *kē (i)-/k'ō (i)- արմատից. հնարավոր է ենթադրել նաև հին -յ-ով ձև, ինչպես նույն արմատից ծագող սայր բառում).

Te/irkahuli (նույնացվում է Տե/իրկիլիո լիճ «տիրագլուխ» բնակավայրի անվան հետ՝ Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ նրա աջ ափին. հնարավոր է սկզբնական ձևի փոփոխություն ժողովրդական ստուգաբանությունում) — տեր -kahuli (=հայ. կախող°):

Հայկական բարձրավանդակում ուրարտական շրջանում հավանաբար բնակվել են նաև հնդեվրոպական այլ ցեղեր ու ցեղախմբեր, որոնցից թրակացիների և իրանցիների մասին կարելի է խոսել որոշակիորեն: Այստեղ նշենք հնդեվրոպական այնպիսի տարրերով բնութագրվող երկու ցեղանուն, որոնց աղբյուրը կարող է հայերենը չլինել: Gurku լեռնանունը (նաև

⁴⁸ Ն. Վ. Հարությունյանը (Н. В. Арутюнян, Биайнили. Ереван, 1970, с. 356—357) տեղանվանական Arš/z- և Araš/z- բաղադրիչները կապում է Araza դիցանվան հետ, բայց այդ կարելի է ընդունել միայն երկրորդ a-ով տեղանունների համար, այն էլ վերապահությամբ:

⁴⁹ Հնարավոր է, սակայն, որ հայ. մատն «բլուր» բառը փոխառություն լինի ուրարտերենից, այսինքն՝ ծագի լեռնանվան հիմքում ընկած հասարակ անունից:

գրկրանուն. հմմտ., թերևս, նաև Gurgum(u), Guriaini, G/Qu-riane տեղանունները), որ ըստ Գ. Ղափանցյանի և ուրիշների պահպանվել է ձևափոխված Փարքև անվան մեջ, կարելի է տեսնել հ.-հ. *gver-/gvor- «լեռ» հայտնի արմատը *-ko- փոքրացուցիչ ածանցով կամ *-k-անականով. հմմտ. այլ. gur «ժայռ, քար», ուս. gopa «լեռ», горка «բլուր»։ հայերենում այն պիտի ունենար *կեր կամ *կոր, զրո՝ ձայնդարձի դեպքում (*gvr-), թերևս նաև *կոր ձև (հմմտ. *gvl- > կուլ), և, հետևաբար, հնարավոր է այս անվան հաչիբեն ծագումը միայն այն դեպքում, եթե Gurku-ի փոխարեն ընթերցելի է Qurku: Nubanaše լեռնանվան երկրորդ մասը նույնացնելով Anaše (հետագա Ալաշ-կերտ) ընկալվալի անվան հետ՝ Nub-ը կարելի է դիտել հ.-հ. *neu-/nu- «նոր» արմատի արտացոլումը. հայերենն այդ արմատը պահպանել է միայն հավելյա *-ro-ածանցով՝ նոբ:

2. 2. 4. 3. Աշխարհագրական այլ կարգի անունների մեջ հայկական տարրի արտացոլման ամենից ավելի հավանական դեպքերից նշենք հետևյալները.

Alburi (ընկալվալը Ajadu երկրում. Վանա լճի շրջանում) — աղբյւր.

Aiṣuquja (քաղաք Վանա լճի շրջանում) — աղտ (հ.-*j-d-) և կայ (հ.-հ. *gʷou-so- (*-to-).):

Barzanišun (ընկալվալը Տիգրիսի արևմտյան ափունքի և Եփրատի միջև. հմմտ. նաև Kulibarzini/ս՝ Սև ծովից հարավ) — բարձր, հզն. սեռ. բարձանց (հ.-հ. *bhr̥gʷ-hu-) և աուց (հ.-հ. *dom-)⁵⁰.

Melujani (ընկալվալը Մալաթիայի շրջանում՝ Եփրատի աջ ափին) — մելու, -աց⁵¹.

⁵⁰ Barzaniš-ը համահունչ է Գիոգոր Սիկիլիացու հիշատակած Βαρζάνιշ-ին, որ, ըստ նրա, Ասորեստանի նինոս առասպելական թագավորի ժամանակահիցն էր Ֆ. Յուստին (F. Justi, Iranisches Namenbuch, 1895, S. 65) համարում է իրանական. հմմտ. ավեստ. varəzāna- «համայնք» (որպես «համայնակից»), բայց կարող է համանվանական շիտթություն լինել:

⁵¹ Մալաթիայի Meliṣe(i) a անվան մեջ ևս առկա է հ.-հ. *melit-, լսեթ. milit- «մելը» հիմքը:

Šarni (քաղաք Armarili երկրում՝ Վանա լճից արևելք. հմմտ. նաև Sarnida⁵²) — առն (հ.-հ. *kʷ-no-).

Tuarašini-ḫubi (ասոր. Tuariš/zu. դաշտահովիտ Վանա լճից հարավ-արևմուտք, Արածանի գետի վերին հոսանքի շրջանում. նույնացվում է Տուարածատտիի հետ — աուարած > *աուար-արած (հ.-հ. *dipər-(⁵²) և *trəgʷ-).

Uetas (քաղաք Մալաթիայի շրջանում՝ թերևս Նուլը Uita-ni-ի հետ, որ նշվում է Qumaja-ի շրջանում), այլև Uite/irubi (երկիր և ցեղախումբ Արաքոսի աջակողմյան շրջանում՝ մինչև Ալաշկերտ)⁵³ — գետ, -ոյ.

Ziuquni (երկիր Վանա լճի հյուսիսային շրջանում. հմմտ. Ziuquni դիցանունը, որը թերևս եղել է այս երկրի ցեղախմբի տոտեմը) — ձուկ, հզն. ձկուց (հ.-հ. *gʷhukon).

Zirma (ընկալատեղի Sangibutu երկրում՝ Ուրմիա լճից հյուսիս) — ջերմ (հ.-հ. *gʷhermo-)⁵⁴:

Բացի նշված զուգահեռներից, ուրարտական աղբյուրներում և Ուրարտուին վերաբերող ասուրական արձանագրություններում կարելի է մատնանշել առանձին բաղադրիչներ և հոլովատարրեր, որոնց հայկական ծագումը հնարավոր է բեռնեք օրինակներ:

Šeriazı երկրանվան և Šulianzi լեռնանվան միջև թերևս առկա են -եսց, -եսնց վերջավորությունների հին ձևերը: Եթե հաշվի առնենք աուց բառի սեպագրական արտահայտություն

⁵² Այս տարածված ստուգաբանության դեպքում ուրարտ. արձանագրությունների Tuarašini գրությունը չի համապատասխանում հայերեն բառի այն ժամանակվա հնչմանը, որ պետք է լիներ *Tjurašini (հմմտ. հայ. արծուի). պետք է ենթադրել կամ ուրարտական գրություն թեթության, կամ աուար բառի փոխառյալ լինելը նախասեմ. *taur-ին պատկանող որևէ ձևից. սեմականից է, թերևս, հ.-հ. *tauro-s-ը (հուն. ταῦρος, լատ. taurus «եղ»):

⁵³ Այս անունները հավանաբար տարրեր են Սևանա լճի արևմտյան շրջանում տեղադրող Ueduri երկրի և ցեղախմբի անունից, որ թրակյան կերպարանք ունի:

⁵⁴ Ջ-ն Z-ով արտահայտելու հնարավորության համար հմմտ. Զալախ — վրաց. Jawaxeti — ուրարտ. Zabaha:

մեջ d/՛ t տատանման, այլև հայերենի բարբառային տարբերությունների առկայության հնարավորությունը, ապա կարելի է առև բաղադրիչի հին ձևը որոնել ինչպես վերևում հիշված Barzaništun, այլև Maqaltuni, Ništun տեղանունների, այնպես էլ, թերևս, Aiduni, Nirdun, Tuišduni տեղանունների մեջ: Այս կապակցությունները նշենք, որ ուրարտական արձանագրություններում մի քանի անգամ հանդիպող barzudibiduni նշանախումբը (մեկ անգամ գրված առանց -ni-ի⁵⁵, մեկ անգամ էլ barzui-ի u-ի փոխարեն l-ով), որ սեղեգսվում է È «տուն» գաղափարադիր-գետերմինատիվով (որպես տան (շինություն) տեսակի անվանում) և ուրարտագետների ձողմից թողնվում առանց թարգմանություն, կարող է մեկնաբանվել հայերեն՝ որպես հայերեն երկք բառի կապակցություն՝ վերջին երկուսի մեջ d/՛ t տատանմամբ՝ բարբ (սեւ. բարբու, հզն. բարբանց), *աիւ «աստված» (թերևս պահպանված աւ-տու-ած բառի մեջ՝ աիւ «օր» համանունով՝ հ.-հ. *diu-ից) և առև. բնդհանրապես այն պիտի նշանակիր «բարձր աստու. տուն» (որպես հեթանոսական տաճարի անվանում). ավելի քիչ հայանախան է -dibi-ն՝ ղիտել բրպես իրանական հին փոխառություն՝ դեւ (սեւ. դիւի), որ նույն ունեցիկ է նաև «բարի ոգի» իմաստը և ծագում է վերևում հիշված *diu-ի *deigo- հիմքային ձևից. հնարավոր է հայերկրորդ բառը տեսնել նաև Diu(i)abli, Diulli տեղանունների մեջ:

Չըդըր լճից (հին Մովակ Հիւսիսոյ) հարավ ընկած Igani երկրի Erašeli տեղանվան մեջ կարելի է տեսնել հայ. անդի բառը ետղ-ից, որ ծագում է հ.-հ. *sed- արմատից *l- օժանցական մասնիկով. Era-ն կարող է լինել կամ բեղա-նուն, կամ էլ հայ. երա- «տաջին» բաղադրիչը, ինչպես երախայրի բառում:

⁵⁵ Այն գրիչների կողմից կարող էր ընդունվել որպես հող և բաց թողնվել:

Danziun և Zanziuna տեղանունների մեջ իբրև երկրորդ բաղադրիչ կարելի է տեսնել այնպես շուտա-ն՝ թերևս նույնացնելով հայ. արև (հ.-հ. *g'hijōm) բառի հետ:

Ավելի քիչ հավանական, բայց հնարավոր է Aludiri/ε քաղաք-ամրոցի անվան երկրորդ մասում տեսնել հայերեն բարդությունների երկրորդ -դիր բաղադրիչը:

Իերենք նաև մի շարք գուգահեռներ, որոնց մի մասը, թերևս, պատահական է, և որոնց թիվը կարելի է բազմացնել:

Alniuni (քաղաք Մանազկերտի շրջանում) — աղև, հզն. աղուն «աղես, եղևն».

Andiabe/ս (հոտ. Anteba կայանք Բագրավանի և Խանազկերտի միջև), Anduarselia (հետագա Κορυθα-ն կապագովկիայում), թերևս նաև Ubianda (չես Armarili երկրում) — անդ > հանդ «արտ», անդիայ (անդի) «ճախիր» (հ.-հ. *andh-) կամ անդ «շեմք» (հ.-հ. *anəṭā).

Amuraška (եթև ավելի ճիշտ չէ Adarrašku ընթերցումը. քաղաք Uruašri երկրում) — ամուր «ամուր, պինդ, ամրոց» (հայ. բառի ծագումը հայտնի չէ. հնարավոր է նրա աղբյուրը համարել ուրարտերենը).

Arašu (բնակավայր Սանգիրուտու երկրում՝ Ուրմիա լճից հյուսիս) — արած (արատ) < հ.-հ. *trag'-).

Armari(ia)li (երկիր Ուրմիայի և Վանա լճերի միջև) — j-արմար (հ.-հ. *ar-m-՝ *ar-ից, որտեղից առևնմ, ար-ար, j-ար-եմ).

Ardarakihi (ցեղախումբ Diuhi — Տալք երկրում), այլև, թերևս, Artarapša («երկիր» Վանա լճից հյուսիս) — արդար (հ.-հ. *ar-t-). հմմտ. Արդարաց գյուղանունը.

Ardiunak (քաղաք Ajadu երկրում, Վանա լճի շրջանում) — արդիւն (եթև կապված չէ ուրարտ. ardi բառի հետ).

Armuna (բնակավայր Սանգիրուտու երկրում՝ Ուրմիա լճից հյուսիս) — արմն «արմատ» (հմմտ. արմ, արմատ՝ հ.-հ. *er- արմատից).

Gaurahi (քաղաք-ամրոց Մալաթիայից հյուսիս-արևելք՝ Էփրատի ձախ սփին, հետագա Գաւրեք) — գաւ-(առ)՝ (հ.-հ. հմմտ. գերմ. Gau «երկիր, մարզ, գավառ» (*).

Erikuahji (ցեղ և երկիր Արաքսի աջ ափին. ըստ Ն. Պոստոլի՝ Որկոփի) — երեկոյ («արեմուտք» իմաստով).

Halua (բնակավայր Հաբի երկրում՝ Վանա լճից հարավ) — խաղ, -ոյ լիսաղ կամ խաղ, -ի «ճահիճ».

Harura (բնակավայր Uruatri-ում) — հարիւր, ոյ. կա նաև Կարուր բուսանուն.

Hulmeruni (քաղաք Վանա լճից հարավ-արեմուտք) — հող, -ոյ (°).

Hulun (քաղաք Հաբի երկրում՝ Վանա լճից հարավ) — հող, -ոյ (Տ.-Կ. *polo-).

Inisti (բնակավայր Հաբի երկրում՝ Վանա լճից հարավ) — հիստ, -ոյ (°).

Irdua-ni (քաղաք Սյունիքի Ծղուկ — ուրարտ. Տuluqu գավառում), թերևս նաև Irdaniuni (ճետագա Արզվինը) — երդ, -ոյ (Տ.-Կ. °).

Liqiu (բնակավայր Irdua-ից ոչ հեռու՝ հին Ծղուկի մերձակայքում) — լիկ շիճ (Տ.-Կ. *lēg-).

Lusia (երկիր և քաղաք պատմական Հայաստանի հարավ-արեմտյան շրջանում) — լոյց, լուց-անեմ (Տ.մտ. լոյս).

Luša (ցեղ և երկիր Արաքսի և Ախուրյանի միախառնուման տեղից հյուսիս) — լոյս, -ոյ (Տ.-Կ. *leuk-).

Matara (բնակավայր Տիգրիսի վերին հոսանքի աջափնյա շրջանում) — մայր (Տ.-Կ. *matēr °)⁵⁶.

Nilipahri (երկիր Uruatri ցեղամիավորման մեջ) — ևեղ և պախրե «տավար, նախիր» (փոխառություններ ուրարտեաներից).

P/Buinalhi (քաղաք Սյունիքի Ծղուկ — ուրարտ. Տuluqu գավառի մերձակայքում) — բոյն, -ոյ (+ ուրարտ.-ալի ածանց °).

Qu'albani (երկիր)՝ Սեանի ավազանում) — կոյ (կու) և աղբ.

Qulbutarrini (բնակավայր Մալաթիայի շրջանում) — Կողբ և բառ (°):

3. Հայերենի և ուրարտեանի վերաբերյալ բերված փաստերի և մի շարք այլ տվյալների զուգահեռությամբ կարելի է հանգել հայ ժողովրդի ու հայոց լեզվի պատմության և ուրարտագիտության համար էական նշանակություն ունեցող եզրակացությունների:

3. 1. Հայոց լեզվի բառապաշարի մեջ ուրարտական և ուրարտեանի մեջ հայկական փոխառությունների զգալի քանակը խոսում է այն վարկածի օգտին, որ ուրարտական պետության մեջ երկար ժամանակ կողք-կողքի ապրել են հայկական ցեղեր, որոնք, հավանաբար, աչքի ընկնող դեր են կատարել ուրարտական պետության կյանքում: Ըստ աշխարհագրական անունների մեջ հայկական բառերի ու ձևաչափերի արտացոլման կարելի է ասել, որ այդ ցեղերը բնակվել են ուրարտական պետության և պատմական Հայաստանի հատկապես հարավային և արևմտյան տարածքներում:

3. 2. Նկատի ունենալով Haldi գիցանական հարավային Aldi և, թերևս, Համնուիքի Ab/puni գրավումը՝ կարելի է ասել, որ Ai- բազմաբնույթ սկզբով մի շարք տեղանունների մեջ արտացոլվել է նաև անունը: Բացի Aja լեռնանունից և Ai(a)qanani (Azaqanani ընթերցումն ավելի քիչ հավանական է), Ajalé, Ajaşun, Ajušiaš բնակավայրերի անուններից, մենք հակված ենք այն տեսնելու Վանա լճի շրջանում գետեզովույ Aiduni (ասոր. Ajaduʾi, Ajaid) և, թերևս Ալալիս երկրների անունների մեջ, մանավանդ եթե Aiduni-ի -duni բազմաբնույթ հնարավոր է մեկնաբանել որպես տուն⁵⁷, պատահական չէ, որ Վասպուրականի գավառներից մեկը կոչվում էր Հայոց ձոր, Մոկքի երկու գավառ՝ Այաուանք (կապ չունի՝ Aiduni-ի հետ) և Այալանք: Հնարավոր է, որ Aiduni երկրի հովանավոր աստվածը (աստվածուհին) է նկատի առնելված Մհերի դուռն արձանագրության մեջ հանդիպող Ainaթե-ի

57 Ս. Երեմյանը Այդունի երկրը տեղագրում է Վանա լճից հյուսիս, Ն. Վ. Հարությունյանը՝ հարավ:

56 Եթե t > j փոփոխությունը ուրարտական շրջանից ավելի վաղ չի նստարվել, քիչ հավանական է:

մեջ՝ -ո- հողով և -ալե վերջավորութիւնը⁵⁸: Aiduni և Uajais երկրներում հիշված տեղանունների մեջ զգալի թիվ են կազմում ակնհայտորեն հայկական բնույթ ունեցողները. բացի վերևում բերված Innaja գետանունից (որ վերևում մեկնաբանվեց հ.-ե. *snā- արմատով՝ հայերենի համար բնորոշ՝ *s-ի անկմամբ. հմմտ. նայ «թագ») և Alluri/a լեռնանունից, նշենք մի քանիսը. Aiduni երկրում՝ Alhuri—հայ. աղբիւր. Ardlunak—հայ. արգիւն(-ք) (°, եթե բաժանելի չէ ուրարտ. ardi+unak (°)). Arşzugu, Alurşa, Balduarşa—հայ. արծաթաք, արծնեմ, արծարծնեմ՝ հ.-ե. (*arg'- փայլուն, սպիտակ)։ Dilizia—հայ. դիզի (հին «գեղին»։ հմմտ. դիզի «գեղձներ», դիզն ավարի անանուխ և դիզան օտակգոյն»)։ Saruardi—հայ. սար, -ոյ և արգ օձև (եթե վերջինըս ուրարտ. ardi-ն չէ). Uajais երկրում՝ Aljuquia—հայ. աղտ «կեղտ» (աղտ «աղ») և կոյ, կու «գոմաղթ»։ Barzutiāni—հայ. բարձր, -ու և այլն: Կարևոր է նշել, որ Վանա լճի մերձակայքում տեղադրվող այս վայրերի զգալի թվով անուններ պահպանվել են հետագա տեղանուններում. այսպես, հավանական են հետևյալ զուգադրությունները՝ Abain-ժի—Ավանց (գյուղ Վանի մոտ), Allj—Աղի (գյուղ Վանի վիլ. Արճեշի գվո.), Alluri/u (լեռնանուն՝ բնակատեղի անունից)—Ալյուր (գյուղ Վանի վիլայեթի Թիմուրի գվո.), Aniaštania—Անասան (գյուղ Վանի վիլ.), Anzalia—Անձավ (գյուղ Վանի վիլ. Բերկրի-Արաղա գավառում. հմմտ. նաև հին Անձևացիք և Անձահիճոյ), Arşugu—Արճակ թե՛ Արձկե (°). Baniu—Բանոն (գյուղ Վանի վիլ. Արճեշի գվո.), Birjiluzā—Բերկրի (գյուղ Վանի վիլ. համանուն գվո.), Hasrana—Կասր (գյուղ Վանի վիլ. Շատախի գվո. հմմտ. նաև Մոկսի գվո. և Խոշաբի Կասրիկ), Qutta (Uajais-ում)—Կուր (գյուղ Վանի վիլ. Կարճկանի գվո.), Siqarra—Չկոր (գյուղ Վանի վիլ. Կառկառի գվո.) և այլն:

⁵⁸ Եթե այն իգական աստվածության անուն չէ, ապա կարելի է մեկնաբանել որպես Հայկի նշանակումը:

Ai(e)duni-ի Geta տեղանունը նման է հնչում գետ-ին՝ բայց այս բառը ուրարտ. շրջանում պիտի արտասանվեր դեռ սկզբնային վ-ով (հմմտ. Uelikuni—Պեղա(ր)քունի), եթե հարավային վայրերում անցումն արդեն կատարված չէր: Եթե Ai-ով սկսվող տեղանունների մեջ կարելի է տեսնել հայ-ը, ապա արևմուտք ընկած Arme և, թերևս, Urme երկրանունների մեջ տեսնում են արմեն (հ.-ե. *ormenos) անվան սկզբնաձևերը (հայերենի համար բնորոշ o-a անցմամբ և ժողովրդական ստուգաբանության հիման վրա վերջին ո-ի առանձնացմամբ): Եթե Armari (ja)li երկրանունը կապ չունի սրանց հետ, ապա կարելի է ասել, որ հայկական ցեղերի արմենական խումբը տեղավորված էր արևմուտքում, հայկանը՝ հարավում: Պատահական չէ, որ հորենացու մոտ արտացոլված հայկական ավանդույթը հայկական ցեղերի շարժում է ենթադրում հարավից հյուսիս:

3. 3. Եթե հալասական Hugganaš (Hukkanaš) անձնանունը կապ ունի ուրարտական արձանագրություններում հիշատակված Huka (Hu-ka-a-i) անձնանվան, Hajasa և Azzi երկրանունները՝ Ai-duni երկրանվան և 'Aza տեղանվան՝ Baltalk գրիցանունը՝ Baltulji ցեղանվան, Arhita, Arnija, Duq-qama, Halimana, Parraja (Barraia), Qadmaša (Qadnata °) քաղաքանունները՝ Arhi երկրանվան, Arna, Duqama, Parra, Ulmania քաղաքանունների (հմմտ. նաև Elamunia գետանունը և լեռնանունը, Alaxun երկրանունը), Ka udjtmuhi) երկրանվան հետ, ապա պետք է ենթադրել Հալասայում ե՛մ ներձակայքում գտնվող ցեղերի տեղաշարժ դեպի հարավ և արևվելք՝ ընդհուպ մինչև Ուրմիա լճի հարավը (Duqama):

3. 4. Ուրարտական պետության մեջ ուրարտական և հայկական ցեղերի հետ միասին բնակվել են նաև մեզ ծանոթ և անծանոթ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական ցեղեր: Մասնավորապես արդեն առկա էին իրանական (այդ թվում կիմերական, սկյութական) և թրակյան ցեղերը: Սրանց լեզվական մնացուկների վրա վերջերս ուշադրություն է դարձվել մի շարք հետազոտողների կողմից (Ս. Երեմյան, Ս. Պետրոս-

յան, 2. Ղարագյոզյան, այլև Գ. Զահուկյան)⁵⁹. հատկապես բնորոշ են Allabria և Išpilibria տեղանունների -bria- թրակ.-bria «քաղաք» բաղադրիչը (եթե սրանցից առաջինը կապված չէ հալ. աղաբի-ք բառի հետ), Ueduri ցեղանվան և թրակյան քեծ՝ «չուր» բառի, Igani երկրի Diușini թագավորի անվան և թրակ. Diuzenus անձնանվան զուգադրիչումները:

3. 5. 1. Վերևում ասվածները հասկանալի են դարձնում Պարսկաստանի Դարեհ 1-ին թագավորի բեհիստունյան եռալեզվյան արձանագրության մեջ (521—520 թթ. մ. թ. ա.) պարսկերեն Armiša «Հայաստան» անվան դիմաց բարելական Uraštu (= Urartu) անվան առկայությունը⁶⁰: Գիտնականների գրեթե միահամուռ կարծիքով, որ աջակցություն է գտնում նաև Մեդայլ ծովի շրջանի քարայրներում հայտնաբերված տեքստերի և աստվածաշնչի բուն տեքստի համեմատության մեջ, Urartu անվանումը պահպանվել է Արարատ անվան մեջ: Պատմականորեն մենք ունենք ձևերի հետևյալ հաջորդականությունը. Սալմանասար 1-ին թագավորի (1266—1243 մ. թ. ա.) արձանագրության մեջ հանդիպում է Uruatri, Աղաղնիրարիի (911—890 մ. թ. ա.) արձանագրության մեջ՝ Urairi, մ. թ. ա. 9-րդ դարից սկսած՝ Urartu ձևը. ավելի ուշ հանդիպում են երբայրենի Urārāt (ըստ Մեդայլ ծովի շրջանի տեքստերի ընթերցման) և Arārāt (ըստ աստվածաշնչի բուն տեքստի մասորետյան ձայնավորման՝ Երեմիայի գրքում՝ 594 թ. մ. թ. ա.) և հայերեն Այրարատ (Արարատ, Արարաղ) ձևերը: Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ Urartu-ն եղել է այն ցեղախմբի անունը, որին դեպի հյուսիս կատարած արշավանքների ժամանակ առաջինը հանդիպել են ասորեստանցիները⁶¹: նկատի

ունենալով անվան համընկումը Արարատ լեռան և Արարատյան դաշտի՝ նշված անվանումների հետ՝ պետք է ենթադրել ընդգրկման ավելի մեծ տարածք⁶²:

3. 5. 2. Uruatri/Urairi/ Urartu⁶³ անվան ուրարտական մեկնարանությունից հարյուրի չեն, մինչդեռ դիտական գրականության մեջ կարծիքներ են հայտնվել նրա ասորական, խեթական, իրանական ծագման մասին: Այսպես, Ս. Սելսը մի հին բառացանկի հիման վրա, որի մեջ tillu-ին («բլուր») համապատասխանում է urtu-ն, Urartu-ն մեկնում է որպես «բարձր երկիր»⁶³: Գ. Նոյմանը այն բացատրում է որպես խեթական Ur-uatri «մեծաջուր», Ռ. Շմիդտը՝ հին իրանական կազմության Varu/Uru'adri- «բնդարձակալեռ» (հմմտ. գուգահեռ Haxrādōr, <Paru'adri «բազմալեռ»)՝ Սակայն խեթական ցեղերը և խեթական ազդեցությունը չէին կարող այդքան արևելք տարածվել, իսկ XIII դարում մ. թ. ա. իրանական ցեղերի առկայությունը այդ վայրերում հայտնի չէ:

3. 5. 3. Հարց է առաջանում՝ հնարավոր չէ՞ արդյոք Ուրարտուի անվան հայերեն մեկնությունը, այսինքն՝ թույլ տալ հայկական ցեղերի առկայությունը պատմական Հայաստանի տարածքում մ. թ. ա. XIII դարում:

Այս վարկածի օգտին կարծեք թե խոսում է մի քանի հանգամանք. 1) ուրարտ. Urartu—հալ. Ա(յ)րարատ և երբ. Urārāt—Arārāt ձևերի u/a փոխհարաբերությունը զուգահեռ ունի Urme—Arme փոխհարաբերության մեջ, որ մենք փորձել ենք բացատրել որպես հայերենի համար բնորոշ *o>o (սեպագրության մեջ o-ն պիտի արտահայտվեր u-ով) և

⁵⁹ Հմմտ. Г. Б. Джаукян, Фракийцы в Армении, «Античные балканистика», М., 1984, с. 11—12.

⁶⁰ Ի. Մ. Դյակոնովը (И. М. Дьяконов, Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 238) Uraštu-ի համար վերականգնում է *Orait ընթերցանությունը:

⁶¹ Հմմտ. Г. А. Меликишвили, Напри—Урарту, Тбилиси, 1954, с. 21, 155.

⁶² Մանվանդ եթե ճիշտ էր Ի. Ի. Մեշյանինովը, որ Սարգսրի 2-րդի տարեգրության մեջ կարդում էր LU^UUrarda և տեսնում նույն Urartu անունը:

⁶³ A. Sayce, The Kingdom of Van (Urartu), „The Cambridge ancient history“, 3, 1929, p. 169:

⁶⁴ Վերջին երկու մեկնությունների համար տե՛ս W. Eilers, Geographische Namengebung in und um Iran, „Sitzungsberichte der Bayerischen Akad. d. Wiss. Phil.-hist. Kl“, 1982, H. 5, S. 28:

*o>a անցումների դրսևորում՝ ձևերի համապատասխան տատանմամբ. հմմտ. միկենույն արմատներից ծագող որր և արբանեակ «ժառա» (հ.-և. *ǝrbh-), *հովի- «ոչխար» (հովի-ւ բառում) և աւղի «ոչխար» (հ.-և. *oϣi-), յ-յորդ և յ-առնեմ «վեր կենալ, բարձրանալ, ելնել կանգնել» (հ.-և. *or-՝ *er-ի ձայնդարձը), ոսկր և ազդր (հ.-և. *os-), ալլև ունիմ և աւն «ունեցվածք» (հ.-և. *op-n-). ալշպիսի տատանում նկատվում է նաև նախահավելվածադին ձայնավորների դեպքում՝ ոռոզանեմ և առոզանեմ (հ.-և. *srou-), որոնեմ և բրբու. արոն անել (հ.-և. *rodj-). 2) Uruatri/Uratu ձևերի մեջ նկատվում է Ի-ի գրափոխություն, որ բնորոշ է հայերենի բաղաձայն Ի-ը կապակցությունների համար՝ բացառությամբ հ.-և. «խուլ պայթակուն Ի-ը՝ կապակցությունների. քանի որ ուրարտ. Ի-ն համապատասխանում է հայ. ա-ին, որ ծագում է հ.-և. ձայնեղ *d-ից կամ, որոշ պայմաններում *z'-ից, ապա այս բացառությունը վերանում է. 3) Urartu-ի artu-ն իշեջնում է Artu'ar(a)st զիցանվան առաջին մասը, որի մեջ մենք տեսնում ենք հայ. արա, սեռ. արտոյ բառը՝ ամբողջ կազմությունը դիտելով որպես հայկական ցեղերի կողմից պաշտվող՝ արտերի հովանավոր աստծու անուն⁶⁵: Հայերեն բառը ծագում է հ.-և. *ag'ros «դաշտ, արտ» բառից (հ. հնդ. ágra- «արոտ, դաշտ, արտ», հուն. ἀγρός «դաշտ, արտ» և ալլն) և արմատակից է արտ-ա- նախածանցին և արտաքս, արտաքին բառերին, որոնք նշում են արտ բառի սկզբունական հնարավոր լայն իմաստը՝ «դաշտ, արտավայր»: Uruatri>Uratu համապատասխանություն չունի այս դեպքում շատ լավ բացատրում է հայերեն բառի զարգացման փուլերը՝ (*ag'ros>acro->arto>atro, սեպագրություն մեջ՝ atru/l>artu). atri-ն կարող էր լինել *ag'ros-ից կազմված *ag'rijos ածականի («դաշտային») արտացոլումը:

Ավելի դժվար բացատրելի է Ur(u)-սկզբնամասը, մանավանդ եթե փորձենք այն համաձայնության մեջ դնել հե-

տագա Ա(յ)րարառ ձևի հետ Քանի որ հատուկ անունների համար սովորական է ժողովրդական ստուգաբանությունը (անծանոթ դարձած բառային իմաստների բացատրությունը ծանոթ բառային իմաստներով), և սրա հետ կապված տարբեր ձևերի խառնուրդը (բաղարկությունը), ապա Urartu-ի դիմաց առկա Այրարառ/Արարառ ձևերի համար մենք ենթադրում ենք մի կողմից՝ o>a անցում կամ o/a հերթագայություն և սրա հետևանքով ծագած Ar-ի վերաիմաստավորում ար-ալր-«մարդ» արմատի ազդեցությամբ (հմմտ. արահեռ և ալրա-սլր), մյուս կողմից՝ առա (*ածրո->ատրո) և առատ (արած-արմատի տարբերակի) բառերի բաղարկություն (խառնում): Հետաքրքրական է նշել, որ Մովսես Խորենացին Ա(յ)րարառ անունը կապում է Արայի անվան հետ և մեկնում որպես «Արայի դաշտ», «Գայ հասան է տազնապալ ի դաշտն Արայի, որ յանուն նորա անուանեալ Այրարատ» (ձեռագրական տարբերակներ՝ Արարատ, Արարադ)⁶⁶:

Եթե Uruatri/Uratu-ի -atri/-arto բաղադրիչի բացատրությունը քիչ թե շատ հավանական է, ապա Ur(u)-բաղադրիչի մասին կարելի է միայն ենթադրություններ անել, որոնք ատանց ավելի հաստատուն կովանների կմնան լոկ ենթադրությունների սահմանում՝ անկախ այն բանից՝ այդ բաղադրիչի տակ տեսնում ենք հայերենում չպահպանված, բայց նրա օրինաչափություններով բացատրվող, թե՞ պահպանված և նույնիսկ մեր օրերը հասած լեզվական որևէ ձև: Այսպես, կարելի էր ենթադրել հ.-և. *prō- «առաջա-» ձևից եկող *ոյ(ո)- կամ *ոյ(ու)- սարքը (հնարավորապես տարբերակներով)՝ վերականգնելով Uruatri/Uratu ձևերի համար «առաջադաշտ» ընդհանուր իմաստը: Էլ ավելի քիչ հավանական կլինի այդ բաղադրիչի մեջ որոնել այնպիսի ձևեր, որոնց մեջ հնարավոր չէ *o>a անցումը կամ o/a տատանումը, և Ա(յ)րարառ ձևի ծագումը կարելի է բացատրել միայն ժո-

⁶⁵ Գ. Ք. Զահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 1, էջ 52:

⁶⁶ Մովսես Խորենացու, Պատմություն Հայոց, Տփղիս, 1919, էջ 49: Այս կապակցությամբ նշենք, որ ճիշտ չէ Ա(յ)րարառ անվան առաջին մասը արիների հետ կապելու փորձը իբրև «արիների դաշտ» (հմմտ. W. Eilers, նշվ. աշխ., էջ 28). այն անհավանական է և՛ ըստ ձևի, և՛ ըստ իմաստի:

դովրդական ստուգաբանությունում ու ձևերի բաղադրությունում համատ. մի կողմից՝ հ.-ի. *er-/or- արմատից ծագող հուն. ἔρως «լեռ» (*eros-ից), որի դիմաց հայերենը կարող էր ունենալ *arē- (կամ *erē-⁶⁷) ձևը, մյուս կողմից՝ հայերենում առկա ուրոյն «առանձին, գատ» (*urē- հին հիմքաձևով) և ուրու «տեսիլ. հեթանոսական աստված, կուռք» բառերը. նշենք, որ վերջին երկու բառերի ծագումն անհայտ է (քիչ հավանական է ուրու-ի ծագումը հ.-ի. *er(ə)- «նսր, հեռու գտնվող» արմատից), և որ ուրու-ն, եթե ուրարտական շրջանում այն կար, պիտի ունենար լրացուցիչ հիմքային ձայնավոր:

Եթե Uruatri-ն հայերենով բացատրելը քիչ թե շատ հավանական է, ապա նրա կապակցությունը Սալմանասարի և Աշուրբեղկալայի հիշատակած տեղանունների մեջ կարելի է որոնել հայկական ծագում ունեցողներ: Ծիշտ է, հատուկ անունների ստուգաբանության փորձերը որոշ դեպքերում մենում են միայն փորձեր և ոչ ավելին, այսուհանդերձ որոշ նախնական ենթադրություններ կարելի է անել: Վերևում մենք մի շարք տեղանունների -duni բաղադրիչը barzudibiduni արտահայտության -duni-ի հետ միասին հնարավոր համարեցինք բացատրել հայ. տուն բառով. եթե սա գոնե մասամբ ճիշտ է, ապա Eridun բնակավայրը կարելի է մեկնել որպես «Eri ցեղին պատկանողների տուն» կամ, եթե Eri-ի մեջ տեսնենք հայ. երեք բառի բարդությունների մեջ հանդիպող երի հիմքը, «եռատուն». հիշեցնենք, որ տուն բառն ունեցել է նաև «գավառ, շրջան, երկիր» իմաստը՝ հմմ. «Ձեռն իշխանութեան տանն հայոց թագաւորին, որ էր Ատրպատական աշխարհան» (Բուզանդ) և այլն⁶⁷: Ziqunu տեղանունը, որ հավանաբար նույնն է հետագա Ziuquni-ի հետ, մենք վերևում կապեցինք սրա ցեղային աստված-տոտեմը հանդիսացող Zi(u)quni դիցանվան հետ և մեկնեցինք ձուկն, հգն. ձկունք բառով (հնում պիտի ունենար *ձուկուն ձևը): Amuraška տեղանվան մեջ, որ գերադասելի է Adarraška ընթերցումից, կարելի է տեսնել

ամուր «ամրոց» բառը, թեև այս բառի ծագումը հայտնի չէ (կապ ունի՞ արդյոք հ.-ի. *moiro- «փայտե կառույց» հիմքի հետ, որ արմատի երկար ձայնավորման դեպքում կարող էր տալ ոչ (սեպագիր u(i) °), ինչպես նույն արմատից ծագող մոյր բառի դեպքում: Եթե հայերը գեո հնում բառակցի st-ն արտասանել են (գոնե որոշ տարածքներում ոժեղ ք-ով, և սա կարող է արված լինել սեպագիր որևէ ձայնավորով, ապա Istaiaun, Istaninia տեղանուններում կարելի է տեսնել հ.-ի. *stā- «կանգնել» արմատից կերտված հայերեն ձևեր (այս. նույն արմատից են հայ. ստահամ-ը՝ իմաստափոխությունով, այլև իրան. >հայ. -ստահ ածանցը): Հմմտ. նաև Harutu—հարիւր, -ոյ (կա նաև հարուր բուսանուն), Tarraba—քառ «հովի թառ» (այլև «բարձր տեղ») և այլն:

3. 6. Հայերենի՝ ուրարտերենից և ուրարտերենի՝ հայերենից կատարած փոխառությունների, ինչպես նաև տեղանունների ուրարտական տառադարձության և սրանց հայերեն համարժեքների համեմատությունը բացահայտում է որոշակի օրինաչափություններ, որոնց համառոտակի բնութագիրը տրված է մեր «Հայկական շերտը ուրարտական դիցարանում» հոդվածում⁶⁸: Վերևում բերված տվյալներում այդ օրինաչափությունները հաշվի են առնված: Եղած բացառությունները թվադրոգ են և բացատրվում են կամ սեպագրության առանձնահատկություններով, կամ ուրարտերենի ու հայերենի բարբառային տարբերակների առկայությամբ: Եթե բառային սովորական փոխառությունների դեպքում համապատասխանության հարցը լուծվում է միանշանակ կերպով, ապա այլ է վիճակը տեղանունների դեպքում. այստեղ համապատասխանությունը բացարձակ է տեղանվանական օբյեկտների նույնություն, և հարաբերական՝ տարբերության դեպքում, ընդ որում հարկավոր է հաշվի առնել սրանց մեջ ժողովրդական ստուգաբանության լայն տարածվածությունը: Այս պայմաններ

67 Հմմտ. Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 42, էջ 437:

68 «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 1, էջ 57: Հմմտ. նաև մեր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատության (1987) աղյուսակը (էջ 430—431):

րում մենք կարող ենք ունենալ ուրարտական և ակկադական արձանագրությունների համապատասխանության որոշակի տարբերակներ:

Г. Б. ДЖАУКЯН

УРАРТСКИЙ И АРМЯНСКИЙ ЯЗЫКИ

В этом разделе рассматриваются вопросы взаимоотношения и взаимовлияния урартского и армянского языков. После краткого обзора истории изучения урартского языка, описания методов чтения урартских надписей и характеристики современного состояния исследования родственных связей урартского языка, автор подробно останавливается на вопросе урартско-армянских лексических взаимоотношений. Он выделяет несколько слоев общих слов: слова т. н. «элементарного» и отдаленного родства, армянские заимствования из урартского и урартские заимствования из армянского языка. В конце статьи предпринимается попытка выявления армянских элементов в личных именах, именах богов, названиях племен и местностей, переданных в ассирийских и урартских клинописных источниках.

ՄԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Ներկա գրքույկի հրատարակչական պրոցեսներն ավարտված էին, երբ լույս տեսավ ուրարտագետ Հ. Կարազյոզյանի մի հոդվածը¹, որը սերտորեն առնչվում է մեր աշխատության թեմային: Հեղինակը առաջարկում է մեր ժողովրդի «հայ» ինքնանվանումը ստուգաբանել էթիու-նի սեպագրական տեղանվան հիման վրա, որով մի կողմ են դրվում նախկինում առաջարկված՝ Հայասա (հայասա) և Խաթե տեղանունների վրա հեցած, ինչպես և այլ ստուգաբանությունները: Առաջարկությունը սրամիտ է և հատուկ քննության արժանի, ուստի այստեղ ես բավարարվում եմ սուկ իմ առաջին տպավորության շարադրմամբ:

Էթիու(նի) — հայ ստուգաբանությունը կատարված է Խաթե — հայ ստուգաբանական մոդելի հետքերով²: Սրա մեխն է թ-ի փոխարկումը յ-ի (որի ցցուն օրինակ է հանդիսանում *թօթ(ր) հայր անցումը): Այսուհանդերձ այն ավելի բարդություններ է առաջացնում, քան Խաթե-ի հետ կապված ստուգաբանությունը (էլ չեմ խոսում Հայասա (հայասա)-ի հետ կապված ստուգաբանության մասին): Խնդիրն այն է, որ էթիու-ի դեպքում հեղինակի համար անհրաժեշտություն է ստեղծվում լրացուցիչ բացատրություններ տալ է > ա անցման և հ-ի հավելման հանգամանքներին, որոնք Խաթե-ի դեպքում բացակայում են: Այստեղ ասելիք ունեն մասնագետ-լեզվաբանները:

Հոդվածում առաջ քաշված հետագա ստուգաբանական փորձերը էապես զիջում են հիշատակվածին և, հակառակ իրենց արտաքին տեսքին, մեր կարծիքով, հիմնականում տառապում են ստուգաբանական շփանիշների ավելորդ «ազատություն», որը շատ տարածված ցավ է:

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

¹ Օ. Օ. Կարազյան, Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам, ВОН, 1988, № 7, с. 57 слл.

² Տե՛ս վերը, էջ 53:

ՈՒՐԱՐՏՈՒ—ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք. Ե. Առաքելյան, Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը	5
Գ. Խ. Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը	47
Գ. Բ. Զանուկյան, Ուրարտերենը և հայերենը	127
Գ. Խ. Սարգսյան, Մի հավելում	169

Հրատ. խմբագիր Փ. Հ. Մաղաթյան
 Նկարիչ Ա. Վ. Աբամյան
 Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
 Սրբագրիչներ Գ. Է. Գեճակյան, Լ. Հ. Խաչատրյան

ИБ № 914

Հանձնված է շարվածքի 4. 03. 1988 թ.: Ստորադրված է տպագրության
 5. 12. 1988 թ.: ՎՖ 08720: Չափը 84×105¹/₃₂: Թուղթ № 2: Տառա-
 տեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 9,93 մամ.,
 տպագր. 10,75 մամուլ: Ներկ. մամուլ 9,03: Հրատ.-հաշվարկ. 7,82 մամուլ:
 Տպարանակ 3500: Հրատ. № 7281: Պատվեր №197: Գինը 1 ռ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան
 պող. 24 գ.:

Издательство АН АрмССР, 375019, Ереван,
 пр. Маршала Баграмяна, 24.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ
 Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
 пр. Маршала Баграмяна, 24.